

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ԼԵԶՈՒԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԱԿՈՐ ՉՈԼԱՔԵԱՆ

ԱԻԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
(կանոնակարգ եւ խնդիրներ)

ԵՐԵՒԱՆ - 2016

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.22
Չ 730

Ուսումնասիրությունը հրատարակության երաշխաւորուած է ՀՀ
ԳԱԱ Ն. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի գիտական
խորհուրդին կողմէ:

Լոյս կը տեսնէ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան



FUNDAÇÃO
CALOUSTE GULBENKIAN
COMUNIDADES ARMÉNIAS



Հայկական բաժնի աջակցութեամբ

Չոլաքեան Յակոբ

Չ 730 Աւանդական Ուղղագրութիւն: Կանոնակարգ եւ խնդիրներ.-
Երեւան: Հեղ. հրատ., 2016.-168 էջ:

Գիրքը կը ներկայացնէ հայերէնի աւանդական ուղղագրութեան
կանոնակարգին արդի պատկերը՝ կանոնական ու զարտուղի պարա-
զաները, կը նշէ գրութեան երկձեւութիւնները, կը հաստատէ ընդու-
նելի տարբերակները, քննութեան առարկայ կը դարձնէ ուղղագրա-
կան կանոնակարգին հակասող պարագաները: Ուղղագրական ուղե-
ցոյց ըլլալու կողքին՝ համաապարփակ պատկերն է աւանդական
ուղղագրութեան բոլոր երեսներուն:

Նախատեսուած է լեզուաբաններուն, աւանդական ուղղագրութե-
ամբ գրողներուն, ուսուցիչներուն, աշակերտութեան եւ ուսանողութե-
ան, հայերէնի տարրական քերականութեան ծանօթ բոլոր հետա-
քրքրուողներուն համար:

ՀՏԴ 811.19

ԳՄԴ 81.22

ISBN 978-9939-0-2049-5

© Չոլաքեան Յակոբ, 2016

ՆԵՐԱՄՈՒԹԻՒՆ

Աշխարհաբար հայերենը գլխաւորաբար ժառանգեց գրաբարի ուղղագրութիւնը (դասական), այսինքն՝ բառը արտաբերեց նոր հայերէնի հնչիւնական համակարգին համաձայն, բայց զայն արձանագրեց իր պատմական տարագով, իսկ որոշ պարագաներու մշակեց նոր հայերէնի յարմարող գրելաձեւ: Ասիկա աւանդական ուղղագրութիւնն է:

Ի դէպ, ուղղագրութեան կապակցութեամբ յաճախ իբրեւ նոյնանիշ բառեր կ'ընկալուին *մետրոպեան*, *դասական* եւ *աւանդական* բառերը: Մինչդեռ այդպէս չէ: Բառացի ըլլալով՝ մետրոպեան ուղղագրութեան ինչպիսին ըլլալը չենք գիտեր, որովհետեւ մեր գրականութեան առաջին դարերէն հասած բաւականաչափ ձեռագիրներ չունինք: Դասական կը կոչենք մեր հնագոյն վիմական արձանագրութիւններուն եւ մատեաններուն, ձեռագիրներուն ու վերընդօրինակուած մատեաններուն գրութեան պատկերը: Աւանդականը առաջինը չէր կրնար ըլլալ, ոչ ալ երկրորդը, որովհետեւ դասականը ոչ թէ տառացիօրէն որդեգրուեցաւ աշխարհաբարի կողմէ, այլ անոր հիման վրայ ձեւաւորուեցաւ, չկարենալ ձերբազատուելէ դասականէն եկող երկձեւութիւններէ ու միջին հայերէնեան գրելաձեւերէ, երբեմն ալ աշխարհաբարի երեւոյթները իւրովի տարագելէ:

Ահաւասիկ այս վերջինն է, որ իբրեւ աշխարհաբար հայերէնի երկու ճիւղերուն միասնական ուղղագրութիւն գործեց մինչեւ 1922-ի ուղղագրական ռեֆորմը, որով դատապարտուեցաւ ի գործ դրուելու արտաքին Սփիւռքի մէջ միայն: Խորհրդային Հայաստանի մէջ 1940-ին ձեւաւորուած նոր ուղղագրութիւնը չկրցաւ հայերէնի համար ընդհանրական դառնալ եւ պայմանակնօրէն կոչուեցաւ *հայաստանեան* ուղղագրութիւն:

Ճիշդ չէ մեր ուղղագրելու երկու կերպերը կոչել արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի ուղղագրութիւններ, անկախ այն փաստէն, որ աւանդական ուղղագրութիւնը առաւելաբար արեւմտահայերէնի համար կիրարկելի է ներկայիս,

իսկ նոր ուղղագրութիւնը՝ արեւելահայերէնի: Աւանդականը կը փորձէ մատչելի դառնալ, նորը կը ստեղծէ իր աւանդութիւնները. անջրպետը աւելի կը լայննայ, որովհետեւ ուղղագրութեան կանոնակարգերու տարբերութիւնը բնականաբար ազդած է ու պիտի ազդէ գրական երկու լեզուներուն զարգացման միտումները տարբեր ուղղութեամբ ուղղորդելու իրավիճակին վրայ: Գրական լեզուի երկու տարբերակներուն ինքնաբեր մերձեցման, բնական փոխներգործման ու համընթաց զարգացման հիմքը ուղղագրութեան նոյնացումն է: Ասիկա ազգային գերխնդիր է:

Աւանդական ուղղագրութեան կանոնակարգը, հասկնալի է, չի կրնար հիմնուիլ միայն գիր-հնչիւն համապատասխանութեան օրէնքին, այսինքն՝ արտասանութեան եւ գրութեան նոյնութեան վրայ (*աման, խաղաղ, մինակ, աշխատիլ*): Հոն նկատի կ'առնուին տարբեր օրէնքներ եւս, որոշելու համար, թէ տուեալ պարագային ո՞ր գիրը կամ տառակապակցութիւնը պէտք է գործածել տուեալ բառի գրաւոր աւանդական պատկերը ճիշդ տալու համար: Այսպէս՝

- Դիրքային օրէնքներ. կարելոր է գիտնալ, թէ ի՞նչ հնչիւնական շղթայի մէջ կը գտնուի տուեալ հնչիւնը եւ բառի ո՞ր վանկին մէջ. օրինակ՝ «վ» հնչիւնը ա եւ ե ձայնաւորներէն ետք միշտ չ է՝ *նաւ, սաւան, սեւ, բեւեռ*. ձայնաւորներէն առաջ ու է՝ *Աստուած, ստուեր, նուէր, կռուիլ*. ո ձայնաւորէն ետք վ է՝ *ով, ովկիանոս, կով*, իսկ բառակցքի «վօ» ձայնային կապակցութիւնը ո է՝ *ոզնի, որդի, որ*: *Գերեզման* բառին մէջ «է» հնչիւնը է է, որովհետեւ արմատական բառերու նախաշեշտ դիրքին միշտ է կը գրուի եւ ոչ է, իսկ *բազէ* բառին մէջ է է, որովհետեւ բառավերջին միշտ է կը գրուի:

- Հնչիւնափոխական օրէնքներ. օրինակ՝ ինչպէ՞ս որոշել շեշտակիր փակ դիրքի է-ն եւ ե-ը. ածանցումի եւ բարդումի ատեն «է» հնչիւնը ի դառնալու պարագային է է՝ *գիտուն, գիտնական, գիտնալ*, ուրեմն՝ *գէտ*, իսկ չհնչիւնափոխուելու պարագային է է՝ *գետակ, գետահուն, գետաձի*, ուրեմն՝ *գետ*:

- Ձեռաբանական օրէնքներ. օրինակ, երբ բացառականի հոլովամասնիկ է, ուրեմն է է՝ *ծառէն, ծառէս, ծառէդ*. երբ բայի անկատար ձեւ է, ուրեմն է է՝ *կը գրէի, պիտի գրէիր, գրէր*:

- Բառակազմական օրէնքներ. օրինակ՝ *վազվզել* բառի երկրորդ վ-ն կը բացատրուի բառին կրկնաւոր ըլլալու հանգամանքով՝ *վազ-վազել, չէգոք* բառի գրութիւնը՝ *չէ գ-ոք* կապակցութեան կցումով եւ այլն:

- Իմաստաբանական օրէնքներ, օրինակ՝ *մոմալ ու մրմր-նալ, հօտ ու հոտ, գէտ ու գէտ* նմանաձայն զոյգերուն եւ անոնցմէ կազմուած բաղադրեալ բառերուն գրութիւնը կ'որոշուի խօսքին մէջ իրենց արտայայտած իմաստով միայն:

- Ծագումնաբանական օրէնքներ. օրինակ՝ բառակիզբին հ-ի փոխարէն շատ բառերու պարագային *յ*, մասամբ իբրեւ գրաբարի ի>յ նախդիրի քարացում՝ *յառաջ, յանձնել, յետին*. Բառին մէջ շատ բառերու պարագային ո-ի տեղ *օ*, իբրեւ գրաբարի *աւ* երկբարբառի պարզացում՝ *աւր-օր, տաւն-տօն*:

Աւանդական ուղղագրութիւնը գերծ չէ թերութիւններէ, որոնք կու գան ինչպէս հին լեզուէն, այդպէս ալ լեզուական նոր երեւոյթները ուղղագրելու որդեգրուած կերպերէն: Չարտուղութիւններ, հակասութիւններ, բազմաձեւութիւններ, ուսուցման ու իւրացման չափազանց դժուար պարագաներ կը խանգարեն կանոնակարգումը: Սփիւռքահայ քերականներ եւ ուսուցիչներ խուսափած են համակարգային բարեփոխութիւններ առաջարկելէ ու կիրարկելէ, այն համոզումով, որ լեզուական գերատեսչութեան մը բացակայութեան պայմաններուն տակ որեւէ առաջարկ կրնայ նոր երկձեւութիւն մը ստեղծել: Հայ մամուլը, բառարանները, լեզուական ձեռնարկները, ուղղագրական ուղեցոյցները բաւարարուած են առանձին պարագաներու կապակցութեամբ ցոյց տալ թիւրն ու թերին եւ միօրինակացման ուղին հարթել, միշտ առաջնորդուելով աւանդականը պահելու հրամայականով, որովհետեւ ան ամէնէն ապահով կռուանն է լեզուի տարբեր որակներու մերձեցման, լեզուական միութեան, լեզուի նախկին որակներուն հետ կապ հաս-

տատելու ու բազմաձեռութիւններու յորձանուտին մէջ չիյնալու համար:

Այս աշխատանքին նպատակն է.

ա.- Վերաշարադրել ասանդական ուղղագրութեան կանոնակարգի այն պարագաները, որ խնդիր չունին եւ իրենց գրութիւնը աներկբայօրէն կը բացատրուի հնչիւնական, հնչիւնափոխական, բառակազմական, ձեւաբանական, դիրքային, իմաստաբանական եւ ստուգաբանական գործօններով:

բ.- Նշել ուղղագրական հին ու նոր երկձեռութիւնները եւ հաստատել շատերու կողմէ ընդունելի տարբերակը: Որոշ պարագաներ պահանջած են լայն քննութիւն: Ոճական ու իմաստային իւրայատկութիւններով պայմանաւորուած որոշ երկձեռութիւններ նկատած ենք բնական եւ ընդունելի:

գ.- Քննել ասանդական ուղղագրութեան կանոնակարգը խանգարող զարտուղութիւնները, հակասութիւնները, ոչ մէկ օրինաչափութեամբ բացատրուող, ուսուցման ու իւրացման չափազանց դժուար պարագաները, որոնց մասին յաճախ գրուած է մամուլին մէջ, խօսուած է ուսուցչանոցներու մէջ, իսկ որոշ պարագաներու անցած նախընտրելի ձեւի մը կիրարկումին: Այս հարցերուն մօտեցած ենք երկու ձեւով.

- Հաստատած ենք որոշ առաջարկներ, որոնք գոյութիւն ունեցող գրելաձեւը հայերէնի դասական ուղղագրութեան խորթ համարելով՝ անհրաժեշտաբար կը փոխարինեն զայն համակարգի մէջ մտնող ուրիշ գրութեամբ: Ասոնք որոշ ընդունելութիւն ունեցած են գրական առօրեային մէջ, ինչպէս՝ բարբառային եւ օտար բառերու մէջի է-ն՝ ե-ով կամ բառավերջի օ-ն ո-ով փոխարինելու պարագաները:

- Բաւարարուած ենք ոչ մէկ օրինաչափութեամբ բացատրուող գրելաձեւերը օրինաչափութեան մը տակ դնելու կամ ուղղագրական հակասութիւնները վերացնելու առաջարկները ներկայացնելով ու քննութիւն կատարելով, ինչպէս է՝ի հնչիւնափոխութեան ոլորտէն բոլորովին դուրս մնացած շեշտակիր փակ դիրքի է-ն՝ ե-ով փոխարինելու, կամ բազմավանկ բա-

ներու ւարտին արտասանուող յ-ի թուաքանակի աճի պայմաններուն տակ՝ անձայն յ-ն զեղչելու առաջարկները: Ասոնք քննարկման արժէք ունին ու հաւանաբար մտածել տան միասնական ուղղագրութեան մը ճանապարհը հարթելու մասին:

Այստեղ բնականաբար խօսք կը բացուի այն զուգաձեւութիւններուն մասին, որ կան ւաւանդական եւ նոր ուղղագրութեանց միջեւ՝ առանց կապ ունենալու նոր ուղղագրութիւնը ւաւանդականէն զատորոշող կանոնակարգին հետ, ինչպէս՝ *արձագանգ-արձագանք, փնտռել-փնտրել, փափաք-փափագ, բամպակ-բամբակ, ճիշդ-ճիշտ, փուճ-փուշ, ծորիթ-ծորիդ, գձուձ-գձուծ, վոհմակ-ոհմակ* եւ այլն: Սփիւռքի մէջ զոնէ այս բառերը միօրինակացնելու փորձերը նոր զուգաձեւութիւններով ծանրաբեռնած է ւաւանդական ուղղագրութիւնը, անգամ մը եւս շեշտելով, որ ամէն տեսակի միօրինականացում կարելի է ապահովել միասնական ուղղագրութեան մը կանոնակարգով միայն:

Խուսափած ենք հարցի պատմութիւն կատարելէ ու յղումներով աշխատանքը ծանրաբեռնելէ: Մեր հիմնական յղումները, տուեալ բառը իբրեւ գլխաբառ կամ գլխաբառի տարբերակ ներկայացնելով, եղած են բառարանները (Հայկագեան, Աճառեան, Ջահուկեան, Ղազարեան, Կոռնեան, Աղայեան եւ այլն), որոնց մատենագրական ցանկը ներկայացուած է աշխատանքի վերջաւորութեան:

* *
*

Մաւանդական ուղղագրութեան մէջ Այբուբենը 38 տառ է, եւ տառերը կը ճանչցուին իրենց անուններով՝ այբ, բեն, գիմ... եւ ոչ թէ հնչիւններով, որովհետեւ մէկ հնչիւնի դիմաց մէկէ աւելի գրաւոր նշաններ (տառ կամ տառակապակցութիւն), իսկ մէկ գրաւոր նշանի դիմաց մէկէ աւելի հնչիւններ կան. ասոր կը նպաստէ նաեւ արեւմտահայերէնի գերագանցապէս խլագորկ համակարգ ունենալու փաստն ալ. աշխատութեան մէջ տառա-

նշանը *գիր* կամ *տատ* որոշեալը ունենալու կամ պարզապէս իբրեւ տառ վկայակոչուելու պարագային՝ կարողալ անունով, ինչպէս *ա գիրը՝ այբ գիրը, ե-ին բառասկիզբի դիրքը՝ էչին բառասկիզբի դիրքը, բայց ա հնչիւնը*:

Ստորեւ կը ներկայացնենք միեւնոյն հնչիւնը արտայայտող տառերն ու տառակապակցութիւնները եւ կարգ մը հնչիւններու գրաւոր արտայայտութեան առանձին պարագաները.

Ձայնաւորներ.

ա (այ), ը, է (ե), ի, օ (ո, ոյ), իւ, ու, էօ.

Կիսաձայններ.

յ (ե, ի, է)

Երկհնչիւններ.

այ

եա, (յեա, եայ, յա, իա, յիա, իայ, էա)

եօ (եո, յո, յօ, իո, իոյ, իօ, էո)

իւ՝ «յու»

ոյ (ույ)

ոյ (օյ)

է՝ «էէ»

ն՝ «վն»

Հնչիւնապէս նոյնացած բաղաձայններ.

ո-ը

հ-յ

վ-ո-ու-ւ:

Խլագորկ բաղաձայնական համակարգ կրողներուն համար նոյնն են նաեւ ք-փ, գ-ք, դ-թ, ձ-ց, ջ-չ գոյգերը:

Ա.- ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1.- Ա ձայնաւորը եւ անոր գրութիւնը իբրեւ *ա* եւ *այ*

Ա հնչիւնը հին հայերէնի մէջ արտայայտուած է միայն *ա* գիրով, նոյնպէս՝ նոր հայերէնի նոր ուղղագրութեան մէջ, իսկ աւանդական ուղղագրութեան համակարգ պահող նոր հայերէնի մէջ կ'արտայայտուի *ա* գիրով եւ *այ* կապակցութեամբ:

Այ կապակցութիւնը կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն եւ ունի երկու արժէք՝ երկհնչիւն (*այր, գայլ, հայ*) եւ պարզ ա (*քահանայ, կը կարդայ*):

2.- Ա ձայնաւորը բառին սկիզբը եւ մէջը

Ա ձայնաւորը բառին սկիզբը եւ մէջը անշփոթելի է, կ'արտասանուի *ա*, կը գրուի *ա*, ինչպէս՝ *Արամ, Արարատ, առաւօտ, աղբիւր, գաղափար, հիւանդանոց, մարդահամար*:

Գրուող ու չարտասանուող *ա*-ի պարագայ չէ նկատուած նոր հայերէնի մէջ:

Ա-ը յօդակապ է, ունի բառակազմական արժէք եւ հանդէս կու գայ բարդ բառերու կազմութեան մէջ՝ *քար-ա-կոյտ՝ քարակոյտ, գիր-ա-դարան՝ գրադարան, տուն-ա-մերձ՝ տնամերձ, գոյն-ա-զարդ՝ գունազարդ*: Ունինք անյօդակապ բարդութիւններ եւս՝ *փողկապ, խաչքուռ, ջրվեժ, հրշէջ, շքերթ* եւ այլն: Կան նաեւ յօդակապով եւ առանց յօդակապի տարբերակներ՝ *հօրաքոյր/հօրքոյր, մօրաքոյր/մօրքոյր*, երկրորդները՝ խօսակցական: Արեւելահայերը կը գործածեն *քեռակին*, իսկ արեւմտահայերը՝ *քեռկին* ձեւերը:

Ամէն բառի միջոցով ածականի գերադրական աստիճանը կը կազմուի երկու ձեւով. *ամէն* բառի բացառական հոլովի միջոցով՝ *ամէնէն մեծ, ամէնէն գեշ*, կամ *ա* յօդակապի միջոցով կազմուած բարդութեամբ՝ *ամենամեծ, ամենագեշ*: Գրուող լեզուին մէջ կը հանդիպինք *ամենայ մեծ, ամենայ գեշ* սխալագրութիւններուն:

Մեծ մասամբ (կարելի է ըսել *մեծաւ մասամբ*) կապակցութեան փոխարէն ոմանք կը գործածեն *մեծամասամբ* կազմութիւնը, որ ընթացիկ դարձած է:

Անձեռնմխելի բառը անյօդակապ է, սխալ ձեւ է *անձեռնամխելի*:

3.- Ա յօդակապին տեղ է

Ա յօդակապը կրնայ փոխարինուիլ և գիրով: Այդ բառերը երկու խումբի մէջ կը մտնեն.

ա.- Բառեր, ուր ա յօդակապն ու առաջին բաղադրիչի վերջայանգ ի ձայնաւորը միաձուլուելով կու տան Ե. ինչպէս՝ *բարի-ա-գործ՝ բարեգործ, բարեղէպ, բարեսէր, բարեմիտ, զարի-ա-ջուր՝ զարեջուր, զարեստուն, զարեհաց, զինի-ա-գործ՝ զինեգործ, զինեստուն, զօտի-ա-պինդ՝ զօտեպինդ, զօտեմարտ, հոգի-ա-զաւակ՝ հոգեզաւակ, հոգեհմայ, հոգեզմայլ, հոգեթով, ոսկի-ա-զօծ՝ ոսկեզօծ, ոսկեձոյլ, ոսկեհատ, ոսկեգոյն, որդի-ա-կորոյս՝ որդեկորոյս, որդեգիր, դափնի-ա-պսակ՝ դափնեպսակ, դափնեկիր* եւ այլն: Երկրորդ բաղադրիչը ա ձայնաւորով սկսող ածանց մը կրնայ ըլլալ, ինչպէս՝ *մոլի-ագին՝ մոլեգին, մոլի-ական՝ մոլեկան, տարի-ական՝ տարեկան, ագի-աւոր՝ ագեւոր, ոգի-աւոր՝ ոգեւոր* եւ այլն, կամ ուրիշ բառի մը սկիզբի ա-ն *բարի-արար՝ բարերար*:

բ.- Ա յօդակապի փոխարէն Ե-ը հանդէս կու գայ իբրեւ յօդակապ: Ասիկա զարտուղի երեւոյթ մըն է ու կրնայ բացատրուիլ փոխազդեցական ու համաբանական գործօններով: Զարտուղի ձեւ ըլլալով հանդերձ՝ շարք մը բարդութիւններու մէջ արդէն կայուն է: Ունինք հետեւեալ պարագաները.

- **բաժին** բառէն՝ *բաժնեգին, բաժնեթուղթ, բաժնեկից, բաժնեմաս, բաժնեվճար, բաժնետէր, բաժնետիրական, բաժնետոմս*, առանց բացառութեան.

- **հաշիւ** բառէն՝ *հաշուեկշիռ, հաշուեմատեան, հաշուեմեքենայ, հաշուեյարդար, հաշուետոմար, հաշուետու, հաշուեցոյց, հաշուեցուցակ, հաշուեփակ, հաշուեքննիչ*, բայց քանի մը

ուրիշներու մէջ ունինք ա յօդակապ՝ *հաշուագէտ, հաշուակալ, հաշուակցիլ, հաշուապահ: Հաշուարկ*-ը անյօդակապ է:

- **ծաղիկ** բառէն՝ *ծաղկեպսակ ու ծաղկեփունջ*, իսկ միւսերը միշտ ա յօդակապով՝ *ծաղկադաշտ, ծաղկագարդ, ծաղկահանդէս, ծաղկամշակութիւն, ծաղկանկար, ծաղկաջուր, ծաղկափոշի, ծաղկաքաղ, ծաղկավաճառ* եւ այլն:

- **դպիր** բառէն՝ *դպրեվանք*, միայն, իսկ միւսերը ա յօդակապով՝ *դպրատուն, դպրանոց, դպրապետ*:

- **քար** բառէն՝ *քարեդար* (քարի դար) *քարետախտակ* (քարի տախտակ):

- **խաբ** *արմատի* խաբեայ *ձեւէն՝ խաբեպատիր, խաբերայ*:

- **այց** արմատէն՝ *այցետոմս, այցեգին*, բայց միւսերուն մէջ պահել ա, ինչպէս՝ *այցազիր* (վիզա), *այցազգեստ, այցամատեան, այցավայր, այցավճար*:

- **արծիւ** բառի նախնական ձեւն է *արծուի*, ուրկէ՝ *արծուենշան* ու *արծուեկիր* բարդութիւնները, որոնք կանոնական կերպով կազմուած են ի-ա կապակցութեան ձուլումով՝ *արծուի-ա-նշան*, բայց նոր հայերէնի մէջ բառը ունի *արծիւ* ձեւը, հետեւաբար՝ բարդութիւնները պէտք է կազմուին ա յօդակապով, ինչպէս՝ *արծուարոյն, արծուաքիթ, արծուանշան, արծուակերպ, արծուաճանկ, արծուաբեր* եւ այլն: Խուսափիլ նախկին ձեւերէն:

Ա-ի փոխարէն իբրեւ յօդակապ ե-ի գործածութիւնը տարածուող, բայց մերժելի երեւոյթ մը պէտք է համարել: Այդ բառերը ի+ա=ե կազմութեան համաբանութեամբ (*տարի-ական, տարեկան*) սկսած են երեւիլ մանաւանդ ժամանակ ցոյց տուող բառերու պարագային. *օրական* եւ *ամսական* բառերուն փոխարէն կը հանդիպինք *օրեկան* եւ *ամսեկան սիսլ* ձեւերուն: Ոմանք կու գան մեր դասական գրողներէն (*ջլպպինդ* եւ *զլխաբաց* բառերուն փոխարէն *ջլեպինդ, զլխեբաց*՝ Դ. Վարուժան), կամ արեւելահայերէն ձեւէ մը՝ *սիրեկան* (*սէր-ական, սիրական*). հետեւաբար պէտք է միշտ ա գրել եւ ոչ է:

Գրել	Չգրել
<i>ամսագլուխ</i>	<i>ամսեգլուխ</i>
<i>ամսաթոշակ</i>	<i>ամսեթոշակ</i>
<i>ամսական (ամիս-ական)</i>	<i>ամսեկան</i>
<i>ամսավարձ</i>	<i>ամսեվարձ</i>
<i>ամսավերջ</i>	<i>ամսեվերջ</i>
<i>ամսավճար</i>	<i>ամսեվճար</i>
<i>դարավերջ</i>	<i>դարեվերջ</i>
<i>դարաւոր (դար-աւոր)</i>	<i>դարեւոր</i>
<i>օրական (օր-ական)</i>	<i>օրեկան</i>
<i>գլխաբաց</i>	<i>գլխեբաց</i>
<i>դարաւանդ (դար-աւանդ)</i>	<i>դարեւանդ</i>
<i>թաղակից</i>	<i>թաղեկից</i>
<i>միջնամատ (միջին-ա-մատ)</i>	<i>միջնեմատ</i>
<i>ջլապինդ</i>	<i>ջլեպինդ</i>
<i>ջլաբաց</i>	<i>ջլեբաց</i>
<i>սիրական</i>	<i>սիրեկան</i>
<i>Վարդավառ</i>	<i>Վարդեվառ /Վարդիվառ</i>

4.- Ա եւ ե գիրերու երկձեւութեան այլ պարագաներ

- **Իրար/իրեր.** գրաբարի *իրեր* դերանունը պատմական հնչիւնափոխութեամբ տուած է *իրար* եւ *իրեր*: Բաղադրեալ ձեւերուն մէջ երկուքն ալ կը գործածուին՝ *իրերամերժ-իրարամերժ*, *իրերահաւասար-իրարահաւասար* եւ այլն, թէեւ *իրար* անկախ ձեւը ունի աւելի մեծ յաճախականութիւն: Թելադրելի է գործածել *իրար* ձեւը՝ *իրարանցում*, *իրարամերժ*, *իրարահաւասար*, *իրարօգնութիւն*, *իրարայաջորդ* *իրարհասկացողութիւն* եւ այլն:

- **Հերիսա/հարիսա.** երկրորդ տարբերակը արեւելահայերէնին յատուկ է:

- **Երախայ/երեխայ.** առաջինը արեւմտահայերէնի մէջ կը նշանակէ «չմկրտուած մանուկ»: Ոմանք կը մերժեն *երեխայ* տարբերակը, որ արեւելահայերէնի մէջ իմաստի ընդլայնում ու

լայն կիրարկութիւն ունի, «մանուկ՝ նորածինէն մինչեւ պատանի հասակ. գաւակ. մանկամիտ» իմաստներով: Արեւմտահայերէնի մէջ *երախայ – երեխայ* գոյգը կարելի է անջատել իբրեւ տարբեր բառեր՝ իմաստային յստակ տարբերութեամբ:

- **Տրտնջալ/տրտնջել.** ալ լծորդութեան բնաձայնական շարք մը բայեր հանդէս կրնան գալ նաեւ *ել* լծորդութեամբ՝ առանց իմաստային տարբերակում ստեղծելու: Ասիկա հինէն եկող երեւոյթ մըն է անկասկած. Հայկազեան բառարան կու տայ *տրտնջամ-տրտնջեմ, մոնչամ-մոնչեմ*, բայց՝ *շշնջեմ, քրթմնջեմ, մրմնջեմ, վրնջեմ, խրխնջեմ*: Արեւելահայ բառարանները այս բոլորը կու տան ալ լծորդութեամբ, երկրորդաբար կամ իբրեւ հին ձեւեր՝ նաեւ *ել* լծորդութեամբ, իսկ արեւմտահայ բառարանները (*Գաբամաճեան, Գայայեան*) ասոնք կու տան միայն *ել* լծորդութեամբ. Կռանեան միայն ունի *շշնջալ*: Անկախ բառարաններէն՝ խօսակցականին մէջ թեքում կայ դէպի ալ-ը: Կրկնաւոր բնաձայնները միշտ եղած են ալ լծորդութեան բայեր՝ *մոմոալ, տոտոալ, խշխշալ* եւ այլն:

- **Ելլել/ելլալ.** *ել* լծորդութեան ն-ով սոսկածանցաւոր բայերը խօսակցականին մէջ յաճախ կ'երեւին ալ-ով. *ելլել՝ ելլալ, գտնել՝ գտնալ, իջնել՝ իջնալ, հեծնել՝ հեծնալ, մտնել՝ մտնալ, տեսնել՝ տեսնալ*: Գրականը մերժած է այս ձեւերն ու անոնցմէ կախեալ խոնարհումը:

Կան քանի մը այլ բայեր եւս.

- **Երեւնալ/Երեւիլ/Երեւալ՝ տեսնուիլ, յայտնուիլ.** մեր բառարանները երեք տարբերակներն ալ կու տան: *կ'երեւնամ... երեւցայ... երեւցի՛ր. կ'երեւիմ... երեւցայ...երեւի՛ր*: Երեւիլ տարբերակը առաւելաբար կը գործածուի իբրեւ վերաբերական բառ, «կարծես» իմաստով. «Երեւի չէ վերադարձած, որ չհեռաձայնեց» «կ'երեւի հիւանդ է»: Երեւալ տարբերակը ունի նուազ գործածութիւն:

- **Թուիլ,** բայց ոչ *թուալ*. հետեւաբար *կը թուի... թուեցաւ... թուի՛ր*: Չշփոթել *թուել* ներգործական բային հետ՝ *կը թուէ... թուեց... թուէ՛*:

- **ժպտիլ**, բայց ոչ *ժպտալ*. հետեւաբար կը *ժպտի*... *ժպտե-
ցաւ*... *ժպտի* թ:

- **Խենթանալ/խենթենալ**. նախընտրելի է առաջին տար-
բերակը՝ դիմաւոր եւ անդէմ իր բոլոր ձեւերով:

5.- Ա-ի կորուստ

Ա-ի կորուստի պարագաները երեք խումբերու մէջ կը
մտնեն.

ա.- Պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով նա-
խաշեշտ վանկի ա-ն կորսնցուցած բառեր. բուն եւ հնչիւնա-
փոխուած ձեւերը երբեմն զուգաձեւաբար անցած են գրակա-
նին, ինչպէս՝ *անօտր-նօտր*, *առաջի-առջի*, *հարսանիք-հարսնիք*,
մատանի-մատնի, ատկէ՝ *մատնեմատ*: Բայական միջածանցնե-
րու մէջ ա-ի կորուստ ունեցող բայեր. *անցանել*՝ *անցնիլ/ան-
ցընել*, *գտանել-գտնել*, *ելանել-ելլել* (նլ>լլ լրիւ առնմանութե-
ամբ), *հասանել*՝ *հասնիլ*, *հարցանել*՝ *հարցնել*, *մտանել*՝ *մտնել*,
տեսանել՝ *տեսնել* եւ այլն: Այսպիսի կորուստներ աւելի շատ են
արեւմտահայերէնի մէջ, քան արեւելահայերէնի. *գողանալ*՝
գողնալ, *թուլանալ*՝ *թուլնալ*, *լուսանալ*՝ *լուսնալ*, *խելօքանալ*՝
խելօքնալ, *կարճանալ*՝ *կարճնալ*, *հնանալ*՝ *հիննալ*, *մոռանալ*՝
մոռնալ եւ այլն: Բուն եւ նոր ձեւերը կրնան զուգաձեւաբար գո-
յութին ունենալ, ինչպէս՝ *աղօտանալ-աղօտնալ*, *ծուլանալ-
ծուլնալ*, *պարզանալ-պարզնալ*: Պարզ բայերու պարագային ին-
կած է հիմքի ա-ն, այդպիսով հակադրուելով բարդութիւններու
իբրեւ երկրորդ բաղադրիչ երեւցող մայր տարբերակին կամ
անկախ բառին՝ *ինքնահաւան*՝ *հաւնիլ*, *ազգաճանաչ*՝ *ճանչնալ*,
հնակարկատ՝ *կարկտել/կարկտնել*, *ճերմակ*՝ *ճերմկիլ/ճերմկ-
նալ*, *շալակ*՝ *շալկել*, *ցամաք*՝ *ցամքիլ*, *պառակ*՝ *պառկիլ*, *պակաս*
պակսիլ, *կատաղի*՝ *կատղիլ* եւ այլն: Բառասկիզբին ա-ը վերած-
ուած է ը-ի՝ *ասել>ըսել*, բայց *ասուլիս*, *ասուն-անասուն*, *ասա-
ցող*, *տաղասաց*, *անել>ընել* եւ այլն: Ասոնք նոր լեզուի կայուն
ձեւերը կը նկատուին:

բ.- Ամփոփումի, այսինքն՝ ամբողջ հնչյունախումբի մը կորուստի հետեւանքով ա-ը կորսնցուցած բառեր: Ասոնք, հին թէ նոր կազմութիւններ, կայուն եւ ընդունուած ձեւեր են՝ *ճանապարհ>ճամբայ, զրահահանդերձ>զրահանդերձ, աշխարհահայեացք>աշխարհայեացք, շնորհահանդէս>շնորհանդէս, վարդապետ>վարպետ* եւ այլն:

գ.- Ա-ը տոկուն ձայնաւոր է, այսինքն՝ շեշտափոխութեան պարագային չի հնչյունափոխուիր. *ծառ՝ ծառաստան, պողպատ՝ պողպատեայ, բարակ՝ բարակնալ* եւ այլն, սակայն հոլովական ձեւերու մէջ կարգ մը բառեր ունին ա-ի տղումով ստեղծուած տարբերակներ. *զաւակ՝ զաւակի/զաւկի, զաւակէ՝ /զաւկէ. բերան՝ բերանի/բերնի, բերանէ/բերնէ. ճակատ՝ ճակատի/ճակտի, ճակատէ/ճակտէ*: Դժուար է ըսել, որ ասոնք սովորական զուգաձեւութիւններ չեն, ունին կիրառական ու իմաստային իրաւյատկութիւններ՝ *բերնէ բերան լեցուիլ, բերնէն ջուր կը վազէ, բերնին համը չի գիտեր, բերնին չափը տուր, խօսքը բերնէն կ'ելլէ. ճակտի քրտինքով շահիլ, ճակտի գիր է, զաւկի կարօտ մնալ, առանց տղումի՝ ճակատին վրայ ճանձ նստաւ, զաւակին անունը Սարգիս է, բերանէն ելածը չի գիտեր* եւ այլն: Կը թուի, թէ փոխաբերական խօսքի մէջ ա-ի անկումը աւելի հարագատ է: Այս բառերը ուրիշ իմաստով գործածուելու պարագային ա-ի անկում չեն ունենար՝ *զինուորը ճակատէն վերադարձաւ, ճակատին վրայ գոհեր ունինք, անդունդի բերանին կափարիչ դրին*:

6.- Ա ձայնաւորը բառավերջին՝ այ

Բազմավանկ բառերու վերջաւորութեան այ երկբարբառի պարզացումը եւ ա-ի վերածուիլը գոյացած է պատմական հնչյունափոխութեան հետեւանքով. կը գրուի այ, բայց կ'արտասանուի ա: Բազմավանկ բառերու վերջաւորութեան յ-ն կորսնցուցած է իր կիսաձայն արժէքը ու գրութեան մէջ հանդէս կու գայ միայն աւանդութեան ուժով ու արտասանական արժէք չունի:

Այ կը գրուի հին լեզուէն փոխանցուած բառերու հետեւեալ խումբերու պարագային.

ա.- Մեծ մասով գոյականներու եւ ածականներու վերջաւորութեան՝ *արեղայ, արքայ, ագուգայ, անինայ, արքայ, բակլայ, գուլպայ, երեխայ, ընծայ, լումայ, խարեբայ, կաթսայ կլիմայ, ծառայ, ծնծղայ, ճամբայ, մանանայ, ներկայ, շուկայ, պարագայ, սատանայ, սպայ, սրիկայ, տղայ, փեսայ, փիլիսոփայ, քահանայ, քուլայ* եւ այլն:

բ.- Դիմաւոր բայերու եզակի Գ. դէմքի վերջաւորութեան. խաղալ՝ *կը խաղայ, պիտի խաղայ, թող խաղայ*. հեռանալ՝ *կը հեռանայ, պիտի հեռանայ, թող հեռանայ, հեռացայ*, մտնել՝ *մտայ*, հոսիլ՝ *հոսեցայ*, մեռնիլ՝ *մեռայ*, փախչիլ՝ *փախայ*:

գ.- Միավանկ բայերու ներկայ ձեւերու եզակի Գ. դէմքին վերջաւորութիւնը, ինչպէս՝ *կայ* (կամ բայի), լալ՝ *կու լայ, պիտի լայ, լայ*. գալ՝ *կու գայ, պիտի գայ, գայ*, տալ՝ *կու տայ, պիտի տայ, տայ*: Ասոնք նոյն ձեւով կ'արտասանուին նաեւ բարդութիւններու մէջ երկրորդ բաղադրիչի դերով հանդէս գալու պարագային՝ *հեռակայ, մտակայ, մերձակայ, բացակայ, յետագայ, ապագայ* եւ այլն:

դ.- Այ հոլովումի համապատասխան ձեւերու վերջաւորութեան. *կնիկ կնկայ, աղջիկ աղջկայ*. նաեւ կարգ մը յատուկ անուններու հնաձեւ սեռական հոլովները՝ *Սեւանայ լիճ* (իբր՝ *Սեւանի լիճ*), *Վանայ ծով, Էջմիածնայ Աթոռ, Սասնայ ծռեր, Մծբնայ վանք, Մարութայ սարեր* եւ այլն: Ասոնք գրաբար հոլովական ձեւեր են եւ ներկայիս կը գործածուին որոշ պարագաներու միայն: Նոյն ենթախումբին մէջ կը դնենք նաեւ ժամանակ ցոյց տուող բառերու *ուան* հոլովման *ուայ* տարբերակը. *գիշեր՝ գիշերուան/գիշերուայ, տարի՝ տարուան/տարուայ, օր՝ օրուան/օրուայ* եւ այլն:

ե.- Հին հայերէնի հոլովական ու խոնարհումի քարացած ձեւեր, ինչպէս՝ *վրայ, ոտնըուայ, ենթամնայ, կամայ-ակամայ, մեղայ* եւ այլն:

գ.- Յարաբերական ածականի *եայ* ածանցը՝ *արծաթեայ, ոսկեայ, բրդեայ, փայտեայ, կապուտաչեայ, անձնեայ, առժամեայ, միամեայ* եւ այլն: Քանի մը բառերու պարագային գոյականակերտ է՝ *հրեայ, պաշտօնեայ, քրիստոնեայ* եւ այլն: Չեայ ածանցով կայ միայն *առհասուտչեայ* բառը:

Յօդեր եւ յոգնակերտ մասնիկներ առնելու պարագային անձայն յ-ն կը չքանայ. *տղայ՝ տղաս, տղաք, շուկայ՝ շուկան, շուկաներ, փեսայ՝ փեսան, փեսաներ, հրեայ՝ հրեան, հրեաներ*:

Հոլովումի եւ բառակազմութեան մէջ անձայն յ-ն կը վերածուի լիարժէք հնչիւնի. *արքայ՝ արքայի-արքայէ-արքայով. լումայ՝ լումայափոխ, արքայ՝ արքայախնձոր, գուլպայ՝ գուլպայագործ, ծառայ՝ ծառայասէր, տղայ՝ տղայական, փիլիսոփայ՝ փիլիսոփայութիւն*, բայց քանի մը բառերու պարագային կը պատահի այ-ի անկում. *տղայ՝ տղաբերք* (տղ{այ}-ա-բերք), *քահանայ՝ քահանացու* (-ացու), *փեսայ՝ փեսացու, մեքենայ՝ մեքենաբար* (-արբար), *մեքենական* (-ական), *մեքենագէտ* (ա-գէտ), *ակռայ՝ ակռահատիկ, ճամբայ՝ ճամբաբաժան, ճամբորդ, ճամբորդել*, սեռականը՝ *ճամբու*: Այս օրինակներէն դուրս այ-ը կը մնայ արմատական բաղադրիչ՝ *քահանայական, մեքենայութիւն, տղայական*:

7.- Այ-ի երկբարբառային արտասանութիւնը

Այ կապակցութիւնը իբրեւ երկհնչիւն կը հանդիպի.

ա.- Բառին սկիզբը, բառին մէջը եւ միավանկ բառերու վերջաւորութեան՝ *այգի, այլ, այրել, մայր, հայր, եղբայր, դայլայլ, հայ, բայ, վայ, ճայ* եւ այլն:

Պատմական հնչիւնափոխութեան կը վերաբերին քանի մը բառերու մէջ *անգ* եւ *անկ* կապակցութիւններու երկբարբառայնացումը՝ *կանգնիլ-կայնիլ, անկանիլ-իյնալ*:

Այ-ի հնչիւնափոխութեան միայն մէկ-երկու օրինակ ունինք՝ *քայլ-քալել, իսկ ցայտ* արմատէն՝ *ցատկել*: Վերջայանգի *այ* երկհնչիւնը ուրիշ ձայնաւորէ մը առաջ կ'երկփեղկուի. *հայ*

հայու, հայէ, հայով. բայ՝ բայական, բայանուն. կայ(ք)՝ կայուն, կայան, կայարան եւ այլն:

Նկատի ունենալ, որ քանի մը միավանկ բայերու վերջաւորութեան այ կապակցութիւնը ունի *ա* արտասանութիւնը՝ *կայ, գայ, լայ, տայ*:

բ.- Բարբառային եւ նորամուտ բազմավանկ բառերու վերջաւորութեան անկարելի չէ եղած այ երկինջինի գոյացումը: Եթէ *քահանայ* բառը մենք կը կարդանք *քահանա*, անդին կան այնպիսի բազմավանկ բառեր, ուր այ-ը կը կարդանք իբրեւ երկինջին, ինչպէս կը կարդանք բառին մէջ եւ միավանկ բառերու վերջաւորութեան՝ *այր, հայր, հայ, ճայ*: Արդարեւ կան այդպիսի բառեր, պիտի ըլլան ու մեր մնայուն բառապաշարին մաս կազմեն: Անոնց գրութեան համար այլ ձեւ չկայ բացի անկէ, որ բառամէջին եւ միավանկ բառերու վերջաւորութեան կ'ընենք: Հետեւաբար՝ *հալայ, նանայ, օհա՛յ, օխա՛յ, հարայ* պարային ու բացականչական կանչերը, *Հաթայ, Տուպայ* տեղանունները, *սամուրայ, քարվանսարայ* բառերը *կ'արձանագրենք նոյն ձեւով*: *Տուպայ* անունը ոմանք կը տառադարձեն *Տուպէյ*: Կայ նաեւ որոշ անուններու տարարտասանութիւնը՝ *Արայ, Նիքոլայ* եւ այլն, որ կրնայ բազմապատկուիլ արեւելահայերէնի հետ մեր բնական շփման հետեւանքով:

Այստեղ այ-ը երկինջին է: Ինչպէ՞ս պէտք է կողմնորոշուիլ: Բացառութիւնները անգիր ընելու կերպէն զատ միջոց չկայ: Այս խումբի բառերը սովորաբար տարբեր գիրով մը կը գատորոշենք, որպէսզի հակադրուին բազմավանկ բառերուն «ա» արտասանուող վերջայանգ այ-ին: Բայց ասիկա չի կրնար մնայուն լուծում ըլլալ, մանաւանդ երբ լեզուի զարգացման բնական ընթացքին մէջ այդ խումբի բառերը կրնան բազմապատկուիլ:

Դպրոցականներուն համար դիւրին յաղթահարելի պարագայ մը չէ նաեւ միավանկ բառերու աւարտին այ-ը ա՞, թէ «այ» կարդալու պարագան. *կայ, տայ, լայ, գայ* բառերը պարտի կարդալ ա, իսկ *հայ, բայ, ճայ, վա՛յ* բառերը՝ այ հնչելով:

8.- Բառավերջի ա հնչյունի դիմաց ա

Ա-ով կը վերջանան հետեւեալ բառային խումբերը.

ա.- Նոր փոխառութիւնները կամ բարբառային բառերը, ինչպէս՝ *աղա, թամաղա, հալվա, հերիսա, հինա, դաւուրմա, դափամա, մամա, շոքոլա, շոքպա, պապա, պախրա, տրամա, փախլաւա, փարա, օփերա* եւ այլն:

բ.- Անձի եւ տեղի հին ու նոր յատուկ անունները, ինչպէս՝ *Արա, Եւա, Հարմա, Սեզա, Սեւադա, Սոնա* (անձի), *Ամերիկա, Ատանա, Երզնկա, Մոսկուա, Ֆրանսա* (տեղի) եւ այլն:

Արա անունը հին հայերէնի մէջ կը հանդիպի նաեւ յ-ով. «Նուագ է Արայն քան զԱրուսեակն գեղեցիկ»: Կայ նաեւ Շամիրամի կողմէ Արայի որդի Կարդոսին տրուած *Արայեան Արայ* անունը: *Արայ* անձնանունը ներկայիս կը գործածուի (Ծանօթ անուններ են Արայ Կարմիրեան եւ Արայ Զարգարեան): Հաստատանի մէջ կը կարդացուի, ինչպէս որ գրուած է:

Այ ձեւով կը գրուին այն յատուկ անձնանունները, որոնք ծագումով պարզ բառեր են, ինչպէս՝ *Հրաչէայ* (հուր-աչ(ք)-եայ՝ կրակէ աչքեր ունեցող), *ընծայ՝ Ընծայ*, կամ պարզապէս հին սեռական հոլովածներ են՝ *Սեւանայ, Վանայ*:

գ.- Իա, էա վերջաւորութիւնը ունեցող փոխառեալ պարզ բառերը եւ անձի ու տեղի յատուկ անունները՝ *լուրիա, քիմիա, ֆիզիա, մեսիա, պաքալորիա, իտէա* (պարզ բառեր). *Մադաքիա, Անանիա, Եդիա, Մարիա* (անձի). *Իտալիա, Սպանիա, Քորէա* (տեղի) եւ այլն:

դ.- *Համարեա՛* (գրեթէ) վերաբերական բառը եւ *տէր ողորմեա՛* բացականչական ջքմեղանքի արտայայտութիւնը, երկուքն ալ շեշտով, որովհետեւ *համարել* եւ *ողորմել* բայերու գրաբար հրամայական ձեւերն են: Ունինք նաեւ մեկնողական *իմա՛* ըսելաձեւը իբրեւ «*իմացի՛ր*»:

Տէր ողորմեա արտայայտութիւնը ներկայիս յարադրաւոր բացականչութիւն է, հետեւաբար կորսնցուցած է կոչական-հրամայական բայ յարաբերութիւնը (*Տէ՛ր, ողորմեա՛*), ստորակէտը աւելորդ կը դառնայ: Կրնայ, ըստ արտասանութեան,

շեշտ ու երկար առնել: Ի դէպ, հայաստանեան ուղղագրութեան մէջ *տէր* բառով այսպիսի յարադրութիւնները գծիկով կը գրեն՝ *տէր-ողորմեա՛*, *Տէր-Սարգիսեան* եւ այլն: Աւանդական ուղղագրութեան մէջ այսպիսի անունները կը գրուին յարադրաւոր ձեւով՝ *Տէր Պողոսեան*, *Քել Սահակեան*, *Հաճի Մուրատեան* կամ կցական ձեւով՝ *Թուրսարգիսեան*, *Գարաեագուպեան* եւ այլն:

ե.- Չայնանիշերու անունները՝ *Ֆա*, *լա*:

զ.- Գիրերու անունները՝ *դա*, *զա*, *ծա*, *շա*:

է.- *Ահա*, *հիմա*, *ապա*, *հապա* բառերը:

Կայ նաեւ *հիմայ* տարբերակը, որ հագուադէպ կը հանդիպի արդէն: Մերժել:

ը.- Ցուցական դերանուններէն հետեւեալ շարքերը.

ասիկա, *ատիկա*, *անիկա*.

սա, *դա*, *նա*. *սրա*, *դրա*, *նրա* (արելելահայերէն):

թ.- Չայնարկութիւնները. *հա՛*, *վա՛*, *քա՛*, *պա՛*:

ժ.- Ալ խումբի պարզ բայերու եզակի հրամայականը. *խա-ղա՛* (խաղալ), *լողա՛* (լողալ), *լուա՛* (լուալ), *խնդա՛* (խնդալ), *պո-ռա՛* (պոռալ) եւ այլն:

Ա-ով վերջացող բառերը հոլովումի եւ բառակազմութեան ստեն կ'ունենան յ-ի յաւելում. *աղա՛*, *աղայի՛*, *աղայէ՛*, *աղայով՛*, *աղայական՛*, *աղայութիւն՛*:

Ա-ով վերջացող բառերը մականուններու *եան* մասնիկէն առաջ կը ստանան անձայն յ. *Եղիա՛*, *Եղիայեան՛*, *Արա՛*, *Արայեան՛*, *Թումա՛*, *Թումայեան՛* եւ այլն:

Ոմանք հոլովական մասնիկներէն կամ յօդերէն առաջ, յատկապէս լրիւ գլխագրուած յատուկ անուններու պարագային, յ-ի փոխարէն գծիկ կը դնեն՝ *Սոնա-ի*, *Արա-ի*: Ասիկա այլապէս թոյլատրելի պէտք չէ ըլլայ:

Տեղանուններու ա եւ իա վերջոյթները բառակազմութեան ստեն կ'իյնան. *Ամերիկա՛*, *ամերիկեան՛*, *ամերիկացի՛*, *Ֆրանսա՛*, *ֆրանսական* (-ական), *ֆրանսերէն*, *Քանատա՛*, *քանատաբնակ* (ա-բնակ), *քանատական՛*, *Իտալիա՛*, *իտալական՛*, *իտալերէն*, *Պուլկարիա՛*, *պուլկարական՛*, *պուլկարերէն* եւ այլն: Կան նաեւ

պահողներ. *Անգլիա՝ անգլիական, անգլիացի* (բայց՝ *անգլերէն*. ոմանք՝ *անգլիերէն*. մերժել), *Լիպիա՝ լիպիական, լիպիացի* եւ այլն: Ոչ տեղանուններու պարագային նոյնպէս կը մնան. *Քիմիա՝ քիմիագէտ, պուտտա՝ պուտտայական*:

9.- Ա ձայնաւորը այլ ձայնաւորներէ առաջ

Ա ձայնաւորը իրմէ ետք եկող ձայնաւորին միշտ յ կիսա-ձայնով կը միանայ. այա, այե, այէ, այի, այը, այո, այո, ինչպէս՝ *կայան, կայարան, մայել, հմայել, Կայէն, նայիլ, հայ՝ հայր, մայիւն, այո, կայուն* եւ այլն:

Օտար անուններու մէջ օրինաչափական է ա-ի (նաեւ ո-ի) եւ յաջորդ ձայնաւորի միջեւ յ-ի գրութիւնը, ինչպէս՝ *Անայիս, Կայէն, Միքայէլ, Ռաֆայէլ, Մայա, Նայիրի*: Ասիկա հայերէն ուղղագրելու աւանդական ու ճիշդ ձեւն է. սառը հակառակ գրութեան ալ կը հանդիպինք՝ *Նաիրա, Աիտա, Սաիտ*: Լաւ կ'ըլլայ գրել հայերէնի աւանդական գրելաձեւով՝ *Նայիրա, Այտա, Սայիտ*, ու չստեղծել գրութեան նոր պարագաներ:

10.- Կրկնակ ա-ի գրութիւնը օտար բառերուն մէջ

Կրկնակ ա-ի միակ պարագան հայերէնի մէջ ա-ով սկսող ածականներու գերադրական աստիճանն է: Ամէն պարագայի՝ արեւմտահայերէնի մէջ առհասարակ չէ քաջալերուած այդ ձեւը ձայնաւորով սկսող ածականներու պարագային. արեւելահայերէնի *ամենաաղի, ամենաուշ, ամենաեզակի* եւ նման ձեւերը արեւմտահայերէնի մէջ կը գործածուին *ամէնէն աղի, ամէնէն ուշ, ամէնէն եզակի* յարադրաւոր եղանակով:

Արաբերէն ու թրքերէն շփական Ջ հնչիւնը հայատառ թրքերէնի մէջ սովորութիւն էր արտայայտել ապաթարցով: Նոյնը օրինաչափական է հայատառ թրքերէն գրականութեան մէջ. օրինակ՝ *Եա Բապպ, տու՝սմը իսթիմա՝ էլէ* (Մեզամիթ, Իսթանպօլ, 1911, էջ 75): Ոմանք նոյն ձեւով կը տառադարձեն ներկայիս եւս՝ *Մա՛ղուլա, Տար՝ա, նա՛նա, նա՛լաթ, Թալ՛աթ*. տարածուած է ա-ով մը զայն փոխարինելու կերպը՝ *Մաալուլա, Տարաա, նաա-*

նա, նաալաթ, Թալաաթ, Պաալպէք: Ոմանք տեղ-տեղ այլ ձայնաւորով մը կ'արտայայտեն զայն՝ Թալաաթ՝ Թալէաթ, Պաալպէք-Պաէլպէք: Լաւագոյնն է կրկնակ ա-ն:

11.- Է ձայնաւոր հնչիւնը եւ անոր գրութիւնը իբրեւ է եւ է

Է հնչիւնը հին հայերէնի մէջ արտայայտուած է միայն *է* գիրով. նոր հայերէնի նոր ուղղագրութեան մէջ բառասկիզբին կ'արտայայտուի է (*էջ՝ վայրէջք*), իսկ բառամէջին ու բառավերջին՝ *ե* գիրերով (*պարտեզ, ասիսէ*). աւանդական ուղղագրութեան համակարգ պահող նոր հայերէնի մէջ բառասկիզբին եւ բառավերջին կ'արտայայտուի է (*էջ, ասիսէ*), իսկ բառամէջին՝ *ե* եւ է գիրերով (*պարտեզ, բեհեզ*):

Ե գիրը աւանդական ուղղագրութեան մէջ ունի հնչիւնական երեք արժէք. բացի բառամէջի է հնչիւնէ (*ծեր, կեղեւ*), բառասկիզբին կ'արտայայտէ կիսաձայն-ձայնաւոր կապակցութեան (*երգ, երկու*), իսկ այլ ձայնաւորէ մը առաջ՝ կիսաձայնի հնչիւնական արժէքներ (*կեանք, մատեան, եօթը*):

Է գիրը հին հայերէնի մէջ ունեցած է երկբարբառային արտասանութիւն՝ «էյ». յետագային պարզացած ու նոյնացած է ե-ին: Բացի է հնչիւնէ, ձայնաւորէ առաջ կրնայ արտասանուիլ նաեւ իբրեւ կիսաձայն (*իտեալ՝ իտ-եալ, հիւլեական՝ հիւլեական*):

Ե եւ է գիրերը նոր հայերէնի մէջ հնչիւնապէս նոյնացած ըլլալով հանդերձ գերազանցապէս կը պահեն իրենց հնչիւնային որակը շեշտափոխական հնչիւնափոխութեան պարագային: Այնտեղ ուր դիրքային, ձեւաբանական եւ արտասանական գործօններով իրարու չեն հակադրուիր՝ օգնութեան կը հասնի շեշտափոխական հնչիւնափոխութեան պարագան. է գիրով արտայայտուած ձայնաւորը թոյլ է ու հնչիւնափոխութեան կ'ենթարկուի՝ *պարտեզ-պարտիզպան*, իսկ ե-ը տոկուն ձայնաւոր է, չի հնչիւնափոխուիր՝ *բեհեզ-բեհեզեայ*:

Ե-ը սեռական հոլովի ներքին մասնիկ է գրաբարի մէջ. քանի մը բառերու պարագային տակաւին կը գործածուի իբրեւ

հնաբանութիւն. *կայսր՝ կայսեր* (կայսրի), *դուստր՝ դստեր* (դուստրի): Այս ե-ը կը մնայ կարգ մը բաղադրեալ բառերու հիմքային բաղադրիչներուն մէջ, ինչպէս *կայսր՝ կայսերական*, բայց *կայսրութիւն*, *կայսրուհի*, *վագր՝ վագերաձի*, բայց *վագրային*, *եզր՝ եզերք*, *եզերել*, *տիեզերք*, բայց *եզրաբանութիւն*, *եզրակացնել*, *տարր՝ տարերային*, բայց *տարրական*, *անգղ՝ Անգղեակոթ գիւղը*, բայց *անգղային*, *անգղթեւ* (բոյս մը): *Ոսկր* (գրաբարի յոգնակին՝ *ոսկերք*) բառը նոր հայերէնի մէջ չէ պահած ե-ով հիմքը՝ *ոսկրաբոյժ*, *ոսկրաճուծ*, *ոսկրաբան*, *ոսկրախոտ*, *ոսկրանալ*: *Աստղ* բառէն ունինք *աստեղախումբ* հին ձեւը, հիմա՝ *աստղաբաշխութիւն*, *աստղալոյս*, *աստղախումբ*, *աստղահոյլ*:

- **Թատերգակ/թատրերգակ.** *թատր* բառէն ունինք *թատերական*, *թատերախումբ*, *թատերաբեմ*, *թատերախաղ*, *թատերասէր*, *թատերասրահ*: *Թատերերգութիւն* օրինաւոր կազմութեան դիմաց կրկնակ եր-ի յապաւումով ունինք *թատերգակ*, *թատերգութիւն*. *ոմանք՝ թատրերգակ* ու *թատրերգութիւն*: Նախընտրելի է պահել *թատերգակ* եւ *թատերգութիւն*:

- **Եւ/և.** նոր ուղղագրութեան մէջ *եւ* կապակցութիւնը բառի բոլոր դիրքերուն մէջ կը գրուի *և* ձեւով՝ *ևս*. *սև*, *սեթնեթ*: Կը նկատուի Այբուբենի 39-րդ տառը: Աւանդական ուղղագրութեան կանոնակարգին մէջ չի մտներ գրութեան այս ձեւը. Այբուբենին մէջ կը մտնէ իբրեւ շաղկապ, *օ/Օ* եւ *ֆ/Ֆ* գիրերը աւելցնելով Այբուբենին վրայ:

12.- Ե եւ է գիրերը իբրեւ կիսաձայն

Արդի հայերէնի մէջ ե-ի կիսաձայն արտասանութիւնը կը հանդիպի միայն ձայնաւոր գիրերէ առաջ: Այսպէս՝

ա. Հայերէնի եա, եայ, եօ երկինչիւններուն մէջ, բառասկիզբին ու բաղաձայնէ ետք իրենց դիրքին մէջ՝ *կեանք*, *սենեակ*, *պատեան*, *հրեայ*, *արծաթեայ*, *ոսկեայ*, *պաշտօնեայ*, *եօթը*, *արդեօք* եւ այլն:

բ.- Օտար բառերու սկիզբը, ձայնաւորէ առաջ՝ *էար, էա-ման, Եորկի, Եոհան, Եուկրո, Եունէս, Եուսէֆ* եւ այլն: «Եէ» երկհնչիւնը կը գրենք միայն ե-ով՝ *Ենովա, Ելցին, Ելվախ*, ինչպէս բնիկ հայերէն բառերը կամ հին փոխառութիւնները՝ *եղբայր, երես, Երեմիա, Երոպա* եւ այլն:

Է գիրը հին փոխառեալ բառերու *էա, էո* կապակցութիւններուն մէջ, բաղաձայնէ մը ետք՝ արդի հայերէնի խօսակցականին մէջ կորսնցուցած է իր ինքնուրոյնութիւնը ու կ'արտայայտէ կիսաձայնի արժէք՝ *Անդրէաս, Քորէա, Չաքէոս, լեզէոն, պանթէոն, Նափողէոն* ու կը մասնակցի *էօ* ձայնաւորի կազմութեան՝ *Էօժենի, Սէօլէօզ, Թէօլէօլէան* եւ այլն (տե՛ս էջ 87):

13.- Ե եւ է գիրերուն բառասկիզբի հնչիւնական հակադրութիւնը

Ե եւ է գիրերը հնչիւնապէս իրարու կը հակադրուին միայն բառասկիզբին:

Բառասկիզբին ե-ը երկհնչիւն է՝ «եէ», իսկ է-ն՝ պարզ ձայնաւոր՝ է:

Ե-ը իբրեւ երկհնչիւն կու գայ միայն բառին սկիզբը, բաղաձայնէ մը առաջ, կիսաձայն եւ ձայնաւոր միացութիւն է՝ «եէ», ինչպէս՝ *Եգիպտոս, եղեմ, եզակի, եթեր, էլք, եկեղեցի, եղբայր, եղնիկ, եպիսկոպոս, եռանդ, ետ, երագ, երկու, եփիլ* եւ այլն:

Այս երկհնչիւնը բարդութեան կամ ածանցումի մէջ մտնելով կը վերածուի պարզ ձայնաւորի. *էլք՝ վերէլք, վերելակ, եղբայր՝ հօրեղբայր, մօրեղբայր, երանգ՝ նրբերանգ, երգ՝ համերգ, մեներգ, խմբերգ, երթ՝ ողջերթ, շքերթ, ինքնեկ, երես՝ աներես, երկերես, եղէգ՝ շաքարեղէգ, երակ՝ բազկերակ, երեւ՝ ակներեւ, երէց՝ տաներէց* եւ այլն:

Նոյն փոփոխութիւնը տեղի կ'ունենայ բայերու պարագային, երբ սկիզբը կ' (կը) բայական մասնիկը ըլլայ. չենք ըսեր *կը երագեմ*, այլ՝ *կ'երագեմ*, նոյնպէս՝ *կ'երերամ, կ'երգեմ, կ'երթամ, կ'ելլեմ, կ'եղբայրանամ, կ'եփեմ* եւ այլն: Արեւելահայը նոյն ձեւերը կը գրէ *կերգեմ*, բայց կ'արտասանէ *կը երգեմ*:

Խօսքի շղթային եւ բաղադրեալ բայերուն մէջ դերբային ընկերացող էական բայը թէեւ առանձին կը գրուի, բայց կ'արտասանուի միասին՝ *ես եմ, դուն ես, մենք ենք, անոնք են, ուսուցիչներ են, աշակերտներ ենք, գրած եմ, գրած ես, գրած ենք, գրած են, գրեր եմ, գրեր ես, գրեր ենք, գրեր են:* Բառաշեշտը կու գայ հանգոյցին կամ դերբային վրայ (*գրե՛րեմ, գրա՛ճեմ*): Այսինքն՝ այստեղ անջատ գրուող էական բայի ձեւերը ե-ով կը սկսին, բայց կ'արտասանուին է: Ասիկա ինքնին օրինաչափական պարագայ մըն է:

Բառաբարդումի մէջ երկրորդ բաղադրիչին ձայնաւորով սկսելու պարագային հայերէնի բառակազմական օրէնքով յօդակապ չի գործածուիր, ինչպէս՝ *շաքարեղէգ, բազկերակ, ակներել, խմբերգ*, բայց ահա ունինք զարտուղի քանի մը պարագաներ, ուր ե-ը ա յօդակապի առկայութեամբ կ'արտասանուի բառասկզբի առոգանութեամբ.

- **ինքնաեռ** բառը, որ հաւանաբար մտոցուելու վրայ է.

- **տեսաերիզ** բառը, որուն ճիշդ ձեւը պէտք է ըլլայ *տեսերիզ*, ինչ որ շատեր կը գործածեն.

- յատկապէս երեք բաղադրիչներէ կազմուած բարդութիւններու մէջ, ինչպէս՝ *կիսաեզրափակիչ, բազմաենթակայ*, ուր ե-ը կ'արտասանուի բառասկիզբի առոգանութեամբ:

Վերջին պարագան օրինաչափական կը դառնայ արդէն:

Նաեւ (*նա՛ ան+ել*) կցական բարդութեան մէջ նոյնն է պարագան (անվարժները կը կիրարկեն *նայել* սխալագրութիւնը):

Եւ այլն/եւայլն. եւ բառը շաղկապ է: Բառակազմական մակարդակի վրայ հանդէս կու գայ կցական բարդութիւններու մէջ՝ *առեւտուր, երթելեկ*, համադաս անդամները կցելու դերով՝ *առ եւ տուր, երթ եւ եկ*: Այդ տեսակէտէն զարտուղի ձեւ մըն է *եւ այլն* կապակցութեան կցումը՝ *եւայլն*: «Քաղեցինք տանձ, ծիրան, խնձոր եւ այլն» նախադասութեան մէջ, ինչպէս կ'երեւի, *այլն* բառը համադաս անդամ է *տանձ*-ին, *խնձոր*-ին ու *ծիրան*-ին եւ անոնց կը կապուի *եւ* շաղկապով (բնականաբար՝ առանց

ստորակէտի), այսինքն՝ *եւ ու այլն* հանդէս կու գան իբրեւ տարբեր բառեր, տարբեր դերերով:

Է-ն բառին սկիզբը անշփոթելի է. *էակ, էգ, էշ, էջ, էրիկ* եւ այլն (միայն էական բայի կարգ մը ձևերը խօսքի շղթային մէջ է կը լսուին, բայց կը գրուին է): Է ձայնաւորը բառասկզբին թոյլ ձայնաւոր է, շեշտափոխութեամբ ի կը դառնայ. *էգ՝ իգական, էջ՝ իջեւան, իջնել, էշ՝ իշապան, իշուկ*, բայց անփոփոխ կը մնայ *էջաթիւ, էջադրում, էջատակ, էջակալ* բառերուն, նաեւ *էջմիածին* (Միածինը իջաւ) կցական բարդութեան մէջ: Բարդութեան մէջ իբրեւ երկրորդ բաղադրիչ կը մնայ անփոփոխ՝ *անէական, անէութիւն, որձեւէգ, վայրէջք, ելեւէջ, կայքէջք*:

Բաղադրեալ բառերու մէջ բաղադրիչ բառերու բառասկզբի է եւ է գիրերը հնչիւնապէս կը նոյնանան, բայց ճանաչելի կը դառնան բառակազմական գործօններով (*էջ՝ վայրէջք, ելք՝ վերելք*):

14.- Ե եւ է գիրերուն դիրքային եւ ձևաբանական հակադրութիւնները

Բառամեջին եւ բառավերջին է եւ է գիրերը նոյնահունչ ըլլալով հանդերձ՝ զանազանելի են դիրքային եւ ձևաբանական հակադրութիւններով ու շփոթութեան առիթ չեն ստեղծեր: Այսպէս՝

ա.- Արմատական բառերու նախաշեշտ դիրքերուն մէջ միշտ է կը գրենք, ինչպէս՝ *բերան, գերան, գերեզման, դեղին, Դերենիկ, դերձան, դեսպան, եկեղեցի, գեռուն, լեզու, լեղի, կեռաս, կերպաս, հեռու, ճերմակ, մեղու, շերամ, սեղան, վեղար, ցերեկ* եւ այլն: Այս օրէնքին մէջ կը մտնեն նաեւ ածանցներու նախաշեշտ դիրքերը.

- **եղէն.** *ձիւնեղէն, լուսեղէն, ժայռեղէն, կաթնեղէն...*
- **ենական.** *հօրենական, պապենական, մօրենական...*
- **ենի.** *դեղձենի, թթենի, թգենի...* նաեւ՝ *մայրենի լեզու, հայրենի երկիր.*

- **ելի.** *ատելի* (ատել բայէն), *սիրելի*, *բուժելի*, *գարշելի*, *բնակելի*, *կասկածելի*, *վստահելի*, *համակրելի...*: *Ընթեռնելի* հին ձևին փոխարէն այժմ կը գործածենք *ընթեռնելի*:

- **եցի.** *վանեցի*, *խոյեցի*, *ձորեցի...*

- **եցիկ.** *ընկեցիկ*, *բարեկեցիկ*, *հպանցիկ*:

Նախաշեշտ դիրքերուն մէջ է-ն ի յայտ կու գայ անհնչիւնափոխ բարդութիւններու մէջ՝ *կետադրութիւն* (*կետ-ա-դրութիւն*), *վրէժխնդիր* (*վրէժ-խնդիր*), *օրէնադիր* (*օրէն-ս-դիր*), *թեական* (*թե-ական*), կամ կը կազմուի շեշտափոխական հնչիւնափոխութեամբ՝ *այժմէական* (*այժմէայ-ական*), *խաբէութիւն* (*խաբէայ-ութիւն*), *պաշտօնէութիւն* (*պաշտօնէայ-ութիւն*), *քրիստոնէական* (*քրիստոնէայ-ական*), *հրէութիւն* (*հրէայ-ութիւն*), *անդէորդ* (հովիւ. *անդէայ* [արջառ]-որդ): Կրնայ գոյնալ բառավերջի ի-էն, եթէ բարդութեան երկրորդ բաղադրիչը ձայնաւորով կը սկսի. *հոգէառ* (*հոգի առ, ոսկէօղ* (*ոսկի օղ*): Այս պարագաներուն եւս է-ն ճանաչելի է ու հեշտութեամբ կը հակադրուի նախաշեշտ ե-ին: Անշփոթելի են նաեւ բայական ել եւ իլ խումբերու անցեալ անկատար ժամանակներու վերջաւորութիւնները՝ *էի*, *էիր*, *էր*, *էինք*, *էիք*, *էին*. *գրել*՝ *գրէի*, *գրէիր*, *գրէր*. *գրէինք*, *գրէիք*, *գրէին*. *խօսիլ*՝ *խօսէի*, *խօսէիր*, *խօսէր*. *խօսէինք*, *խօսէիք*, *խօսէին*: Գոյականի բացառական հոլովու ուղիղ ձև յարադրութիւնները ունին մակբայական կիրարկութիւն՝ *դռնէ դուռ մուրալ*, *տունէ տուն պտտիլ*, *տեղէ տեղ դեզերիլ*: Տեղ ցոյց տուող բառերէ կազմուած այսպիսի կապակցութիւնները ճիշդ չէ կցել կամ զծիկով միացնել՝ *տեղէտեղ*, *տեղէ-տեղ*: Կան նաեւ բայարմատէ կազմուած նման յարադրութիւններ՝ *նազէ նազ*, *գողէ գող*, *վազէ վազ* (*վազն ի վազ*), *կաղէ կաղ* (*կաղն ի կաղ/ կաղնիկաղ*): Այս յարադրութիւնները ոմանք կցելով կը գրեն՝ *նազէնազ*, *վազէվազ*, *կաղէկաղ*:

բ.- Ե կու գայ արմատական երկու բաղաձայնէ առաջ շեշտակիր դիրքին մէջ՝ *բերդ*, *գեղձ*, *դեղձ*, *զեղձ*, *թերթ*, *խենթ*, *ծերպ*, *մերթ*, *ներկ*, *շերտ*, *չակերտ*, *սեղմ*, *վերջ*, *տենդ*, *փեղկ*,

փեփերթ, քերծ եւ այլն: Անշուշտ այս կերպ են նաեւ ածանցաւորները՝ *բեղմնաւոր, կերտել, հեղձուկ, քերթել* եւ այլն:

Երկու բաղաձայնէ առաջ շեշտակիր դիրքին մէջ է երբեք չի գար: Կայ միայն *քէնդ* բառը, որ փոխանցուած է նաեւ *քէնդ* տարբերակով՝ ե-ով, իսկ *յաւերժ* բառը ե-ով սխալագրութիւն է, պէտք է գրել *յաւերժ*:

Ք վերջածանցով բառերը (*վերք, խելք մեղք, արգելք* եւ այլն) վերի շարքին մէջ չեն մտներ, որովհետեւ ք-ն ածանց է ու բառաբարդումի ատեն կ'իյնայ: Ք ածանցով բառերը կրնան ունենալ է կամ ե. *վերք՝ վիրաւոր, անեծք՝ անիծել, զէնք՝ զինել, շէնք՝ շինել, բայց մեղք՝ մեղաւոր, խելք՝ խելացի* եւ այլն:

գ.- Բառին վերջը նոյնպէս անշփոթելի է, միշտ՝ է. *ափսէ, բազէ, եթէ, թէ, հիւլէ, մանրէ* եւ այլն: Բառավերջի է-ն շեշտափոխութեամբ չի հնչինափոխուիր. *ափսէ՝ ափսէակիր, բազէ՝ բազէակիր, թէ՝ թէական, հիւլէ՝ հիւլէական, մանրէ՝ մանրէաբան, է՝ էական, էութիւն, աշտէ՝ աշտէաւոր* եւ այլն:

Բառավերջի է-ն այլ ձայնաւորի մը կը միանայ ուղղակի կերպով, առանց լսուող յ կիսաձայնի գրութեան. *ափսէ՝ ափսէի, ափսէէ, ափսէով. մանրէաբան, էական, էութիւն, էակ, բազէակիր, Բազէեան, Քելլէեան* եւ այլն: Կարգ մը բառերու մէջ այս է-ն էայ վերջաւորութեան հնչինափոխութեան արդիւնք է. *պաշտօնէայ՝ պաշտօնէութիւն, քրիստոնէայ՝ քրիստոնէական, քրիստոնէութիւն, քրիստոնէից, հրէայ՝ հրէութիւն, հրէական, հրէից. նոյնպիսի ծագում ունին նաեւ քաղդէական, հռո(վ)-մէական: Չոս է գիրը կը պահէ իր արտասանական անկախութիւնը, սակայն քանի մը բառերու պարագային խօսակցականին մէջ նկատելի է «եա» արտասանութիւնը՝ *հիւլէական, հրէական, քրիստոնէական*:*

15.- Ե եւ է գիրերը մէկ բաղաձայնով վերջացող փակ դիրքին մէջ

Մէկ բաղաձայնով վերջացող բառի շեշտակիր փակ դիրքին մէջ ե եւ է գիրերը դիրքային ու ձեւաբանական հակադրու-

թիւններու մէջ չեն գտնուիր ու դժուար գանազանելի են՝ տէր-դեր, գէտ-գետ, պէտ-պետ, սէր-սեր:

Բայց հոս եւս կան զատորոշիչ շարք մը պարագաներ. այսպէս՝

ա.- Է-ով կը գրենք **էթ, էլ, էն, էս, էփ** եւ **էճ** վերջաւորութիւններ ունեցող թէ՛ հին, թէ՛ նոր փոխառեալ յատուկ անունները՝ *Ասանէթ, Սէթ, Եղիսաբէթ, Յաբէթ, Համլէթ, Նազարէթ, Հանրիէթ, Բէլ, Բեթէլ, Գնէլ, Դանիէլ, Իսրայէլ, Մանուէլ, Նաթանայէլ, Ռաֆայէլ, Սաղաթէլ, Աթէն(ք), Արէն, Արսէն, Բարգէն, Գուրգէն, Խորէն, Կայէն, Հելէն, Մարէն, Վազգէն, Արմէն, Փառէն, Արիստակէս, Մովսէս, Յովհաննէս, Ներսէս, Վարդգէս, Վրթանէս, Յովսէփ, Մանէճ* եւ այլն:

բ.- Շարք մը ածանցներ.

- **(ա)պէս.** *յատկապէս, վերջապէս, անմիջապէս...*

- **արէն, երէն.** *յունարէն, չինարէն, հայերէն, անգլերէն...*

- **եղէն.** *կերպասեղէն, ընդեղէն, ոսկեղէն, ամանեղէն...: Ոսկեղինիկ (ոսկի-եղէն-իկ) կանոնական կազմութիւնը ունի նաեւ ոսկեղէնիկ կամ ոսկեղինիկ տարբերակները:*

- **աւետ.** *հոտաւետ, շահաւետ, արդիւնաւետ, օգտաւետ...*

- **էն.** ա) բացառական քարացած հոլովածելեր՝ *արդէն, նորէն, մէկէն* (յանկարծ). բ) *ծուէն* (ծուատել, ծուիկ)...

- **կէն.** *ծակոտկէն, հիւսկէն:*

- **չէք.** *կաղանդչէք, կարողչէք, ներկողչէք, բանողչէք...*

- **օրէն.** *մտերւօրէն, քաղցրօրէն, տխրօրէն, համօրէն...*

- **էց.** ընկենուլ բայի *ընկէց* բայածելով կազմուած բարդ բառերը՝ *խորտընկէց, տէգընկէց, կամբջընկէց, գահընկէց...: Պէտք չէ շփոթել տարեց (տարիքով մեծ) ածանցաւոր բառի վերջաւորութեան հետ:*

- **էք.** ա) կը կազմէ ծէսերու անուններ, ինչպէս՝ *դոնբացէք, հիմնարկէք, նշանդէք, ջրօրհնէք, տնօրհնէք...* բ) *այծէք* (այծէ մագէ հիւսուած պարեգօտ կամ բաճկոն), *արժէք* (արժէքաւոր), *կողպէք* (կղպանք), *կոճէք* (անասնոց բերանակապ, լկամ), *մատնէք* (փոքր ակօս որեւէ բանի վրայ՝ սիւն, կահոյք), *քողէք* (ձեռքի

ապարանջան) բառերը: Նշենք, որ *էք* ունին գրաբարէն մնացած անեզական կամ յոգնակի քարացած ձևեր՝ *երէք, չորէք(շաբթի), երբէք, ամէնուրէք, պասէք* (հրէական գատիկ), մէք (գրբ. մենք) բառերը: *Երբ՝ երբեմն, երբէք, ուր՝ ուրեմն, ուրէք* ձևերը կու գան գրաբարէն: *Երբէք* ձևը սխալագրութիւն է:

Միւս բոլոր նախածանցներուն եւ վերջածանցներուն մէջ ե է.

- **գէր(ա).** *գերիշխան, գերմարդ, գերադաս, գերաշնորհ...*
- **դէր(ա).** *դերանուն, դերբայ, դեր-գնդապետ...*
- **թէր(ա).** *թերակղզի, թերած, թերագնահատել...*
- **նէր.** *ներգաղթ, ներածել, ներշնչել, ներգործել...*
- **վէր(ա).** *վերադարձ, վերաքննել, վերընտրել...*
- **եդ.** *թիկնեդ, համեդ, հիւթեդ, հնչեդ...*
- **եստ.** *գովեստ, պահեստ, ուտեստ, արհեստ...*
- **կէկ.** *լայնկէկ, բարձրկէկ, թանձրկէկ:*

Խոնջէնք. Էնք *ածանցով միակ բառը*. գրաբարի մէջ ունինք *խոնջութիւն, խոնջանք, խոնջական, խոնջանալ*: Ունինք նաեւ *օրինանք* բառին *օրինենք* ձևը: Այս երկուքը կիրառական եւ իմաստային տարբերութիւն մը ի յայտ կը բերեն խօսքի մէջ: Կ'ըսենք «*Հայրը օրինանք տուաւ*», «*Բարեգործը օրինանք լսեց ծերուկի շրթներէն*», միւս կողմէ՝ «*Քահանան օրինենք մը կարդաց*», «*Տէր հօր օրինենքը լսենք*»: *Օրինենք* ձևը հին հայերէնի *օրինենք* բայական ձևն է, աշխարհաբարի վերածուած, յոգնակի, առաջին դէմք, եւ ստացած գոյականական իմաստ. պէտք է ե-ով գրուի: *Խոնջէնք*-ն ալ այդ տպաւորութիւնը կը ձգէ: Նախընտրելի է գրել *խոնջենք, օրինենք*:

գ.- Հոլովական ու բայական վերջաւորութիւններու նախաշեշտ եւ շեշտակիր փակ դիրքին մէջ ե-ը տիրական է, բացի հետեւեալ պարագաներէ.

- Է եւ մէ բացառական հոլովի մասնիկներ են, որ կրնան ս, դ եւ ն յօդերով փակ դիրքի մէջ մնալ. *ծառ՝ ծառէ, ծառէս, ծառէդ, ծառէն, քոյր՝ քրոջմէ, քրոջմէս, քրոջմէդ, քրոջմէն*:

- Դիմաւոր բայերու յոգնակի երկրորդ դէմքին մէջ, ք-էն առաջ. *կը վազէք, պիտի վազէք, վազեցէ՛ք, մի՛ վազէք* եւ, ինչ-

պէս տեսանք, անկատար ժամանակներու եզակի երրորդ դէմ-
քին մէջ՝ *կը վազէր, պիտի վազէր, վազէր:*

դ.- Ուղղագրական ուղեցոյցներուն մէջ ընդունուած է ըսել,
որ բացի բայական դիմաւոր ձեւերէն (*կը գրեն, պիտի գրեն,
գրեն*), միւս պարագաներուն բառավերջը կը գրուի են՝ *ժա-
պաւեն, ապաւեն, փոխարեն, արդէն, նորէն, շէն* եւ այլն: Ասիկա
օրինաչափական է յատուկ անուններու համար, իսկ միւս բա-
ռերու պարագային է-ի գրութիւնը կը բացատրուի տարբեր գոր-
ծօններով: Ե-ով կը գրուին եա երկինչիւնի պարզացումով գոյա-
ցած բառերը՝ *գեհեն, ցորեն, ատեն, իրեն*, որոնց հին ձեւերն են
գեհեն/գեհեան, ցորեան, ատեան, իւրեան:

16.- Ինչպէ՞ս որոշել շեշտակիր փակ դիրքի ե եւ է գիրերը

Միակ դիրքը, ուր ե եւ է գիրերու շփոթը չի յաղթահարուիր
վերոյիշեալ որեւէ մէկ պարագայով, կը մնայ մէկ բաղաձայնով
վերջացող բառերու շեշտակիր փակ դիրքը: Այդ դիրքի շատ
բառերու ե -ով թէ է-ով գրուելու պարագան կը ճշդուի շեշտա-
փոխական հնչիւնափոխութեամբ: Շեշտափոխութեան, այ-
սինքն՝ ածանցումի եւ բարդութեան ատեն, եթէ է հնչիւնը ի-ի
վերածուի, ուրեմն բառը կը գրուի է-ով, իսկ եթէ անփոփոխ
մնաց՝ կը գրուի ե-ով, որովհետեւ ե-ը տոկուն ձայնաւոր է, չի
հնչիւնափոխուիր: Այսպէս՝

գետ ՝ գիտութիւն, գիտուն, գիտնալ	գետ ՝ գետակ, գետահուն
սեր ՝ սիրել, սիրահար, սիրուի	սեր ՝ սերունդ, սերիլ
վեր(ք) ՝ վիրաւոր, վիրակապ	վեր ՝ վերնալ, վերելք
պարտէզ ՝ պարտիզպան	հեզ ՝ հեզասահ
վրէպ ՝ վրիպիլ, վրիպակ	երես ՝ երեսանց

Ե-ով գրուող բառերէն է>ի հնչիւնափոխութեան կ'ենթար-
կուի *դեւ* բառը՝ *դիւական, դիւահար, դիւահարիլ, դիւահարու-
թիւն, դիւահմայ, դիւայիւն:* Թեկն բառէն ունինք *թիկունք, թիկնիլ,
թիկնաթոռ:* Ունինք նաեւ *արգիլել*, մինչ միւս բոլոր բաղադրու-
թիւնները ե են՝ *արգելակ, արգելակել, արգելավայր, արգելանոց,
արգելարշաւ, արգելափակ, արգելափակել, արգելիչ, արգելք:* Ե-

ի անկում ունի *կեղեւ* բառը՝ *կեղուել* բային մէջ, կրաւորականը՝ *կեղուուիլ*:

Է>ի հնչիւնափոխութեան մէջ կը մտնեն միայն իսկական բարդութեան ու ածանցաւոր բառերը: Կցական բարդութիւնները այս խումբին մէջ չեն մտնէր, որովհետեւ այստեղ բարդութիւնը կը կազմուի ուղղակի կցումով, առանց հնչիւնափոխութեան, ինչպէս՝ *դէպի (դէպ ի)*, *երեցկիին (երեց կիին)*, *տաներեց (տան երեց)*, *կէսօր (կէս օր)*, *կէսկատար (կէս կատար)*, *մէկզմէկ (մէկ զ-մէկ)*, *մէկտեղ (մէկ տեղ)*, *մէկտեղել, մէջտեղ (մէջ տեղ)*, *մէջընդմէջ (մէջ ընդ մէջ)*, *տէրտէր (տէր տէր)*, *թէւ (թէ եւ)*, *թէկուզ (թէ կ'ուզես)*, *թէպէտեւ (թէ պէտ եւ)*, *չէզոք (չէ զ-ոք)* եւ այլն: Ասիկա օրինաչափական կարելի է նկատել ու առանց բառակազմական իւրայատկութեան աշակերտը կրնայ վարժուիլ աւելի ուշ:

Ասոնց է-ով գրուիլը հաստատելու համար կարելի է դիմել իսկական բարդումի կամ ածանցումի փորձին. օրինակ՝ *դէպի* բառին համար կրնանք ունենալ *դիպուած, դիպուկ*, իսկ *երեցկիին* բառին համար՝ *երիցական, երիցուկ, երիցագոյն*, կէսօր բառին համար՝ *կիսել, կիսաւարտ* եւ այլն:

17.- Է>ի հնչիւնափոխութեան բառեր

Է>ի հնչիւնափոխութեան բառերը կարելի է խմբաւորել հետեւեալ կերպ.

ա.- Բոլոր բաղադրութիւններուն մէջ է>ի փոփոխութեան ենթարկուող բառեր. *ապաւէն՝ ապաւինիլ, ապաքէն՝ ապաքինիլ, ապաքինում, բուէճ՝ բուիճակ, գէջ (թաց)՝ գիջութիւն, գէս (երկար մազի ծոպ)՝ գիսակ, գէտ՝ գիտակ, գիտնալ, գիտութիւն, գիտուն, դէզ՝ դիզել, դէմ(ք)՝ դիմակ, դիմաց, դիմաւոր, դէպ(ք)՝ դիպուած, դիպուկ, դէտ՝ դիտակ, դիտել, դիտող, գէն(ք)՝ զինել, զինուոր, կէզ (հրակէզ)՝ կիզել, կիզիչ, կէս՝ կիսատ, կիսել, հանգէտ (իբրեւ, նման)՝ հանգիտութիւն, ձէթ՝ ձիթապտուղ, ձիթենի, մէջ՝ միջանցք, միջոց, միջուկ, միջօրէ, մէտ (հակամէտ)՝ միտում, միտումնաւոր, մէզ՝ միզամած, մէզ՝ միզապարկ, միզել, (բայց*

մզհի՝ քամիլ), նուէր՝ նուիրել, շէկ՝ շիկահեր, շիկնիլ, շէջ (հրշէջ)՝ շիջիլ, պէս այսպիսի, սէգ՝ սիգապանծ, սէր՝ սիրել, վէժ (ջրվէժ)՝ վիժիլ, վիժում, վէճ՝ վիճիլ, վէմ՝ վիմագրութիւն, վիմափոր, վէպ՝ վիպասան, վիպում, վէր(ք)՝ վիրակապ, վիրաւորել, վրէպ՝ վրիպակ, վրիպիլ, վրիպում, փոխարէն՝ փոխարինել, փոխարինում եւ այլն:

Այս բառերը կրնան գալ բաղադրեալ բառերու իբրեւ վերջին բաղադրիչ՝ *աղեկէզ, սպարազէն, յաճախաղէպ, անընդմէջ, հակամէտ, անշէջ, կարեւկեր:* Բառագիտութեան դասերուն աշակերտները պիտի ճանչնան այս արմատները ու կողմնորոշուին: Ասոնք եւս նոյն հնչիւնափոխութեան կ'ենթարկուին. *սպարազէն՝ սպարազինել, ընդդէմ՝ ընդդիմութիւն, քանավէճ՝ քանավիճիլ* եւ այլն:

Լէզ արմատն (պնակալէզ, յարալէզ) ունինք *լիզել, բայց՝ լզուրոտել, լէզու:*

Աղէտ բառը հին բարդութիւններու մէջ կը ներկայանայ ե-ով, է-ով եւ ի-ով՝ *աղետայի-աղետայի, աղետեալ-աղէտեալ, աղէտաբեր-աղիտաբեր, աղիտագոյն, աղիտագործ, աղիտարար, աղիտաւորութիւն:* Հիմա երեք ձեւով ալ գրողներ կան: Է-ն ճանչնալու նպատակայարմարութեան համար բառը մտցնել է>ի հնչիւնափոխութեան ոլորտին մաս կազմող կանոնաւոր բառերու շարքին՝ *աղէտ>աղիտաբեր, աղիտայի, աղիտաւոր, աղիտարար, աղիտագործ, աղիտարար* եւ այլն:

բ.- Ոչ բոլոր բաղադրութիւններուն մէջ է>ի փոփոխութեան ենթարկուող բառեր. այսինքն՝ կան անփոփոխութեան պարագաներ: Կը բաւէ որ մէկ անգամ փոփոխութիւն տեղի ունենայ՝ ուրեմն է է. *գէշ՝ գիշատիչ, բայց՝ գէշութիւն, գէշնալ, գէր՝ գիրուկ, գիրնալ, նաեւ՝ գերնալ, գերութիւն, երէց՝ երիցագոյն, երիցական, բայց՝ երէցութիւն, կէտ՝ կիտել, կիտուած, բայց՝ կէտադրութիւն, շէն(ք)՝ շինել, շինական, շինութիւն, բայց՝ շէնութիւն, շէնշող, շէննալ, պէտք՝ պիտանի, պիտոյք, բայց՝ պէտքարան, վրէժ՝ վրիժառու, բայց՝ վրէժխնդիր, Վրէժուհի, տէր՝ տիրել, տիրական, տիրամայր, տիրութիւն, Տիրուհի, բայց՝ տէրութիւն, տէրունա-*

կան, անտերութիւն, անտերունջ, քէն՝ քինախնդիր, բայց՝ քէնտիլ, օրէն(ք)՝ օրինակ, օրինական, օրինատր, օրինակելի, օրինապահ, օրինագիրք, օրինագիծ, բայց՝ օրէնագէտ, օրէնագիրք, օրէնադիր, տնօրէն՝ տնօրինել, բայց՝ տնօրէնութիւն/տնօրինութիւն եւ այլն: Վերջին երկուքը իմաստով կը տարբերին. տնօրէնութիւն՝ տնօրէնի պաշտօն, տնօրինութիւն՝ կարգադրութիւն:

Է>ի հնչիւնափոխութեան ոլորտէն դուրս կը մնան բառերու երկու խումբ՝ է>ե տառափոխութեան ենթարկուող բառեր եւ ւաւնդաբար է-ով գրուող բառեր: Ասոնք ուղղագրելու լուրջ դժուարութիւններ կը յարուցեն: Ասոնց քննութիւնը կը կատարենք յաջորդ երկու բաժիններուն մէջ:

18.- Է>ե տառափոխութեան ենթարկուող բառեր

Շարք մը բառեր գրաբարի մէջ ունեցած են թէ՛ է-ով եւ թէ՛ ե-ով պարզ ու բաղադրեալ բառային տարբերակներ: Այդ պարզ բառերը ւաւնդական ուղղագրութեան մէջ միտում եղած է գրել է-ով, իսկ անոնցմէ կազմուած բաղադրեալ ձեւերը՝ ե-ով, ստեղծելով է>ե տառափոխութեան ենթարկուող բառերու շարք մը: Ոմանք թէ՛ պարզ բառերուն եւ թէ՛ բաղադրեալ ձեւերուն համար գործածած են միայն է-ն կամ ե-ը: Այս երեւոյթը ստեղծած է ուղղագրապէս անկայուն պատկեր ունեցող բառերու շարք մը: Այդ բառերուն քանակին ու անոնց պարզ ու բաղադրեալ ձեւերը ե-ով թէ է-ով գրելու կապակցութեամբ միօրինակութիւն երբեք չէ եղած նոր լեզուին մէջ: Ստորեւ այդ բառերը կը բերենք է>ե տառափոխութեան պատկերին համաձայն, որ ամենէն ընթացիկն է տակաւին:

Եղեգ՝ եղեգիկ, եղեգնաբնակ, եղեգնաբոյս, եղեգնաձեւ, եղեգնաշամբ, եղեգնաշէն, եղեգնեայ, եղեգնուտ եւ այլն:

Գմբեթ՝ գմբեթագարդ, գմբեթախաչ, գմբեթածածկ, գմբեթակիր, գմբեթաձեւ, գմբեթարդ, գմբեթեայ եւ այլն:

Խենեշ խենեշանամ, խենեշագոյն, խենեշաբար, խենեշիմ:

Պարէն՝ պարենապահ, պարենատրեմ, պարենատրում, պարենիկ:

Պարէտ՝ պարետային, պարետախումբ, պարետանոց, պարետութիւն:

Պատճէն՝ պատճենաբեր, պատճենել, պատճենահան, պատճենաւորել:

Մէն՝ մենութիւն, մենաստան, մենաւոր, մենակ (կայ նաեւ մինակ):

Երեկ՝ երեկոյ, երեկոյանայ, երեկոյեան:

Աղուէս՝ աղուեսակերպ, աղուեսադրոշմ, աղուեսուկ, բայց՝ Աղուէսագիրք:

Արմէն՝ Արմենակ, բայց միւս կազմութիւնները է-ով՝ Արմէն-իա, Արմէնուհի:

Ամէն¹ (ամէնքը), որ ունի աւելի բարդ վիճակ. այսպէս՝

- յօդակապով բարդութիւններու մէջ կը գրուի է-ով՝ *ամենալաւ, ամենագէշ, ամենասերտ, ամենաքաջ* եւ այլն.

- անյօդակապ կազմութիւններուն մէջ կը գրուի է-ով՝ *ամէնիմաստ, ամէնընտիր, ամէնիշխան, ամէնընթաց* եւ այլն.

- հինէն փոխանցուած ածանցումներուն մէջ՝ *ե, ամենայն, ամենեւին, այսու ամենայնիւ, յամենայնդէպս, յամենայն դէպս.*

- նոր ածանցումներուն մէջ է՝ *ամէնքը.*

- կցական բարդութիւններուն մէջ է՝ *ամէնուր, ամէնուրեք, ամէնօրեայ, ամէնժամեայ, ամէնամեայ.*

- հոլովական ձեւերուն մէջ աշխարհաբարը կը ցած է գրեթէ ձերբազատիլ հոլովական համակարգի մէջ է>ե տառափոխութիւնը պահելու փորձութենէն՝ *պարտէզ-պարտէզի-պարտէզէ-պարտէզով*, բայց *ամէն* բառի պարագային միայն ոմանք կը գրեն *ե*, ոմանք է՝ *ամենուն-ամէնուն, ամենէն-ամէնէն, ամենով-ամէնով*: Նախընտրելի պիտի ըլլար է-ն անփոփոխ պահելը:

¹Աստուածաշնչական *ամէն* բառը ունի սեմական ծագում՝ «իրաւ, ճշմարիտ, հաւաստի» իմաստով: «Ամէն ամէն ասեմ ձեզ» (Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի): Աղօթքները կը վերջանան *ամէն* բառով: Յունարէնի եւ սեմական լեզուներուն մէջ կ'արտասանուի *ամին*, ինչպէս *Աթէնա* անունը՝ *Աթինա*:

Խնդիրը նոյն հիմքի բառակազմական արտայայտություններուն մէջ ունեցած այսքան բազմաձեւութեամբ չի վերջանար: Այս կամ այն պարագան նախընտրաբար գործածելու իրավիճակը աւելի մեծ շփոթներու դուռ կը բանայ: Վերջերս, «է-ով գրուող քանի մը բառ պակսեցնելու միտումով» ոմանք *եղէգ, գմբէթ* եւ *ամէն* բառերը կը գրեն ե-ով. լաւ, բայց ինչո՞ւ անգիտանալ նոյն ոլորտի միւս բառերը, բոլորովին զերծ մնալու համար անոնց պատճառած դժուարութիւններէն եւս:

Քննութիւն է>ե տառափոխութեան բառերու

է>ե հնչիւնափոխութեան պարագան գրաբարի մէջ կը կատարուէր ոչ միայն ածանցումներու եւ բարդումներու, այլ հոլովաձեւերու մէջ եւս. *պատճէն՝ պատճենից, պատճենիւ*: Այս հնչիւնափոխութիւնը չկայ աշխարհաբարի մէջ, քանի որ է եւ ե գիրերը հնչիւնապէս նոյնացած են արդէն: Երեւոյթը դարձած է սոսկական տառափոխութիւն: Աշխարհաբարի կազմաւորման աստէն նոր ձեւաւորուող ուղղագրութեան մէջ է>ե տառափոխութեան պարագան վերացուած է հոլովական համակարգէն, ու հիմքի ուղղագրութիւնը գրեթէ պահպանուած է բոլոր հոլովաձեւերուն մէջ՝ *պատճէն՝ պատճենի, պատճէնէ, պատճէնով. պարտէզ՝ պարտէզի, պարտէզէ, պարտէզով*:

Այսուհանդերձ, հակառակ այն իրողութեան, որ աշխարհաբարը կրցած է գրեթէ ձերբագատուիլ հոլովական համակարգի մէջ է>ե տառափոխութիւնը պահելու փորձութենէն, բառակազմական մակարդակի վրայ քանի մը հինէն եկող բառերու (*եղէգ, գմբէթ* եւ այլն) համաբանութեամբ կը շարունակուի պահպանուիլ է>ե տառափոխութիւնը ու նոր խնդիրներ յարուցել մեր ուղղագրութեան մէջ: Խնդիրը պահ մը կը հասներ հոն, որ այդ քանի մը բառերու պարագան օրինաչափութեան վերածելով, այնտեղ ուր չի գործեր է>ի հնչիւնափոխութիւնը՝ կը թելադրուէր է>ե տառափոխութիւնը. *կէտ՝ կետադրութիւն*,

տէր՝ անտերունչ, Հալէպ՝ հալէպահայութիւն: Ասիկա լիովին մերժելի մօտեցում էր ու չտարածուեցաւ: Չինչիւնափուռող է՛ն կը պահենք բոլոր այն կազմութիւններուն մէջ, որոնց առաջին բաղադրիչին է-ով գրուիլը գիտենք ուրիշ բարդութիւններէ, ինչպէս՝ *կիտել<կէտ> կէտադրութիւն, տիրական<տէր>անտերունչ, վրիժառու<վրէժ> վրէժ-խնդիր, օրինական<օրէն(ք)>օրէնսգիրք, տնօրինել< տնօրէն>տնօրէնութիւն, քինախնդիր<քէն>քէնտտիլ, շինութիւն <շէն(ք)> շէնութիւն, գիշատիչ<գէշ>գէշութիւն* եւ այլն:

Արդ, ինչպէ՛ս լուծել է>ե տառափոխութեան հետ կապուած բառերու խնդիրը:

Ամէն. բառը փոխանցուած է նաեւ *ամէն* տարբերակով: Արեւմտահայ իրականութեան մէջ իբրեւ սկզբնաձեւ ընդունուած է *ամէն* հիմքը:

Վերջերս լայն տարածում կը ստանայ *ամէն* հիմքի տարածումը: *Ամէն* տարբերակի ընդունումը կը վերացնէ թէ՛ հոլովական, թէ՛ բառակազմական մակարդակներու վրայ ելած բոլոր բազմաձեւութիւնները, զորս երբեք չեն կրցած մարսել մեր դպրոցականները (եւ ոչ միայն): Եթէ ընտրենք սկզբնաձեւի է-ով տարբերակը՝ վերի շարքերը զատորոշելու հարկադրանքը կը վերանայ, տառափոխութեան երեւոյթը կը վերանայ, այսինքն՝ այլեւս է-ով կը գրենք *ամէն*-ը բարդ ու ածանցաւոր բոլոր կազմութիւններուն եւ հոլովաձեւերուն մէջ. *ամէն, ամենալաւ, ամենընտիր, ամենեւին, ամենքը, ամենուր, ամենուն* եւ այլն:

Եղէգ, գմբէթ, խենէշ բառերը փոխանցուած են նաեւ *եղէգ, գմբէթ, խենէշ* սկզբնական տարբերակներով: Է-ով գրողները բարդութիւնները կը գրեն է-ով՝ ստեղծելով հիմքի եւ բաղադրութիւններու երկուութիւն. *եղէգ՝ եղեգնուտ, եղեգնեայ, գմբէթ՝ գմբէթաւոր, խենէշ՝ խենէշանայ*, ոմանք բարդութիւններն ալ է-ով կը գրեն՝ *եղեգնուտ, գմբէթաւոր, խենէշանայ* եւ այլն:

Սկզբնաձևի ե-ով տարբերակները ընդունելով մենք նոյնացուցած կ'ըլլանք արմատի եւ կազմութիւններուն ուղղագրութիւնը եւ դուրս դրած առանց որեւէ օրինաչափութեան է-ով գրուող շարք մը բառեր. *եղեզ՝ եղեզիկ, եղեզնաբնակ, եղեզնաբոյս, եղեզնաձեւ, եղեզնաշամբ, եղեզնաշէն, եղեզնեայ, եղեզնուտ* եւ այլն, *գմբեթ՝ գմբեթագարդ, գմբեթախաչ, գմբեթածածկ, գմբեթակիր, գմբեթաձեւ գմբեթարդ, գմբեթեայ* եւ այլն, *խենեշ՝ խենեշանամ, խենեշագոյն, խենեշարար, խենեշիմ*: Այսպիսով վերացած կ'ըլլան անիմաստ տառափոխութեան եւ երկուութեան պարագաները:

Սփիւռքահայ իրականութեան մէջ քննարկման հանդիսացած այս բառերու կողքին, կան այլ բառեր եւս, որոնց նոյնպէս է-ով տարբերակը ընդունուած է. ասոնք եւս բաղադրութիւններուն մէջ երբեմն է-ով, երբեմն է-ով հանդէս կու գան: Այդ բառերն են.

Աշխէտ (կարմիր դեղնագոյն ձի). հին կազմութիւններ են *աշխետաձի, աշխետութիւն, աշխետանալ*, է-ով:

Պարէտ, գրաբար սեռականը *պարէտի*: Հին լեզուին մէջ կայ նաեւ *պարէտ* սկզբնական տարբերակը: Նոր բառ է *պարէտային*:

Պատճէն, որմէ փոխանցուած է մեզի *պատճենաբեր՝* է-ով: Հիմքի հնագոյն ձեւերէն են *պատճեան, պաճեան*, որ պէտք է տար՝ *պատճեն*, ինչպէս *ատեան՝ ատեն, գեհեան՝ գեհեն, ցորեան՝ ցորեն, իրեան՝ իրեն*: Է-ով սկզբնաձևը ընդունելով՝ նորագոյն կազմութիւններու մէջ շփոթ կայ է-ով (*պատճենաբերի* հետեւութեամբ), թէ է-ով գրելու՝ *պատճէնել-պատճենել, պատճէնահան-պատճենահան, պատճէնաւորել-պատճենաւորել*:

Պարէն, որմէ փոխանցուած է միայն է-ով՝ պարէնապահ, պարէնաւորեմ:

Աղուէս, որմէ հին լեզուին մէջ ունինք *աղուէսակերպ, աղուէսաղորշմ, աղուէսաշարան, աղուէսուկ, աղուէսա-*

ձուք, միշտ ե-ով: Աղուէսագիրք (է-ով) բառը միջին հայերէնեան կազմութիւն է: Աճառեան եւ Ջահուկեան բառի հին ձեւը *աղուէս* կը նկատեն:

Մէն. բառը կազմուած է *միայն-մէյն-մէն* զարգացումով: Իս կապակցութեան ե-ի հնչիւնափոխուիլը գրաբարի մէջ լայնօրէն նկատուող երեւոյթ է՝ *մի-ա-կուսի՝ մեկուսի, մի-ա-կողմանի՝ մեկողմանի, մի-ա-տասան՝ մետասան*, նոյնը շարունակուող երեւոյթ մըն է նոր հայերէնի մէջ՝ *գինի-ա-տուն՝ գինիատուն՝ գինետուն, հոգի-ա-զաւակ՝ հոգեզաւակ*: Իս կապակցութիւնը կրնայ ես տալ՝ *պատանի-ակ՝ պատանեակ*, ապա ե՝ *պատանեակ-իկ՝ պատանեկիկ*: Միայն-մէյն-մէն կառոյցով գրաբարի կազմութիւնները բարդութիւններու եւ անանցումներու մէջ միշտ ե կու տան՝ *մենակ², մենակեցութիւն, մենակոյլ, մենամարտ, մենամարտիկ, մենամարտիկ, մենամարտութիւն, մենանալ, մենաստան, մենաւոր, մենիշխանութիւն, մենութիւն*, բայց երբ *մէն-* հիմքը առանձին գործածուի՝ է-ով կը գրուի՝ *մէն*: Ասիկա գրաբարի մէջ հնչիւնական երեւոյթ էր անկասկած, բայց նոր լեզուին մէջ պարզապէս տառափոխութիւն է ու անիմաստ է բազմաթիւ բաղադրութիւններու մէջ ե-ով գրելէ ետք՝ հիմքային բառը է-ով գրելը: Նկատի ունենալ նաեւ, որ նման նոր զոյացութիւնները մենք է-ով կը գրենք. *ցորեան՝ ցորեն, ատեան՝ ատեն, գեհեան՝ գեհեն*: Մէն կազմութեան շարքին կը մտնեն նաեւ է>ի հնչիւնափոխութեան չենթարկուող *պատճէն, պարէն, ամէն* բառերը: Կը կարծեմ, որ այս երեւոյթէն ձերբազատ-

² Արեւելահայերը ունին *մենակ, մէն-մենակ՝ մէն* ձեւէն, իսկ արեւմտահայերը՝ *մինակ, միս-մինակ՝ մինակուկ*. վերջինները է>ի հնչիւնափոխութեան արդիւնք չեն, այլ առաջացած են *մին* ձեւէն, որ կազմուած է *մի* բառին վրայ ն յօղը աւելցնելով:

ուիլը դրական քայլ պիտի ըլլայ. գրել *ամեն, մեն, պարեն, պատճեն*:

Երեկ, հին հայերէնի մէջ է-ով գրուած է զանազան-ուելու համար *երեկ* մայր տարբերակէն, որ կը նշանակէր *երեկոյ, իրիկուն*. նոր հայերէնի մէջ վերացած է նոյնացումը՝ *երեկ, երեկոյ, երեկոյանալ, երեկոյեան*:

Պարետ, պատճեն, պարեն, աղուես, երեկ, մեն ձեւերը եւս իբրեւ սկզբնաձեւ ընդունելով կ'ազատինք չինչինափոխուող է-ն Ե-ն վ, թէ է-ով գրելու շփոթէն. *պարետ՝ պարետային, պատճեն՝ պատճենաբեր, պատճենել, պատճենահան, պատճենում, պարեն՝ պարենամթերք, պարենատոմս, պարենաւորել, պարենաւորում, աղուես՝ աղուեսդրոշմ, աղուեսենի, աղուեսագիրք, երեկ, երեկոյ, մեն՝ մենաւոր, մենաստան* եւ այլն:

19.- Աւանդաբար է-ով գրուող բառեր

Աւանդական ուղղագրութեան մէջ առանց դիրքային, հնչիւնային ու բառակազմական պատճառի է-ով կը գրուին բառերու երկար շարք մը՝ *ասպարէզ, ժայպաւեն, տրէզ, խէթ, խէժ, հէն* (ծովահէն), *սէզ, վէս, տէզ, պատնէշ, բրէտ* (իշամեղու), *առնետ, գումէշ, բզէզ, հէզ, վէզ* (ոտքի կոճ. այդ ոսկորով խաղցուող խաղ մը), *հրէշ* (*հրէշից*, նոր բառ է՝ *հրէշային*), *մողէզ, ուղէշ, վէտ* (*վէտ վէտ*, նոր բառ՝ *վէտվէտուն*), *քարտէզ* (*քարտէզագրել, քարտէզագիր*. ոմանք՝ *քարտէս*, ասկէ՝ *քարտիսագրութիւն*, յետնաբար), *քէշ* (պարսից կրօնք), *աղէկ* (*աղէկնալ, աղէկութիւն*), *երէկ, երնէկ, թէյ, լէշ* (անասունի դիակ), *մէկ* (*մէկական, մէկնոց, մէկալ*), *մէյ մէկ, մէյ մը, մէն, մէն մի, փէշ, դէս ու դէն* (դի-այս, դի-այն), կամ յետնաբար է-ով փոխանցուած բառեր են՝ *թէժ* (բորբ, տաք, նոր բառ է *թէժանալ*), *խլէզ, մկլէզ, փէճ* (ուսին երեսը), *մայլէզ*: *Վէզ ու վէճ* յարադրութեան մէջ *վէզ* բաղադրիչը անկախ գործածութիւն չունի: Հին լեզուին մէջ կայ *ի վէզ գալ* (*վիճիլ, կռուիլ*) արտայայտութիւնը:

Եւեթ (իսկոյն եւեթ). սխալագրութիւն է բառը *եւեթ*՝ է-ով գրելը:

Քննութիւն աւանդաբար է-ով գրուող բառերու

Առանց դիրքային, հնչիւնային ու բառակազմական պատճառի է-ով գրուող բառերը ուղղագրական լուրջ դժուարութիւններ կը ստեղծեն: Այդ բառերը ծագումով, քերականական եւ բառակազմական յատկութիւններով քանի մը խումբի կը պատկանին.

ա.- Հին բառեր, որոնց է>ի հնչիւնափոխուած կազմութիւնները նոր լեզուն չէ պահած՝ *ասպարէզ, ժապաւէն, տրէժ, խէթ, հէն* (ծովահէն), *սէզ, վէս, տէզ, պատնէշ, բրէտ* (իշամեղու), *առնէտ, գոմէշ*³:

Այս բառերուն է-ով գրուած ըլլալը անատարկելի է:

բ.- Բառեր, որոնք հին հայերէնի մէջ եւս է>ի հնչիւնափոխուած օրինակ չունին, ինչպէս՝ *խէժ, գէթ, պարսէտ, քէնդ* (քած՝ շուն կամ կատու), *մողէզ, բգէզ*: Այս բառերուն հին լեզուին մէջ է-ով գրուած ըլլալը բացարձակ չէ:

³ **Ասպարէզ** կամ ասպարէս. ատկէ՝ ասպարիսել՝ *արշաւել, ասպարիսական*

Ժապաւէն՝ ժապաւինել

Տրէզ՝ տրիզել

Խէթ՝ խիթալ *վախնայ, հոգ ընել*. խիթել՝ *խիդճը խայթել*

Հէն (ծովահէն՝ ծովի աւազակ), հինել՝ *աւազակութիւն ընել*, հինաբար, հինահար, հինական

Սէզ՝ սիզաբոյս, սիզուտ, սիզաբերել

Վէս՝ վիսութիւն, վիսաբարոյ, վիսանալ

Տէզ՝ տիզատր, տիզաբուն (*բայց*՝ տէզընկէց)

Վարի բառերը միայն հոլովման մէջ ունին է>ի հնչիւնափոխութիւն.

Պատնէշ՝ պատնիշի,

Բրէտ՝ բրիտի (իշամեղու)

Առնէտ՝ առնիտի

Գոմէշ՝ գոմշոյ կամ գոմիշոյ

Անոնց մեծ մասը հին լեզուին մեջ ունի ե-ով տարբերակ՝ *խեժ-խեժ, գեթ-գեթ, պարսէտ-պարսէտ*, (պարս, պարսատիկ), *քենդ-քենդ*, կամ ունին հիմքային այլ տարբերակներ՝ *մողեզ (մողոզ, մողիզ), բզեզ (բզիզ), ուղեշ (ուղեշարձակ, ուղիշաբերձ, ուղեշ, ուղօշ)*: Ասոնց ե-ով տարբերակը հետեւողական ձեւով չէ ընտրուած, ինչպէս եղած է *թեմ ու թեմ բառերու պարագային*։ Վերջիններէն ընդունուած է միայն ե-ով տարբերակը: Կայ նաեւ *վեզ* (ոսկոր մը ու անով խաղցուած խաղ մը): *Վեզ ու վեճ* յարադրութեան մեջ ունի *կոհի* իմաստը: Այստեղ ստուգաբանները ընելիք ունին:

գ.- Բարբառային բառեր՝ *աղէկ (աղէկնալ, աղէկութիւն), երնէկ, թէյ, լէշ* (անասունի դիակ), *մէկ (մէկական, մէկնոց, մէկալ), մէյ մէկ, մէյ մը, մէն, մէն մի, փէշ, դէս ու դէն (դի-այս, դի-այն)*, կամ յետնաբար ե-ով փոխանցուած բառեր են՝ *թեժ* (բորբ, տաք, նոր բառ է *թեժանալ*), *խլէզ, փէճ* (ուսին երեսը), *մալէզ*: Ասոնց ե-ով գրուիլը դասական ուղղագրութեան հետ կապ չունի, այլ կու գայ բարբառային բառերը ե-ով գրելու մեր սովորութենէն: *Մէկ* բառը կու գայ *միակ*-էն, որ պէտք է տայ ե՝ *մէկ* (հմմտ. պատանի-ակ՝ պատանեկիկ). *մէյ* (մէյ մը, մէյ-մէկ) ու *մէն* առաջացած են *միայն (մի-այն)-մէյն-մէն-մէյ* զարգացումով: Նոյն օրինաչափութեամբ կազմուած են *դէս ու դէն* բառերը (դի-այս՝ դէս, դի-այն՝ դէն): *Աղէկ*-ը առաջացած է *աղու-եակ* կազմէն, որ նոր լեզուին մեջ պէտք է տար *աղէկ* (հմմտ. *ցորեան՝ ցորեն, ատեան՝ ատեն*): Երնէկ-ը ունի *երան-երանիկ-երնիկ-երնէկ* զարգացումը:

Երբ յետին փոխառութիւնները եւ բարբառային բառերը ե-ով գրելու միտում կայ (տե՛ս յաջորդ բաժինը)՝ ասոնք եւս պիտի մտնեն նոյն խումբին մեջ: Առանց դիրքային, հնչիւնային-հնչիւնափոխական, բառակազմական ու ձեւաբանական պատճառի գրուող է-երը ե-ով

գրելով մեծապես կանոնակարգուած պիտի ըլլայ բա-
ռամէջի է-ի գրութիւնը:

20.- Է եւ Ե զիրերը օտար եւ բարբառային բառերու մէջ

Օտար բառերուն սկիզբն ու վերջը Է-ն անշփոթելի է, ինչ-
պէս՝ *Էլիզապէթ, Էլսի, Էլպիս, Բերասափէ, Բելէ:*

Բառասկիզբին «եէ» երկինչիւնը օտար բառերուն մէջ եւս կը
գրուի Ե, ինչպէս՝ *Ենիգոմուշեան, Ենգիպարեան, Եկատերինա,*
Ենովա եւ այլն, բայց Ե կիսաձայնէն ետք Եկող միւս ձայնա-
ւորները կը գրենք, ինչպէս՝ *եար, եաման, Եարալեան, Եորկի,*
Եոհաննէս, Եունէս եւ այլն:

Շրջան մը տարածուած էր բառին մէջ ամէն տեղ Է-ի գրու-
թիւնը, ինչպէս՝ *զենիթ, թէզ, խէր, քերմէս, փենեսէլին, քուլերա,*
Սէմերճեան, Թէքէեան, Պերպէրեան, Պոշկէզէնեան եւ այլն: Սա-
կայն այս գրութիւնը վերատեսութեան կ'ենթարկուի հին հայե-
րէնի օրինակներուն հիման վրայ: Հին հայերէնի մէջ նախաշեշտ
դիրքերուն միշտ Ե է, ինչպէս՝ *մեքենայ, վեղար, եկեղեցի, Կե-
սարիս, Եղեսիս* եւ այլն, իսկ շեշտակիր փակ դիրքին երկուքն
ալ կը հանդիպին, ինչպէս՝ *Աթէն(ք), Սաղեմ, Երուսաղեմ, կրկէս,*
պարէտ, քարտէզ, Եղիսաբէթ, Յարէթ, Յովսէփ, բայց՝ *Սեպտեմ-
բեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր, կանթօղ, Բարսեղ,*
Կիրեղ եւ այլն:

Այս աւանդութիւններուն հիման վրայ ներկայիս տիրապե-
տող կը դառնայ բառի նախաշեշտ ու շեշտակիր փակ դիր-
քերուն մէջ Ե գրելը, ինչպէս՝ *զենիթ, քուլերա, օփերա, փենեսե-
լին, աթլէթ, քասէթ, օսլէթ, քերմէս, թէզ, խէր* եւ այլն, որովհետեւ
այստեղ դիրքային որեւէ սահմանափակում կարելի չէ գտնել Է-
ի համար, բացի հետեւեալ պարագաներէն.

ա.- Մականուններուն հիմքի վերջինը գրել է՝ *Թէքէեան, Տե-
տէեան, Քելլէեան* եւ այլն:

բ.- Էլ, Էն, Էթ եւ Էս, Էփ, Էճ վերջաւորութեամբ օտար յատուկ
անուններու հետեւութեամբ յատուկ անունները շարունակել
գրել է-ով՝ *Անժէլ, Ժիզէլ, Մանէն, Քարէն, Մարիէթ, Նենէթ, Փե-*

րէս, Մարթինէս, իսկ միւսերը ե-ով, ինչպէս *Ռոպեր, Ռոպերթ, Ալպեր, Ալպերթ, Եսթեր, Լուտեր, Ժոզեֆ, Թերեզ, Արտեմ, Կիւպենկ, Կրեկ(ուար), Տրենք, Տրետ, Ալէք, Քեպէք*: Նոյնը ընել մականուններու պարագային՝ *Կէօվշէնեան, Պոշկեզէնեան, Քիւփէլեան, Հերկէլեան, Հասէսեան, Հանէսեան*, բայց *Սեմերճեան, Պերպերեան, Չելեպեան* եւ այլն:

գ.- Էյ եւ իէ կապակցութիւնները պահել, ինչպէս՝ *Շէյքքսփիիր, Մէյրի, Ժիւլիէթ, Ուիլիէմ, Մարիէթ* եւ այլն: Օտար բառերուն մէջ իէ-ն իէ ձեւով տառադարձողներ ալ կան (Վիեննա): Նախընտրելի է իէ-ն՝ նախ չհակադրուելու համար *Մարիէթ, Ժիւլիէթ* եւ նման օրինական պարագաներու:

Քննութիւն յատուկ անուններու է-ի գրութեան

Ուղղագրելու վերի վերջին երկու պարագաները գերծ չեն հակասութենէ: Այստեղ է-ի մնալը պայմանաւորուած է հին հայերէնէն եկող յատուկ անուններու *էլ, էն, էթ, էս, էփ, էճ* (*Գնէլ, Արսէն, Նազարէթ, Յովհաննէս*) վերջաւորութիւններով եւ իէ կապակցութեամբ (*Գաբրիէլ, Դանիէլ, Եզեկիէլ*): Կարելի՞ է զանոնք եւս փոխարինել ե-ով, մանաւանդ որ հայերէնի մէջ արդէն գոյացած են անուններու գրութեան հին ու նոր ձեւեր (*Հոովմ՝ Հոովմ, Քերովբէ-Քերոբ, Սերովբէ՝ Սերոբ, Սիմէոն-Սիմոն*): Կը կարծեմ, որ կարելի է: *Աթէնք* անեզական անունէն ունինք *աթենացի՝* ե-ով. միւս կողմէ՝ *Արմէն անձնանունը Արմենակ* անունէն յետին անջատում է: Անկէ կազմուած *Արմէնիա* եւ *Արմէնուհի* անունները ոմանք *Աթէնք-աթենացի* ձեւին համաբանութեամբ կը գրեն *Արմենիա, Արմենուհի*, ինչպէս՝ *Արմենակ*-ը: Սա տառափոխութիւնը իրօք գլխացաւանք է: Է>ի հնչիւնափոխութեան չենթարկուող անունները եւս ե գրելով է-ի գրութեան բոլոր պարագաները կը մտնեն կանոնակարգի մէջ:

Անձի ու տեղի որոշ անուններու եւ մականուններու գրութեան կանոնակարգման յաջորդ խոչընդոտը աւան-

դութիւնն է. մարդիկ կառչած կը մնան անոնց գրութեան նախկին նուիրականացած *ձեւերուն* (*Քէսայ, Հալէպ, Պերպէրեան, Մելգոնեան*, փոխան՝ *Քէսայ, Հալէպ, Պերպէրեան, Մելքոնեան* կանոնաւոր ձեւերուն):

21.- Է եւ Է գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ԳԷՏ (>հաշուագէտ. գիտուն)	ԳԵՏ (>գետակ, գետահուն)
ԳԷԲ (>գիրուկ)	ԳԵԲ(ադաս), ԳԵԲ(մարդ)
ԳՆԷԼ (յատուկ անձնանուն)	ԳՆԵԼ (դրամով առնել. > գնում) ՔՆՆԵԼ (գննել. > քննիչ)
ԴԷՄ (>դիմաց, դիմանալ)	ԹԵՄ(շրջան.>թեմական)
ՀԷԳ (խեղձ)	ՀԵԳԵԼ (վանկարկել) ՀԵԳնել (ծաղրել. >հեզնական)
ՄԷԶ (>միզել, միզապարկ)	ՄԵԶ (մենք դերանունին հայց.ը)
ՄԷԳ (մշուշ.>միզամած)	ՄԵՔ (մենք գրաբարը)
ՊԷՏ(ք) (>պիտանի, պիտոյք)	ՊԵՏ (առաջին թիւը. >մէկական) ՊԵՏ (գլխաւոր. > պետական, սպարապետ, խմբապետ)
ՍԷԲ (> սիրել, սիրուհի)	ՍԵՌ (տեսակ. >սեռական) ՍԵԲ (> սերունդ)
ՏԷԲ (> տիրել, տիրութիւն)	ՏԵՌ (լաթի կտոր)
ՎԷԲ(ք) (>վիրաւոր, կարեվեր)	ՎԵԲ (հականիշը՝ վար. > վերել)

22.- Ը հնչիւնը եւ անոր գրութիւնը

Ը ձայնաւոր հնչիւնը հին հայերէնի մէջ արտայայտուած է միայն *ը* գիրով: Նոյնն է նաեւ նոր հայերէնի մէջ:

Ը ձայնաւորը վանկարար է ու կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն մէջ, բայց կայ գրուող *ը* եւ չգրուող *ը*. վերջինը կ'արտասանուի, բայց չի գրուիր: Նոյնն է գրաբարի եւ արեւելահայերէնի մէջ: Նկատելի է, որ բառասկզբին չգրուող *ը-ը* աւելի թոյլ կ'արտասանուի արեւելահայերէնի մէջ՝ (*ը*)*ստա-նալ*-(^u)*ստանալ*, (*ը*)*շտապել* (²)*շտապել*, իսկ շարք մը բառերու մէջ անոր արտաբերութեան տեղը տարբեր է՝ *բռնկիլ-բռնկ-ուել*, *բզկտել-բզկտել* եւ այլն:

Լսուող, բայց չգրուող այս ձայնաւորը կը կոչուի *գաղտնավանկ ը* կամ *սուղ ը*:

Ը ձայնաւորը հայերէնի ամենէն թոյլ ձայնաւորն է եւ այդ պատճառով ալ շեշտ չի ստանար: Բառաշեշտը միշտ կ'իյնայ նախորդող ձայնաւորին վրայ, ինչպէս յօդառութեան պարագային՝ *գի ըքք, գի ըքս, գի ըքդ, գիրքէ ըս, գիրքէ ըդ*, այդպէս ալ բառերու ուղիղ ձեւին մէջ՝ *Աղէքսանդր, կա ըծր, սա ըտր, թա ըճր, վա ըր, ա ըտդ, կա ըյր, դո ըտր* եւ այլն:

Ը ձայնաւորը տոկուն է ձայնարկութիւններու եւ օտար բառերու մէջ, ուր կը ստանայ շեշտ ու երկար, ինչպէս՝ *փը ստ, փը թ, մը ըթ, ճը ըռ, սը սս, քը ըժ* եւ այլն:

23.- Ը հնչիւնը բառին սկիզբը

ա.- Չի գրուիր բառին սկիզբը՝ ստորեւ դրուած բաղաձայններու կապակցութիւններէն առաջ.

- (գդ), ստ, սթ> *ստոյգ, ստրուկ, սթափիլ, սթափ.*

- զգ, սկ, սք> *զգալ, զգոյշ, զգեստ, զգօն. սկսիլ, սկիզբ, սքանչելի, սքօղել.*

- զբ, սպ, սփ> *զբաղիլ, զբօսանք. սպասել, սպանդ, սպի, սպունգ. սփռփել.*

- սֆ> *Սֆէյր, Սֆահանի, սֆինքս.*

- շտ> *շտապել, շտապ, շտեմարան.*

- զմ> *զմայիլ, զմելի:*

Վերի օրինաչափութեամբ գրել *Սպանիա, Սթանպուլ, Սկոփոիա*: Մերժել *Իսպանիա, Իսթանպուլ* ձեւերը:

Քանի մը բառեր ը-ը կ'արտասանեն բառին մէջ, ինչպէս՝ սեկիհ, զմոսել, սքեմ:

Վերի բառերը բարդութեան մէջ բաղաձայնէ մը ետք գալու պարագային գաղտնավանկ ը-ը կը հնչուի, ինչպէս՝ *վերստանալ, վերստուգել, գերզգայուն, անսկիզբ, հսպշտապ* եւ այլն, իսկ ձայնաւորէ մը ետք գալով չի հնչուիր, ինչպէս *բազմազբաղ, հիասքանչ, դարասկիզբ* եւ այլն:

Ը-ը կը գրուի Բառասկիզբի միւս բոլոր պարագաներուն, գլխաւորաբար մ եւ ն բաղաձայններէն առաջ, ինչպէս՝ *ըմբիշ, ըմբռշխնել, ըմբոստ, ըմբոնել, ըմպել, ընել, ընթացք, ընթերցել, ընթրել, ընծայ, ընկալել, ընկեր, ընկեցիկ, ընկլուզիլ, ընկղմիլ, ընկոյզ, ընձուղտ, ընտանի, ընտիր* եւ այլն: Միւս բաղաձայններէն առաջ ունինք *ըլլալ, ըղձալ, ըսել* եւ այլն: Ասոնք բարդութեան մէջ մտնելով ը-ը կը պահեն. *դասընթացք, նախընթրիք, նախընտրութիւն, վերընծայել, դասընկեր, հնդընկոյզ/հնդընկոյզ, վերընտրել, հատընտիր, նորընտիր* եւ այլն:

Ը ունինք միավանկ երկու նախդիրներու սկիզբը՝ *ընդ* եւ *ըստ*: Ասոնք գրաբարի մէջ գոյականին հետ կապական դարձուածքներ կը կազմէին, իսկ արդի հայերէնի մէջ մեծ մասով կցուելով գոյականին ածանցի դեր կը կատարեն: Ընդ-ով ունինք՝ *ընդառաջ, ընդառաջել, ընդարձակ, ընդարձակել, ընդարմանալ, ընդգծել, ընդգրկել, ընդդէմ, ընդդիմանալ, ընդդիմաբանել, ընդդիմադիր, ընդդիմախօս, ընդդիմակից, ընդդուզել, ընդերկար, ընդերկրեայ, ընդերք, ընդլայնել, ընդծովեայ, ընդհակառակն, ընդհանուր, ընդմիջել, ընդյատակեայ, ընդոծին, ընդոստ, ընդունակ, ընդունիլ, ընդվզիլ, ընդօրինակել, մէջընդմէջ, անընդհատ, մէկընդմիջտ, անընդմէջ* եւ այլն:

Ընդ եւ *ըստ* նախդիրներով գրաբարեան արտայայտութիւններ տակաւին կը գործածուին մեր լեզուին մէջ, *ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ըստ արժանւոյն, ըստ ամենայնի, ըստ սովորութեան, ըստ օրէնքի, օրըստօրէ*:

Բառասկիզբի ը-ը կրնայ գոյանալ Բառասկիզբի ձայնաւորներու շեշտափոխական հնչիւնափոխութեան հետեւանքով. *իղձ՝ ըղձալ, ըղձալի, ըղձանք, ինձ՝ ընձուղտ, ընձառիծ, ինչ՝ ընչաքաղց, ընչագուրկ, ընչասէր, ումպ՝ ըմպել, ըմպելի, ըմպանակ, ունդ՝ ընդեղէն, ընդաբոյս, ընդաբուտ, ունչ՝ ընչացք* (պէխ):

24.- Ը հնչիւնը բառին մէջ

Չի գրուիր բառամէջի երկու բաղաձայններու միջեւ, ինչպէս՝ *բազմացնել, թըրթընալ, կըռուիլ, կոխկըռտել, պոռպըռալ*,

պ^ըտ^ըտիլ, վազվ^ըզել, փ^ընտ^ըռել եւ այլն: Հայերէնի յատուկ են յաջորդական գաղտնավանկեր ունեցող բառերը. բուռն՝ բ^ըռունցք, բ^ըռնկիլ, բ^ըռնկցնել:

Բառամեջին լսուող, բայց չգրուող ը հնչիւնը շատ անգամ այլ ձայնատրի մը կամ երկհնչիւնի մը սղումէն յառաջացած է, ինչպէս սկիզբ՝ սկ^ըսիլ, գիր՝ գ^ըրատուն. սուզ՝ ս^ըզալ, սուր՝ ս^ըրաձայր. պտոյտ՝ պ^ըտ^ըտիլ, քոյր՝ ք^ըրոջ եւ այլն:

Ո՞ւր կը գրուի բառամեջի ը-ը:

ա.- Բառամեջի ու (վ) բաղաձայնէն ետք ինկած դիրքին.

- Բազմապատկական ուրտ, ուրոտ ածանցներուն մէջ, ինչպէս՝ պահուրտիլ, կռուրտիլ, գզուրոտիլ, լզուրոտել, հոտուրտալ:

Թովոալ (թըռ-վըռ), սլվլալ (սըլ-վըլ) բայերը կրկնաւորներ են հիմքի մէկ բաղաձայնի փոփոխութեամբ:

- Ուան հոլովումի բացառական հոլովին մէջ. իրիկուն՝ իրիկուան-իրիկուրնէ, առտու՝ առտուան-առտուրնէ, այդպէս նաեւ՝ վաղուրնէ, այսօրուրնէ, երբուրնէ եւ այլն:

- Ուրնէր բարբառային յոգնակերտին մէջ, զոր կ'առնեն կարգ մը բառեր միայն, ինչպէս՝ աչուրնէր, ձեռուրնէր, ոտուրնէր, ծնկուրնէր, մատուրնէր:

բ.- Այլ անհրաժեշտ պարագաներու.

- անցնիլ-անցընել. ոմանք անցնել ներգործական բայը կը գրեն անցընել, որպէսզի հակադրուի անցնիլ չէզոք բային՝ կ'անցընէի-կ'անցնէի, կ'անցընեմ-կ'անցնիմ: Թէեւ խօսքի շղթային մէջ բային գաղտնավանկի արտասանութիւնը անհրաժեշտ կը զգացուի, բայց ը-ին գրութիւնը կը դիւրացնէ ընթերցանութիւնը:

Ընդունիլ ներգործական անցընել բային ը-ով գրութիւնը, ընդունելով հանդերձ անոր զարտուղի ըլլալը:

- Պտըտի լ, թէ պտտիլ. պէտք է գրել պտտիլ ու մերժել ը-ով ձելը, որովհետեւ հայերէնի մէջ բառամեջին հնչիւնափոխութեամբ գոյացած ը-ը երբեք չէնք գրեր. գիր՝ գրել, սուր՝ սրել, բոյժ՝ բժիշկ, բոյն՝ բնաւեր, սոյր՝ սուրալ, բայց՝ սրարշաւ, այդպէս՝

պտտիլ: Ուրեմն՝ պտտիլ, պտտցնել, ինչպես՝ փթթիլ, պլլուիլ, բռնկցնել, կրկնուիլ եւ այլն:

- **Առնչութիւն, թէ առընչութիւն.** Ը-ով գրողները նկատի ունին, որ *ինչ* բաղադրիչը բառակերպին օրինաչափօրէն ունի գրուող ը՝ *ընչագուրկ, ընչաքաղց, ընչասէր, ընչեղ, ինչպէս՝ իղձ՝ ըղձալ, ըղձալի, ինձ՝ ընձառիծ, ընձուղտ կամ ունդ՝ ընդեղէն, ունպ՝ ընպել, ունչ՝ ընչացք,* ուր ը-ի գրութիւնը անհրաժեշտ է ընթերցանութեան համար: Ը-ը չգրողները կը շարժին այն ընդ-հանուր տրամաբանութենէն, որ ձայնաւորներու հնչիւնափոխութենէն առաջացած ը-ը բառամեջին միշտ անգիր է ու ընթերցանութեան դժուարութիւն չի ստեղծեր, անոնք իբրեւ ապացոյց կու տան նաեւ *ոչինչ* կցական բարդութենէն կազմուած բարդութիւնները, ուր *ոչ-ինչ*-ը ճիշդ *առ-ինչ*-ին կազմութիւնը ունի՝ ու կ'ըլլայ *ոչնչանալ, ոչնչութիւն, ոչնչապաշտ, ոչնչական, ոչնչաբան:* Նոյնին համաբանութեամբ ալ գրել *առնչուիլ, առնչութիւն, առնչակից, առնչակցիլ:*

գ.- **Տուեալ, տուչութիւն, տուրնջեան կամ ի տուրնջեան** (առաւօտեան, ցերեկով) բառերը գրութեան եւ արտասանութեան հակադրութիւն ունենալով հանդերձ կը պահեն գրութեան աւանդական ձեւը:

25.- Ը հնչիւնը վերջին փակ ու բաց վանկերուն մէջ

Չի գրուիր բառի վերջին փակ դիրքին մէջ, ինչպէս՝ *անգղ, աստղ, բարձր, գողտր, դուստր, թանձր, վագր, ծանր, կայսր, կարծր, մանր, մեղր, ուստր, բուռն, դառն, խառն, խուռն, եղեռն:* Այս բառերուն մէջ սուղ ը-ով կազմուած վանկը լիարժեք չի նկատուիր, կը կոչուի «կէս վանկ», իսկ այդ բառերը՝ «մէկուկէս վանկանի բառեր»:

Սուղ ը կ'առաջանայ նաեւ ս եւ դ յօդերէն առաջ, ինչպէս՝ *գիրքս, գիրքդ, մատիտս, մատիտդ:*

Սուղ ը կայ նաեւ ծագումով օտար բառերու վերջավանկին մէջ, ինչպէս՝ *Աղեքսանդր, լիտր, կղմիւնտր, կուպր, մէթր, օշինդր* եւ այլն:

Ը-ը կը գրուի.

- բնաձայններուն մեջ՝ *ճը՛ռռ, վը՛զզ, խը՛ռռ, քը՛շշ, քը՛շտ, մը՛ռռ, փը՛թ, փը՛րթ, քը՛րթ, մը՛րթ, ճը՛րթ, խը՛րթ* եւ այլն:

- իբրեւ յօդ. *ծառ ծառը, անտառ անտառը, դասարան՝ դասարանը:*

- սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու բայերը կը կազմուին *կը* (կ՛ եւ կու) ցուցիչով, որ բաղաձայնով սկսող բայերէն առաջ առանձին կը գրուի.

կը վազեմ, կը վազես, կը վազէ. կը վազենք, կը վազեք, կը վազեն:

կը վազէի, կը վազէիր, կը վազեր. կը վազէինք, կը վազէիք, կը վազէին:

Կը մասնիկը ձայնաւորով սկսող բայերէն առաջ կը կորսնցնէ *ը* հնչիւնը, որուն զեղչումին ի նշան ապաթարց կը դրուի՝ *կ՛*: Կ՛արտասանուի ու կը գրուի բային հետ. *արդուկել՝ կ՛արդուկեմ, ափսոսալ՝ կ՛ափսոսամ, ըսել՝ կ՛ըսեմ, ըմպել՝ կ՛ըմպեմ, իմացնել՝ կ՛իմացնեմ, իջնել՝ կ՛իջնեմ, ուշանալ՝ կ՛ուշանամ, ուզել՝ կ՛ուզեմ, օրօրել՝ կ՛օրօրեմ, օրհնել՝ կ՛օրհնեմ*: Բառակիզբի եւ ո գիրերը *կ՛* առնելով փակ դիրքին մեջ կը մտնեն ու կը կորսնցնեն բառակիզբի իրենց յատուկ արտասանութիւնը՝ վերածուելով պարզ ձայնաւորներու. *երթալ՝ կ՛երթամ, երգել՝ կ՛երգեմ, երագել՝ կ՛երագեմ, որոջել՝ կ՛որոջեմ, որոնել՝ կ՛որոնեմ* եւ այլն: Արեւմտահայերէնի համար խորթ են *կը երգեմ, կը որոջեմ* արտասանութիւնները:

Գաղտնավանկով սկսող բայերու պարագային *կը* մասնիկը նոյնպէս առանձին կը գրուի, բայց կ՛արտասանուի բային հետ, ճիշդ ը ունեցող բայերուն պէս: Համեմատել՝.

զբաղիլ՝ կը զբաղիմ - ըսել՝ կ՛ըսեմ

սպասել՝ կը սպասեմ - ընել՝ կ՛ընեմ

սթափիլ՝ կը սթափիմ - ընթրել՝ կ՛ընթրեմ

շտապել՝ կը շտապեմ - ընկերանալ՝ կ՛ընկերանամ

Մերժելի են *կ՛զբաղիմ, կ՛սպասեմ* եւ նման ձեւերը:

Կը մասնիկին փոխարէն կու մասնիկը կ'առնեն միայն երեք միավանկ բայեր՝ *գալ, տալ, լալ*՝ կու *գամ, կու գաս, կու գայ...* կու *գայի, կու գայիր, կու գար* եւ այլն: Ոմանք կը կցեն՝ *կուգամ, կուգաս, կուգայ*: Երբ կը մասնիկը կը գրենք առանձին՝ կու մասնիկին կցուած գրելը անյարիր կը դառնայ: Պէտք է առանձին գրել:

- Անորոշ յօդերը՝ *մը* եւ *մըն*, որոնք առանձին կը գրուին. *աշակերտ մը, նկարիչ մը, ծառ մը. ես աշակերտ մըն եմ. դուն նկարիչ մըն ես. կաղնին ծառ մըն է*:

Մ' յապաւումը մերժուած է նորերուն կողմէ: *Ես նկարիչ մ'եմ, դուն նկարիչ մ'ես, ան նկարիչ մ'է* ձեւերը չեն արտօնուած գրաւոր հայերէնին մէջ:

- Քանի մը բառերու վերջայանգին խօսակցականին մէջ ոմանք կը գրեն ը՝ *ընդհակառակը, խառը, սառը, դառը*, ինչպէս արեւելահայերէնին մէջ: Մերժել՝ թելադրելով *ընդհակառակն, խառն, սառն* (վերաբերմունքի), *դառն*: Կան նաեւ *այսինքն* եւ *ուրեմն* բառերու *ուրեմն, այսինքը* սխալախօսութիւնները:

26.- Ը հնչիւնը թուականներու մէջ

Ը-ը կը գրենք *եօթը, ութը, ինը, տասը* միաւորներու վերջաւորութեան: Ասոնցմէ *եօթը, ինը* եւ *տասը* թուականներու գրաբարեան ձեւերն են *եօթն, ինն, տասն*: Պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով վերջավանկի ն-ի անկումը համատարած է նախորդող գաղտնավանկին հետ՝ *մուկն՝ մուկ, եզն՝ եզ, լեռն՝ լեռ*. այս թուականներու պարագային վերջայանգ ն-ն կորսուած է, բայց անգիր ը-ը մնացած բառավերջին եւ գրուելու պարտաւորուած՝ *եօթը, ինը, տասը*:

Ոմանք կը մերժեն հայերէնի (գրաբարի) այս խորթ ձեւը ու կը գրեն *եօթ, ութ, ինն, տաս*, ն-ն միայն *ինը* թուականին վերապահելով, թէեւ բոլորն ալ կ'արտասանեն ը-ով: Ներկայիս մեծամասնութիւնը կը գրեն ը-ով կամ խառնիխառն:

Ութ միաւոր թուականը չունէր վերջայանգի ն-ն: Բայց աշխարհաբարի *եօթը, ինը, տասը* թուականներու շարքին կ'իյնայ

համաբանութեան տակ ու կ'արտասանուի *ուրբ*: Հոս եւս տարածուած է *ուր-ուրբ* գրութեան երկձեւութիւն: *Ուրբ* ձեւը արդարացուած պէտք է նկատել, որովհետեւ լեզուական հակառակ երեւոյթով մըն ալ ան կը հաստատուի, ածանցաւոր կազմութիւններուն մէջ ն-ն հոս ալ հանդէս կու գայ, ինչպէս *իննոց, իննեակ, իններորդ*, այդպէս ալ *ուրնեակ, ուրնոց*: Բոնագրօսիկ ճիգը պիտի չկարենայ պահել *ուր* ձեւը:

Ընդունիլ *եօթը, ուրբ, ինը, տասը* իբրեւ ուղիղ ձեւեր, չմերժելով նաեւ *եօթ, ուր, տաս* ձեւերը: Ասոնց տասնաւորները կ'ըլլան *եօթանասուն, ուրսուն*, իսկ *ինը* միաւորին տասնաւորը ունի կրկնակ ձեւ՝ *իննսուն/ինիսուն*:

Մէյ մը որ այս թուականները դարձան ը-ով ձայնաւորայանգ՝ կը ծագի յօդառութեան պարագան, երբ թուականը իբրեւ փոխանուն գոյականաբար գործածելու ըլլանք: Ը-ը ձայնաւոր է, հետեւաբար պէտք է ն յօղը առնէ փոխանուանաբար գործածուելու պարագային՝ *եօթըն, ուրըն, ինըն, տասըն*, բայց սովորութիւն եղած է գրել *եօթն, ուրն, ինն, տասն*:

Համեմատել.

Տասը մատիտ ունէի, եօթըն տուի քրոջս:

Կը գրեն՝ «Եօթն տուի քրոջս»:

Տասը մատիտ ունէի, տասըն ալ տուի քրոջս:

Կը գրեն՝ «Տասն ալ տուի քրոջս»:

Սակայն սա փոխանուն *եօթն, ուրն, ինն* եւ *տասն* ձեւերը նոր շփոթութիւն կ'առաջացնեն՝ զանոնք կապելով իրենց գրաբարեան նախատիպին հետ: Այդ պատճառով ալ շատեր կը նախընտրեն այդ թուականներու փոխանուան (գոյականաբար գործածուած թուականին) փոխարէն գործածել թուական որոշիչ-որոշեալ կապակցութիւններ, այսպէս՝

Տասը մատիտ ունէի, եօթն տուի քրոջս:

Տասը մատիտ ունէի, եօթը հասը տուի քրոջս:

Տասը աշակերտէն եօթն բացակայ էր:

Տասը աշակերտէն եօթը հոգին բացակայ էր:

Փոխանուն թուականները կը հոլովուին ի հոլովումով՝ *եօթի, եօթէ, եօթով, տասի, տասէ, տասով, ութի, ութէ, ութով*, միայն *ինը* թուականը կը վերականգնէ ն-ն՝ *իննի, իննէ, իննով*:

Կցական բարդութեան թուականներուն վերջաւորութեան ը-ը կը մնայ, ինչպէս՝ *տասնեօթը, տասնուօթը, տասնինը, քսանեօթը, քսանուօթը, քսանինը*, այսպէս՝ մինչեւ *ինիսունեօթը, ինիսունուօթը, ինիսունինը*:

Այս տասնաւոր-միաւոր թուականներուն մէջ *տասը* թուականի ն-ն կը վերականգնի՝ *տասնմէկ, տասներկու տասներեք տասնչորս, տասնհինգ, տասնեօթը, տասնուօթը, տասնինը*: Տասն բաղադրիչէն ետք բոլոր միաւորներէն առաջ կը լսուի ը: Ոմանք կը գրեն *տասնըմէկ, տասնըերկու, տասնըերեք, տասնըչորս* եւ այլն: Նախընտրելի է ը-ը չգրել, այսպէս՝ *տասնմէկ, տասներկու, տասներեք, տասնչորս* եւ այլն:

27.- Ը հնչիւնը օտար բառերու մէջ

Ը հնչիւնի գրութեան նոյն օրէնքները կը գործեն հին փոխառութիւններուն մէջ: Բառին սկիզբը, ինչպէս տեսանք, չի գրուիր *Սկովտիա, Սպանիա, Սպահան, սպունգ, սֆինքս* եւ այլն: Չի գրուիր նաեւ երկու բաղաձայններու միջեւ ինկած դիրքին մէջ, ինչպէս՝ *կրամ, կլիմայ, դրամ, տրամա, կլայ, քրոմ, քրոնիկ, ֆրանգ, Աղեքսանդր, լիտր, կղմիւտր, կուպր, մեթր, օշինդր* եւ այլն:

Նոր փոխառութիւններու մէջ, հակառակ վերի օրինաչափութեան, կը գրուի հետեւեալ պարագաներուն.

- երբ բաղաձայններու կուտակում կայ եւ ըստ իմաստի՝ ուղղախօսութեան համար ը-ը գրելը անհրաժեշտ կը նկատուի, օրինակ՝ *Գլը՝ ճեան, թէ Գլճեան, Ճղը՝ շեան, թէ Ճղշեան, Գրը՝ գեան, թէ Գրգեան*. Ասոնք իմաստային տարբերութիւններ ի յայտ կը բերեն:

- օտար բառերու վերջին վանկին մէջ, ուր կը թուի, թէ աւելորդ է եւ ընթերցանութեան դժուարութիւն չի յարուցեր, ինչպէս՝ *Սարթր* եւ *Փարթր* (հմմտ. *գամփո*), *Պոսթն* եւ *Ճոնսն*

(հմմտ. *Վահագն*), բայց բառի աճման պարագային հայերեն բառերու (նաեւ հին փոխառութիւններու) գաղտնավանկը կ'անհետի. *գամփ(ը)ն՝ գամփոի, Վահագ(ը)ն՝ Վահագնի, մեթ(ը)ր՝ մեթրի, թանձ(ը)ր՝ թանձրութիւն, բարձր՝ բարձրութիւն*, սակայն նոր փոխառութիւններու մէջ ը-ը լիարժէք վանկարար կը դառնայ. *Սարթըր՝ Սարթըրի, Պոսթըն՝ Պոսթընի, Ճոնսըն՝ Ճոնսընի*, եւ այդ պատճառով ալ պայման է, որ ուղիղ ձեւին մէջ ը գրուի՝ *Սարթըր, Փարթըր, Պոսթըն, Ճոնսըն* եւ այլն:

Օտար անձնանուններու եւ տեղանուններու ո-ո՞վ, օ-ո՞վ թէ ը-ով տառադարձումը բազմաձեւութիւն կը ստեղծէ նոր լեզուին մէջ՝ *Պոսթոն-Պոսթօն-Պոսթըն, Լոս Անճելոս-Լոս Անճելօս-Լոս Անճելլօս*: Հնագոյնները կը պահենք ո-ով՝ *Կիպրոս, Եգիպտոս, Լոնտոն*: Օ-ն չգործածելու արդի միտումը նուազեցուցած է անոր ներկայութիւնը, բայց ը-ը եւ ո-ն կը գործեն: Բառին արտասանութիւնը ելակէտային համարելով՝ մեր մէջ աւելի տարածուն է ը-ը:

- Միավանկ մականուններու մէջ ը-ը չի գրուիր՝ *Լնդեան, Միչեան*: Մերժելի է երկու յաջորդական գաղտնավանկերը ը-ով գրելը, որպէսզի տարբերութիւն չգոյանայ հայերէն բառերու դիմաց. գրել *Քրմզեան, Թրթոեան, Տլտլեան, Ճիշդ* ինչպէս կը գրենք *սկզբնական, քրքրել, մկրտիչ*: Սակայն աւելի գաղտնավանկ ունենալու պարագային՝ ընթերցանութիւնը դիւրացնելու համար թելադրելի է գրել վերջին երկուքը. *Շիրտմեան՝ Շիրտտրմեան, Գրշքեան՝ Գրըշքեան* եւ այլն:

28.- Ի հնչիւնը եւ անոր գրութիւնը

Ի ձանաւոր հնչիւնը հին հայերէնի մէջ արտայայտուած է միայն ի գիրով: Նոյնն է նաեւ նոր հայերէնի մէջ:

Ի գիրը նոր հայերէնի մէջ այլ ձայնաւորէ առաջ կրնայ պահել իր ինքնուրոյնութիւնը՝ *զինի-զինիի, զինիէ, զինիով*, սակայն գլխաւորաբար օտար ծագումով բառերու պարագային ունի կիսաձայնի արժէք՝ *Բենիամին, Կիլիկիա, Դանիէլ*:

Իւ կապակցութիւնը կ'արտայայտէ հնչիւնական երեք արժէք՝ ձայնաւոր+բաղաձայն կապակցութիւն (*թիւ, հիւանդ*), երկ-հնչիւն (*ութիւն* ածանցին մէջ), ձայնաւոր (*սիւն, արիւն*):

29.- Ի ձայնաւորին դիրքերը

ա.- Ի ձայնաւորը հայերէնի մէջ կը լսուի բառի բոլոր դիրքերուն մէջ, կը գրուի ի-ով եւ ուղղագրական դժուարութիւն չի պատճառեր, ինչպէս՝ *իղձ, իրիկուն, իմանալ, իժ, միս, կիրթ, սրբիչ, անկողին, գեղանի, գինի, ձի, թի* եւ այլն:

Ի գիրը այլ ձայնաւոր գիրի մը կը միանայ ուղղակի, առանց կիսաձայն յ-ի գրութեան. *գինի՝ գինիի, գինիէն, գինիով. ձիուկ, միակ, միութիւն*:

բ.- Իա, իայ, իո, իոյ եւ իօ կապակցութիւններուն մէջ ի-ն հանդէս կու գայ կիսաձայնի արժէքով: Այսօր ոչ ոք կ'արտասանէ *Մարի-ամ, Բենի-ամին, Իտալի-ա, կրի-այ, Իտալի-ոյ, Օնթարի-օ*, այլ *Մար-իամ, Բեն-իամին, Իտալ-իա, Կր-իայ, Իտալ-իոյ, Օնթար-իօ*, որոնց մէջ ի-ն հանդէս կու գայ բառամէջի յ-ի (կայան) կամ կիսաձայն ե-ի (եար, Եոհան) հնչիւնով:

30.- Ի ձայնաւորին հնչիւնափոխութիւնները

Ածանցումի եւ բարդումի ստեն շեշտակիր դիրքի ի-ն հետեւեալ փոփոխութիւնները կը կրէ.

ա.- Բազմավանկ բառերու փակ դիրքին մէջ կը կորսուի կամ կը վերածուի անգիր ը-ի. *գրիչ՝ գրչաման, մահիճ՝ մահճակալ, ամուսին՝ ամուսնական, անկողին՝ անկողնոց, դեղին՝ դեղնուց, ծաղիկ՝ ծաղկաման, տիկին՝ տիկնայք, ուսուցիչ՝ ուսուցչութիւն, կարմիր՝ կարմրիլ, իսկ միավանկ բառերու պարագային կը վերածուի չգրուող ը-ի. *դիրք՝ դրութիւն, միս՝ մսեղէն, քիթ՝ քթածակ, գիր՝ գրել, բիրտ՝ բրտութիւն, միրգ՝ մրգաստան, խիղճ՝ խղճահարութիւն* եւ այլն:*

բ.- Բառասկիզբին կարգ մը բառերու մէջ կը վերածուի ը-ի. *ինչ՝ ընչագորկ, ընչասէր, ընչաքաղց, իղձ՝ ըղձալ, ըղձալի, ինձ՝ ընձառիւծ, ընձուղտ* եւ այլն: Կարգ մը բառերու մէջ ալ կը մնայ

նոյնը. *իր՝ իրեղէն, ինք՝ ինքնակալ, ինքնութիւն, իսկ՝ իսկապէս, իսկական, իսկութիւն* եւ այլն:

գ.- Միավանկ բառերու բաց դիրքին մէջ անփոփոխ կը մնայ. *թի՝ թիակ, թիավարել, դի՝ դիակ, դիահերձում, լի՝ լիութիւն, լիիրաւ, լիաթոք, մի՝ միակ, միայն, միասին, ձի՝ ձիաւոր, ձիարշաւ, ձիաբոյժ* եւ այլն:

Մի բառէն ունինք *միակ, միայն, միութիւն, միանալ, միատեղ, միասեռ*, բայց երբ երկրորդ բաղադրիչը բաղաձայնով կը սկսի՝ կ'ըլլայ *մե-*, ինչպէս՝ *մեկուսի (մի-կոյս-ի), մեկուսանալ, մեկին* (պարզ, յստակ, *կին* ածանցով), հին բառեր են *մեկողմանի, մետասան, մետասաներորդ*: Բարբառային կազմութիւններ են *մէն մի, մէկ, մէյ մը* եւ *դէս ու դէն* (տե՛ս էջ 42):

դ.- Բազմավանկ բառերու բաց դիրքին մէջ ունի քանի մը տեսակ փոփոխութիւններ.

- Ա յօդակապին կամ յաջորդ բաղադրիչի սկիզբի ա-ին միանալով կը դառնայ ե. *գարեջուր* (գարի-ա-ջուր), *գինեմոլ* (գինի-ա-մոլ), *գօտեպինդ* (գօտի-պինդ), *մատնեմատ* (մատնի-ա-մատ), *ոսկեգոյն* (ոսկի-ա-գոյն), *տարեկան* (տարի-ական) *հոգեկան* (հոգի-ական) եւ այլն:

- Ակ փաղաքշական մասնիկը ի-ին միանալով կը կազմուի եւ երկբարբառը. *որդի՝ որդեակ, հոգի՝ հոգեակ, պատանի՝ պատանեակ* եւ այլն:

- Ութիւն ածանցէն առաջ կ'իյնայ. *վայրենի՝ վայրենութիւն, ընտանի՝ ընտանութիւն, բարի՝ բարութիւն, խելացի՝ խելացութիւն, կատաղի՝ կատաղութիւն, անօթի՝ անօթութիւն* եւ այլն: Նոր կազմութիւններու մէջ անփոփոխ կը մնայ. *կծծի՝ կծծիութիւն, փնթի՝ փնթիութիւն, լկտի՝ լկտիութիւն*: Գինարբուք բառին մէջ կայ բառավերջի ի-ի ամբողջական սղում: Եթէ երկրորդ բաղադրիչը ե-ով սկսի՝ բառավերջի ի-ն կ'իյնայ, ինչպէս՝ *ոգի-եղէն՝ ոգեղէն, մոլի-եռանդ՝ մոլեռանդ*:

31.- Ի հնչիւնը հոլովական համակարգին մէջ

Ի ձայնաւորը նաեւ հոլովական մասնիկ է: Ի հոլովումին կ'ենթարկուի գոյականներու մեծամասնութիւնը, այդ պատճառով ալ ան կը կոչուի ընդհանրական կամ հասարակ հոլովում. *մատ՝ մատի, սեղան՝ սեղանի, Արա՝ Արայի, Ֆրանսա՝ Ֆրանսայի, սատանայ՝ սատանայի, բազէ՝ բազէի, մատանի՝ մատանիի, կատու՝ կատուի, առու՝ առուի, Դրօ՝ Դրոյի, հաւաքածոյ՝ հաւաքածոյի* եւ այլն:

Արեւմտահայերէնի ուղղախօսական յատուկ պարագայ մըն է ու-ով վերջացող բառերու հոլովական ձեւերու արտասանութիւնը: Հոն ձայնաւորէ առաջ ինկած դիրքերուն մէջ ու-ն «վ» չ'արտասանուիր ինչպէս բառակազմական պարագաներուն մէջ՝ *առուակ* (առվակ), *մեղուաբոյն* (մեղվաբոյն), *թթու թթուաշ, լեզու՝ լեզուակ, լեզուանի, կծու՝ կծուիլ*, այլ կը մնայ ձայնաւորի արտասանութեամբ՝ *մեղուի, մեղուէն, մեղուով, առուի, առուէն, առուով*: Շատ քիչ կը լսենք «հեռվէ հեռու», այլ՝ *«հեռուէն հեռու»*:

Ի-ով վերջացող կարգ մը գոյականներ երկրորդաբար կ'ենթարկուին նաեւ ոյ հոլովումին: Այդ պարագային ի-ն ւ կը դառնայ՝ *եկեղեցի-եկեղեցիի-եկեղեցւոյ, հոգի՝ հոգիի-հոգւոյ, մատանի՝ մատանիի-մատանւոյ (մատանիին)*: Թեքէեան ունի նաեւ «հաց ու գինուվ կենսատողջ»: Յօդառութեան պարագային հոլովական վերջաւորութեան արտասանութիւնը կը փոխուի՝ *եկեղեցի՝ եկեղեցւոյ-եկեղեցւոյս, հոգի՝ հոգւոյ-հոգւոյն*:

Հոլովումի մէջ ի-ն փակ դիրքի մէջ չի հնչիւնափոխուիր. *գիրք՝ գիրքի, գիրքէ, գիրքով, լիճ՝ լիճի, լիճէ, լիճով, մատիտ՝ մատիտի, մատիտէ, մատիտով. կաւիճ՝ կաւիճի, կաւիճէ, կաւիճով...* Սակայն այս անցումը արեւմտահայերէնի մէջ տակաւին չ'է ամբողջացած. ոմանք կը գործածեն հին ձեւը. *գիր՝ գրի, փոխանակ՝ գիրի, ուսուցիչ՝ ուսուցչի, փոխանակ՝ ուսուցիչի*: Թելադրելի է գործածել անփոփոխ ձեւը, երբ մանաւանդ ի հնչիւնի սղումը բոլորովին խորթ կրնայ հնչել բացառական եւ

գործիական հոլովներուն մէջ: Տիրական ձեւեր են *գիրէն, գիրով, ուսուցիչէն, ուսուցիչով*, ուրեմն՝ *գիրի, ուսուցիչի*:

Այսուհանդերձ ի-ի անկում կ'ունենան շարք մը բառեր միայն. *երկիր՝ երկրի, երկրէ, երկրով, երկինք՝ երկնի* (սովորական՝ *երկինքի*), *լուսին՝ լուսնի, մարմին՝ մարմնի/մարմինի, պատիւ՝ պատուի/պատիւի, հաշիւ՝ հաշուի/հաշիւի* եւ այլն: Ասիկա մասնակի երեւոյթ է ու կարելի չէ ընդհանրացնել: Ին վերջայանգով քանի մը բառերու ոյ գրաբարաձեւ հոլովման պարագային ի-ն կը սղի, ինչպէս՝ *ամուսին՝ ամուսնոյն, անկողին՝ անկողնոյն, մարմին՝ մարմնոյն*, իսկ իւ վերջայանգով բառերու պարագային իւ-ը կը դառնայ *ու* բաղաձայն. *պատիւ՝ պատիւի-պատուի-պատուոյ, հաշիւ՝ հաշիւի-հաշուի-հաշուոյն, թիւ՝ թիւի-թուին, հովիւ՝ հովիւի-հովուի* (տե ս էջ 63):

Ներ մասնիկով յոգնակի բառերուն մէջ ի-ի սղում չի նկատուիր. *մատիտ՝ մատիտներ, ուսուցիչ՝ ուսուցիչներ, երկիր՝ երկիրներ, երկինք՝ երկինքներ, անմիտ, անմիտներ, նամակագիր՝ նամակագիրներ*: Եր մասնիկով յոգնակի շարք մը բառեր կը շարունակեն գործածուիլ ի հնչիւնի անկումով. *գիր՝ գրեր, գիրք՝ գրքեր, սիրտ՝ սրտեր*, բայց ամէն պարագայի՝ նախընտրելի է անփոփոխ պահելը, ինչպէս՝ *գիրեր, գիրքեր, սիրտեր, միրգեր, լինտեր*: Նոյնն է պարագան այն բարդ բառերուն, որոնց երկրորդ բաղադրիչը միավանկ բառ մըն է, ինչպէս՝ *պատմագիրեր* (պատմական գիրեր), *պատմագիրներ* (պատմութիւն գրողներ):

32.- Ի նախդիրը

Ի ձայնաւորը հին հայերէնի մէջ նախդիր էր, ինչպէս «ի տուէ եւ ի գիշերի, ի ննջել եւ ի յառնել»: Ի նախդիրը ձայնաւորէ առաջ կը դառնար յ՝ *յանուն հօր, յառաջ, յամենայն* եւ այլն: Ասոնցմէ ոմանք նոր հայերէնի մէջ քարացած ձեւեր են, ինչպէս՝ *ի վեր, ի վար, ի գին, ի խնդիր, ի նպաստ, ի ծնէ, ի սկզբանէ, ի հեճուկս, յանուն, յառաջ, յաւարտ* եւ այլն:

Ոմանք առաջին վերի երկու յարադրութիւնները կը գրեն միասին՝ *իվեր, իվար*, ինչպէս *ընդ* նախդիրի պարագային կ'ը-

նենք՝ *ընդմիջտ, ընդերկար*, իսկ միւսերը տակաւին կը պահեն իրենց անկախութիւնը՝ *ի ինդիր, ի նպաստ*:

Ի նախդիրը կայ նաեւ կցական բարդութիւններու մէջ, ինչպէս՝ *զառիթափ, զառիվար, զառիվեր, խառնհիտուռն, հելիհել*:

Շարք մը ի նախդրաւոր ասոյթներ սխալ կը գործածուին բանաւոր թէ գրաւոր խօսքի մէջ: Ոմանք կը մէջբերենք սխալ ձեւը փակագիծի մէջ առնելով.

Այսուհետեւ (յետայսու): Կարելի է ըսել *յետ այսը* կամ *յետ այսորիկ*

Ափ ի բերան մնալ (ափը բերանը մնալ)

Ի զարմանս (ի զարմանք)

Ի գուր (ի գուր տեղ)

Ի ժամու եւ տարածամու (ի ժամուն եւ տարածամուն)

Ի կատար ածել (կատար ածել)

Ի հաշիւ, հաշուոյն (ի հաշուոյն, ի հաշւոյն)

Ի հետեւանս (ի հետեւանք)

Ի յայտ գալ (յայտ գալ, յայտնի գալ)

Ի պահանջել հարկին (ի պահանջեալ հարկին)

Ի պէտս եւ յանպէտս (ի պէտքս եւ անպէտքս)

Ի սպաս դնել (սպաս դնել)

Ի ցոյց մարդկան (ցոյց մարդկան, ցոյց մարդոց)

Մասին (ի մասին)

Յականէ-յանուանէ (ականէ-անուանէ)

Յանձին՝ տնօրէնին (յանձինս տնօրէնին)

Յանձինս տնօրէններուն (յանձին տնօրէններուն)

Յաւոր պատշաճի (աւոր պատշաճի)

Յոտնկայս (ոտնկայս)

Յուրախութիւն (ի ուրախութիւն, ուրախութիւն)

Յօգուտ (ի օգուտ)

Շնորհիւ (ի շնորհիւ)

Ումպէտս (յումպէտս)

Յետ կապը կը պահանջէ տրական հոլովով խնդիր՝ *յետ պատերազմի, յետ մահու, յետ միամեայ տառապանքի, յետ եր-*

կարատելի բանակությունը, բայց կապակցությունը որոշիչի դերով գործածելու պարագային կը կցուի խնդիրին՝ *յետեղեռնի մեր սերունդը, յետեղեռնեան հայ գրականությունը, յետպատերազմեան իրադրությունը*. այստեղ արդեն հանդես կու գայ իբրեւ նախածանց. *յետ գրություն՝ յետգրություն, յետադաս, յետագայ, յետամնաց* եւ այլն:

33.- Իւ կապակցութեան երեք արժէքները

Իւ կապակցությունը ունի երեք արժէք՝ ձայնաւոր-բաղաձայն կապակցություն, երկհնչիւն եւ ձայնաւոր՝ *թիւ – քաջութիւն – սիւն*: Ասոնք կը զանազանուին իրենց դիրքերով:

ա.- Իբրեւ ձայնաւոր-բաղաձայն կապակցություն՝ կու գայ բառավերջին եւ ձայնաւորէ առաջ՝ *թիւ, անիւ, հովիւ, հիւանդ, դիւան, տիւան*:

բ.- Իբրեւ երկհնչիւն՝ անոր ամէնէն զօրաւոր դիրքը *ուրիւն* ածանցն է (*քաջութիւն՝ «քաջութեուն», նոր ուղղագրութեամբ՝ քաջություն*): Նոյնը կայ բառակիզբին, մանաւանդ *իւղ* բառին մէջ՝ «եւղ», իսկ միւս բառերուն սկիզբը կայ արտասանական երկձեւութիւն՝ երկհնչիւն եւ ձայնաւոր. *իւրացում՝ «եւրացում-իւրացում», իւրաքանչիւր՝ «եւրաքանչիւր-իւրաքանչիւր», իւրեանց՝ «եւրեանց-իւրեանց»*: Նշենք, որ ի գիրը ձայնաւորէ մը առաջ ինկած իր դիրքին մէջ կիսաձայն է: *Մարիամ, Բենիամին, Անտոնք, Իտալիա-Իտալիոյ* եւ նման դիրքերուն մէջ կ'արտասանուի սոսկ իբրեւ կիսաձայն (եա, եո՝ «յա», «յո»), այսինքն՝ այդ դիրքերուն մէջ ի-ն կորսնցուցած է իր ինքնուրոյն ձայնաւորի արժէքը: Նոյնը եղած է իւ կապակցութեան պարագային՝ բառակիզբին եւ *ուրիւն* ածանցին մէջ, ուր կիսաձայնի եւ ու ձանաւորի միացություն է:

գ.- Իբրեւ ձայնաւոր կայ բաղաձայնէ մը առաջ ինկած իր դիրքին մէջ (բացի *ուրիւն* ածանցի մէջի դիրքէն եւ մասամբ բառակիզբէն), ինչպէս՝ *ալիւր, առիւծ, անկիւն, արիւն, բիւր, գիւղ, դիւր, դիւրին, թիւր, խիւս, ծիւրիլ, կնիւն, կորիւն, հիւր, հիւս, հիւսիս, հերիւն, ձիւն, ճիւղ, միւս, նիւս, սիւն, սկիւռ, իւն*

ածանցին մէջ՝ *մշաւին, սօսափին, կարկաչին, հնչին, գոչին*, այբուբենի երեք տառերու անուններուն մէջ *լին, տին, վին, փիր*: Այս ձայնաւորը սովորական ու-էն կը տարբերի իր քմայնութեամբ եւ իմաստագատիչ դեր ունի անոր հակադրութեամբ՝ *հուր-հիր, թուր-թիր, դուր-դիր, հնչուն-հնչին, սօսափուն-սօսափին, կարկաչուն-կարկաչին, խոխոջուն-խոխոջին* եւ այլն:

Խօսակցական լեզուին մէջ կարգ մը բառերու մէջ այս ձայնաւոր իւ-ն ունի արտասանական այլ երանգներ: Այսպէս՝ կայ «ույ» արտաբերումը. սին՝ «սույն», ձին՝ «ձույն», միւս՝ «մույս»: Կը պատահի նաեւ «առեուծ», «ալեուր» (նոր ուղղ.՝ առյուծ, այլուր): Այս զարտոդրութիւնը այս բառերէն դուրս չ'ել-լեր, հետեւաբար չունի տեսակարար արժէք: «Իւ» ձայնաւորը եւ «ույ» երկհնչիւնը կը հակադրուին իրարու իրենց իմաստագատիչ դերերով՝ *սին-սոյն, բիր-բոյր, թիր-թոյր, հիւս-յոյս*:

Արեւմտահայ գրական լեզուին մէջ իւ ձայնաւորին գոյութիւնը ու ընկալումը աներկբայ են, անշփոթելի: Իւ ձանաւորը յստակ կերպով կը հակադրուի իւ երկհնչիւնին. համեմատել *քաջութիւն՝ քաջութեուն* (նոր ուղղ.՝ քաջություն) եւ *ա-լիւր*: Համեմատել *հւրաքանչիւր* բառի երկու իւ-երը՝ «եւրաքանչիւր»: Իւ-ի երկհնչիւն եւ ձայնաւոր արժէքները կրնան միայն նոյն հնչոյթին դիրքային տարբերակները նկատուիլ, որովհետեւ անոնք իմաստագատիչ հակադրութիւններ կազմող եզրեր չունին ու չեն հանդիպիր իրարու: Կարգ մը քերականներ կը մերժեն անոր գոյութիւնը, իսկ ոմանք ալ կ'ընդունին զայն՝ տարբերակելով իւ երկհնչիւնէն:

Ու եւ իւ ձայնաւորները արեւմտահայ քերականներու կողմէ կը կոչուին *ձոյլ ձայնաւորներ*, որովհետեւ անոնց կազմութեան մասնակից ո եւ ի ձայնաւորները ւ-ին հետ, բառի որոշ դիրքերուն մէջ, կ'արտաբերեն իրենցմէ անկախ ձայնաւոր պարզ հնչիւններ:

Միւռոն բառը ունի *մեռոն* եւ *միռոն* տարբերակները: Տարածուած է առաջինը: Բաղադրութիւններուն մէջ այդ տարբե-

րակը պահպանել՝ *միւտոնակիր, միւտոնել, միւտոնաբոյր, միւտոնօրհնէք*:

Ա յօդակապի ներկայութեամբ պայմանաւորուած է *ձիթա-իւղ (ձէթ-ա-իւղ)* բարդութեան մէջ իւ-ին երկհնչիւնային արտասանութիւնը:

Իւ երկբարբառն ու ձայնաւորը նոր ուղղագրութեամբ արձանագրելու ատեն կայ մէկ միջոց՝ *յուղ, սյուն, արյուն*, ինչ որ կ'աղաւաղէ ձայնաւորին արտաբերութիւնը. ընթերցողը բնականաբար կը կարդայ գրուածքին թելադրութիւնը՝ *ար-յուն, առ-յուծ, կն-յուն, հոր-յուն, կոր-յուն*, մինչդեռ իւ-ի գրութեան պարագային նման շփոթ չի կրնար պատահիլ:

34.- Իւ կապակցութեան հնչիւնափոխութեան պարագաները

ա.- Իւ-ը, իբրեւ ձայնաւոր եւ երկհնչիւն, տոկուն է եւ բացի քանի մը մասնակի պարագաներէ՝ հնչիւնափոխութեան չ'ենթարկուիր. *իւր՝ իւրացում, իւղ՝ Իւղաբեր, իւղոտել, ձիւն՝ ձիւնամրրիկ, ձիւնածածկ (բայց՝ ձնծաղիկ), սիւն՝ սիւնագարդ, բիր՝ բիրապատիկ, թիր՝ թիրիմացութիւն, դիր՝ դիրին, հիր՝ հիրանոց, հարիր՝ հարիրամեայ, արին՝ արինաթաթախ (Չարենցը ունի՝ արնանման)* եւ այլն: Իւ>ե փոփոխութիւն ունինք *եղջիր՝ եղջերաւոր, եղջերափող* բառերուն մէջ: *Սփիւռ(ք)* եւ *մրջիւն* բառերու պարագային կ'իյնայ՝ *սփռել, սփռոց, մրջիւն՝ մրջնիկ, մրջնանոց*: *Ճիւղ* բառէն ունինք *ճիւղաւորիլ, ճիւղագրութիւն, ճիւղաւորում*, բայց՝ *ճղակոտոր, երկճղիլ, երկճղի* (երկճիւղ):

Իւն ածանցով կազմուած բնաձայնական գոյականները ածականի կը վերածուին ուն եւ ան ածանցներով, ինչպէս՝ *հնչիւն - հնչուն, զնգիւն - զնգուն, զոնգիւն - զոնգուն, շառաչիւն - շառաչուն, սօսափիւն - սօսափուն, մլաւիւն - մլաւան, հաջիւն - հաջան, կշկչիւն - կշկչան* եւ այլն: Ասոնք բառակազմական երեւոյթներ են:

Ութիւն ածանցով բառերու (*քաջութիւն, բարեկամութիւն, եղբայրութիւն, գրականութիւն, քերականութիւն*) հոլովական

ձեւերու կազմութեան մէջ կայ իւրեւեա հնչիւնափոխութիւն. *քաջութիւն՝ քաջութեան, քաջութենէ, քաջութեամբ*: Ուրիւն ածանցով քանի մը բառերու սեռական հիմքով կազմուած նոր բաղադրութիւններուն մէջ տեղի կ'ունենայ եւ>ե հնչիւնափոխութիւն. *բնութիւն՝ բնութեան-բնութենապաշտ, միութիւն՝ միութեան-միութենական, ինչպէս՝ թաղում՝ թաղման-թաղմանական, հայր՝ հօր-հօրենական, մայր՝ մօր-մօրաքոյր*:

Ի հոլովումին ենթարկուող *արիւն, անկիւն, սիւն, ձիւն* բառերը եւս կրնան հոլովուիլ իւրեւեա ներքին հոլովումով. *արիւն՝ արեան, արեամբ, անկիւն՝ անկեան, սիւն՝ սեան, ձիւն՝ ձեան*: Արեւմտահայերէնի մէջ ունին հազուադէպ գործածութիւն:

բ.- Իւ-ը, իբրեւ ձայնաւոր+բաղաձայն կապակցութիւն, շէտակիբ դիրքին մէջ կ'ունենայ հետեւեալ փոփոխութիւնները.

- Կը վերածուի ու-ի, որ կ'արտասանուի իբրեւ «վ» բաղաձայն. *թիւ՝ թուական, թուարկել, հովիւ՝ հովուական, հովուերգակ, պատիւ՝ պատուական, պատուաբեր, արծիւ՝ արծուենի, արծուաշէն* եւ այլն: Ի հասարակ հոլովումի ատեն հնչիւնափոխութիւն տեղի չ'ունենար, ինչպէս *քիւ՝ քիւի, անիւ՝ անիւի, թիւ՝ թիւի, հովիւ՝ հովիւի, արծիւ՝ արծիւի*: Արդէն դուրս ձգուած են կամ սահմանափակ գործածողներ ունին ի-ի սղումով կազմուած հոլովական ձեւերը՝ *թուի, հովուի, արծուի*: Ունինք ոյ հոլովման եւս ենթարկուող քանի մը բառեր, ինչպէս՝ *պատիւ՝ պատիւի-պատուի-պատուոյ, հաշիւ՝ հաշիւի-հաշուի-հաշուոյն*: Այս բազմաձեւութիւնները ի յայտ կը բերեն կիրառական տարբերութիւններ. կ'ըսուի «Հաշիւին նայեցէ՛ք», «Հաշուի առէ՛ք», «Հաշուոյն չի գար»:

- Իւ կամ ըւ ձայնաւոր-բաղաձայն կապակցութեամբ կը վերջանան որոշ բնաձայնութիւններ՝ *ծի՛ւ, ձի՛ւ, նը՛ւ, սը՛ւ*: Ասոնք բառակազմական մակարդակի վրայ ունին պարզ ու կրկնաւոր ձեւեր: Բառարանները պարզ ձեւին համար կու տան *նուալ, իսկ կրկնաւորի պարագային՝ նվնվալ* տիպարները: Անորեային մէջ ասոնք ունին գրութեան երեակ ձեւեր՝ *նուալ, նուալ, նվնվալ*, իսկ կրկնաւորները կրկնակ ձեւեր՝ *ննուալ, ննվնվալ*:

Սա բնաձայն հիմքով բառերու դասական ձեռով գրելու կերպը կը խանգարուի կրկնաւորի պարագային՝ *նուալ-նվնվալ*: Դասական ձեւին մէջ խամբած է բնաձայնական գործօնը: Այս պատճառով նախընտրուած է այդ պարզ բառերը կրկնակ վ-ով գրելու կերպը՝ *նվվալ, ծվվալ, ճվվալ*, որ կրկնաւորներուն մէջ բնականաբար կը վերածուի մէկի՝ *նվնվալ, ծվծվալ, ճվճվալ, սվսվալ*, բայց որովհետեւ բնաձայնները կ'արձանագրուին ւ-ով՝ *ծի՛ւ, ճի՛ւ, նր՛ւ, սր՛ւ*, հիմքի գիրը անփոփոխ պահելու միտումն ալ ստեղծած է երրորդ աւելի տրամաբանական ձեւը՝ *նուալ, ծուալ, ճուալ*, ապա՝ *ննուալ, ծծուալ, ճճուալ, սսուալ*:

Պէտք է տարբերել *վլվլալ, վլվլուք, վլվլոց* (վըլ-վըլ), *թովոալ, թովոան* (թըռ-վըռ), *սլվլալ, սլվլոց* (սըլ-վըլ): Ասոնք կա՛մ սովորական կրկնաւորներ են (ինչպէս՝ գոռգոռալ), կա՛մ հնչիւնափոխուած կրկնաւորներ (ինչպէս՝ գծմծել):

35.- **Օ հնչիւնը եւ անոր գրութիւնը իբրեւ *o, n, nj***

Օ հնչիւնը նոր հայերէնի մէջ կ'արտայայտուի *n* եւ *o* գիրերով եւ *nj* կապակցութեամբ:

Ո գիրը կը հանդիպի բառին երեք դիրքերուն՝ *ոզնի, ով, նոր, այո*, ուր կ'արտայայտէ հնչիւնական երկու արժէք՝ *o* եւ *վօ*:

Օ գիրը բառի բոլոր դիրքերուն մէջ կ'արտայայտէ *o* հնչիւնը: Կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն՝ *օղ, տօն, Կարօ*:

Ոյ կապակցութիւնը *o* հնչիւնով հանդէս կու գայ միայն բազմավանկ բառերու վերջը՝ *բրածոյ, հաւաքածոյ, Դշխոյ* (Ոյ կապակցութեան միւս արժէքները տե՛ս էջ 73):

Հետեւաբար՝ բառին բոլոր դիրքերուն մէջ *o* հնչիւնը գրութեան խաչաձեւումներ ունի:

Ո եւ *o* ձայնաւորները տոկուն են, այսինքն՝ բառի վերջին վանկին մէջ ածանցումի կամ բարդումի պարագային չեն հնչիւնափոխուիր. *նոր՝ նորովի, խոր՝ խորանալ, բոլոր՝ բոլորովին, տօն՝ տօնական, աղօթք՝ աղօթել* եւ այլն:

Ո-ն չ'արտասանուիր *Սողոմոն* յատուկ անուան մէջտեղի դիրքին մէջ:

Ոսկր հին ձեւը կը գործածուի ո-ի յաւելումով՝ *ոսկոր*, բայց կազմութիւններուն մէջ կը պահէ հին ձեւը՝ *ոսկրաբեկ, ոսկրաբոյժ, ոսկրախտ, ոսկրանալ, ոսկրուտ*:

36.- Ո եւ օ գիրերը բառին սկիզբը

Բառին սկիզբը ո գիրը կ'արտայայտէ վօ եւ օ հնչիւնները: Օ հնչիւնը վ բաղաձայնէն առաջ միշտ ո կը գրուի, իսկ միւս բոլոր պարագաներուն՝ օ. հետեւաբար այս դիրքին մէջ ո եւ օ գիրերու շփոթ չի կրնար պատահիլ: Այսպէս՝

ա.- Բառին սկիզբը ո-ն միշտ վօ կը հնչուի, բացի վ գիրէն առաջ ինկած դիրքէն՝ *ոգի, ոգնի, ոլոր, ոխ, ողբ, ողն, ողորկ, ոճ, ոճիր, ոմն, ոչ, ոսպ, ոտք, որդի, որս, որ, ոք* եւ այլն:

- **Վռհմակ**, միակ բացառութիւնը, թէեւ աւանդուած է նաեւ *ռհմակ*: Կայ նաեւ *յռհմակ* ձեւը: *Վռհմակ* բացառութիւնը վերացնելու շատերու փորձն ու առաջարկը ընդունիլ՝ *ռհմակ*:

- Հին փոխառութիւնները ո-ով կը մնան՝ *Որմիգդ, Ողիմպոս, Ողիմպիական, Ողիսես, իսկ նորերը՝ վո-ով*. *Վոլկա, վոլթեր, վոլկոկրատ, վոլթ*:

Բառին սկիզբի ո-ն (վօ) կը կորսնցնէ իր «վ» բաղադրիչը ու կը վերածուի պարզ ձայնաւորի՝ բառը բարդութեան մէջ մտնելու կամ նախաձանց մը առնելու պարագային. *ոխ՝ անոխակալ, ողորմ՝ անողորմ, ողոք՝ անողոք, ողջ՝ առողջ, ոջիլ՝ փայտոջիլ, ոսկոր՝ կրծոսկր, որակ՝ անորակ, ոտն՝ չորքոտանի, քառտուն-ոտնի, որդ՝ երիգորդ, որոշ՝ բացորոշ, որս՝ ձկնորս* եւ այլն:

Նոյն փոփոխութիւնը տեղի կ'ունենայ բայերու պարագային, երբ սկիզբը կ' (կը) բայական մասնիկը ըլլայ. չենք ըսեր՝ *կը որոշեմ*, այլ՝ *կ'որոշեմ*, նոյնպէս՝ *կ'ողորմիմ, կ'ողբամ, կ'ողջննամ, կ'որսամ* եւ այլն:

Ո-ի «վօ» արտասանութիւնը չի սահմանափակուիր բառասկիզբի դիրքով: Կան բառամէջի հետեւեալ պարագաները.

- Վօ կը հնչուի *հնառճ* եւ *նորառճ* ա յօդակապով բարդութիւններուն մէջ:

- *Գէորգ* անունը: Ոմանք կը գրեն *Գելորգ*, ինչպէս որ կը գրեն արեւելահայոց *Մաթեոսեան (Մատթեոսեան)*, *Թադեոսեան (Թադէոսեան)* մականունները: Այս հնչիւնափոխութիւնը չ'ընդգրկեր *էո* կապակցութեան ոլորտի բոլոր բառերը *Բարթողիմէոս, Չաբէոս*:

- *Քաոս* բառը իսուակցականին մէջ կը լսուի *քաւոս*:

բ.- *Բառին* սկիզբը (նաեւ ամէն տեղ) վ բաղաձայնէն առաջ *օ* կը լսենք, բայց *ո* կը գրենք՝ *ով, Ովսաննա, ովկիանոս, ովկիան, ովսասիս, Ովսիս*: Ինչպէս նկատելի է բերուած օրինակներէն՝ այս օրինաչափութիւնը տարածուած է նաեւ ծագումով օտար բառերուն վրայ:

գ.- Վերի պարագայէն դուրս՝ *օ* հնչիւնը բառին սկիզբը միշտ *օ* կը գրուի՝ *օգնել, օգուտ, օղ, օթեակ, օծիտ, օծել, օծ, օղ, օղի, օճառ, օշարակ, օշինդր, օտար, օր, օրիորդ, օրհնել* եւ այլն: Բարդութեան մէջ մտնելով կը մնայ անփոփոխ, ինչպէս՝ *ականջօղ, նորօծ, անօգուտ, գիշերօթիկ, ոսկեգօծ, ընդօրինակել, տնօրէն, վառօղ* եւ այլն:

Վերջերս մամուլին մէջ նկատեցինք *նորած* բառը՝ յօդակապով: Բառակազմական առումով սխալ կառուցուած այս բառը *ո* չ'իմաստային, *ո* չ'ալ կիրառական տարբերութիւններ ունի *նորօծ* բառին դիմաց:

37.- Ո եւ օ գիրերը բառին մէջ

Բառին մէջ *ո* եւ *օ* գիրերը հնչիւնապէս կը նոյնանան եւ ուղղագրական դժուարութիւններ կը ստեղծեն՝ *նոր – տօն, փոր – արօտ, գորտ – աղօտ, հորթ – աղօթք, հոտ – հօտ* եւ այլն: Ո-ի եւ օ-ի գրութեան պարագաները զատորոշելու որեւէ հնարք չկայ, բացի ստուգաբանական պարագայէն: Օ գիրը բառին մէջ շատ աւելի քիչ կը հանդիպի, քան *ո*-ն. հետեւաբար պէտք է գիտնալ, թէ ի՛նչ բառերու մէջ կը գրուի *օ*: Օ-ով գրուող բառերը կարելի է խմբաւորել հետեւեալ ձեւով.

ա.- Գրաբարի աւ երկբարբառին դիմաց գոյացած *օ*-ով բառեր. *ակօս, աղօթք, աղօտ, աղօրի(ք)* (ջաղացք), *աւօթ, անօթ*

(աման), (ա)նօթի, (ա)նօր, ապառօ, առաւօտ, արտօնել, արտօր (արցունք), արօ (չհերկուած արտ), արօտ, արօր (հերկելու գործիք), աւօտ (լուսածագ), բարօր, բօթ (գէշ լուր), գօս, գօտի, դրօշ, եօթը, զրօսանք (զրօսնել, բնագրօսիկ), զգօն, զօդ, զօր(ք), զօրութիւն, թափօր, թօթուել, թօթափել, թօն (տեղատարափ անձրեւ), թօշնիլ, ժօռատ (ժուռատ, ակռաները թափած), խօթ (հիւանդ), խօլ, խօսիլ, ծանօթ, ծղօտ, ծնօտ, կարօտ, կօշիկ, համառօտ (կարճառօտ), հետագօտել, հօտ, ձօն (նուէր, ուղերձ), դօղանջ, դօղիլ (պահուրտիլ), ձօձ(ք) (օրօրոց), մօտ, մօր/մօրտ (ցելխ), մօրուք, յօդ (կապ), յօդուած, յօտել, յօշել (մանրել միսը), յօժար, յօրանջել, յօրինել, յօնք, նարօտ, շօշափել, պաշտօն, պրօշ, Սօս, սօսի, սօսաիւն (տերեւներու ձայն, սօսափիւն), սօսափիլ (խշրտալ տերեւները), տօթ, տօն, տօսախ (կարծր փայտ տուող թուփ), ցօդ, ցօդուն, քօշ (արու այծ), քօղէք (ապարանջան), օրօր:

- Վառօդ բառը կու գայ օտար բարութ բառէն. ըստ Աճառեանի՝ կեղծ ստուգաբանութեամբ մը գրուած է վառօդ, իբրեւ վառ օդ: Օտար բառերուն մէջ օ-ն անտեղի կը դառնայ, բայց այդպէս նուիրականացած է:

բ.- Այ>օ (<աւ) ներքին հոլովման մէջ, որով սեռական հոլով կը կազմեն հայր՝ հօր, մայր՝ մօր, եղբայր՝ եղբօր բառերը եւ ասոնցմով կազմուած բարդութիւնները, ինչպէս՝ կնքահայր՝ կնքահօր, կնքամայր՝ կնքամօր, հօրեղբայր՝ հօրեղբօր, մօրեղբայր՝ մօրեղբօր: Բացառական հոլովը կը կազմուի սեռականի հիմքի վրայ՝ հօրմէ, մօրմէ, եղբօրմէ: Գործիական հոլովը ներկայիս դէն ձգած է սեռականի հիմքը՝ հօրմով, մօրմով, եղբօրմով, ու կը կազմուի ուղղականի հիմքի վրայ՝ հայրով, եղբայրով, մայրով:

Սեռականի հիմքի վրայ կը կազմուին նաեւ շարք մը ածանցաւոր ու բարդ բառեր՝ հօրաքոյր, հօրեղբայր, հօրեղբօրորդի, հօրենական, հօրու (խորթ հայր), մօրաքոյր, մօրեղբայր, մօրեղբօրորդի, մօրենական, մօրու (խորթ մայր):

գ.- Հետեւեալ ածանցներուն մէջ, որոնք կու գան աւ>օ ոլորտէն.

- **առօտ.** կարճառօտ, համառօտ:

- **օն(ք).** գեղօն, գործօն, զարթօնք, զգօն, թափօն, թերթօն, ծամօն, կտրօն, կրծօն, կրօն, կրօնք եւ այլն: Թատրոն եւ կեդրոն բառերուն վերջայանգը չշփոթել ածանցին հետ:

- **օք.** գրաբարի յոգնակի գործիական հոլովի քարացած ձեւերուն մէջ. արդեօք, ատենօք, առօք-փառօք, ընտանեօք, կամօք, ցաւօք, օրօք, խելօք: Բարւոք բառը բարի բառի (ոյ հոլովում) յոգնակի գործիական քարացած ձեւն է: Անկէ ունինք բարւոքում, բարւոքիլ:

- **օրէն,** մակբայակերտ՝ ազնւօրէն, վեհօրէն, հպարտօրէն, սաստկօրէն եւ այլն:

- **օրայք/որայք** երկձեւ յոգնակերտը դեղորայք, գիւղորայք, վանորայք հնաձեւ յոգնակիներուն մէջ: Նախընտրելի է որայք տարբերակը:

Ող ենթակայական կամ ներկայ դերբայի վերջաւորութիւնը, որ գրաբարի մէջ կը գրուէր *աւղ*, որ յետոյ տուաւ *օղ*, ապա աւ-ի միայն այս պարագան դարձաւ ո՛ր տեսանաւղ-տեսնօղ-տեսնող: Մեր բայերու ել, իլ, ալ խումբերուն ներկայ դերբայը կը կազմուի ող կամ սցող, եցող, ցող մասնիկով. գրել՝ գրող, հեռանալ՝ հեռացող, մօտենալ՝ մօտեցող, ճանչնալ՝ ճանչցող: Հնաստիպ գիրքերու մէջ ասոնց կը հանդիպինք օ-ով:

Աւ>օ ոլորտէն դուրս եւս քանի մը շարք բառեր օ-ով գրելու ոչ կայուն սովորութիւն մըն կայ. Այդ խումբերն են.

ա.- Միջին հայերէնեան եւ բարբառային բառեր, ինչպէս՝ դողօշ (ցամաքային գորտ), թօշ (շատ լայն՝ կօշիկ կամ հագուստ), լօթի (խման, մսխող), լօշ (նկանակ), լօրիկ (կարճահասակ ու կլորիկ անձ), լօփիկ (գիրուկ), հօփալ (հաւփալ, հոբալ, հովբալ), նօնօշիկ, ճօշան (մորթէ պատրաստուած վահան), ճօշալ (բամբասել), տկոշ (գէր, ուռած): Ոմանք այս շարքի բառերը օ-ով գրելու նախընտրութիւն ունին: Ստուգաբանները այստեղ ընելիք ունին:

բ.- Բառեր, որոնք հին հայերենի մեջ ունին նաև n-ով տարբերակ, ինչպես *նօթ-նոթ* (կարմիր ներկ մը), *նօտար-նոտար* (պետական քարտուղար), *նօտր*, *նօտրագիր* (*նոտր*), *սքօղել*, *քօղ* (*քող*, *քողարկել*), *լօռ-լոռ* (ջրային մամուռ), *գօշ-գոշ*, *սօլ-սոլ*, *լօղիկ-լողիկ* (կարճ վերարկու): Կայ միտում n-ով տարբերակը ընդհանրացնելու, *քող՝ քողագերծել*, *քողածածկել*, *քողածածուկ*, *քողարկել*, *քողընկեց*, *քողք*, *քողագարդ* եւ այլն, նոյնպէս *սքողել*, *անսքող*: Միտումը՝ o-ով գրուող վիճելի բառերէն մէկը շարքէ դուրս դնելն է: Այս մօտեցումով պէտք է n-ով գրել նաև *նոթ* (հետեւողական ըլլալու համար՝ *նոտ*), *նոտար*, *նոտր*, *լոռ* (ջրային մամուռ):

գ.- Օտար բառերը՝ *փօլիս*, *Սօնիա*, *ռօմանթիզմ*, *փարատօքս*, *Ճօնի*, *քօլէճ*, օտար ծագումով մականունները՝ *Պօշկեզէնեան*, *Խօշեան*, *Չօպանեան*, *Պօյաճեան* եւ այլն:

Հին հայերենի մեջ «n=o» պարզ ձայնաւորը միշտ տառադարձուած է n, ինչպէս՝ *կաթողիկոս*, *եպիսկոպոս*, *Օգոստոս*, *Նեղոս*, *Հոկտեմբեր*, *Եգիպտոս*, *հոետոր*, *Սողոմոն* եւ այլն: Այս կանոնակարգին կը հակադրուի նոր լեզուի մեջ օտար բառերը o-ով գրելու ընդհանուր երեւոյթը: Միշտ ալ եղած են n-ով տառադարձելու միտումներ, բայց չեն յաջողած: Վերջին տասնամեակներուն կը նկատուին լուրջ տեղաշարժեր: Բառին մեջ n-ն աւելի տիրական ըլլալ կը դառնայ՝ *լոպի*, *կոլ*, *ռօմանթիզմ*, *Սոնիա*, *Փոլ*, *փարատօքս*, *փոլիս*, *ֆութպոլ*, *Ճոնի*, *քոլէճ* եւ այլն: Լաւ քայլ է: Նոյնը անցած է օտար ծագումով մականուններուն՝ *Պոշկեզէնեան*, *Խոշեան*, *Չոպանեան*, *Պոյաճեան* եւ այլն:

38.- Օ հնչիւնին գրութիւնը բառին վերջը՝ n, o, nj

Բառերու վերջաւորութեան o հնչիւնը կը գրուի երեք ձեւով՝ n, o, nj:

ա.- Ո-ով կը գրուի միայն *այո* բառը:

բ.- Օ-ով կը գրուին

- օտարամուտ բոլոր յատուկ թե հասարակ բառերը՝ *քիլօ, մեթրօ, օթօ, մայօ, ֆոթօ, չեյլօ, Շիքակօ, Օնթարիօ, Թորոնթօ* եւ այլն.

- հայերէն յատուկ անուններու փառաբանական ձեւերը. *Մաթենիկ՝ Մաթօ, Վարսենիկ՝ Վարսօ, Կարապետ՝ Կարօ, Գրիգոր՝ Գոգօ, Մանուէլ՝ Մանօ, Մաղաթէլ՝ Մաղօ* եւ այլն.

- ձայնարկութիւնները՝ *տօ՛, ծօ՛, լօ՛, հօ՛* եւ այլն.

- կարգ մը ձայնանիշերու անունները՝ *տօ, սօ.*

- հայերէն կարգ մը գիրերու անունները՝ *թօ, հօ, ցօ:*

Այս բառերը ս, դ, ն յօդերը եւ եր/ներ յոգնակերտը ստանալու պարագային օ-ն կը պահեն նոյնութեամբ, ինչպէս՝ *Կարօն, Մարօն, Մարօն, իմ օթօս, քու օթօդ, օթօներ:*

Սակայն հոլովումի ատեն բառավերջի օ գիրը կը դառնայ ո եւ յաջորդ ձայնաւորին կը միանայ յ-ով.

Մարօ՝ Մարոյին, Մարոյէն, Մարոյով.

օթօ՝ օթոյին, օթոյէն, օթոյով:

Օ-ով վերջացող յատուկ անունները մականուն դառնալու ատեն օ-ն կ'ըլլայ ոյ. *Շարօ՝ Շարոյեան, Թամօ՝ Թամոյեան:*

Աշակերտէն մեծ ճիգ կը պահանջուի նախ գիտնալ, թէ այս բառերը ո -ով, ո՞յ-ով թէ օ-ով պէտք է գրել, գիտնալ, թէ այդ բառերը օ-ն կը պահեն յօդառութեան եւ յոգնակերտի առման պարագային, իսկ հոլովումի ու բառակազմութեան ատեն կը վերածեն ոյ-ի՝ *Մանօ, Մանօն, Մանօներ, Մանոյի. Մանոյէ, Մանոյով, Մանոյեան:* Իրօք աճպարարութիւն է:

Այս բոլոր դժուարութիւնները կը ծագին բառավերջին օ գրելու սովորութենէն, մինչ բառավերջի օ-ն բոլորովին խորթ երեւոյթ մըն է մեր լեզուին մէջ: Գրաբարի աւ-ը օ-ի վերածուած է միայն բաղաձայնէ առաջ իր դիրքին մէջ՝ *տաւն-տօն, աւր-օր, աղաւս-աղօս*, մինչ ձայնաւորէ մը առաջ եւ բառավերջին դարձած է ձայնաւոր-բաղաձայն կապակցութիւն՝ *սաւան, նաւ* եւ այլն: Հետեւաբար բառավերջը օ գիրին տեղը չէ: Սփիւռքահայ իրականութեան մէջ միշտ ալ եղած են զայն ո-ով կամ ոյ-ով փոխարինելու առաջարկներ ու փորձեր: Վերջայանգ ո-ն շատ

աւելի տրամաբանական պիտի ըլլար եւ հայերէնի բնական զարգացման յարիր, որովհետեւ հին հայերէնի մէջ բառավերջին ո-ն գոյութիւն ունի: Պատճառական բայերու բուն հրամայականի եզակին ունի ո վերջաւորութիւնը (*կեցցո՛, հեռացո՛, ջեռուցո՛, յիշեցո՛*): Աշխարհաբարին փոխանցուած է այո բառը: Հետեւաբար ճիշդ կ'ըլլայ գրել *քիլո, զերո, Սագո, Աբո, Օսլո, Շանո, Հիւկո* եւ այլն: Այդ պարագային որոշեալը, յոգնակին եւ եզակի հոլովածները կը կազմուին բնական ձեւով. *մեթրո՛, մեթրոնն՛, մեթրոններ՛*, ապա *մեթրոյի՛, մեթրոյէն՛, մեթրոյով՛*: Ա եւ ո ձայնաւորներէն ետք յ ձայնակապի յաւելումը օրինաչափական է հայերէնի համար: Այս խնդիրը վերջին արծարծողներէն մէկն է Արմենակ Եղիայեանը: «Նման մօտեցում մը նախ եւ առաջ հայեցի է,- կը գրէ ան,- եւ վերջ կու տայ անբաղաձայնայանգ օ-ի հակականոնական երեւոյթին: Միւս կողմէ՝ յօդառութեան եւ թեք հոլովներու պարագային, այլեւս սխալելու բացարձակապէս տեղիք չի մնար» (Եղիայեան, էջ 85):

գ.-Ոյ կը գրուի հայերէն բազմավանկ բառերու վերջաւորութեան. այդ բառերը կարելի է խմբաւորել հետեւեալ ձեւով.

1.-*Ածոյ* ածանցով բառեր, ինչպէս՝ *պահածոյ, դրածոյ, չափածոյ, հաւաքածոյ, ժողովածոյ, բրածոյ, հանածոյ* եւ այլն:

Այս շարքի բառերը յօդառութեան ու յոգնակերտ մասնիկ առնելու պարագային կը կորսնցնեն իրենց անձայն յ-ն՝ *պահածոս, պահածոդ, պահածոն, պահածոներ*, մինչ հոլովման ատեն կը պահեն՝ *պահածոյի, պահածոյէ, պահածոյով*:

2.- Ոյ-ն նաեւ հոլովում է, որով կը հոլովուին

- Իա-ով վերջացող տեղի յատուկ անունները. *Իտալիա՛, Իտալիոյ, Ռուսիա՛, Ռուսիոյ* եւ այլն:

- *Մեր՛ սիրոյ, Աստուած՛ Աստուծոյ, Կ. Պոլիս՛ Կ. Պոլսոյ* բառերը:

- Ի հոլովման ենթարկուող որոշ բառեր, ոճական նպատակներով պայմանաւորուած, նոյնպէս ոյ հոլովման կրնան ենթարկուիլ, ինչպէս *մամլոյ, յուսոյ, սգոյ*, նաեւ տեղանուններ, ինչպէս *Մուշ՛, Մշոյ, Սասուն՛, Սասնոյ, Կարին՛, Կարնոյ*:

- Ի, իւ, ին վերջայանգով շարք մը բառեր, ինչպէս *եկեղեցի՝ եկեղեցւոյ, պատիւ՝ պատուոյ, անկողին՝ անկողնոյ*: Ասոնք յօդեր ստանալու պարագային կ'ենթարկուին նաեւ արտասանական փոփոխութեան. *հոգի՝ հոգւոյ-հոգւոյս, եկեղեցի՝ եկեղեցւոյ-եկեղեցւոյս*, ումանք անպայման յօդով կը գործածուին, ինչպէս *ամուսին՝ ամուսնոյն, մարմին՝ մարմնոյն, հաշիւ՝ հաշուոյն, վերջին՝ վերջնոյն, առաջին՝ առաջնոյն*:

- Ի վերջոյ, յետոյ բառերը քարացած հոլովաձեւերով մակբայներ են:

39.- Ոյ հոլովական մասնիկը կցական բարդութիւններու մէջ

Ոյ հոլովման ենթարկուող կարգ մը բառեր յարադրութիւններ կը կազմեն այլ բառերու հետ, ինչպէս՝ *պատուոյ ցանկ, պատուոյ հիւր, պատուոյ գիր, ներքոյ յիշեալ, վերոյ բերեալ, վերոյ գրեալ, վերոյ յիշեալ, վերոյ շարադրեալ* եւ այլն: Ասոնք ներկայիս կցական արտասանութիւն ունին, բայց ուղղագրելու խնդիր. հնարաւոր չէ գրել *վերոյյիշեալ, ներքոյյիշեալ, պատուոյցանկ...*: Ճիշդ կ'ընեն հոլովական մասնիկի յ-ն ջնջողները՝ *պատուոցանկ, պատուոհիւր, պատուոգիր, ներքոյիշեալ, ներքոգրեալ, վերոգրեալ, վերոյիշեալ*:

Մենք բառավերջի այս անձայն յ-էն հրաժարած ենք արդէն յօդառութեան եւ յոգնակիի պարագային. *տղայ՝ տղաք, տղաս, տղադ, տղան, սատանայ՝ սատանաներ, դշխոյ՝ դշխոն, բրածոյ՝ բրածոներ*: Գրաբարի մէջ այդպէս չէր պարագան՝ *տղայք, տղայն, տղայս, տղայդ, սատանայք, դշխոյ՝ դշխոյն, բրածոյ՝ բրածոյք, հանածոյ՝ հանածոյք*:

Ուրեմն նոր լեզուին անցման աստէն մենք հեշտութեամբ հրաժարած ենք անկէ տեղ մը, ուր ընթերցանութեան դժուարութիւն կու տայ, բայց ձգեր ենք ուղիղ ձեւին մէջ, ուր ոչ մէկ արժէք ունի ու նոր դժուարութիւններ կը յարուցէ (տե՛ս էջ 18):

40.- Օ եւ ո գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ԲՕԹ (զոյժ. >բօթաբեր)

ՓՈԹ (ծալք)

ԳՕՍ (ցամաք, չորցած)	ՔՈՍ (մորթային ախտ)
ՀՕԴ (հայր՝ բառին սեռականը. > հորեղբայր, հորենական)	ՀՈԴ (> ջրհոր, հորատել)
ՀՕՏ (> հօտաղ)	ՀՈՏ (> հոտոտալ, հոտաւէտ) հոտաւէտ).
ՅՕԴ (> յօդուած, յօդակապ, յօդացալ)	ՀՈԴ (ցուցական դերանունը)
ՔՕՂ (> քօղարկել, սքօղել, անսքօղ)	ԳՈՂ (> գողնալ, գողութիւն)

41.- Ոյ կապակցութեան չորս արժէքները

Ոյ կապակցութիւնը կը հանդիպի բառի բոլոր դիրքերուն եւ ունի հնչիւնական չորս արժէք՝ «օ» պարզ ձայնաւոր, «օյ» երկհնչիւն, «ույ» երկհնչիւն եւ «ու» պարզ ձայնաւոր:

ա.- Բազմավանկ բառերուն վերջը կը կարդացուի օ-ի պէս, ինչպէս՝ *բրածոյ, դշխոյ, ի վերջոյ, հաւաքածոյ, յետոյ, պահածոյ, տպածոյ* եւ այլն:

բ.- Իբրեւ «օյ» երկհնչիւն կը հանդիպի միավանկ բառերու վերջաւորութեան՝ *Նոյ, գոյ, խոյ* եւ այլն:

գ.- Փակ դիրքին մէջ երկհնչիւն է, կ'արտասանուի «ույ», ինչպէս՝ *առոյգ, առուոյտ, արտոյտ, բոյն, բոյլ, գոյն, դոյլ, թոյլ, թոյր, թոյն, լոյս, խոյր, խարոյկ, ծոյլ, կոյր, կոյտ, հոյլ, ծոյլ, մոյկ, յոյլ, նոյն, ողջոյն, պատրոյգ, Պարոյր, Վրոյր, ցոյց, քոյր* եւ այլն:

դ.- Ժ եւ շ բաղաձայններէն առաջ ինկած դիրքին մէջ նկատուած է «ույ» երկհնչիւնի պարզացում ու վերածում ու-ի: Հոս գրութեան երկձեւութիւն գոյացած է կարգ մը բառերու պարագային. այսպէս՝ *անոյշ, աշխոյժ, բոյժ, գոյժ, զգոյշ, ժոյժ, նմոյշ, յոյժ, տոյժ* բառերու շարքէն հետեւեալները ունին ու-ով տարբերակ.

- **Ոյժ/ուժ.** ուժ տարբերակը արդարացուած է, որովհետեւ ու-ով սկսող միւս բառերուն հետ չունի հնչիւնափոխական եւ բառակազմական հակադրութիւն: Բառասկզբին ու-ն, բացի քանի մը բառերէ, չի հնչիւնափոխուիր. *ուղտ ուղտապան, ուխտ ուխտաւոր, ուշ ուշանալ, ուս ուսադիր*, այդպէս ալ *ուժ ուժանակ, ուժեղ*: Իբրեւ երկրորդ բաղադրիչ ալ անպատեհութիւն-

ներ չունի: Այսպէս՝ *ընձուղտ, անուս*, այդպէս ալ՝ *ներուժ, վատուժ, զինուժ*. ասոնք իրենց կարգին բարդութեան մէջ չեն հնչիւնափոխուիր:

- **Նմոյշ/նմուշ.** *նմուշ* տարբերակը նոյնպէս կարելի է ընդունիլ, որովհետեւ բառակազմութեան մէջ գեթ արեւմտահայերէնի մէջ հանդէս չի գար. հետեւաբար հարց չի ստեղծեր:

- **Աշխոյժ/աշխուժ.** *ուժ* բառին կապելով կը գրեն *աշխուժ*: Նոր ուղղագրութեան (հայաստանեան) մէջ ասիկա չէ փոխուած. կը գրեն *աշխույժ*, ածանցումի մէջ *աշխուժաբար, աշխուժօրէն, աշխուժանալ, աշխուժացում, աշխուժութիւն*, տրամաբանական ույ>ու հնչիւնափոխութեամբ: Համոզիչ ապացոյց չկայ, որ *աշխոյժ*-ը բարդ բառ է *ոյժ* բաղադրիչով, հետեւաբար նախընտրելի է գործածել *աշխոյժ* տարբերակը:

- **Բոյժ/բուժ.** բաղադրութիւններու մէջ հանդէս կու գայ ույ>ու օրինաչափական հնչիւնափոխութեամբ, *բոյժ-բուժակ, բուժական, բուժանիւթ, բուժարան, բուժքոյր, բուժաբոյս, բուժում, բուժել* (միակ բացառութիւնը *բժիշկ* բառն է, որմէ նոր բարդութիւններ կը կազմուին): Անկախ գործածութիւն չունի: Իբրեւ երկրորդ բաղադրիչ՝ պարտ է պահել *բոյժ* տարբերակը՝ *անասնաբոյժ, ատամնաբոյժ, հոգեբոյժ, ոսկրաբոյժ* եւ այլն:

- **Անոյշ/անուշ.** շատ կենսունակ արմատ ըլլալով կը կազմէ բազմաթիւ ածանցաւոր եւ բարդ բառեր՝ ոյ>ու օրինաչափական հնչիւնափոխութեամբ. *անոյշ-անուշեղէն, անուշնալ, անուշաբոյր, անուշահոտ*: Ու-ով գրելու պարագային սղում պիտի չըլլայ, մինչ սղումը օրինաչափական է ու-ով միւս բառերուն համար. *անուր՝ ամբօրէն, քնքուշ-քնքշօրէն*: Միւս կողմէ, պարզ բառը ու-ով գրողները *Անոյշ* անձնանունը եւ անով բաղադրեալ միւս անձնանունները կը յամառին գրել ոյ-ով՝ *Անոյշ, Վարդանոյշ, Սիրանոյշ, Հրանոյշ, Հերանոյշ, Արեւոյշ*: Նախընտրելի պիտի ըլլար պահել միայն *անոյշ* ձեւը:

-**Ոյշ/ ուշ ածանցը.** *անոյշ/անուշ* բառին հետ կապուած նոր դժուարութիւն մը կը ստեղծեն ոյշ/ուշ ածանցով կազմուած փաղաքշական անունները, որոնք անձնանուններու բառարան-

ներու մէջ եւս հաւասարապէս կը հանդիպին *Գեղոյշ, Թագուշ (Կոսանեան, էջ 510):* Ուղղախօսօրէն ու է, բայց ոչ-ն կը վերագրուի անոր *անոյշ* բառէն կրճատուած ըլլալուն: Իրօք, ասիկա գլխաւորաբար կ'երեւի *անոյշ* կամ *ուհի* համարժէք բաղադրիչներով կազմուած անուններուն մէջ. *Գեղանոյշ՝ Գեղուշ, Թագուհի՝ Թագուշ, Հայկանոյշ՝ Հայկուշ, Մայրանոյշ՝ Մայրուշ, Մաքրուհի՝ Մաքրուշ, Սիրանոյշ՝ Սիրուշ, Վարդանոյշ՝ Վարդուշ*, տարածուած է իզական շատ անուններու վրայ՝ *Մարիամ՝ Մարուշ, Մեղեղի՝ Մեղուշ, Լիլիթ՝ Լիլուշ, Մելինէ՝ Մելուշ, Մեղրի՝ Մեղուշ* եւ այլն: Իզական անուններէն անցած է արական անուններուն՝ *Յարութիւն՝ Արուշ, Աբրահամ՝ Աբրուշ, Արտաշէս՝ Արտուշ, Գեղամ՝ Գեղուշ, Կարապետ՝ Կարուշ, Յովհաննէս՝ Հաննուշ* եւ այլն: Ուշ-ը արդէն անցած է, պէտք չէ նկատուի *անոյշ* բառի կրճատումը եւ պէտք է գրուի ու-ով:

42.- Շեշտակիր փակ վանկի ոյ երկհնչիւնի հնչիւնափոխութիւնը

Ածանցումի եւ բարդումի ատեն շեշտակիր փակ դիրքի ոյ երկհնչիւնը կ'ենթարկուի հետեւեալ փոփոխութիւններուն.

ա.- Կը դառնայ ու. *բոյր՝ բուրել, բոյծ՝ բուծանել, բոյս՝ բուսական, բուսնիլ, գոյն՝ գունաւոր, գունագեղ, գոյժ՝ գուժկան, գոյգ՝ գուգերգ, թոյն՝ թունաւոր, լոյծ՝ լուծել, լուծում, լուծոյթ, լուծողական, լուծարք, լոյս՝ լուսերես, լուսաւոր, խոյս՝ խուսափիլ, խուսափուկ, խուսանաւել, խոյգ՝ խուզարկու, խուզարկել, ծոյլ՝ ծուլանալ, կոյր՝ կուրնալ, կուրութիւն, կոյտ՝ կուտակել, կուտակում, համբոյր՝ համբուրել, ողջոյն՝ ողջունել, յոյս՝ յուսալ, յուսատու, յոյլ՝ յուլաբար, խարոյկ՝ խարուկահանդէս, ստոյգ՝ ստուգել, փոյթ՝ փութալ, փութաջան* եւ այլն:

բ.- Կարգ մը բառերու մէջ տեղ մը կը դառնայ ու, այլ տեղ կը սղի. *բոյն՝ բունկալ, բայց՝ բնաւեր, պտոյտ՝ պտուտահողմ, պտուտակ, բայց՝ պտտիլ, սոյր՝ սուրալ, բայց՝ սրարշաւ, կապոյտ՝ կապուտաչեայ, կապուտակ, բայց՝ կապտորակ, կապտիլ:*

գ.- Նոյն արմատը տեղ մը կու տայ ու, այլ տեղ անփոփոխ կը մնայ. *թոյլ՝ թուլակազմ, թուլահոգի, թուլամիտ, թուլամորթ, թուլացում, թուլցնել, թուլնալ*, բայց՝ *թոյլտուութիւն, թոյլատրել, թոյլատու, թոյլբերան*:

դ.- Միայն կը սղի. *բոյթ՝ բթամատ, սատոյց՝ ստոցակոյտ, ստոցադաշտ*:

43.- «Ույ» եւ «օյ» հնչիւններու գրութիւնը օտար բառերու մէջ

Օտար բառերուն եւ ձայնարկութիւններուն մէջ «ույ» երկհնչիւնին համար կը գրենք ույ *ույդրըր, պույրուն, խույ, թույ, վնւյ*, իսկ «օյ» երկհնչիւնին համար կը գրենք օյ՝ *ճօյ, թօյ, պօյ, սօյ, հօյ*: Կը ստեղծուին նոյն հնչիւնին համար գրութեան տարբեր ձևեր. հմմտ.՝ *գոյն-պույրուն, Նոյ-ճօյ*:

Աւանդական ուղղագրութեան մէջ այս հնչիւններուն արտայայտութեան համար ունինք մէկ ձեւ՝ *ոյ*, որ բազմաձևանկ բառերու վերջը պիտի կարդացուի «օ» (*բրածոյ, հանածոյ*), բառին մէջ՝ «ույ» (*գոյն, կոյր*), իսկ միավանկ բառերու վերջաւորութեան պիտի կարդացուի «օյ» (*խոյ, գոյ*): Հետեւաբար անխուսափելի կը դառնայ օտար եւ բազմաձևանկ, եւ միավանկ բառերու եւ ձայնարկութիւններու մէջ *ույ* եւ *օյ* գրելը՝ *խույ, թույ, սույ, վնւյ, պօյ, ճօյ, հօյ*: Ասիկա երկուութիւն ստեղծելով հանդերձ՝ հարցը կը լուծէ:

Նոր ուղղագրութեան մէջ բառամէջի *ոյ* երկհնչիւնը *ույ* գրելով եւ բառավերջի անձայն յ-ն ջնջելով կարելի եղած է թէ բնիկ եւ թէ՛ օտար բառերուն միջեւ ուղղագրական նոյնացում ստեղծել. այսպէս՝ *ույ* հնչիւնը ամէն տեղ *ույ* կը գրուի՝ *ույդուր, գույն, արտուոյտ, խույ, վնւյ*. իսկ *օյ* երկհնչիւնը բառակիզբին կը գրուի *օյ օյին, օյրատերէն*, իսկ բառամէջին եւ բառավերջին *ոյ ճոյ, պոյ, Վերնոյ, Թոյսթոյ, հոյ, Նոյ, խոյ*:

44.- Ու կապակցութեան հնչիւնական արժէքները

Ու կապակցութիւնը, բառին մէջ ունեցած իր դիրքին համաձայն, ունի ձայնաւորի եւ բաղաձայնի (վ) կրկնակի ար-

ժեքներ: Անոնք կ'արտաբերուին երկու բաղադրիչներուն ամբողջական ձուլումով:

ա.- Ու ձոյլ ձայնաւորը կը հանդիպի բառին սկիզբը, մէջը, միշտ բաղաձայնէ մը առաջ, եւ բառին վերջը. ինչպէս՝ *ուղեղ, ուխտ, ուր, ուրանալ, ուրիշ, ուզել, ուշ, ամուր, բուրդ, գուր-գուրալ, մուրացիկ, նուշ, նուռ, սուղ, քնքուշ, ածու, բու, թթու, կատու, կծու, հլու* եւ այլն:

Ու ձայնաւորը բառի իր այս դիրքերուն մէջ անշփոթելի է, կ'արտասանենք *ու*՝ կը գրենք *ու*:

Մանուշակ բառը ունի նաեւ հինէն եկող *մանիշակ* տարբերակը: Կայ աղջկայ յատուկ անուն՝ *Մանուշակ*, ունի կրճատ ձեւ մըն ալ՝ *Մանուշ*:

բ.- Ու կապակցութիւնը ձայնաւորէ մը առաջ բաղաձայն է եւ կ'արտասանուի «վ».

ուա> *Նուարդ, նուագ*

ուե> *ստուեր, կեղուել*

ուէ> *նուէր, պատուէր*

ուր> կը հանդիպի երեք պարագաներու ա) *ուան* հոլովման բառերու բացառականի կազմութեան մէջ, ինչպէս՝ *առտու՝ առտուան-առտուընէ, գիշեր՝ գիշերուան-գիշերուընէ, օր՝ օրուան-օրուընէ* եւ այլն. բ) *ուրտ* կամ *ուրտտ* բայական բազմապատկական ու փոխադարձական միջածանցին մէջ, ինչպէս՝ *հոտուրտալ, քերուրտիլ, պահուրտիլ, սիրուրտիլ, քսուրտտիլ, խածուրտտիլ, ծեծուրտտիլ* եւ այլն. գ) *ուրներ* բարբառային յոգնակերտին մէջ, զոր կ'առնեն կարգ մը բառեր միայն, ինչպէս՝ *աչուրներ, ձեռուրներ, ոտուրներ, ծնկուրներ, մատուրներ*:

ուի> ներգործական բայերը ուիլ-ով կը կազմեն կրաւորական բայեր. *սիրել՝ սիրուիլ, դատել՝ դատուիլ, արհամարհել՝ արհամարհուիլ, գտնել՝ գտնուիլ, տեսնել՝ տեսնուիլ, խօսիլ՝ խօսուիլ, կարդալ՝ կարդացուիլ* եւ այլն:

ուո> *աղուոր, բանուոր, զինուոր* եւ այլն: Իւ վերջայանգով բառերու ոյ հոլովման հին ձեւերուն մէջ՝ *պատուի*՝

պատուոյ, հաշի՛ հաշուոյն, թի՛ թուոյն: Նոյն հնչիւնը ի-ով վերջացող բառերու հոլովական հին ձևերուն մէջ կը գրուի ւ-ով՝ տարի՛ տարւոյն, հոգի՛ հոգւոյն, բարի՛ բարւոք, եկեղեցի՛ եկեղեցւոյ:

ուօ> *ազնւօրէն:*

ուու> *թուում, արժանապատուութիւն, հովուութիւն* եւ այլն:

Բացառութիւն են.

- **սորվիլ**, որ յաաջացած է *սովորել* բայէն, երկրորդ ո-ի կորուստով ու ր-ի դրափոխութեամբ՝ *սովորիլ>սորվիլ*: Մակայն միւս բոլոր բաղադրութիւններուն մէջ *սովոր* արմատը պահած է իր կենսունակութիւնը՝ *սովորական, սովորութիւն, սովորոյթ, անսովոր* եւ այլն:

- **Սիրվարդ**, բարդ բառ է՝ *սէր-վարդ*:

- **ռահվիրայ** «ճամբայ բացող», բարդ բառ է, *ռահ* կը նշանակէ *ճամբայ*:

- **Սիւվա**, օտարամուտ անուն է: Օտար բառերու մէջ ձայնաւորէ մը առաջ ինկող դիրքին «վ» հնչիւնը կը գրենք վ՝ *հալվա, էլվիրա, Թրվանտա, Մալվինէ: Ու-ն* կը վերապահենք համապատասխան դիրքի ձայնաւորին՝ *Ուիլի, Ուիլիէմ, Լուիզ, Կալուիւն* եւ այլն: *Մանուէլ* եւ *Մամուէլ* անուններուն մէջ *ու* կապակցութիւնը տակաւին կը պահէ ձայնաւորի իր արժէքը: Այստեղ գրութեան եւ արտասանութեան երկուութիւն կը յառաջանայ հայերէն եւ օտարամուտ բառերու միջեւ՝ **Կալուիւն** – **կուուիլ**, **Մանուէլ** – **սուուեր**:

45.- Կրկնակ ու-ի պարագան

Բառակազմական որոշ պարագաներու կը պահանջուի գրել յաջորդաբար երկու ու, առաջինը՝ բաղաձայնի, իսկ երկրորդը՝ ձայնաւորի արժէքով: Այսպէս՝

ա.- Իւ վերջայանգով բառերու *ում* եւ *ութիւն* ածանցներով բաղադրութիւններու մէջ. *թիւ՛ թուում, հաշի՛ հաշուում, պա-*

տիւ` արժանապատուութիւն, հովիւ` հովուութիւն, տու` պատասխանատուութիւն:

բ.- Որոշ դժուարութիւն կը յարուցեն *կեդուել, հաշուել, պատուել, հովուել, ցրուել, թօթուել, գրաւել, ժողվել, սորվիլ* ներգործական բայերուն կրաւորականները:

Կեդել, հաշիւ, պատիւ, հովիւ ու *ցրիւ* արմատներէն կազմուած են *կեդուել, հաշուել, պատուել, հովուել, ցրուել*⁴ բայերը: Ասոնք բոլորն ալ ներգործական բայեր են: Ասոնց կրաւորականը կ'ըլլայ *կեդուուիլ, հաշուուիլ, պատուուիլ կրկնակ «ու>վ»*-ով: *Հովուել* բային կրաւորականը կիրարկութիւն չունի, թէեւ, ըստ լեզուական կանոնի, ձեւը կրնայ ունենալ` *հովուուիլ, հովուուած, հովուուող*: Յրուել բայը լծորդութեան փոփոխութեամբ կը դառնայ չէզոք-կրաւորական բայ` *ցրուել-ցրուիլ, ցրուեցի-ցրուեցայ, ցրուեց-ցրուեցաւ*, ճիշդ ինչպէս *վառել-վառիլ, մարել-մարիլ, թափել-թափիլ* (արեւելահայերէն` *ցրել-ցրուել*): *Յրուուիլ* ձեւն ալ կայ, ինչպէս` *թափել-թափիլ* այլասեռ զոյգի շարքին *թափուիլ* տարբերակը: Կայ նաեւ *թօթուել* բայը: Հին գրչութեան մէջ օ-ով եւ ո-ով հանդիպող *թօթով` թոթովել* բառը, ըստ Աճառեանի, իմաստներով կը նոյնանայ *թօթափել* բառին հետ ու մեզի հասած է *թօթուել* ձեւով: Ասոր ալ կրաւորականը կ'ըլլայ *թօթուուիլ*:

Այս շարքին մօտիկ են *գրաւել, ժողվել* եւ *սորվիլ* բայերը, որոնց կրաւորականները կ'ունենան «վ» բաղաձայնի կուտակում` *գրաւել-գրաւուիլ, ժողվել-ժողվուիլ, սորվիլ` սորվուիլ*, բայց տարբեր գիրերով` *ւ, վ* եւ ու:

գ.- Արեւելահայերէնի սահմ. եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակի բայերուն կրաւորականը կը գրուի միայն *ւ*-ով` *պատժուում է, հեռացում է*: Կրկնակի ու-երէն առաջինը` *ւ*-ով: Նոյնը` ու հիմքով կրաւորականներու պարագային` *պատուում է, հաշուում է, կեդելում է*: Ասիկա ընդունուած գրե-

⁴ Յիր հիմքէն ունինք *ցրել` փարատել, հեռացնել` «կասկածներս ցրեցի»*, չէզոքը կ'ըլլայ *ցրիլ` «կասկածներս ցրեցան»*:

լաձեւ է: Նշենք, որ պարսկահայ իրականութեան մէջ, ուր հիմնական գրականը արեւելահայերէնն է, բայց ուղղագրութիւնը՝ ասանդականը, ւ-ով կը փոխարինուի առհասարակ բաղաձայն ու-ն բառի բոլոր դիրքերուն մէջ. *նուագ նուագ, ստուեր ստուեր* եւ այլն:

Ասիկա ալ միտում առաջացուցած է Սփիւոքի մէջ ձերբագատուելու կրկնակ բաղաձայն ու-երէն, առաջինը ւ-ով գրելով. այսպէս՝

ա.- Ածանցման միջոցով կազմուած գոյացումներու մէջ՝ *թուում-թում, արժանապատուութիւն՝ արժանապատուութիւն, հովուութիւն՝ հովութիւն, պատասխանատուութիւն՝ պատասխանատուութիւն, հաշուում՝ հաշում*:

բ.- Կրաւորական բայաձեւի մէջ կազմուած գոյացումներու մէջ՝ *կեղուտիլ-կեղուիլ, պատուուիլ-պատուիլ, թօթուուիլ-թօթուիլ, հաշուուիլ-հաշուիլ* եւ այլն:

Ումանք ւ-ով կը գրեն նաեւ իւ վերջայանգով բառերու ոյ հոլովման սեռական ձեւերուն մէջ գոյացած ու բաղաձայնը. *պատիւ՝ պատուոյ-պատույ, թիւ՝ թուոյն-թույն, հաշիւ՝ հաշուոյն-հաշուոյն*:

46.- Շեշտակիր ու ձայնաւորին հնչիւնափոխութիւնը

Բառասկիզբին շեշտակիր ու ձայնաւորը տոկուն է ու շեշտափոխական հնչիւնափոխութեան չ'ենթարկուիր. *ուս՝ ուսապարկ, ուսադիր, ուսնոց, ուշ՝ ուշանալ, ուշադիր, ուխտ՝ ուխտաւոր, ուխտագնաց, ուխտադրուծ, ուղտ՝ ուտապան, ութը՝ ութսուն, ութնոց, ութակի, ուլ՝ ուլիկ, ուլականջ, ունկ՝ ուկնդրել, ունկնդիր* եւ այլն:

Ու>ը հնչիւնափոխութեան քանի մը մասնակի պարագաներ ունինք բառասկիզբին. *ումպ՝ ըմպել, ըմպանակ, ըմպելի, ունդ՝ ընդեղէն, ունչ՝ ընչացք*:

Միավանկ բառերու փակ դիրքին մէջ կը վերածուի անգիր ը-ի. *մուխ՝ միալ, ծուխ՝ ծխարան, լուռ՝ լռել, լրակեաց, լուր՝ լրաբեր, լրատու* եւ այլն, իսկ բազմավանկ բառերու մէջ բոլո-

րովին կը սղի. *մածուն՝ մածնապուր, գլուխ՝ գլխատել, ամուր՝ ամրանալ, ամրութիւն, մաքուր՝ մաքրութիւն* եւ այլն: Կարգ մը բառեր ունին նաեւ չինչինափոխուած ձեւեր, ինչպէս՝ *սուղ՝ սղիլ, քայց՝ սուղնալ, սուղնոց, սուղութիւն, ապուշ՝ ապշիլ, քայց՝ ապուշնալ, ապուշութիւն*, որոնք երբեմն ձեռք կը բերեն իմաստային տարբերութիւն:

Ում ածանցաւոր բառերու շարքին մէջ, բացի մէկ-երկու պարագայէ, հնչինափոխութիւն չի կատարուիր. *դիմում՝ դիմումնագիր, խնդում՝ խնդումերես, ծագում՝ ծագումնաբան, ուսում՝ ուսումնական, քայց թաղում՝ թաղմանական, երդում՝ երդմանադրուժ, երդմնագանց:*

Ասուն ածանցաւոր տասնաւորներէն սղման կ'ենթարկուին երեսուն, քառասուն եւ յիսուն թուականները՝ *երեսնեակ, երեսնամեայ, երեսնամեակ, երեսնապատիկ, երեսնօրեայ, քառասնեակ, քառասնամեայ, քառասնամեակ, քառասնապատիկ, քառասնօրեայ, յիսնեակ, յիսնամեայ, յիսնամեակ, յիսնօրեայ, յիսնապետ*, բայց *երորդ* եւ *նոց* ածանցաւորներու պարագային չեն հնչինափոխուիր՝ *երեսուներորդ, երեսուննոց, քառասուներորդ, քառսունոտի, քառասուննոց, յիսուներորդ, յիսուննոց, յիսունգլխանի: Վաթսուն, եօթանասուն, ութսուն* եւ *ինիսուն* տասնաւորները այս բաղադրութիւնները կը կազմեն անհնչինափոխ կերպով:

Բառավերջին շեշտափոխութեան հետեւանքով կը վերածուի «վ» բաղաձայնի, բայց կը պահէ գրութեան արանդական իր ձեւը. *առու՝ առուակ, բու՝ բուիճակ, կատու՝ կատուազգի, մեղու՝ մեղուաջան թթու՝ թթուաշ, կծու՝ կծուիլ, աղու՝ աղուաձայն, ձու՝ ձուածեղ:*

Քանի մը պարագաներու անկում կ'ունենայ. *հեռու՝ հեռաստան, հեռատեսիլ, հեռադիտակ, արու՝ արական* եւ այլն:

Յոգնակիի կազմութեան եւ հոլովման թեք ձեւերուն մէջ, ի հակադրութիւն արեւելահայերէնի, կը պահուի ձայնաւորի արտասանութիւնը. *բու՝ բուեր, լու՝ լուեր, կատու՝ կատուներ, կատու՝ կատուին, կատուէն, կատուով. ածու՝ ածուին, ածուէն,*

ածուով: Այս օրինակներն ալ ցոյց կու տան, որ *ու* ձայնաւորը ուրիշ ձայնաւորի մը կը միանայ ուղղակի կերպով, առանց կիսաձայն յ-ի գրութեան:

Ի հոլովման ձեւերուն մէջ *ու*-ն չի կորսուիր. *մածուն` մածունի, մածունէ, մածունով. ջուր` ջուրի, ջուրէ, ջուրով. դուռ` դուրի, դուռէն, դուրով. շուն` շունի, շունէ, շունով, դուստր` դուստրի* եւ այլն: Հոս պէտք է նշել, որ անկանոն հոլովումներու ենթարկուող կարգ մը բառեր *ու*-ի սղում կ'ունենան. *դուռ` դրան, դռնէն, դռնով, մատուռ` մատրան, աշուն` աշնան, գարուն` գարնան, մուկ` մկան, սկեսուր` կեսրոջ, դուստր` դստեր: Ում (ումն)* ածանցով գոյականները *ան* հոլովումին ենթարկուելու պարագային ու-ն կը կորսնցնեն. *շարժում` շարժման, հոլովում` հոլովման, համբարձում` համբարձման* եւ այլն:

47.- Ե, է, ի, յ+ա կապակցութիւնները

Արեւմտահայերէնի մէջ **եա, (ա/ն)յա, (ա/ն)յեա, եայ, իա, (ա)յիա, իայ, էա** գերազանցապէս համահունչ կապակցութիւնները ծագումով ու դիրքով իրարմէ կը տարբերին: *Եա, (ա/ն)յա, (ա/ն)յեա, եայ* կը պատահին հայերէն, իսկ *իա, (ա)յիա, իայ, էա* ծագումով օտար բառերու մէջ: Ուղղախօսական տեսակետէն նոյնն են ներկայիս: *Եար, կայան, հայեացք, հրեայ, Բտայիա, Գայիանէ, կրիայ, իտեալ, Անդրէաս* բառերուն մէջ խնդրոյ առարկայ կապակցութիւններէն ոչ մէկը միւսէն տարբեր կը հնչուի թէ՛ առօրեայ խօսակցական եւ թէ՛ բեմական խօսքի մէջ:

Բաղադրեալ բառերու մէջ ի եւ է գիրերը կը պահեն իրենց անկախ արտասանութիւնը՝ *միակ, միանալ, թիակ, էակ, աշտեակիր* եւ այլն: Որոշ պարագաներու ունին երկձեւ արտասանութիւն՝ *քրիստոնէ-ական* եւ *քրիստոն-էական, հիւլէ-ական* եւ *հիւլ-էական* եւ այլն:

48.- Եա, (ա/ն)յեա, (ա/ն)յա, եայ կապակցութիւնները

Եա-ն կը գրուի հայերէն բառերու մէջ, բաղաձայնէ մը ետք, ինչպէս՝ *այծեամ, ատեան, Արուսեակ, Ժանեակ, լեարդ, կեանք,*

մատեան, մանեակ, ոսպնեակ, պատեան, սարեակ, սենեակ, սպասեակ, վառեակ, օթեակ եւ այլն: Արմատական բառերէն անկախ՝ եա կայ ածանցներու մէջ.

- **եայ.** փայտեայ, արծաթեայ, պաշտօնեայ, Հրաչեայ...

- **եակ.** քառեակ, վեցեակ, տասնեակ, սպասեակ...

- **եան.** ամերիկեան, աջակողմեան, միջնադարեան եւ այլն.

մականունները՝ Յակոբեան, Կանանեան, Թումայեան...

- **Լռելեան** բառը ածական է, մակբայը կ'ըլլայ լռելեայն:

- **եանց.** Մալխասեանց, Ղեւոնդեանց, Արամեանց...

- **եալ.** բանտարկեալ, յաւելեալ, կախեալ, երդուեալ, յիշեալ, ամբաստանեալ...: Եա կրնայ գոյանալ բարդումի եւ ածանցումի առէն. պատանի-ակ՝ պատանեակ, հոգի-ակ՝ հոգեակ: Ան նաեւ իւրեքին թերումի հոլովում է. քաջութիւն՝ քաջութեան, արիւն՝ արեան եւ այլն:

Եա երկինջիւնը կը հանդիպի նաեւ համարեա՝ եւ տեր ողորմեա բառերու վերջաւորութեան:

Եա կը գրենք բառին սկիզբը, օտարամուտ բառերու եւ ձայնարկութիւններու մէջ, ինչպէս՝ եաման, եար, Եարալեան, Եանիկեան, եատէս, եախնի, եա՛, եա՛ն:

Յեա կը գրուի ածանցաւոր բառերու մէջ, ուր յ կիսաձայնը արմատին մէջ կայ, բայց ածանցեալ ձեւին մէջ անձայն կը դառնայ՝ դայեակ, Հմայեակ, հայիլ՝ հայեացք, դանայեան տակառ, երեկոյ՝ երեկոյեան, Նոյ՝ Նոյեան: Յեա-ին մէջ յ-ն յաւելուած է այն մականուններուն մէջ, որոնք ստեղծուած են ա-ով եւ օ-ով վերջացող օտար բառերէ ու բարբառային անուններէ, ինչպէս՝ գարա (թրք. սեւ)՝ Գարայեան, Թումա (Թովմաս)՝ Թումայեան, Եղիա՝ Եղիայեան, Արա՝ Արայեան, Գարօ (Գաբրիէլ)՝ Գարոյեան, Համօ՝ Համոյեան եւ այլն:

Ախոյեան բառը ածանցեալ չէ. գրուած է նաեւ ախոյան ձեւով, որ մերժուած է:

Բառամէջի յա կապակցութիւնը ունի նոյն արտասանութիւնը, բայց կու գայ ա եւ ո ձայնաւորներէն ետք, սովորաբար

ածանցեալ բառերու մէջ, ինչպէս՝ *կայան, տղայական, Հայաստան, խոյակ, խոյանալ, գոյական* եւ այլն:

Եայ կը գրուի հայերէն բառերուն վերջաւորութեան, ուր յ-ն անձայն է, ինչպէս՝ *հրեայ, քրիստոնէայ, պաշտօնէայ*: Եայ ածանցը գոյականներէն յարաբերական ածականներ կը կազմէ, ինչպէս՝ *գետեզերեայ, ծովափնէայ, երկօրեայ, եռօրեայ, երկամեայ, պղնձեայ, բիրեղեայ, թիթեղեայ* եւ այլն: Այս ածանցով ունինք քանի մը գոյական՝ *հրեայ, քաղղեայ, պաշտօնէայ, քրիստոնէայ*, յատուկ անուն մըն ալ՝ *Հրաչեայ*:

Յոբելէար/յոբելիար. օտար ածանցումով բառ է: Տարածումած է *յոբելէար* ձեւը *յոբելէան*-ի նմանութեամբ:

Տիար բառի սեռական եւ յոգնակի ձեւերն են *տեառն, տեարք*: *Տիարն, տիարք* ձեւերը սխալագրութիւններ են:

49.- Եա եւ եայ երկհնչիւններու հնչիւնափոխութիւնները

Եա երկհնչիւնը թոյլ է եւ բառի աճման պարագային վերջին վանկին մէջ կ'ենթարկուի հնչիւնափոխութեան եւ կը վերածուի ե-ի. *ատեան՝ ատենապետ, ատենագրութիւն, ժանեակ՝ ժանեկագործ, կեանք՝ կենարար, լեարդ՝ լերդանալ, հայեացք՝ հայեցակէտ, հայեցակարգ, հայեցողութիւն, հայեցուածք, մանեակ՝ մանեկագարդ, մատեան՝ մատենագիր, պատեան՝ պատենաւոր, պատանեակ՝ պատանեկիկ, պատանեկութիւն, վայրկեան՝ վայրկենական, սենեակ՝ սենեկապետ* եւ այլն: Նոյնը կը պատահի ութիւն ածանցով գոյականներու սեռական-տրականի հիմքէն բացառական հոլովի կազմութեան ատեն. *քաջութիւն՝ քաջութեան-քաջութենէ, լաւութիւն՝ լաւութեան-լաւութենէ*, նաեւ նոր բառեր կազմելու ատեն. *բնութիւն՝ բնութեան-բնութենապաշտ, միութիւն՝ միութեան-միութենական* եւ այլն:

Անփոփոխ մնալու պարագաներ ալ կան. *ախոյեան՝ ախոյեանալ, ախոյեանութիւն, ախոյեանական, արքանեակ՝ արքանեականաւ, արքանեակատար*: Ոմանք բոնագրօսիկ ճիգով մը կը փորձեն հնչիւնափոխուած ձեւերը տարածել: Այս բառերը հնչիւնափոխութեան չեն ենթարկուիր:

Ղայեակություն/դայեկություն. *Ղայեակ* բառն. նախընտրելի է հնչյունափոխուած ձևը, որովհետև հին ձևն է՝ *ղայեկություն, Ղայեկորդի, Ղայեկատոհմ, Ղայեկաբար:*

Յորբլեանական/յորբլենական/յորբլինական. *յորբլեան* բառն. Հայաստան կը գործածեն անփոփոխ ձևը՝ *յորբլեանական:* Աճառեան *յորբլեար* գլխաբառին մէջ կը գործածէ եւ *յորբլեանական, եւ յորբլինաւոր:* Մեր բառարանները կը փորձեն տարածել *յորբլենական* ձևը (Կոանեան): Վերջինը ընդունելով՝ բառը օրինաչափութեան մէջ կը մտնէ:

Եայ՛է շեշտափոխական հնչյունափոխություն կայ հետեւեալ բառերուն մէջ. *հրեայ՝ հրեական, հրեություն, հրեից, գործունեայ՝ գործունէություն, պաշտօնեայ՝ պաշտօնէություն, քրիստոնեայ՝ քրիստոնէական, քրիստոնէություն, քրիստոնէից, այժմեայ՝ այժմէական, այժմէություն:* Այս է՛ն կայ այլ ածանցաւոր բառերու մէջ եւս, ինչպէս *քաղղեական, արամեական, հռովմեական* եւ այլն, որոնք ծագած են *քաղղեայ, արամեայ, հռովմեայ* նախկին ձևերէն: Կան նաեւ քերովբէ՝ *քերովբէական, սերովբէ՝ սերովբէական* ածանցաւոր բառերը:

50.- Իա, (ա)յիա, իայ, էա կապակցությունները

Ասոնք կը գրուին փոխառեալ բառերու մէջ:

Իա կը գրուի օտար բառերու մէջը եւ վերջը, ինչպէս՝ *Անթիլիաս, Մարիամ, Բենիամին, Գողիաթ, իմփերիալիզմ, միլիտո, Անանիա, Եդիա, Մատաթիա, Սոնիա, լուբիա, քիմիա, ֆիզիա, Իտալիա, Ռումանիա, Գերմանիա* եւ այլն: Իա՛ն կը հնչյունափոխուի միայն մէկ պարագայի՝ օտար տեղի անուններու սեռական-տրական ձևին մէջ. *Իտալիա՝ Իտալիոյ. Թուրքիա՝ Թուրքիոյ. Ռուսիա՝ Ռուսիոյ:*

Յիա ունինք միայն *Գայիանէ* անունին մէջ:

Իայ ունինք միայն *կրիայ* բառին վերջաւորութեան: *Կրեայ* ձևը սխալագրություն է:

Հէքիաթ բառը փոխառություն է: *Հէքիաթ, հէքեաթ, հէքեաթ* տարբերակները մերժուած են:

Հա ունինք ֆրանսերենէ տառադարձեալ *իտէա, իտէալ* բառերուն, *Քորէա* երկրանունին եւ յունարէնէ եկած *Անդրէաս* անձնանունին մէջ:

51.- Ե, է, ի, յ+ո (օ) կապակցութիւնները

Եօ, եո, իո, իոյ, իօ, յո, յօ, էո ուղղախօսական տեսակէտէն նոյնն են արդի լեզուին մէջ, բայց ծագումով ու դիրքով իրարմէ կը տարբերին. *եօ* եւ *յո* կը հանդիպին հայերէն, իսկ *էո, իո, իոյ, (ա)յո, (ա/ն)յօ* եւ *էո*՝ օտար բառերու մէջ:

Արդի հայերէնի մէջ *եօ* մնացած է միայն *եօթը* ու գրաբարեան յոգնակի գործիական քարացած քանի մը բառերու մէջ՝ *արդեօք* (արդեաւ-ք), *ընտանեօք, կարծեօք*:

(*Այո* ունի նոյն արտասանութիւնը, բայց կու գայ ա ձայնաւորէն ետք: Կայ միայն *այո* բառը:

Եո ունինք օտար բառերու սկիզբը, ինչպէս *Եոհան, Եոլանտ, Եոհաննէս, Եորկի* եւ այլն:

Իո ունինք օտար բառերու մէջը, ինչպէս՝ *Անտիոք, ամպիոն, շենկիոն, միլիոն, միսիոնար, Անտիոք, Սրապիոն, Պիոն, Միոն, Լիոն, Դիոս, Յուլիոս, Բիզանդիոն* եւ այլն, իսկ *իօ*՝ բառերու վերջը, ինչպէս՝ *Անթոնիօ, Օնթարիօ, սենարիօ*:

Նախընտրելի է, բառավերջի սա իօ-ն գրել *իո*՝ Անթոնիո, Օնթարիո (տե՛ս էջ 70-71):

Հայերէն *օրհորդ* բառը ունի այլ ծագում. *օրի* եւ *որդ*՝ «իշխանի որդի»:

Իոյ կ'ունենանք *իա* վերջաւորութեամբ տեղանուններու սեռական-տրական հոլովին մէջ. *Իտալիա՛, Իտալիոյ՛, Սուրիա՛, Սուրիոյ՛, Գերմանիա՛, Գերմանիոյ՛* եւ այլն:

էո ունինք ֆրանսերենէ տառադարձեալ միայն *լեզէոն* եւ *պանթէոն* բառերուն մէջ: Նաեւ յունարէնէ անցած յատուկ անուններուն մէջ, ինչպէս՝ *Թէոդոս, Թէոդորոս, Մասթէոս, Թադէոս, Բարթողիմէոս, Չաքէոս, Տիմիթէոս, Կղէոպատրա*, նաեւ՝ *Գէորգ*, որ կ'արտասանուի «Գէւորգ» ձեւով: Արեւելահայերը նոյն ձեւով կ'արտասանեն նաեւ *Թադէոս* (Թադէուս) եւ *Մաս-*

թէնու (Մաթեոս) անունները: Վերջին անուան պարագային ընդունուած պէտք է համարել *Մաթէնու* ձեւը: *Միսնն* յատուկ անուան գրութեան նախկին ձեւն է՝ *Միսէնն*, *իսկ Չաքէնու անուան՝ Չակքէնու*: Թէեւ խօսքի մէջ յաճախ ընդհանրացած է «լեզենն», «պանթենն», «Մաթէնու», «Չաքէնու» արտասանութիւնը, սակայն ոմանց պարագային տակաւին տիրական կը մնայ է-ի արտասանութիւնը՝ *Թէնոորոս*, *լեզէնն*:

Յատուկ անուններու հին ձեւերը գլխաւորաբար կը վերապահուին պատմական դէմքերուն ու մատենագրական քաղուածքներուն՝ *Միսէնն Միւնակէցի*, Ս. Գրային *Չակքէնու* եւ այլն:

52.-Էօ ձայնաւորը

Ունինք օտար բառերու մէջ, ինչպէս՝ *Էօժենի*, *Կէօքճեան*, *Կէօվշէնեան*, *Չէօրէքճեան* եւ այլն: Սա նոյնը չէ, ինչ որ է *էո* կապակցութիւնը *լեզէնն*, *պանթէնն*, *Թաղէնու* բառերուն մէջ: Էոն կրնայ արտասանուիլ իբրեւ երկհնչիւն՝ *լեզ-էոնն* կամ ստուգաբանօրէն կրնայ տրոհուիլ երկու ձայնաւորներու՝ *լեզէ-ոնն*: Էօ կապակցութեան մէջ բաղադրիչ ձայնաւորները չունին ինքնուրոյնութիւն, այլ երկուքը ձուլուելով կու տան մէկ ձոյլ ու անտրոհելի ձայնաւոր հնչիւն. հմմտ.՝ Սէօլէօզ – Մաթէնու:

Բ.- ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

53.- Արեւմտահայերէնի բաղաձայնական համակարգը

Հայերէնի պայթական ու պայթաշփական բաղաձայնները գրաբարի մէջ ունին *ձայնեղ, խուլ եւ շնչեղ խուլ* եռաստիճան համակարգ.

ձայնեղ	խուլ	շնչեղ
Բ	Պ	Փ
Գ	Կ	Ք
Դ	Տ	Թ
Զ	Ծ	Յ
Ը	Ճ	Չ

Արեւելահայ բարբառները առաւելաբար պահած են այս համակարգը նոյնութեամբ ու փոխանցած արեւելահայ գրական լեզուին:

Արեւմտահայ բարբառները խօսակցական արեւմտահայերէնին փոխանցած են երկու գլխաւոր փոփոխութիւններ.

ա) Գրաբարի ձայնեղները (Ա. սիւնակ) իւլացած են, խուլերը (Բ. սիւնակ) ձայնեղացած: Հին հայերէնի համեմատ՝ *բաղ* (bad) բառը արտասանուած է *պատ* (pat), իսկ *պատ* (pat) բառը՝ *բաղ* (bad): Այս պատմական հնչիւնափոխութիւնը տիրական է գլխաւորաբար Կիլիկիոյ՝ Զէյթուն, Հաճըն, Անտիոքի՝ Պէլլան, Մուէտիա, Քեսապ, Արամօ-Ղնեմիէ եւ արեւմտեան հայաշխարհի հարաւային շրջաններու բարբառներուն մէջ:

բ) Գրաբարի խուլերը (Բ. սիւնակ) ձայնեղացած են. հին հայերէնի համեմատ՝ *պատ* (pat) բառը արտասանուած է *բաղ* (bad), իսկ ձայնեղները՝ շնչեղացած, այսինքն՝ հին հայերէնի համեմատ, *բաղ* բառը շնչեղացած է (Գ. սիւնակ), ընդհուպ շփոթուելով *փաթ* բնաձայնին հետ:

ա.- կիլիկեան համակարգ			բ.- իւլազուրկ համակարգ	
խուլ	ձայնեղ	շնչեղ	ձայնեղ	շնչեղ
Բ	Պ	Փ	պ	Բ = Փ
Գ	Կ	Ք	Կ	Գ = Ք

Դ	Տ	Թ	Տ	Դ = Թ
Չ	Ծ	Ց	Ծ	Չ = Ց
Ջ	Ճ	Չ	Ճ	Ջ = Չ

Ահաւասիկ այս վերջինը աւելի տիրական է արեւմտահայ գրական լեզուին մէջ, որովհետեւ նախաւեղեռնեան շրջանին գրական լեզուի կազմաւորման ու տարածման մէջ հիմնարար դեր ունեցան այն շրջանակները, ուր տիրական էր բաղաձայնական երկաստիճան խլազուրկ համակարգը:

Այս փոփոխութիւնը հայերէն բառերու գրութեան մէջ տարբերութիւն չի ստեղծեր, այսինքն՝ գրաբարէն աւանդաբար մեզի անցած բառերու գրաւոր պատկերին մէջ ոչինչ կը փոխուի. *բաղ - պատ - փաթ, դուր - տուր - թուր* բառերէն իւրաքանչիւրը տարբեր բաներ չի թելադրեր արեւմտահայուն եւ արեւելահայուն համար. տարբերութիւնը երեւան կու գայ արտասանութեան ու արտաբերութեան մէջ: Այսպէս՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զիւրատ, իմանալ զբանս հանճարոյ» նախադասութիւնը կարդալու ատեն ճ, տ, ք բաղաձայններու արտաբերութեան մէջ յստակ տարբերութիւն մը պիտի նկատուի արեւելահայ եւ արեւմտահայ արտասանողներու միջեւ: Այս է պատճառը, որ արեւմտահայը հեշտութեամբ կը կարդայ ու կը հասկնայ արեւմտահայ գրութիւն մը, կամ արեւելահայը՝ արեւմտահայ գրութիւն մը, բայց նոյն հատուածը արտասանելու ատեն ունկնդիրը պահ մը շփոթի մէջ պիտի իյնայ, թէ յստակօրէն ի՛նչ բառ է արտասանուածը, օրինակ՝ *բա՞ղ* ըսել կ'ուզէ, թէ *պատ*, *գերի՞* ըսել կ'ուզէ, թէ *քերի*:

Գլխաւորաբար նախկին ձայնեղներու շնչեղացման հետեւանքով արեւմտահայ դպրոցին մէջ գիրերը իրենց հնչիւններով ճանչցնելը բաւարար չէ: Դպրոցականը նախ գիրերը կը ճանչնայ անոնց անուններով ու բանալի բառերով, ինչպէս՝ *չա, ջէ, ձա, ցօ, չամիչի չը, ջուրի ջը, ձուկի ձը, ցորենի ցը*:

54.- Օտար բառերու տառադարձութեան տարբերութիւնը

Պարզ է, որ արեւելահայն ու արեւմտահայը, օրինակ, անգլերէն կը խօսին նոյն ձեւով, այսինքն՝ անգլերէն բառերու արտաբերութիւնը կամ լսողական ընկալումը երկուքի պարագային ալ նոյնն է, բայց հարց կը ծագի, երբ անոնք օտար բառերը հայերէն գիրերով արձանագրելու կը սկսին: Այսպէս՝ անգլերէ *bank* բառը, որ երկուքն ալ նոյն ձեւով կ'արտասանեն, արեւելահայը պիտի գրէ *բանկ*, իսկ արեւմտահայը՝ *պանք*, որովհետեւ անգլերէնի *b* գիրին հնչիւնը արեւելահայուն համար *բ*-ն է, իսկ արեւմտահայուն համար՝ *պ*-ն, անգլերէն *k* գիրին հնչիւնը արեւելահայուն համար կ'է, իսկ արեւմտահայուն համար՝ *ք*: Արեւելահայուն կողմէ տառադարձուած օտար բառը անհասկնալի կը թուի արեւմտահայուն համար, եւ հակառակը. օրինակ՝ արեւելահայուն տառադարձած *կակտուս* բառը, իսկ արեւմտահայուն կողմէ տառադարձուած *քաքթուս* բառը անհամատեղելի պիտի ըլլան հակառակ կողմերուն համար օտար *cactus* բառին պարագային:

Ուրեմն՝ այս փոփոխութիւնը հայերէն բառերու գրութեան մէջ տարբերութիւն չի ստեղծեր, բայց օտար բառերու արձանագրութեան մէջ կը ստեղծէ: Օրինակ, *Jimmy* անունը նոյն ձեւով կը լսենք ու կ'արտասանենք, բայց երբ կարգը գայ գրելուն՝ արեւելահայը առաջին հնչիւնը կ'արձանագրէ *ջ*-ով, իսկ արեւմտահայը՝ *ճ*-ով, կ'ըլլայ երկուութիւն՝ *Ջիմի* եւ *Ճիմի*: Օտար բառերը հարազատօրէն արձանագրելու կերպը հնչիւնայինն է, հետեւաբար հնարաւոր չէ տառադարձութիւն կատարել գիրերու պատմական համարժէքով: Այսինքն՝ կարելի չէ սպասել, որ արեւմտահայը *Ջիմի* գրէ ու կարդայ *Jimmy*:

Ուրեմն՝ արեւմտահայերէնի մէջ նոյնացած են *բ* եւ *փ*, *գ* եւ *ք*, *դ* եւ *թ*, *ձ* եւ *ց*, *ջ* եւ *չ* բաղաձայնները: Միւս կողմէ նոյնացած են եւ օտար բառերու մէջ զիրար կը փոխարինեն արեւելահայերէնի *բ* եւ արեւմտահայերէնի *պ* գիրերը եւ համապատասխանաբար՝ *գ* եւ *կ*, *դ* եւ *տ*, *ձ* եւ *ծ*, *ջ* եւ *ճ*: Հետեւաբար՝

- Հոն ուր բ տառադարձուած է արեւելահայերէնի մէջ՝ կը գրենք պ. *ամբիոն՝ ամպիոն, բանկ՝ պանք, բասկետբոլ՝ պաս-քէթպոլ, բետոն՝ պէթոն, բենզին՝ պենզին*, իսկ ուր որ պ տառադարձուած է՝ կը գրենք փ (եւ ոչ թէ բ). *պասսիվ՝ փասսիւ, պանսիոն՝ փանսիոն, պաթետիկ՝ փաթէթիք, պալտո՝ փալթօ, պարտիա՝ փարթի, պարտիզան՝ փարթիզան* եւ այլն: Եւ վերջապէս, ուր որ փ տառադարձուած է՝ կը պահենք նոյնութեամբ. *փաթթոն, փախլաւա, փեհլիւան*:

- Հոն ուր գ տառադարձուած է արեւելահայերէնի մէջ՝ կը գրենք կ. *գագ՝ կագ, գագոլին՝ կագոլին, գաբարդին՝ կապարտին* (կտոր մը), *գեստապո՝ կեսթափօ*, իսկ ուր որ կ տառադարձուած է՝ կը գրենք ք (եւ ոչ թէ գ). *կազինօ՝ քազինօ, կալորիա՝ քալորի, կակտուս՝ քաքթուս, Կանադա՝ Քանատա, Կալիֆորնիա՝ Քալիֆորնիա* եւ այլն: Եւ վերջապէս, ուր որ ք տառադարձուած է՝ կը պահենք նոյնութեամբ. *քիմիա, քլոր, քլորոֆիլ, քրոնիկ, քրոնիկոն*:

- Հոն ուր դ տառադարձուած է արեւելահայերէնի մէջ՝ կը գրենք տ. *դամա՝ տամա* (խաղ մը), *դելտա՝ տելթա, դելֆին՝ տելֆին, դեկոր՝ տեքոր, դարչին՝ տարչին*, իսկ ուր որ տ տառադարձուած է՝ կը գրենք թ (եւ ոչ թէ դ). *տախտ՝ թախթ, տակտիկա՝ թաքթիք, տաքսի՝ թաքսի, տեկստիլ՝ թեքսթիլ, տրակտոր՝ թրաքթոր, տերիտորիա՝ թերիթորիա* եւ այլն: Եւ վերջապէս, ուր որ թ է՝ կը պահենք նոյնութեամբ. *թենիս, թալիսման, թէյ, թայֆա*:

- Պայթա-շփականներուն մէջ՝ հոն ուր ջ տառադարձուած է արեւելահայերէնի մէջ՝ կը գրենք ճ. *ջահէլ՝ ճահէլ, ջան՝ ճան, ջաննաթ՝ ճաննաթ, ջատու՝ ճատու, Ջինա՝ Ճինա, Ջիմի՝ Ճիմի*, իսկ ուր որ չ է՝ կը պահենք նոյնութեամբ. *չայ, չոլ, չադր՝ չատրըր, չալէլ, չերքէզ, չոբան՝ չոպան, չինար*:

Հարցը շատ աւելի կը բարդանայ, եթէ ծագումով նոյն բառը փոխատու տարբեր լեզուներէ կը մտնէ հայերէնի երկու ճիւղերուն մէջ: Ահաւասիկ արեւելահայերէն-արեւմտահայերէն գոյ-

գեր. *պարտիա-փարթի, կալորիա-քալորի, արցիա-արսիոն, պե-լիցիլին-փենետելին, ցիմենտ-շիմենթո-սիմենթ:*

Մեր գրական երկու լեզուներն ալ լուրջ սահմանափակումներ պետք է դնեն օտար բառերու հոսքին առջեւ եւ լայնօրէն օգտուին հայերէնի բառակազմական հնարաւորութիւններէն, իսկ ծայրայեղ պարագաներու՝ պետք է համաձայնեցնեն փոխառութեան ձեւը: Երկու պարագայի հայ խօսքը անմատչելի է միւս հատուածին համար. մէկ՝ ծայրահեղ բարբառայնութեան եւ երկու՝ ծայրահեղ օտարաբանութեան պարագաներուն: Բաֆֆիի, Ադայեանի, Տէրեանի խօսքը երբեք անմատչելի չէ եղած արեւմտահայ ընթերցողին, ոչ ալ Պարոնեանի, Չոհրապի, Մեծարենցի ու Վարուժանի լեզուն՝ արեւելահայուն համար: Բայց փաստ է, որ ներկայ արեւելահայ մամուլը, մեծ մասով, անմարսելի կը դառնայ սփիւռքահայ այն ընթերցողին համար, որ հաճոյքով կը կարդար «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը: Հոս նկատի ունինք բարբառայնութենէ, ժարկոնէ ու օտարաբանութենէ նուազ վարակուած լեզու մը:

Աւելցնենք, որ սփիւռքահայ մամուլն ու տպագրութիւնը արեւելահայերէն գրուածքներու մէջ օտար բառերու տառադարձութիւնը երբեմն կը պահեն իր բնագրային վիճակով. այդպէս է որ քանի մը արեւելահայ տառադարձութեամբ բառեր մտան արեւմտահայ գրականին մէջ, ինչպէս՝ *ակադեմիա, ամբիոն, պանթեոն, դոկտոր* եւ այլն, մտան արեւելահայ տեսքով, բայց՝ արեւմտահայ արտասանութեամբ: Ասոր հետեւանքով ալ արեւմտահայուն համար *դոկտոր* բառը գիտական կոչում է, իսկ *տոքթոր* բառը՝ բժիշկ:

55.- Գ գիրը օտար բառերու տառադարձութեան մէջ

Օտար բառերու տառադարձութեան մէջ, իբրեւ կանոն, չեն գործածուիր այժմ շնչեղացած նախկին ձայնեղները՝ բ, գ, դ, ձ եւ ջ: Ասոնցմէ միայն գ-ը կանոնաւորապէս գործածուած է արեւմտահայ գրականին եւ հայաստառ թրքերէն գրականութեան մէջ արտայայտելով թրքերէնէ եւ արաբերէնէ եկած կոկորդային

պայթական 3 գիրի հնչիւնը: Ասիկա մեր մէջ երկար ատեն օրինաչափական ու կայացած գրելաձեւ մըն էր: Այդ հնչիւնը շատ կը հանդիպի մականուններու եւ տեղանուններու մէջ, ինչպէս՝ *Գարակիլլէան, Գալիագեան, Գատընեան, Գալեմտէրեան, Գարահիսար, Պարտագճեան, Գահիրէ, Անգարա, Գրըգիսան* եւ այլն: Հայաստան թրքերէն գրականութեան մէջ գ-ը միշտ կը փոխարինէ այդ հնչիւնը, իսկ ք-ն՝ սովորական խուլ շնչեղը. «*Ձիրա ինսան պէնի եռթմագ իսթէյօր, Հէր կիւն ճէնք էտէրէք՝ պէնի թագէիգ էտիյօր: Գօրգտըղըմ կիւնտէ պէն սանա թէվէքքիւլ էտէրիմ*» (Մէզամիր, Իսթանպօլ, 1914, էջ 106): Հոս լուրջ հարց մը կը ծագի ներկայիս՝ երկու գլխաւոր պատճառներով. ա) Գրական թրքերէնէն վերացած է այդ հնչիւնը, որ միշտ կը գրուի Կ-ով: ք) Այդ մականունները կրողները իրենք այսօր չեն հնչեր այնպէս ինչպէս որ կայ իսասկցական թրքերէնին մէջ, այլ կը հնչեն ք: Սակայն անոնց (մականուններու եւ տեղանուններու) այդ ձեւի գրութիւնը ւսանդաբար կը շարունակուի եւ լուրջ դժուարութիւն կը յարուցէ անձանօթներու համար՝ *Գարակիլլէան*-ը այսօր կ'արտասանուի *Քարակիլլէան*, բայց կը պահէ ւսանդական դարձած ձեւը: Մուսա Լերան գիւղերէն մէկը կը տառադարձուէր *Վագըք*, իսկ ներկայիս պաշտօնապէս *Vakif* կամ *Vakifli*, հետեւաբար՝ *Վաքըք*: Շատ յայտնի տեղանունները տառադարձուած են օսմանեան հնչերանգով՝ *Անգարա*, որ այսօր կը գրուի ու կը հնչուի *Ankara-Անքարա*, բայց հայերէնի մէջ կը պահուի նախկին տառադարձութիւնը՝ *Անգարա, Գահիրէ, Գոնիա, Գարահիսար*: Նոյնն է մականուններու պարագան:

56.- Հին ու նոր տառադարձութիւններու հարցը

Անշուշտ, հոս խնդրոյ առարկայ չեն հին տառադարձութիւնները, այսինքն՝ անոնք որ կու գան գրաբարէն՝ Աստուածաշունչի թարգմանութենէն ու հայ դասական մատենագրութենէն: Բազմաթիւ բառեր, տեղանուններ ու անձնանուններ կը պահուին ինչպէս որ փոխանցուած են մեզի իբրեւ գրութեան

պատկեր, բայց զանոնք մենք կ'արտասանենք այսօրուայ մեր ընկալումով եւ ոչ թէ իրենց նախնական ձեռով, ինչպէս՝ *Եւրոպա, Ափրիկէ, Եգիպտոս, Կիպրոս, Եգէական ծով, Վոսփորի նեղուց, Բիզանդիա, Կրետէ*. այսինքն՝ չենք մտածեր այդ անունները գրել իրենց հարազատ հնչումով՝ *Շուրոփ, Աֆրիքա* եւ այլն, թէև այդ ալ պատահած է երբեմն՝ *Բոսփորի նեղուց-Վոսփորի նեղուց, Բկոնիա-Գոնիա, Անտիոք-Անթաքիա, Լատդիկէ-Լաթաքիա*: Հիմնական օրինաչափութիւնը հինին պահպանումն է: *Պամասկոս* կը գրենք, այդպէս ալ հիմա կ'արտասանենք *damascus* անունը, թէև *Տամասկոս* գրողներ ալ կան. այդպէս է նաև *Լիբանան*-ը (եւ ոչ *Լիպանոն* կամ *Լիպանան*): Նոյն անուան հին ու նոր ձեւերուն կը հանդիպինք մանաւանդ անձնանուններու մէջ՝ *Քերովբէ-Քերոբ, Սերովբէ-Սերոբ, Չակքէոս-Չաքէոս, Սիմէոն-Սիմոն* եւ այլն: Անձնանուններու պարագային հինն ու նորը կ'ըմբռնուին իբրև տարբեր անուններ՝ *Ղեւոնդ-Լեւոն, Եղիսաբէթ-Էլիզապէթ, Յովհաննէս-Ժան-Ժոնի, Գէորգ-Ճորճ, Յակոբ-Ժաք* եւ այլն:

57.- Բ, փ, պ շարքը

Բ, փ, պ շարքին մէջ պ գիրը, իբրև ձայնեղ, հնչինապէս անշփոթելի կը մնայ բառասկիզբին, բառին մէջ ձայնաւորներէ առաջ ու վերջ՝ *պանիր, պարտէզ, պեղել, պահել, պահպանել, ապա, ապերջանիկ, ապերասան, ապիկար, ապուր, կապ, կարասպ, կոպ, նպատակ, սեպ*, բաղաձայններէ ետք՝ *ամպ, ամպրոպ, ըմպել, սպիտակ, սպասել*, նաև նոր տառադարձութիւններու մէջ՝ *պանք, պանան, նոպա, նոպէլեան, Պէրուիթ*: Հին հայերէնի եւ արեւելահայերէնի մէջ օտարամուտ այս վերջին բառերը պիտի տառադարձուէին բ-ով:

Կիլիկեան բաղաձայնական համակարգ ժառանգած արեւմտահայը կը զանազանէ բ խուլը եւ փ շնչեղը՝ բուռ – փուռ, իսկ իլլագուրկ համակարգ ժառանգածը անխուսափելի շփոթի մէջ պիտի իյնայ, որովհետև երկուքն ալ կ'արտասանէ իբրև շնչեղ: Կան օրինաչափական պարագաներ:

58.- Մբ օրէնք

Օրինաչափական է՝ *ամբար, ամբասիր, ամբարտակ, Ամբերդ, ամբոյս, ամբարիշտ, ապստամբ, բամբասել, բամբիռ, գմբէթ, դամբան, դամբանական, ըմբոստ, ըմբոշխնել, ըմբիշ, թամբ, թումբ, թմբուկ, լամբակ, լամբար, խումբ, կաղամբ, կշտամբել, համբառնալ, Համբարձում, համբուրել, համբերել, համբաւ, ջամբել, ճամբել* (արեւելահայերը՝ *ճամպել*), *Մամբրէ, շամբուտ, սմբակ, սմբուկ* եւ այլն:

Հին հայերէնի մէջ բ-էն առաջ ն հնչիւնը միշտ մ հնչուած է, այդպէս է նաեւ օտար փոխառութիւններու պարագային, ինչպէս պահլաւերէնէ եւ պարսկերէնէ փոխառութիւնները. *anboh՝ ամբոյս, anbar՝ ամբար, anbartavan՝ ամբարտաւան, anbartak՝ ամբարտակ*, ատիկա նոյնիսկ ներգրաւած է *ան* ժխտական մասնիկով բառերը, ինչպէս՝ *ամբարիշտ* (ան-բարիշտ), նաեւ *ութիւն* ածանցով բառերու սեռականի հիմքով բ-ով գործիականը, ուր բ հոլովմասնիկէն առաջ տեղի կ'ունենայ ն>մ հնչիւնափոխութիւն. *քաջութիւն՝ քաջութեան-քաջութեամբ*, այդպէս նաեւ *լաւութիւն՝ լաւութեան-լաւութեամբ, արիւն՝ արեան-արեամբ, ծագում՝ ծագման-ծագմամբ, հոլովում՝ հոլովման-հոլովմամբ* եւ այլն: Գործիական հոլովի քարացած ձեւեր են *մասամբ, հիմամբ, դիտմամբ, ձեռամբ, սխալմամբ, իրաւամբ, նկատմամբ* եւ այլն:

Նոյն երեւոյթը հասած է աշխարհաբարին, ուր յատկապէս քանի մը բառերու պարագային ան-ը *ամ* գրողներ կան: Չշփոթելու համար պէտք է ճանչնալ *ան* ժխտական նախածանցը, ուր ն բաղաձայնը կրնայ բ, պ եւ փ բաղաձայններէն առաջ շփոթուիլ մ-ին հետ. *բիծ՝ անբիծ, բան (գործ)՝ անբան, բաւ՝ անբաւ, բախտ՝ անբախտ, բնակելի՝ անբնակ, անբարբառ (անխօս), անբարոյ, անբաժան, անպատիւ, անպէտք, անփառունակ* եւ այլն: Պէտք է քիչ մը ստուգաբանել:

- **Անբասիր/ամբասիր** բառը մ-ով գրողները կը պատճառաբանեն, որ *բասիր* (պարսաւելի, անարգելի) արմատը անկախ գործածութիւն չունի. հետեւաբար պէտք է գրել *ամ-*

բասիր, ինչպէս ամբարիշտ կը գրենք: Անբասիրը սխալագրութիւն համարել:

- **Բամբակ/բամպակ** բառը կու գայ պահլաերէնէ՝ pambak: Միշտ հարց եղած է *մ՞բ*, թէ *մպ* գրել: Երկու ձեւերն ալ կը գործածուին: Նախընտրելի է *բամբակ* գրել, թէ՛ մբ օրէնքը յարգելու եւ թէ արեւելահայոց հետ բառը նոյնացնելու մտադրութեամբ: Աշխարհագրական Փամբակ անունը չշփոթել այս բառին հետ:

- **Բամբասանք/բանբասանք** (բամ-բաս՝ կը խօսիմ-կը խօսիս). Գրաբարի մէջ *բամ* բայը պակասաւոր էր՝ եզակի ներկայ ժամանակի ձեւերն են *բամ*, *բաս*, *բայ*: Բառը կազմուած է առաջին երկու դէմքերու կցումով՝ *բամբասել*: Բանբասանքը սխալագրութիւն համարել:

- **Ամպիռն/ամբիռն** նոր փոխառութիւն է: Արեւելահայ տառադարձութեամբ *ամբիռն* ձեւը տարածուած է մեր մամուլին մէջ ու անով՝ արդարացուած:

- Մ-էն ետք փ ունինք քանի մը բառերու մէջ՝ *ամփոփ* (*ամփոփել*, *ամփոփում*), *շամփուր* (*շամփրել*), *փամփուշտ* (*փամփշտակալ*, *միզափամփուշտ*), *խոմփալ*:

- **Գամփո**, առկէ՝ *գամփոյիկ* ու *գամփոել* (շան յարձակիլը) ոմանք յետնաբար կը գրեն *գամբո*: *Գամփր ձեւը սխալագրութիւն է*:

59.- Ղբ օրէնք

Օրինաչափական է՝ *աղբ* (*աղբակոյտ*, *աղբաման*, *աղբանոց*, *աղբահաւաք* եւ այլն), *Աղբակ*, *աղբերակ*, *աղբիւս*, *աղբիւր*, *բողբոջ*, *եղբայր* (*եղբայրանալ*, *եղբայրութիւն*, *հօրեղբայր*), *Կողբ*, *ողբ* (*ողբալ*, *ողբերգակ*, *ողբագին*), *Սեղբոս* եւ այլն:

Բացառութիւններ կը մնան՝ *աղփուն* (տկար), *ճողփել* (*ճողփիւն*), *յղփանալ*, *շաղփաղփել* (շատախօսել), *փաղփուն*, *փաղփիլ*, *փողփողիլ*:

60.- Չր օրէնք

Օրինաչափական է՝ *զբաղ (զբաղիլ, զբաղում, զբաղմունք, բազմազբաղ, մտազբաղ), զբօս (զբօսանք, զբօսարան, զբօսայգի, զբօսաշրջիկ, զբօսապտոյտ, զբօսավայր), սկիզբ (սկզբնական, սկզբունք, անսկիզբ)*, մինչ և կու գայ պ եւ փ բաղաձայններէն առաջ, ինչպէս՝ *սպասել, սպանդ, սպեղանի, սպիտակ, ասպետ, ասպանդակ, ասպնջական, սպունգ, սփռփել, սփիւռք* եւ այլն, ուր սփ եւ սպ կապակցութիւնները հնչիւնապէս անշփոթելի են:

61.- Բր օրէնք

Օրինաչափական է՝ *արբենալ, արբունք, արբանեակ, բոր-բոքիլ, դարբին, լիբբ, Խարբերդ, հարբիլ, հարբուխ, ներբան, նուրբ, Ուրբաթ, որբ, որբութիւն, սուրբ, սրբան, քարբ* եւ այլն:

Բացառութիւններ են՝ *Արփի/արփի, Արփիար, երփն (երփ-ներանգ, երփնագիր), թարփ (ցանց ձկնորսի), փրփուր տարփանք* եւ ասոնցմով կազմուած բառերը:

62.- Փ եւ ք գիրերը ձայնաւորներէ ետք

Փ եւ ք գիրերը կը շփոթուին ձայնաւորներէ ետք ինկած իրենց դիրքին մէջ եւս, ուր զանազանելի կ'ըլլան գլխաւորաբար ստուգաբանական գործօններով. այսպէս՝

Օրինաչափական է փ-ը բնիկ հայերէն բառերու եւ ոչ սեմական լեզուներէ փոխառութիւններու մէջ.

- Ա-էն ետք՝ *ափ (ափկից, յափշտակել), ափսէ, ափսոս, գա-դափար, դափ, դափնի (դափնեպսակ), թափ (թափահարել), թարթափել, թափառիլ, թափուր, թափօր, լափել (լափիլիզել), խարխափիլ, ծափ, կառափ (գլուխ, գագաթ՝ կառափնատուն), կափարիչ, կափկափել, մրափել, շօշափել, չափ (չափչփել, չափաւոր), սարսափ, սափոր, սթափիլ, սօսափ, տարափ, տափ, փափուկ, փափաք* եւ այլն:

- Ո-էն ետք՝ *անփոփ, դոփել (դոփիւն), խոփ, Ծոփք, կոփել, Շոփէն, շորշոփ, սփոփել, տրոփել, ցոփ (ցոփութիւն)* եւ այլն:

- Ե-էն ետք՝ *եփել, Եփեսոս, Եփրեմ, Եփրատ, Եփրաքսիա, ծեփ, թեփ, շերեփ, սեփական, ցոփ* եւ այլն:

- Ու-էն ետք՝ *թուփ, խուփ, տուփ* եւ այլն:

- Է-ն ետք՝ *Յովսէփ* ս. գրային անունը, ուր փ-ը սեմական ֆ-ի տառադարձութիւնն է եւ ոչ թէ ք-ի:

- **Դափնի**. սխալագրութիւն է *դաբնի* բառը: Յունարէն *դաֆնի* բառն է, որ հայերէնի մէջ կը տառադարձուէր փ-ով՝ *դափնի*, ինչպէս՝ *փիղ, փիլիսոփայ, փուռ, սփինքս* եւ այլն:

- **Փոփոխութիւն**. *փոփոխել, փոփոխակի, անփոփոխ* բառերը *փոխել* բայի կրկնաւորներն են, առաջինին մէջ խ-ի անկումով:

- Փ-ով կը գրուի կրկնաւոր բառերուն առաջին բաղադրիչը, որ առանձին գոյութիւն չունի, ինչպէս՝ *սեփ-սել, ճեփ-ճերմակ, դեփ-դէղին, կափ-կանաչ* եւ այլն:

- **Շրջափակ**, որ *բակ* բառին հետ ունեցած իմաստի մերձաւորութեան ու նմանաձայնութեան պատճառով ոմանք թիրիմացաբար կը գրեն *շրջաբակ*: Շրջափակը տան կամ որեւէ կառոյցի շուրջ գտնուող *փակ* տարածութիւնն է:

Բ է սեմական ծագում ունեցող հին փոխառութիւններուն մէջ, գլխաւորաբար ասորերէն, եբրայերէն, հին եգիպտերէն, արաբերէն. *Արամելիք, Արաս, արեթ, Արել, արբայ, արար, Արգար, Արիսողոմ, Արրահամ, Բարզէն, խարել (խարեբայ, խարուսիկ, խարելութիւն), շարաթ, երենոս (յունարէնի միջոցով՝ կարծր ու սել փայտ), Յակոբ, Յոբ, Չենոբ, Սերոբ, Քերոբ* ս. գրային անունները, *գուբ* (փոս, հոր, բանտ) եւ այլն:

Նոր փոխառութիւններու տառադարձութեանց մէջ կ'առաջնորդուինք արեւմտահայերէնի արդի բաղաձայնական համակարգի օրէնքով, ուր պ-ն կը փոխարինէ նախկին ք ձայնեղը՝ ապու Սարգիս, ապունա, Պէյրութ, Հալէպ, Պանիաս *եւ այլն*:

- **Բարախել** բառը կազմուած է *բախ* արմատի կրկնութեամբ ու առաջին խ-ի անկումով:

- **Տարատ** բառը կը հանդիպի նաեւ *տափատ* սխալագրութեամբ:

- **Չաբոտուք, ձաբոտոց, ձաբոտել:** Ըստ Աճառեանի՝ ուռ-ը բազմապատկական ածանց է, ինչպես՝ *ճաթոտուք, սեղմոտել, քաշքոտել:*

- **Բշտիկ** կու գայ *բուշտ* արմատեն՝ «*ջրալից ուռեցք, պալարք*»: Նոյն արմատեն կայ նաև սաստկական ածանցով *բշտոկիլ* (մարմինը բշտիկներով ծածկուիլ) բառը, ինչպես՝ *արվոկիլ, մալոկիլ, ջրվոկիլ*, բարբառային բառերը: Նոյն արմատը փ-ով կայ *փամփուշտ* բաղադրութեան մէջ, որմէ ունինք *փամփշտատր, փամփշտակալ, միզամփամփուշտ:*

- **Բռալիկ.** արեւելահայերը *բոբիկ:*

- **Թփոտալ**՝ հոգեվարքի պահուն ցնցումներ կատարել, փրկութեան թափահարումներ ընել: Աղայեան *թփոտալ, թփըրտալ, թպոտալ, թրպրտալ ու թոպոտալ* գլխաբառերուն համար կը թելադրէ տեսնել *թպրտալ* բառը, որուն ծագման մասին տեղեկութիւն չկայ: Կրնայ ըլլալ, որ միեւնոյն ծագմամբ բարբառային տարբերակներ են բոլորը: Ճիգմեճեան, Տէր Խաչատուրեան, Կոստեան կու տան *թփոտալ*: Նկատել տանք, որ Աճառեան *թափ* գլխաբառին բարբառային ձեւերուն մէջ կու տայ *թափտալ* «թօթուել», «թափվիս ու ազատվիս», ուր *թափվիլ* բառը «նշանակում է *ազատուիլ*», իսկ *թափթափել* գլխաբառը՝ *սիրտը բարախել*: Կը համարէ բնաձայնական բառ, կու տայ *թփթփալ* ու *թփոտալ* գաւառական օրինակները: Կը կարծեմ, թէ երկու պարագան ալ կը բացատրէ մեր բառը, որուն արմատն է կա՛մ *թափ* արմատը, կա՛մ *թափ* բնաձայնը՝ սաստկական-բազմապատկական *ոտ* ածանցով:

63.- Բ եւ փ (մասամբ՝ պ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ԲԱԲԱԽ(ել) (>բաբախուն)

ՓԱՓԱԽ (մուշտակէ գլխարկ)

ԲԱԽԻԼ (>բախել, ակնբախ)

ՓԱԽ(Չ)ԻԼ (>փախուստ,

փախեփախ, փախստական)

ԲԱԿ (շրջափակ)

ՓԱԿ (>փակել, փակում, շրջափակ)

ԲԱԳԱՐԱՆ (պատմ. քաղաք)

ՓԱԿԱՐԱՆ (դոնփակ տեղ)

ԲԱՍՏ (բախտ. >բարեբաստիկ,

ՓԱՍՏ (>փաստել, փաստացի,

չարաբաստիկ)	փաստարկ, փաստաթուղթ)
ԲԱՐԻ (> բարութիւն, բարիք)	(կը) ՓԱՐԻ (կը լծուի)
ԲԱՐԲԱՆ (>գաւառաբարբառ)	ՓԱՐՓԱՆ (անուշ աչքով)
ԲԱՐԴ (կնճռոտ.>բարդութիւն)	ՓԱՐԹ (փորի ճարպ)
ԲԱՐՔ (>բարոյական)	ՓԱՌՔ (> փառաւոր, փառահեղ)
ԲԵՐԴ (ամբոց)	ՓԵՐԹ (կտոր)
ԲՈՒՃ (կարճ գուլպայ)	ՓՈՒՃ (պարապ. > փճանալ)
ԲՈՒԿ (բոպիկ. >բոկոտն)	ՓՈՒԿ (կաշիէ կապ)
ԲՈՅԹ (հաստ մատը)	ՓՈՅԹ (> փութալ, փութաջան)
ԲՈՒԹ (բթանալ)	ՓՈՒՏ (փուճ.> փտիլ, փտախտ)
ԲՈՌ (խոշոր ճանճ)	ՓՈՐ (որովայն. > փորոտիք, փորել, փորիչ)
ԲՈՒՌ (ափ.> բռնել, բռնցք)	ՓՈՒՌ (> փռապան)
ԲՈՒՔ (ձինսխառն հով)	ՓՈՒՔ (քամի. > փքոց, փքուն)
ԲՐԴԵԼ (>բրդօն, բրդուճ)	ՓՐԹԻԼ (քակուիլ, անջատուիլ)
ԲՕԹ (գոյժ. >բօթաբեր)	ՓՈԹ (ծալք)
ԵՐԲ (երբ որ)	ԵՐՓ (գոյն. > երփնագիր)

64.- Գ, ք, կ շարքը

Գ, ք, կ շարքին մէջ կ գիրը, իբրեւ ձայնեղ, հնչիւնապէս անշփոթելի կը մնայ բառասկզբին, բառին մէջ ձայնաւորներէ առաջ ու վերջ՝ *կակուղ, կաղին, կուտ, կէս, Կիրակոս, ական, իրիկուն, մահակ, ագարակ, աղմուկ, մլուկ*, բաղաձայններէ ետք՝ *ուռկան, լերկ, մերկ, սկսնակ, հսկայ*. նաեւ նոր տառադարձութիւններու մէջ՝ *կազ, կաթօ, կարսոն, պէնկ* (ծին), *կալոն, տիպոկ*: Հին հայերէնի եւ արեւելահայերէնի մէջ *օտարամուտ այս վերջին բառերը* պիտի տառադարձուէին գ-ով:

Կիլիկեան բաղաձայնական համակարգ ժառանգած արեւմտահայը կը զանազանէ գ խուլը եւ ք շնչեղը՝ *գերել – քերել*, իսկ իլլագուրկ համակարգ ժառանգածը անխուսափելի շփոթի մէջ պիտի իյնայ, որովհետեւ երկուքն ալ կ'արտասանէ իբրեւ շնչեղ: Կան օրինաչափական պարագաներ:

65.- Նգ օրէնք

Օրինաչափական է՝ *անգամ, անգո, Անգինէ, արձագանգ, գանգատ, եղունգ, էրանգ, գանգ, գանգակ, թանգարան, ժանգ, ժառանգ, հանգանակել, հանգիստ, հանգոյց, հանգչիլ, հինգ, հրահանգ, մանգաղ, յանգիլ, նահանգ, նենգ, սրինգ, վարունգ* եւ այլն: Կարգ մը բառերու մէջ ն-էն ետք եկող ք-ն ածանց է. *գէնք՝ գինել, լայնք՝ լայնութիւն, կեանք՝ կենարար, հանք՝ հանել, ջանք՝ ջանալ, վանք՝ վանական:*

- **Ընկճել.** յառաջացած է *ընդ գճիլ* «չոքիլ» յարադրութենէն, ապա ունեցած է *ընգճել-ընկճել* «ծունկի բերել, յաղթել, նուաճել» զարգացումը: Գուճ-ը ծունկի ծալքն է, ծնկոսկրը:

- **Արձագանգ,** ոմանք եւ արեւելահայերը կը գրեն ք-ով *արձագանք*, որ Աճառեանը կը համարէ սխալագրութիւն, որովհետեւ այս բարդ բառին երկրորդ բաղադրիչը *գանգ(իւն)* (հնչիւն) բառն է: Ն-էն ետք արմատական ք չի գար:

- **Թանգ եւ թանկ** ծագումով նոյն բառերն են՝ «մեծագին, սուղ»: Գ-ով տարբերակը անկախ չի գործածուիր, անկէ ունինք *թանգարան* (գանձարան), *թանգարանագէտ, թանգարանային, թանգարանապետ:* Թանկ-ը անկախ կը գործածուի ու բազմաթիւ բաղադրութիւններու մէջ կը մտնէ՝ *թանկագին, թանկարժէք, թանկանալ, թանկութիւն:* Վերջին երկու բառերը արեւելահայերէնին յատուկ են: Արեւմտահայերէնը ունի *սուղնալ, սուղութիւն, սուղոնց*, առանց ու-ի կորուստի:

- **Յանգերգ** (փոխան՝ *յանկերգ-ի*). առաջին բաղադրիչը *յանգ* բառն է, որ հին լեզուին մէջ հանդէս կու գայ նաեւ *յանկ* ձեւով եւ բոլոր բաղադրութիւններուն մէջ զուգաձեւաբար: Արդ, նոր հայերէնի մէջ կը գործածուի *յանգ* հնագոյն տարբերակը՝ նաեւ հանդէս գալով բոլոր բաղադրութիւններուն մէջ՝ *յանգիլ, յանգաւոր, յանգարան, յանգարանութիւն, յանգակից, անյանգ* եւ այլն, միակ բացառութիւնը կը մնայ *յանկերգ* բառը: Թելադրելի է *յանգերգ* ձեւը:

66.- Զգ օրէնք

Օրինաչափական է՝ *ազգ (ազգութիւն, ազգային, ազգակից, բազմազգ), զգալ (զգայուն, զգայարան, զգաստ, զգօն, անզգամ), զգեստ (զգեստաւորել, համազգեստ), զգոյշ (զգուշանալ, անզգոյշ), լեզգի, Վազգէն* եւ այլն, մինչ ս կու գայ կ եւ ք գիրերէն առաջ, ինչպէս՝ *սկսիլ, սկիզբ, սկիւռ, հսկայ, հսկիչ, սքանչելի, սքողել, սքեմ (սքեմաւոր, սքեմաթող, սքեմազուրկ)* եւ այլն, ուր սք եւ սկ կապակցութիւնները հնչիւնապէս անշփոթելի են:

- *Ջգեստնել* (գետնել, գետին զարնել) բառը ունի այլ կազմութիւն *զ-գետնել*:

67.- Բգ օրէնք

Օրինաչափական է՝ *անարգ, արզանդ, արգահատանք, արգասիք, արգաւանդ, արգելք, բուրգ, գիրգ, Գուրգէն, դուրգ (բրուտի չարիս), երգ, թարգման, կարգ (կարգաթիւ, կարգել, կարգավիճակ), մարգ (մարգագետին, սիրամարգ), միրգ (մրգաստան, մրգատու), յարգ (յարգել, յարգելի, յարգանք, անարգ), նարգիս, Մարգիս, վարգել* եւ այլն:

- **Նարգիս**. գրուած է նաեւ *նարգէս, նարկիս, նարգիզ*:

Բացառութիւններ են *արքայ, արքեպիսկոպոս, թուրք, հերքել, հետաքրքիր, քրքիջ*: *Ընդերք* եւ *սարք (սարքել) ք-ով* ածանցաւոր բառեր են:

68.- Ղգ օրէնք եւ գէն կապակցութիւնը

Ղգ ունինք *հեղգ (հեղգամիտ, հեղգանալ), շողգամ, իսկ դք՝ աղբատ (աղբատանալ, աղբատութիւն), ճեղք (ճեղքել, ճեղքուածք, ճեղքոտուիլ)*: Բառավերջի ք-ն ածանց է՝ *խաղք (խաղալ), մեղք (մեղքնալ, բայց՝ մեղաւոր, մեղայ), տաղք (տաղարան, տաղերգու)*:

Կայ *գէն* վերջաւորութիւնը անձնանուններու մէջ՝ *Վազգէն, Վիգէն, Գուրգէն*:

- **Բարգէն**. արեւելահայերը՝ *Բարկէն*:

- **Հասարակակարգ** բարդ բառը կը գործածուի *կա* կապակցութեան ամփոփումով՝ *հասարակարգ*:

69.- Ք եւ գ զիրերը ձայնաւորներէ ետք

Ա-էն ետք գ կը գրուի բաւական երկար շարք մը բառերու մէջ՝ *ագի, ագահ, ագարակ, ագուգայ, անագ (անագապղինձ), արագ (արագօրէն, արագութիւն), աւագ (աւագանի, աւագերէց), ագռաւ, Բագարան, բագին, գագաթ, դրուագ, թագ (թագադիր, թագաւոր, թագուհի), ծագ (ծագիլ, արեւածագ), կարագ, հագ- (հագնիլ, հագուստ), ձագ, ձագար, ճագար, ճրագ, մագաղաթ, մարագ, յագ- (յագենալ, յագուրդ, անյագ), պագ (պագնել, երկրպագել), սագ, վագր, վայրագ (վայրագութիւն), Վարագ* եւ այլն:

Ագ-ը կարելի չէ օրինաչափական նկատել, որովհետեւ անդին կան *աք* ունեցող բազմաթիւ բառեր, ինչպէս՝ *աքացի, աքսոր, աքցան, աքլոր, աքաղաղ, առաքինի, առաքեալ, մաքի, թանաք, կաքաւ, հաւաքել, մաքառիլ, մետաքս, մաքուր, մաքս, սայթաքիլ, ցամաք, քաղաք* եւ այլն:

- **Թաքուն** (փոխան *թագուն*-ի), որմէ ունինք նաեւ *թաքչիլ, թաքստոց, թաքթաքուն, թաքթաքուր*: Գ-ով տարբերակը դուրս մղուած է:

- **Փափագ**, գրուած է նաեւ *փափաք*, հին հայերէնի մէջ բոլոր բաղադրութիւնները գ-ով՝ *փափագիլ, փափագելի*: Արեւմտահայերէնի բառարանները ընդհանրապէս՝ ք-ով: Նախընտրելի է գրել գ-ով, ինչպէս արեւելահայերը:

- **Միսաք** եւ **Սեղրաք** եբրայական անունները չշփոթել ակնով վերջացող ածականէ գոյացած հայերէն յատուկ անուններուն հետ՝ *Հրակ, Խաժակ, Սեւակ* եւ այլն: Մերժել *Սեղրակ* ու *Միսակ* ձեւերը նաեւ մականուններու մէջ:

- **Բացականչել**, հնագոյն ձեւը *բացագանչել*: Երկուքն ալ գործածողներ կան: Իմաստային տարբերութիւններ չունին, թէ եւ Աղայեան կը փորձէ զատորոշել: Երբ *գանչել* ձեւը այս բառէն դուրս գոյութիւն ունենալէ դադրած է, ու ամէն տեղ ներկայ է

կանչ-ը՝ կանչել, կանչոտել, արլորականչ, ի գուր է յամառիլ բացագանչել-ուն վրայ: Կ-ով ձեւը հնչիւնապէս ալ արդարացուած է:

- **Գոչել**՝ ձայնել, պոռալ - **կոչել**՝ կանչել, հրաւիրել, անուն տալ, անուանել: Այս երկուքը կրկին բնաձայնութիւններ են, ինչպէս *գանչն* ու *կանչը*: Բայց արդի հայերէնի մէջ ունին իմաստային յստակ տարբերութիւններ: Առաջինէն ունինք *գոչիւն, բարձրագոչ, ահեղագոչ, մեծագոչ*, իսկ երկրորդէն *կոչում, կոչեցեալ, կոչունք, կոչնագիր, ինքնակոչ* եւ այլն:

- Է-էն ետք գ ունինք արմատական բառերու վերջայանգին՝ *եղէգ, էգ, հէգ, մէգ, սէգ, վէգ, տէգ*: Կը հանդիպի նաեւ եզ՝ *Արեգ (Արեգակ, Արեգնագան)*, իսկ Է-էն ետք ք ունինք *թեք (թեքիլ, թեքութիւն, թեքական, թեքում, թեքուիլ, դիրարթեք)*:

- **Հէգ**-ը գրուած է նաեւ *հէք*, իբրեւ բնագրային հին տարբերակ: Հայերէնի մէջ արմատական բառերը էք ձեւով չեն գրուիր:

- Ո-էն ետք ք կու գայ շատ բառերու մէջ, ինչպէս՝ *ամոքել (ամոքում, անամոք), ատոք, բորբոք (բորբոքիլ, բորբոքում, մշտաբորբոք), թոք (թոքատապ), մորմոք (մորմոքիլ), ոլոք, ոք (ոչ ոք), չոքիլ (ծնկաչոք), փորոք, փոքր* եւ այլն:

Այս եւս օրինաչափական չէ, որովհետեւ անդին ոգ ունեցող բառերն ալ քիչ չեն, ինչպէս՝ *գոգ, գոգցես*՝ «ըսես, կարծես թէ», *լոգ (լոգանք, լոգարան, լոգնալ), հոգ, Կոգահովիտ, հոգի, մոգ, յոգնակի, յոգնիլ, շոգ, շոգի, ոգի, ոռոգել, տոգորել* եւ այլն:

- **Պոպոկ**՝ «ընկոյգ», կայ նաեւ գաւառական տարբերակը՝ *պոպոք*:

- **Յոզնակի**, յոզն՝ «շատ, բազում» արմատէն: *Ակի* ածանցին կը հանդիպինք քանակ ցոյց տուող բառերու վրայ՝ *բազմակի, եռակի, կրկնակի*: Արմատը գրուած է նաեւ *յոքն* ձեւով, որ դուրս մղուած է: Նոյն արմատէն ունինք *յոզնիլ, յոզնութիւն, յոզնատանջ*:

- **Ոյգ** ունինք արմատական բառերու մէջ՝ *առոյգ, գոյգ, նծոյգ, պատրոյգ, ստոյգ*, միւսերը ոյք ածանցաւոր բառեր են՝ *հաճոյք*,

խնճոյք, գահոյք, կահոյք, պիտոյք: Գոյք բառին մէջ ք-ն ածանց է՝ *գոյակ, գոյութիւն, գոյական:*

- Ի-էն ետք գ ունինք *ձիգ, ճիգ, նիգ* արմատական բառերուն մէջ, իսկ իք-ը իբրեւ ածանց՝ *չիք, տանիք, հեծիք:*

- Ու-էն ետ ք ունինք *շուք, բուք, թուք, փուք*, իսկ գ՝ *սուգ, մուգ* արմատական բառերուն մէջ, կան նաեւ ք յոգնակերտն ու ուք ածանցը՝ *դուք, մանրուք, փշրուք, փնտռուք, վլվլուք, ծեծկոտուք* եւ այլն:

70.- Գ եւ ք զիրերը ածանցներու եւ քարացած ձեւերու մէջ

Գ-ը ընդամենը քանի մը ածանցի մէջ կայ.

- **գեր(ա)** (վեր). *գերիշխան, գերմարդ, գերադաս...*

- **(ա)զին**. մակբայներ՝ *սրտագին, գայրագին, լալագին, մոլեգին* եւ այլն: Ածականներ՝ *թանկագին, սահագին*: Չշփոթել արքին/քին ածանցին հետ՝ *արտաքին, ներքին*:

- **(ա)գոյն**. ածականի գերադրական աստիճանը՝ *գերագոյն, լաւագոյն, յարմարագոյն, վատագոյն, յոռեգոյն, ազնուագոյն* եւ այլն: Արմատ է կարգ մը բառերու մէջ՝ *ծիրանագոյն, մոխրագոյն, վարդագոյն, մանիշակագոյն* եւ այլն:

Ածանցներու մեծամասնութեան մէջ՝ ք.

- **ալիք, ելիք**. ապառնի դերբայի վերջաւորութիւններ, կը գործածուին ածականաբար, իսկ ոմանք՝ գոյականաբար, ինչպէս՝ *խաղալիք, խնդալիք, երթալիք, գալիք, լալիք...*

- **անք**. բայսահմօթերէ՝ գոյականներ կը կազմէ. *անարգել անարգանք, տառապանք, գովասանք, զրկանք, լուտանք...*

- **արք**. *լուծարք, գործարք*.

- **ենք**. ա) *խոնջենք, օրհնենք* (տես էջ 30): բ) հաւաքական գոյականներ՝ *Սարգիսենք, Հայրապետենք, հօրեղբայրենք...*

- **եք**. գրաբարէն մնացած անեզական կամ յոգնակի քարացած ձեւեր՝ *երեք, չորեք(շաբթի), երբեք, ամենուրեք, պասեք* (հրէական գատիկ), *մեք* (գրբ. մենք) բառերը.

- **էք**. ա) բայսահմօթով՝ ծէսերու անուններ, ինչպէս՝ *դռնբացէք, հիմնարկէք, նշանդրէք, ջրօրհնէք, տնօրհնէք* եւ այլն. բ)

այծէք, արժէք (արժէքաւոր), կողպէք (կողպանք), կոճէք (բերանակապ), մաստնէք (փոքր ակօս որեւէ բանի վրայ՝ սին, կահոյք), քողէք (ձեռքի ապարանջան) բառերը.

- **իք.** աւետիք, գործիք, երախայրիք, երախտիք, ընթրիք, կարծիք, կեղծիք, տանիք, հեծիք...

- **ինք.** դաշինք, նախատինք, քրտինք.

- **մունք.** վարմունք, ցուցմունք, ասմունք, սխալմունք, վերաբերմունք...

- **ոյք.** կահոյք՝ կահաւորել, հաճոյք՝ հաճելի, հաճոյասէր, գահոյք՝ գահակալ, պիտոյք՝ պիտանի: Չշփոթել առոյգ, զոյգ, նժոյգ, պատրոյգ, ստոյգ արմատական բառերու համահունչ վերջաւորութեան հետ:

- **ոսիք.** հնտտիք, փորոտիք.

- **որայք/օրայք.** դեղորայք, գիւղորայք, վանորայք հնաձեւ յոգնակիները՝ որայք կամ օրայք յոգնակերտներով: Նախընտրելի է որայք:

- **ուածք.** ասացուածք, կառուցուածք, նայուածք, ունեցուածք, պատմուածք...

- **ունք.** ակունք, արբունք, բարձունք, իրաւունք, լորձունք, մասունք, շրթունք, սկզբունք...

- **ուցք.** այրուցք, սերուցք, մոլուցք.

- **ուք.** վլվլուք, փսփսուք, քաշքշուք, մանրուք, մտմտուք, գինարբուք, սրտխառնուք եւ այլն: Վլվլուկ-ը սխալագրութիւն պէտք է նկատել:

- **չէք.** վարձքի անուններ կը կազմէ՝ կաղանղչէք, կարողչէք, ներկողչէք, բանողչէք...

- **օն(ք).** գարթօնք, կրօն(ք), ցրօնք.

- **օք.** ստենօք, ընտանեօք, առօք-փառօք, ցաւօք, կամօք, խելօք...

- **ոք.** բարուք, բարուքում, բարուքել:

- **ք.** դրուելով արմատներու վրայ

ա.- անոնց անկախ գործածութեան իրաւունք կու տայ՝ *աղօթ(ք), անէծք, երկիւնք, խելք, կուրծք, հրաշք, ոտք, ձեռք, փառք, քիմք* եւ այլն:

բ.- ձեւական ներկայութիւն մըն է՝ *հաւատ-հաւատք, հիմ-հիմք, շեւ-շեւք, շող-շողք, տեսիլ-տեսիլք, կրօն-կրօնք* եւ այլն:

գ.- իմաստը փոխելով նոր բառ կը կազմէ՝ *գիր-գիրք, դէմ-դէմք, պահ-պահք, խաղ-խաղք, կող-կողք* եւ այլն:

դ.- ածականներէ գոյականներ կը կազմէ՝ *արժանի-արժանիք, բարի-բարիք, լայն-լայնք, հայրենի-հայրենիք* եւ այլն:

ե.- բայաւորներէ գոյականներ կը կազմէ՝ *գովք, էլք, խօսք, վաճառք, վազք, տեսք* եւ այլն:

Ք ածանցը կը ճանչցուի անկումով. *գիրք՝ գրակալ, բարք՝ բարոյական, վարք՝ վարուիլ, շարք՝ շարել, բերք՝ բերել, խորք՝ խորունկ, ձիրք՝ ձրի, չարք՝ չարութիւն* եւ այլն:

Բառավերջին, բաղաձայնէ մը ետք ինկած դիրքին, բառաձանցումով եւ բառաբարդումով կարելի է որոշել, թէ տառը գ՞ է, թէ ք: Գ-ը կը մնայ իբրեւ արմատական հնչիւն, իսկ ք-ն կը կորսուի իբրեւ ածանց.

միրգ՝ մրգաստան - *դիրք՝ դրութիւն*

կարգ՝ կարգապահ - *աչք՝ աչագորկ*

այգ՝ այգաբաց - *ձեռք՝ ձեռնոց*

հեղգ՝ հեղգութիւն - *երեք՝ երեսուն*

յանգ՝ յանգաւոր - *հիմք՝ հիմնել*

զանգ՝ զանգակ - *հանք՝ հանել, հանածոյ*

Այս օրինաչափութիւնը շահեկան է բաղաձայնէ մը ետք եկող դիրքին համար միայն, որովհետեւ ք-ն ձայնաւորէ ետք, կրնայ արմատական ըլլալ, ինչպէս՝ *թանաք, հանաք, հաւաք, քաղաք, ցամաք, ամոք(ել), բորբոք, թոք, մորմոք, ոք, շուք, թուք* եւ այլն:

Պէտք է գիտնալ նաեւ, որ վերի օրինաչափութիւնը բացարձակ չէ. ք ածանցը կրնայ չիյնալ կարգ մը ածանցումներու եւ բարդութիւններու մէջ. *մեղք՝ մեղաւոր*, բայց՝ *մեղքնալ, կուրծք՝ կրծկալ*, բայց՝ *կրծքավանդակ, դիրք՝ դրութիւն*, բայց

դիրքորոշում, աչք՝ աչալուրջ, բայց՝ աչքառու, վարք՝ վարմունք, բայց՝ վարքագիծ, վարքաբանություն, ձեռք՝ ձեռնոց, ձեռնածալ, բայց՝ ձեռքբերում:

Գրաբարի *ք* յոգնակերտը իբրև յոգնակերտ մնացած է տղայ՝ տղաք, նաև, իբրև հնաբանություն, տիար՝ տեարք, բառերուն մեջ: Դարձեալ իբրև հնաբանություն, այք յոգնակերտով ունինք տիկին՝ տիկնայք, կին՝ կանայք եւ պարոն՝ պարոնայք բառերը: Տեղացիություն նշող բառերը ներ յոգնակերտը կրնան փոխարինել ք-ով. տեղացի՝ տեղացիք, քաղաքացի՝ քաղաքացիք, հալէպցի՝ հալէպցիք եւ այլն:

Ք յոգնակերտը կայ նաև՝

- հաւաքական անուններ կազմող *անք, եանք, ենք* եւ *ոնք* ածանցներուն մեջ՝ *Վարդանանք, Ղեւոնդեանք, Սարգիսենք, մերոնք, ձերոնք* եւ այլն:

- դերանուններու յոգնակիի վերջաւորութիւններուն մեջ. *ես՝ մենք, դուն՝ դուք, ան՝ անոնք, իր՝ իրենք, որ՝ որոնք, ամէն՝ ամէնքը* եւ այլն: Ով դերանունի յոգնակին՝ ովքեր, ունի զարտուղի կազմութիւն:

- բայի Ա. եւ Բ. դեմքերու վերջաւորութեան, ուր յոգնակիի իմաստ կ'արտայայտէ.

կը գրենք, կը գրէք, կը խօսինք, կը խօսիք, կը կարդանք, կը կարդաք.

կը գրէինք, կը գրէիք, կը խօսէինք, կը խօսէիք, կը կարդայինք, կը կարդայիք.

գրեցինք, գրեցիք, խօսեցանք, խօսեցաք, կարդացինք. կարդացիք.

գրեցէ՛ք, խօսեցէ՛ք, կարդացէ՛ք. մի՛ գրէք, մի՛ խօսիք, մի՛ կարդաք...

- **Ցատկել/ցատքել** - *ցայտ* արմատէն ունինք՝ *հրացայտ, ցայտաղբիւր*: Նոյնէն ունինք նաև *ցատք* եւ *ցատկ*: Այդ հիմքերով կան շարք մը բաղադրութիւններ, որոնց մեջ կ-ը տիրական է՝ *ցատկոտել, ցատկոտուք, ցատկորդ, հեռացատկ*:

71.- Գ եւ ք (մասամբ՝ կ) գիրերը նմանաձայնություններու մէջ

ԳԱՍ (բեւեռ)	արինաՔԱՍ
ԳԱՄԵԼ (բեւեռ զարնել)	ՔԱՄԵԼ (չորցնել. > քամոց)
ԳԱՅԼ (> գայլաշուն)	ՔԱՅԼ (ոտքի մէկ շարժում. >քայլարշաւ, մեծաքայլ)
ԳԱՆ{ակոծել} (ծեծել)	ՔԱՆ (>քանի, որքան, քանակ)
ԳԱՌ (ոչխարի ձագ)	ՔԱՌանկիւն, ՔԱՌակուսի
ցաւագԱՐ, իւելագԱՐ	ՔԱՐ (ժայռ.>խաչքար. քարայր)
ԳԱՐՇԵԼի (>զարշահոտ)	զետնաՔԱՐՇ (>քարշէլ՝ քաշել)
ԳԵՏ (ջուրի առատ հոսանք)	ԳԷՏ (>հաշուազէտ. գիտուն)
ԳԵՐաղաս, ԳԵՐմարդ	ԳԷՐ (հականիշը՝ նիհար)
ԳԵՐԵԼ (զերի բռնել)	ՔԵՐԵԼ (սուր իրով մը շփել)
ԳԵՐԻ (ստորուկ)	ՔԵՌԻ (մօրեղբայր)
ԳԷՇ (վատ. > գիշատիչ)	ՔԷՇ (պարսից կրօն)
ԳԻՆ (արժէք. > թանկագին)	արտաՔԻՆ, ներՔԻՆ
ԳԻՐԳ (փափուկ. > գրգանք)	ԳԻՐՔ (մատեան)
	ԳԻՐԿ (ծոց.> գրկաբաց)
ԳՆԵԼ (դրամով առնել)	ԳՆԷԼ (մարդու յատուկ անուն)
	ՔՆՆԵԼ (զննել. > քննիչ)
ԳՐԱԿԱՆ	ՔԵՐԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ	ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ
ԳՈՀ (բաւարարուած)	ԳՈՅ (գոյություն ունեցող) ՔՈՅ/ՔՈ (քու)
ԳՈՂ (աւագակ. > գողություն)	ՔՕՂ (շղարշ. > քողարկել)
ԳՈՉ(ել) (կանչել)	ՔՈՉ (գաղթ <քոչուոր, քոչարի)
ԳՈՌ (<գորգոռալ)	ՔՈՐ (քերորւտուք)
ԳՈՎ(ք) (>գովասանք, գովեստ)	ՔՈՎ (մօտ)
ԳՈՒՌ (քարէ փոքր աւագան)	ՔՈՅՐ (արականը՝ եղբայր) ՔՈՒՌԱԿ (իշու ձագ)
ԳՐԳԻՌ (դրդում. > ջղագրգիռ)	հետաՔՐՔԻՐ
ԳՐԳՌԵԼ (դրդել.> գրգռություն)	ՔՐՔՐԵԼ (փորփրել, պրպտել)
ԳՈՇ (ցանցառ մօրուք ունեցող)	ՔՕՇ (արու այծ)
ԳՕՍ (ցամաք, չորցած)	ՔՈՍ (մորթայիին հիւանդություն)
ԵՂԷԳ (>եղեգնուտ, եղեգնեայ)	ԵՂԷՔ (ըլլալ բային հրմ.ը)
ԷԳ (<իզական, որձեւէզ)	ԷՔ (ենք, էք, են. . .)
ՈԳԻ (< ոզեւորել, ոզելից)	ՈՔԻ (ոք դերանունին սեռ.ը)

72.- **Տ, թ, դ շարքը**

Տ, թ, դ շարքին մեջ տ գիրը, իբրև ձայնեղ, հնչյունապես անշփոթելի կը մնայ բառասկզբին, բառին մեջ՝ ձայնաւորներէ առաջ ու վերջ՝ *տակ, տաք, տատասկ, տէր, տուրք, Տիրան, ատակ, մատ, կուտ, մօտ, մատիտ*. Բաղաձայններէ ետք՝ *արտ, Մարտ, գորտ*, նաև նոր տառադարձութիւններու մեջ՝ *տրամա, տուտուկ, տումա, տիաշոկ*: Հին հայերէնի եւ արեւելահայերէնի մեջ օտարամուտ այս վերջին բառերը պիտի տառադարձուէին դ-ով:

Կիլիկեան բաղաձայնական համակարգ ժառանգած արեւմտահայը կը զանազանէ դ խուլը եւ թ շնչեղը՝ *դուր - թուր*, իսկ իլագուրկ համակարգ ժառանգածը անխուսափելի շփոթի մեջ պիտի իյնայ, որովհետեւ երկուքն ալ կ'արտասանէ իբրև շնչեղ: Կան օրինաչափական պարագաներ:

73.- **Նդ օրէնք**

Օրինաչափական է՝ *ադամանդ, անդ (անդենական), անդամ, անդաստան, անդորր, անդունդ, անդրանիկ, աւանդ, բովանդակ, գերանդի, գնդակ, դանդաղ, եռանդ, ընդ (ընդհանուր, ընդգրկել, ընդմիջում), թունդ (թնդալ, թնդանօթ, թնդիւն), թոնդրակեցի, խանդ, խինդ (խնդալ, խնդուք, խնդում), խնդիր, կարկանդակ, կենդանի, հանդէպ (հանդիպիլ, հանդիպում), հանդէս (հանդիսութիւն), հանդարտ, հնագանդ, ճարմանդ, մանաւանդ, մարմանդ, յանդուզն (յանդգնիլ), յանդիմանել, պանդուխտ, սնդիկ, սուրհանդակ, տաղանդ, տենդ, ցնդիլ, քանդակ, քանդել, օժանդակ* եւ այլն: Անշուշտ ասոր հետ պէտք չէ շփոթել թ-ով սկսող բառերէն առաջ եկող ան նախածանցը՝ *անթառամ, անթափանց, անթարթ, անթոյլատրելի, անթիւ* եւ այլն:

Նդ օրէնքին մեջ կը մտնեն.

- **ունդ** վերջածանցը՝ *ծնունդ, սերունդ, սնունդ*.

- **անդր** նախածանցը՝ *անդրադարձ, անդրաշխարհ, անդրշիրիմեան, Անդրկովկաս*.

- **ընդ** նախդիրը նոր հայերենի մեջ իբրև անանց կը գիտակցուի ու կցուած կը գրուի՝ *ընդամենը, ընդառաջ, ընդարձակ, ընդդէմ, ընդերկար, ընդհանուր, ընդմիջտ, մէկընդմիջտ, ընդդաստակ*, կը կազմէ բայեր ու գոյականներ՝ *ընդգծել, ընդգրկել, ընդդիմանալ, ընդդիմութիւն, ընդծովեայ, ընդհարուիլ, ընդհարում, ընդօրինակել* եւ այլն: Ընդ>ըն կայ շատ բառերու մէջ՝ *ընտանի (ընդ տուն), ընկեր (ընդ կեր), ընկճել (ընդ գճել), ընկողմանիլ (ընդ կողմանիլ), ընկալել (ընդ կալել)* եւ այլն: Իբրև նախդիր կը մնայ գրաբարաձեւ կապակցութիւններու մէջ՝ *տէր ընդ քեզ, ընդ որում, ընդ ամենեսեան, ընդ հովանեալ, ընդ ձեզ* եւ այլն:

Ն-էն ետք եկող բառավերջի դ-ն շարք մը բառերու պարագային կը պահէ նախկին ձայնեղութիւնը. հետեւաբար կրնայ շփոթուիլ տ-ին հետ: Նախապէս դ-ով գրուող կարգ մը բառեր ներկայիս կը գրուին տ-ով: Այսպէս՝

- **բանտ**, *բանտապահ, բանտապան, բանտարկել, բանտարկութիւն, բանտախուց.*

- **ժանտ**, *ժանտախտ, ժանտամահ.*

- **լինտ**. հին ձեւն է *լինդ.*

- **կենտ**, *հատուկենտ, կենտանայ.*

- **կղմինտր**, օտար բառ, արեւելահայերը՝ *կղմինդր.*

- **վոնտել**, կը մնայ տ-ով, արեւելահայերէնը՝ *վոնդել:*

- **սանտր/սանր** բառին մէջ արմատական է. արեւելահայերը՝ *սանր:*

Մէկուկէս վանկանի բառերու վերջայանգ նր կապակցութեան մէջ եղած է տ-ի յաւելում. *մանր՝ մանտր, ծանր՝ ծանտր.* արեւելահայերը այս աճական հնչիւնը կը գրեն դ-ով: Բարբառային կը նկատուի:

Ստորեւ դ>տ տառափոխութեան մերժելի քանի մը պարագայ.

- **գինդ/գինտ**՝ օդ.

- **հունդ/հունտ**, առաջացած է *ունդ* արմատէն, ունինք *ընդդէմ.*

- **Հրանդ/Հրանտ.**

- **սանդ/սանտ:**

Պետք է պահել *գինդ, հունդ, Հրանդ, սանդ* տարբերակները եւ ասոնցմէ կազմուած բաղադրութիւնները:

- **Գունդ թէ գունտ:** Հին հայերէնը կը զանազաներ երկու *գունդ*. մէկը՝ «խումբ», իսկ միւսը՝ «կլոր մարմին» իմաստներով: Ասոնք նոյնանուն բառեր էին, նոյնը չէին: «Խումբ» իմաստով բառը միշտ դ-ով կը կազմէ իր բաղադրութիւնները՝ *գնդակ (մեղուներու խումբ), գունդագունդ, հեծելագունդ, գնդասետ, զօրագունդ* եւ այլն: Այս իմաստով երբեք տ-ով չի հանդիպիր: Միւս՝ «գնդաձեւ մարմին» իմաստով բառը դարձեալ դ-ով կը կազմէ իր բաղադրութիւնները՝ *գնդակ, գնդաձեւ, նոր բառեր են երկրագունդ, ձիւնագունդ, գնդասեղ, գնդիկ, ձիւնագնդակ, գնդակահարել, գնդացիր*: Աճառեան կու տայ նաեւ *գունտ* արմատական տարբերակը: «Կլոր մարմին» ընդհանուր իմաստով այս բառերը ներկայիս եւս չունին արտասանական յստակ տարբերակում, անոնցմէ քանի մը բառ կ'արտասանուին տ-ով ու այդպէս ալ կը գրուին՝ *գունտ (խմորի), գունտ ու կլոր, գնտել (խմորը), գնտլիկ (գիրուկ)*: *Երկրագունտ/երկրագունդ* բառը նախընտրելի է գրել դ-ով:

Դ>տ փոփոխութեան ուրիշ մասնակի պարագայ մըն ալ ունի *այդ* ցուցական դերանունը, որուն արմատն է դ ցուցական յօդը: Գոյականաբար գործածուելու պարագային անկէ ունինք *ատ, ատի* կամ *ատիկա*, որմէ՝ *ատոր, ատկէ, ատով* հոլովական ձեւերը, *ատոնք, ատոնց, ատոնցմէ, ատոնցմով* յոգնակիները: Արդէն սխալագրութիւն կը նկատուին *այդկէ* կամ *ադկէ* ձեւերը:

Ն-էն ետք թ ունին.

- *Ընթացք (ընթանալ, ընթացիկ, ընթացաւարտ, ճեպընթաց, վայրընթաց), ընթեր (քով՝ ընթերակայ, վերջընթեր), ընթերցում (ընթերննելի, ընթերցանութիւն, ընթերցասէր, ընթերցասրահ, ընթերցող, ընթերցուած), ընթրել (ընթրիք), կանթ (կաթսայի կամ որեւէ ամանի ականջ, կոթ), կանթեղ*:

- **Ենթ** նախածանցը. *ենթաբաժին, ենթագիտակցութիւն, ենթազուլուխ, ենթադրել, ենթաժողով, ենթախորագիր, ենթակայ, ենթահող, ենթամնայ, ենթասպայ, ենթարկել* եւ այլն:

- **Խենթ**, ունի նաեւ *խենդ* տարբերակը: Այժմ գրեթէ ընդհանրացած է թ-ով տարբերակը՝ *խենթանալ, խենթանոց, խենթութիւն, խենթուկ, խենթուլիկ*: Նոյնը ըրած են արեւելահայերը:

- **Թաղանթ**, ունի նաեւ *թաղանդ* տարբերակը, որ կայ նաեւ բաղադրութիւններու մէջ: Թ-ով տարբերակը արդէն տիրական է՝ *կուսաթաղանթ, ակնաթաղանթ* եւ այլն:

- **Շանթ**, գրուած է նաեւ *շանդ*: Թ-ով տարբերակը տիրական է՝ *շանթարգել, շանթահար, շանթահարել* եւ այլն:

74.- Բռ օրէնք

Օրինաչափական է՝ *արդ* (հիմա՝ *արդի, արդիական*), *արդ* (ձեւ՝ *կորնթարդ, արդուկ*), *արդար, բարդ, բերդ, բուրդ, դրդել, երդիք, երդում, թակարդ, խարդախ, խլուրդ, կարդալ, մարդ, յարդ, յորդ, ջարդ, վրդովիլ, սարդ, սրդողիլ* եւ այլն:

Թակարդ. մերժել *թակարթ* տարբերակը:

Ձեռն թէ **զերթ**՝ «պէս, նման, իբր». մեր բառարանները երկուքն ալ կը հրամցնեն: Հինէն եկող գուգաձեւութիւն է: *Ձի արդ՝ զհարդ*՝ բաղադրիչներու ձուլումը ըլլալով նախընտրելի է գործածել *զերդ* բուն ձեւը:

Բռ օրէնքին մէջ կը մտնեն քանի մը վերջածանցներ.

- **արդ**. *գմբեթարդ, խորանարդ, կորնթարդ*.

- **ուրդ**. *աճուրդ, արձակուրդ* (արձակել բայէն), *ժողովուրդ, խառնուրդ, խորհուրդ, յագուրդ*.

- **որդ**՝ *ճամբորդ, որսորդ, վարորդ, քառորդ...*

- **բորդ, երորդ**. *երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ...*

Բ-էն ետք թ ունին երկար շարք մը բառեր՝ *Արթիկ, արթուն* (արթնութիւն, արթննալ, զարթնիլ, զարթօնք), *երթ* (երթալ, երթողի, երթելեկ), *զուարթ* (զուարթուն, զուարթանալ), *թարթել* (թարթիչ), *թերթ* (թերթատել, օրաթերթ), *լուրթ, խորթ* (խորթու-

թիւն), խրթին, կարթ, կիրթ (կրթութիւն, կրթարան, անկիրթ), հարթ (հարթակ, հարթութիւն), հորթ, մերթ, շողքորթ, շուրթ, որթ, սաղարթ, փարթամ, փերթ, փարթ (փորի ճարպ) եւ այլն:

- **Սաղարթ**, գրուած է նաեւ *սաղարդ*: Բաղադրութիւնները՝ *սաղարթախիտ, ոսկեսաղարթ, գեղասաղարթ* եւ այլն:

- **Քերթել**, միշտ թ՝ «կաշին հանել»: Նոյնէն ունինք *քերթող, քերթուած*՝ իբրեւ բանաստեղծ եւ բանաստեղծութիւն:

- **Շողքորթ**, գրուած է նաեւ *շողքորդ*: Բաղադրութիւնները՝ *շողքորթել, շողքորթութիւն*:

- **Խորտուբորտ**. Աճառեան *խորտաբորտ* գլխաբառը կ'ուղղէ *խորթ* արմատին «կոշտ, անհարթ» առումին, ու կու տայ *խորթութորթ*: Արեւելահայերը կը գրեն՝ *խորդութորդ, խորդ*՝ «խոչ, խուք» արմատէն: *Խորտաբորտ* բառի ա-ն ընկալուած է իբրեւ յօդակապ: *Խորտուբորտ* բառը կը թուի կրկնաւոր ըլլալ՝ երկրորդ բաղադրիչի հնչիւնափոխութեամբ, ինչպէս՝ ծուռումուռ:

75.- Ղթ օրէնք

Օրինաչափական է՝ *աղթարք, գաղթ (գաղթական, գաղթել, արտագաղթ), թուղթ (թղթատար, թղթակից, թղթապանակ, ամսաթերթ), մաղթել, յաղթել (յաղթանակ), շղթայ*:

Բացառութիւններ են *խեղդել (խեղդամահ, գայլխեղդ), յղդդող (անյողդողդ)*:

76.- Զդ օրէնք

Օրինաչափական է՝ *ազդ (ազդակ, ազդարար), ազդը, կազդոյր (կազդուրիլ, կազդուրիչ), Արտաւազդ, Հրագդան, Որմիզդ, Վարագդատ* եւ այլն, մինչ ս կու գայ տ եւ թ գիրերէն առաջ, ինչպէս՝ *ստեղծել, աստղ, լաստ, համեստ, գովեստ, Ստեփան, սթափիլ* եւ այլն, ուր *սթ* եւ *ստ* կապակցութիւնները հնչիւնապէս անշփոթելի են:

77.- Թ գիրը ձայնաւորներէ եւ երկհնչիւններէ ետք

Ա-էն ետք՝ *ակաթ, արծաթ, գագաթ, գաւաթ, երկաթ, թաթ, լաթ, կաթ, կղկաթ, շաբաթ, ուրբաթ, սաթ, փաթաթ(ել)* եւ այլն: Դ ունին քանի մը բառ՝ *Ադամ* (ադամաթուզ, ադամորդի), *ադամանդ, բադ, Ադդէ, Ադիկ, խադ* (երկսայրի սուր):

Այ-էն ետք՝ *գայթ, ժայթքիլ, խայթ, կայթ, հայթայթել, ճայթ, ճառագայթ, մայթ, պայթ(իւն)* եւ այլն: Միակ բացառութիւնը՝ *այդ* ցուցականը:

Ե-էն ետք՝ *արեթ, Բեթել, Բեթդեհեմ, Գեթսեմանի, խեթ, սեթեւեթ, փաթեթ, եթէ, անհեթեթ*: Բացառութիւն է՝ *եղեմ*:

Է-էն ետք՝ *գէթ, գմբէթ, Յարէթ, Սէթ, Նագարէթ* եւ այլն:

Ի-էն ետք՝ *առիթ, բիլթ, գաւիթ, գենիթ, Լիլիթ, խիթ, խրճիթ, կիթ, կնճիթ, հիթիթ, շիթ, շիշ, սամիթ, վիթ, փիթիթ, քիթ, քրիթ* եւ այլն:

Իւ-էն ետք՝ *դիւթ, հիւթ, ձիւթ, նիւթ*:

Ո-էն ետք՝ *խոթել, կոթ, շոթ, շփոթ, չոթ, փոթ, քոթոթ* եւ այլն: Դ ունին՝ *Ողիսեւս, ողիսական*:

Ու-էն ետք՝ *ակութ, անութ, բութ, գաղութ, գութ, թութ, խանութ, խութ, կութ, մութ, մոութ, յուոութ, ջութ, փութ* եւ այլն: Ուրիւն ածանցը՝ *քաջութիւն, լաւութիւն*:

Ոյ-էն ետք՝ *անքոյթ, բոյթ, ճկոյթ, մոյթ, փոյթ* եւ այլն: Ոյթ ածանցը՝ *հասոյթ, համոյթ, ճաշկերոյթ* եւ այլն:

Օ-էն ետք՝ *աղօթ(ք), ամօթ, անօթ, բօթ, եօթ, ծանօթ, տօթ, օթ (օթեակ, օթոց, օթեւան)* եւ այլն: Դ ունին *օդ, զօդ, յօդ, վառօդ*:

- **Անհեթեթ**, նոյնքան հին է *անհեղեղ* տարբերակը: Ներկայիս լայն տարածում ունի *անհեթեթ* տարբերակը:

- **Ծորիթ**, աւանդուած է նաեւ *ծորիդ*, որ որդեգրած են արեւելահայերը: Աղայեան ունի նաեւ *ծորիթ*: Պէտք է թ մնայ, քանի որ ձայնաւորէ մը ետք բառավերջին ընդհանրապէս թ է՝ *ծորիթ*:

- **Բացօթեայ/բացօղեայ**. *բացօթեայ* բարդածանց բառ է՝ *բացօթեայ*՝ «անծածկ տեղի մէջ (իջեւանել)»: Հին հայերէնի մէջ կար *օթել*՝ «գիշերել, գիշերը մնալ», ապրող բառեր են *օթեւան*՝ «գիշերելու տեղ», *օթեւանիլ, օթեակ, օթոց*: Նոր բառեր են *գիշերօթիկ*

եւ *ցերեկօթիկ*: *Բացօդեայ* ձեր սխալագրութիւն պէտք է համարել:

78.- Շտ օրէնք

Օրինաչափական է՝ *ամբարիշտ, անշուշտ, աշտարակ, աշտե, գիշտ, երածիշտ, կոշտ, հաշտ, հրածէշտ, հրեշտակ, յափշտակել, միշտ, նածիշտ, շէշտ, պաշտպանել, պաշտել, պաշտօն, պարկէշտ, վաշտ, վիշտ, տաշտ* եւ այլն:

- *Ճիշդ՝ ճշդել, ճշդապահ, ճշդում*: Միակ բացառութիւնը: Արեւելահայերը կը գրեն *ճիշտ*:

79.- Ժդ օրէնք

Օրինաչափական է՝ *Ածղահակ, ածղահայ, գծղմնելի* (գագրելի, նողկալի), *գծղմնիլ* (բարկանալ, քէն պահել), *խուծղուծ, յսծղութիւն, նծղեհ* (պանդուխտ):

80.- Դ, Թ (մասամբ՝ տ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ԲԱԽՏ (>բախտաւոր)	ԲԱՂԴատել (>բաղդատութիւն)
ԳՏԱԿ (>գիտարար, գտնել)	ԳԴԱԿ (գլխարկ)
ԴԱԴԱԸ (հանգիստ. >դադրիլ)	ԹԱԹԱԸ (ժողովուրդ մը)
	ԹԱԹԱՌ (պտուտահողմ)
ԴԱՆԱԿ (>դանակահար)	ԹԱՆԱՔ (մելան)
ԴԱՌՆ (լեղի. > դառնութիւն)	ԹԱՌ (երածշտական գործիք.
ԴԱԸ (100 տարի. > դարավերջ)	>թառահար)
ԴԱՍ (շարք.>դասել. դասարան)	ԹԱՍ (զուայթ)
ԴԱԸԶ (> դարձնել, անդարձ)	ապամԹԱԸՅ (կէտադրական նշան)
ԴԱԻ (> դաւաճան, դաւադիր)	ԹԱԻ (հաստ ձայն կամ մագ. >
	թաւամագ)
ԴԱՓ (երածշտական գործիք)	ԹԱՓ (մղիչ ուծ.> թափահարել.
	թափել. բեռնաթափ)
ԴԵՂ (>դեղարան, դեղագործ)	ԹԵՂ (կալի դէզ)
ԴԵՌ (տակաւին. > դեռատի)	ԹԵՐ (կողմ)
ԴԵՐ (պաշտօն. > դերասան)	
ԴԵՐԻ (դեր՝ սեռական հոլով)	ԹԵՐԻ (պակաս. > թերաւարտ)

ԴԵԻ (> դիւահար, դիւահան)	ԹԵԻ (> թեւածել, թեւաբաց)
ԴԵՌԵԻՍ (տակաւին)	ԹԵՐԵԻՍ (գուցել)
ԴԷՄ (>դիմաց, դիմակ)	ԹԵՄ (եպիսկոպոսական շրջան)
ԴԷԶ (կոյտ. > դիզել)	ԹԵԶ (ուսումնասիրութիւն)
ԴԺՈՒԱՐ (>դժուարանալ)	ԹՇՈՒԱՌ (խեղճ. > թշուառական)
ԴԻ (կողմ. >մէկդի)- դիակ. >դիահերձում)	ԹԻ (գործիք մը. >թիավարել, թիակ)
ԴԻԱԿ (մեռած մարմին)	ԹԻԱԿ (փոքր թի)
ԴԻՂ (դնել՝ հրամայականը)	ԹԻՌ (թռչիլ բառին արմատը)
ԴԻԻՐ (>դիւրին, դիւրահաճ)	ԹԻԻՐ (սխալ, ծուռ.> թիւրիմացութիւն)
ԴՈՂ (սարսուռ. > դողդղալ)	ԹՈՂ (թողող բային հրմ.ը)
ԴՈՅԼ (աման մը)	ԹՈՅԼ (մեղկ, ծոյլ. > թուլութիւն, թոյլատրել)
ԴՈՅՐ (հանգիստ. < կազդոյր)	ԹՈՅՐ (գոյն. > կաթնաթոյր)
ԴՈՒՌ (>դռնապան, դրկից)	ԹՈՒՐ (տուր)
ԴՈՒՐ (գործիք մը)	
ԴՈՒՔ (եզակին՝ դուն)	ԹՈՒՔ (լորձունք. > թքել)

81.- Ծ, ց, ձ շարքը

Ծ, ց, ձ շարքին մէջ ծ գիրը, իբրեւ ձայնեղ, հնչիւնապէս անշփոթելի կը մնայ բառասկզբին, բառին մէջ՝ ձայնաւորներէ առաջ ու վերջ՝ *ծաղիկ, ծեր, ծուռ, ծոռ, ծածուկ, ածու, մածուն, կայծ, ծածկ, կսկիծ, ծեծ*, բաղաձայններէ ետք՝ *գործ, կարծր, արծիւ, Արծրունի, եղծել, կեղծ, ցնծութիւն*:

Կիլիկեան բաղաձայնական համակարգ ժառանգած արեւմտահայը կը զանազանէ ձ խուլը եւ ց շնչեղը՝ *ձիր - ցիր*, իսկ իլլագուրկ համակարգ ժառանգածը անխուսափելի շփոթի մէջ պիտի իյնայ, որովհետեւ երկուքն ալ կ'արտասանէ իբրեւ շնչեղ: Կան օրինաչափական պարագաներ:

82.- Նձ օրէնք

Օրինաչափական Է՝ *անձ (անձնագիր, անձնական), անձալ (քարանձալ), անձուկ (անձկութիւն), անձրեւ, բրինձ, գանձ*

(գանձանակ), թախանձել, թանձր (թանձրանալ), ինձ (ընձա-
ռիծ, ընձուղտ), խանձել, հունձք (հնձել), ձանձրոյթ, յանձնել
(յանձնարարել), նախանձ, պղինձ, պապանձիլ, սանձ, ստանձ-
նել, տանձ եւ այլն:

Ես դերանունին *ինձմէ* եւ *ինձմով* հոլովածներուն կը հա-
կադրուի *ինձի* (նախկին՝ ինձ) հոլովածելը:

Ն-էն ետք ց ունին *առանց, զանց, յանցանք, անց(նիլ)* բա-
ռերը եւ անոնցմով կազմուած բաղադրութիւնները միայն:

- Զանազանել *անձնագիր* (անձնաթուղթ) եւ *անցագիր* (վի-
զա) բառերը:

83.- Բձ օրէնք

Օրինաչափական է՝ *արձագանգ, արձան, արձակ* (*արձա-
կուրդ, յարձակիլ, նախայարձակ*), *դերձան, լորձունք, խուրձ,
հանդերձ* (*հանդերձարան, հանդերձանք, գրահանդերձ*), *ձորձ,
մարձում, մերձ, (մերձակայ), յորձանք, որձ* (*որձելէզ*), *ուղերձ,
վարձք* (*վարձել, վարձու*), *վրձին, փորձ* (*փորձանք, փորձութիւն*)
եւ այլն: *Դառնալ* չէզոք բայը կը սեռի *դարձնել* ներգործական
բայէն, արմատը՝ *դարձ*, որմէ ունինք *դարձեալ, վերադարձ, հո-
գեդարձ, դարձդարձիկ* եւ այլն. *բառնալ* (*ամբառնալ, համբառ-
նալ*) հին բայերուն արմատն է *բարձ*, որմէ ունինք *բարձունք,
համբարձում, մանկաբարձ, վերամբարձ, ամբարձիչ, հոգաբար-
ձու* եւ այլն, *բարձր* ձեւէն՝ *բարձրութիւն, բարձրանալ, բարձրա-
դիր. բերձ* ձեւէն՝ *բարձրաբերձ* եւ այլն:

- Զանազանել *քուրձ* (մազէ զգեստ կամ տոպրակ) եւ *քուրջ*
(ցնցոտի, լաթի կտոր) բառերը:

Բ-էն ետք ց ունինք *սպաթարց, Արցախ, հարց* (*հարցնել,
հարցում, հարցարան, հարցասէր*), *ուրց, մուրց* (*մրցանակ,
մրցիլ, մրցում, մրցանակաբաշխութիւն*), *պախուրց, տրցակ*: *Ար-
ցունք* բառը *արտասուք* բառին ամփոփումն է *արտասուք>
արտասուք>արցունք* զարգացումով, ուր կայ տս>ց հնչիւնափո-
խութիւն եւ ն-ի յաւելում:

84.- Ղձ օրէնք

Օրինաչափական է՝ *ակաղձուն, Աղձնիք, ատաղձ, բաղձալ (բաղձանք), գեղձ (նշագեղձ), գուղձ, դեղձ, դեղձանիկ, իղձ (ըղձալ), հեղձամահ (հեղձամղձուկ, ջրահեղձ), մաղձ, մղձաւանջ, փղձկիլ* եւ այլն:

Ղ-էն ետք ց ունին *քաղց(ածութիւն), քաղցր, աղցան (աղցան), յեղց (լեցուն, առլի)* եւ անոնցմով բաղադրեալ բառերը:

85.- Յն օրէնք

Օրինաչափական է բառին սկիզբը՝ *ցնկնիլ, ցնցոտի, ցնցուղ, ցնցել, ցնորք (ցնորիլ, ցնորական, խելացնոր), ցնդիլ, ցնծալ (ցնծութիւն)*:

Չնծաղիկ բառը այլ կառոյց ունի՝ ձիւն-ծաղիկ:

86.- Չայնաւորներէ եւ երկինչիւններէ ետք Ց

Օրինաչափական է՝ *այց, աքացի, բաց, բայց, բոց, գոց, երէց, թաց, լաց, լոյց (ճրագալոյց), լուցկի, խեցի, խոց, խուց, կացութիւն, կից, հաց, հայց, յեցակ, նեցուկ, վեց, տարեց, ցեց, ցից, ցոյց* եւ այլն:

Չայնաւորէ ետք ձ կայ միայն *օձ* բառին մէջ:

- **Գձուձ**, գրուած է նաեւ *գծուծ*: Նոր գրական հայերէնին մէջ լայն տարածում կը գտնէ ձ-ով տարբերակը, սակայն ներկայիս արեւելահայերը շրջադարձ կատարած են դէպի *գծուծ*-ը: Կը պահենք ձ-ով ձերը:

- **Կեղծամ** (կեղծ-ծամ) բառը կազմուած է կրկնակ ծ-երէն մէկուն զեղչումով:

87.- Յ-ն ածանցներու մէջ

Վերջածանցներու մէջ միայն ց կը գրուի (եւ ոչ ձ) ինչպէս՝

- **անց**. բացառականի *էն* մասնիկի իմաստով մակբայներ՝ *սրտանց, մէկանց, հեռուանց*՝ սիրտէն, մէկէն, հեռուէն.

- **անոց/նոց**. տեղ ցոյց գոյականներ՝ *հիւանդանոց, խենթանոց, մեղրանոց, ուսուցչանոց, հաւնոց, յարդանոց*, միաւորներ

ցոյց տուող՝ *մէկնոց, տասնոց, քսաննոց*, հազուատեղէն՝ *վզնոց, գոզնոց* ...

- **եցի, ացի, ցի**. տեղացիութիւն ցոյց տուող անուններ, *Լոռի՝ լոռեցի, խոյեցի, գիւղացի, տեղացի, քաղաքացի, լեռնցի, քեսապցի*, ածականներ ու մակբայներ՝ *բառացի, բերանացի, իսելացի, մտացի*...

- **ացու, ցու**. *փեսացու, տիրացու, հարսնցու, սերմնացու, հազուստցու*.

- **ացք**. *հայեացք*.

- **եցիկ**. *ընկեցիկ, բարեկեցիկ, հպանցիկ*.

- **եց**. *ընկեց* բայաձեւին մէջ՝ *գահընկեց, խորտընկեց, քարընկեց*.

- **ոյց**. գոյականներ՝ *հանգոյց, զեկոյց, մատոյց*.

- **ոց**. բնաձայնութիւններ *բզզոց, գոռոց, շրիկոց, ծածոց*. տեղ՝ *դպրոց, թաքստոց, հնոց, դարբնոց, ամրոց, գզրոց*. գործիքներ՝ *խարտոց, յօտոց, փքոց*...

- **ուց**. յոգնակի բացառական հոլովի իմաստով մակբայներ՝ *հնուց* (հին ժամանակներէն ի վեր), *մանկուց, փոքրուց*...

- **ուց(ք)**. *այրուցք, սերուցք, մոլուցք, այտուց*.

Ծ-ն հանդէս կու գայ ածանցներու կազմութեան մէջ, բայց դժուարութիւն չի յարուցեր.

- **ածոյ**. *հաւաքածոյ, ժողովածոյ, հանածոյ, տպածոյ* եւ այլն. ստոնցմէ որոշ գոյականներ կրնան ունենալ **ածու** ածանցը՝ *հաւաքածու, ժողովածու*.

- **ծու**. *թափծու, շինծու*.

- **ուածք**. բայահիմքերէ գոյականներ կը կազմէ՝ *պատմուածք, կոտորուածք, յօրինուածք, սանտրուածք, հազուածք*...

- **ած (ացած, եցած)**. իբրեւ յարակատար դերբայի վերջաւորութիւն. *գրել՝ գրած, գրուած, խօսիլ՝ խօսած, խօսուած, լողալ՝ լողացած, մտնել՝ մտած, հասնիլ՝ հասած, մօտենալ՝ մօտեցած, հեռանալ՝ հեռացած, ճանչնալ՝ ճանչցած*:

88.- Ց-ն քերականական մասնիկներու մէջ

Ց-ն հին հայերէնի մէջ ք յոգնակերտ մասնիկին յարացուցային տարբերակն է, կը յայտնուի սեռական-տրական հոլովածէներուն մէջ: Նոյն օրինաչափութիւնը մասամբ կը գործէ արդի հայերէնի մէջ հետեւեալ պարագաներուն.

ա.- Դերանուններուն մէջ ոնք/ոնց, ենք/ենց, անք/անց փոփոխութեամբ. *որոնք՝ որոնց, որոնցմէ, որոնցմով. անոնք՝ անոնց, անոնցմէ, անոնցմով. իրենք՝ իրենց, իրենցմէ, իրենցմով, ոմանք՝ ոմանց:*

բ.- *Տղաք՝ տղոց, տղոցմէ, տղոցմով. մարդիկ՝ մարդոց, մարդոցմէ, մարդոցմով* յոգնակիներուն մէջ: Նոյն ձեւով կարգ մը բառերու յոգնակի սեռականը *աց, անց, ոց, ից* վերջաւորութիւններով կը գտնենք իբրեւ քարացած ձեւեր կամ հնաբանութիւն՝ որոշ պարագաներու, ինչպէս՝ *ծնողաց հանդէս, չարեաց փոքրագոյնը, տիկնանց մասնաճիւղ, արանց եւ կանանց, աղջկանց վարժարան, օրհորդաց միութիւն, ուսուցչաց եւ պաշտօնէից ժողով, թարգմանչաց սօն, կենաց* (կէանքին) *ծառ, հարսանեաց խնձոյք, յարգանաց հաւաստիքը, եպիսկոպոսաց եւ վարդապետաց, ռուսաց եւ թրքաց, արքայից (արքաներու) արքայ, հրէից* (հրեաներու) *գատիկ, քրիստոնէից* (քրիստոնեաներու) *սօն, հայոց պատմութիւն, Գիրք Ծննդոց, հնոց եւ նորոց* (հիներու եւ նորերու) եւ այլն:

գ.- *Ութին* ածանցով գոյականներու յոգնակի սեռական-տրական ձեւին մէջ իբրեւ հնաձեւ տարբերակ. *իշխանութիւն՝ իշխանութիւններու/իշխանութեանց, հաստատութիւն՝ հաստատութիւններու/հաստատութեանց, մոլութիւն՝ մոլութիւններու/մոլութեանց* եւ այլն:

դ.- Հաւաքական անուններ կազմող անք/անց, ենք/ենց, ոնք/ոնց վերջաւորութիւններուն մէջ. *Վարդանանք՝ Վարդանանց, Սարգիսենք՝ Սարգիսենց, Մարկոսենք՝ Մարկոսենց, դրացիենք՝ դրացիենց, Ռաֆֆիենք՝ Ռաֆֆիենց, մերոնք՝ մերոնց* եւ այլն:

Ց կայ նաեւ բայական մասնիկներու մէջ.

ա.- *Եցնել, ացնել* կամ *ցնել* պատճառական բայերու վերջա-
տրուութեան մէջ. *քալել, քալեցնել, մտնել, մտցնել, խօսիլ, խօ-
սեցնել, հասնիլ, հասցնել, սահիլ, սահեցնել, փախչիլ, փախ-
ցնել, նստիլ, նստեցնել, լալ, լացնել, եռալ, եռացնել, քնանալ,
քնացնել, մօտենալ, մօտեցնել* եւ այլն:

բ.- Բայական որոշ խումբերու խոնարհման անցեալ կա-
տարեալի ցոյական հիմքին մէջ (ց, աց, եց). *հեռանալ, հեռ-աց-
ող, հեռ-աց-ած, ճանչնալ, ճանչ-ց-ող, ճանչ-ց-ած, ճանչ-ց-էք,
վազել, վազ-եց-ի, վազ-եց-իր, վազ-եց, վազ-եց-էք, խօսիլ, խօս-
եց-այ, խօս-եց-ար, խօս-եց-աւ, խօս-եց-էք, քալեցնել, քալեց-ուց-
ի, քալեց-ուց-իր, քալեց-ուց, քալեց-ուց-էք* եւ այլն:

89.- Ձ եւ ց (մասամբ՝ ծ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ԱնՁ (>անձնական, յանձնել)	ԱնՅ (>անցուկ, անցնիլ, միջանցք, անցուղի)
ԱՆՁՈՒԿ (> անձկութիւն)	ԱՆՅՈՒԿ (անցած)
ԱՆՁՆԱԳԻՐ (անձնաթուղթ)	ԱՆՅԱԳԻՐ (վիզա)
ՁԱԳ (նորածին. >ձագուկ)	ՅԱՔ (տափակցնող գործիք. > ցաքատ, ցաքուցրիւ)
ՁԱԽ (>ձախլիկ, ձախորդ)	ՅԱԽ (ճիւղ. > ցախաւել, ցախապատ)
ՁԱՌ (ծուռ, խոժոռ՝ դէմք)	ՅԱՐ (Ռուսիոյ կայսր)
ՁԱՐ (ձիու պոչին մազը)	
ՁԻ (> ձիաւոր, վագերաձի)	ՅԻ (ածանց՝ լեռնցի, երեւանցի)
ՁԻՐ(ք) (շնորհք. > ձրի, շնորհաձիք)	ՅԻՐ (> ցրուել, ցանցիր, ցիրուցան)
ՁՈՂ (բարակ երկար փայտ)	ՅՈՒ (վայրի էջ)
ՁՈՅԼ (>ձուլարան. ձուլել)	ՅՕՂ (շաղ. > ցողուել)
ՅԱՆՁՆԵԼ (>յանձնառու)	ՅՈՒԼ (կենդանի մը. > ցլամարտ)
(շնչա)ՀԵՂՁ (հեղձամահ)	ՅԱՆՅանք(>յանցատր, յանցագործ)
ՔՈՒՐՁ (մազէ տոպրակ)	ՅԵՂՅ (լէցուն)
	ՔՈՒՐՁ (ցնցոտի կամ լաթի կտոր)

90.- Ճ, ջ, չ շարքը

Ճ, ջ, չ շարքին մէջ ճ ձայնեղը հնչիւնապէս անշփոթելի կը
մնայ բառասկզբին, բառին մէջ՝ ձայնաւորներէ առաջ ու վերջ՝

ճառ, ճեմարան, ճամբայ, ճճի, բաճկոն, մահիճ, գաճ, կալիճ, մաճ, բաղաձայններէ ետք՝ ճանճ, կարճ, պերճ, նաեւ նոր տառադարձութիւններու մէջ՝ ճեմմա, ճորճ, ճան, ճիւմի, ճագ, ճաքարթա: Հին հայերէնի եւ արեւելահայերէնի մէջ վերջին շարքի բառերը պիտի տառադարձուէին ջ-ով: Նկատել պէտք է, որ շարք մը արեւելեան բառեր գրական արեւմտահայերէնի մէջ տեղ գտած են արեւելահայ տառադարձութեամբ՝ *ջան, ջատու, ջահել-ջիւան՝ ճան, ճատու, ճահել-ճիւան* տարբերակներու կողքին, թէեւ այս պարագային արեւելահայերէնի հետ համեմատած ստեղծուած է արտասանական տարբերութիւն, այսինքն *ջան* բառը գրութեան այս ձեւով տարբեր կ'արտասանուի արեւելահայոյ եւ արեւմտահայոյ կողմէ:

Գիլիկեան բաղաձայնական համակարգ ժառանգած արեւմտահայը կը գանազանէ ջ խուլը եւ չ շնչեղը՝ *ջորի – չորի* (*չորի*ն սեռականը), իսկ խլագուրկ համակարգ ժառանգածը անխուսափելի շփոթի մէջ պիտի իյնայ, որովհետեւ երկուքն ալ կ'արտասանէ իբրեւ շնչեղ: Կան օրինաչափական պարագաներ:

91.- Բջ օրէնք

Օրինաչափական է՝ *անուրջ (անրջանք, անրջել), արջ, արջառ, արջասպ, բաղարջ, գաղջ, Դերջան, երջանիկ (երջանկութիւն, երջանկանալ), լուրջ, կամուրջ (կամրջընկէց), հաղարջ, մորջ, մրջին, յորջորջել, շուրջ (շրջապատ, շրջակայք, շրջան), որջ, վերջ (վերջանալ), քուրջ* եւ այլն:

Բ-էն ետք չ ունին *փարչ, չարչի, տարչին* օտար բառերը: *Չարչարել* բայը *չար* բառի կրկնաւորն է: Միւս պարագաները ձայնաւորի կորուստով կը բացատրուին. *վարիչ՝ վարչութիւն, ոսկերիչ՝ ոսկերչութիւն:*

92.- Նջ օրէնք

Օրինաչափական է՝ *եղինջ, երինջ, Երնջակ, լանջ, խրխունջ, խոնջայլ, մունջ (մնջախաղ), նինջ (ննջարան, ննջել),*

նարինջ, ջինջ (ջնջել), տանջանք (տանջել, յոգնատանջ), փունջ (փնջել) եւ այլն:

- **Խնջոյք/խնճոյք.** արեւելահայերը որդեգրած են ջ-ով տարբերակը: Թելադրելի է նոյնը ընել ու վերադառնալ ընդհանուր օրինաչափութեան:

Խրխինջ (խրխնջել, խրխնջին), վրինջ (վրնջել, վրնջին), մրմունջ (մրմնջել, մրմնջին), տրտունջ (տնտնջալ), շրշունջ (շրշնջել), յօրանջ (յօրանջել) բնաձայնական բառերուն համար օրինաչափութեան է ը եւ ջ ածանցներուն ներկայութիւնը՝ ի հակադրութիւն միւս բնաձայնութիւններուն, որոնք ունին նշ, միայն չ կամ ո եւ չ միասնաբար, ինչպէս *գանջ (գանջել, բացագանջել), թանջել (հեւալ), կանջ (կանջել, բացականջել), շունջ (շնջել, շնչասպառ), հունջ (հնչին, հնչում), գոջ (գոջել, գոչին), կոջ (կոջել, կոչունք), կարկաչել (կարկաչին), ճիջ, շայ, շառայ (շայել, շառայել), հաչել (հառայել), հառայ (հառայանք, հառայել), բառայ (բառայել), գոինջ (գոնջել, գոնչին), թառանջ (ցաւի հեծեծանք), խոինջ (խոնջել, խոնչին), կոինջ (կոնջել, կոչին), ճոինջ (ճոնջել, ճոնչին), մոունջ (մոնջել, մոնչին), շոինջ (շոնջել, շոնչին), փոնջել:* Միւս բնաձայնութիւններուն մէջ եւս տիրական են չ-ն եւ ո-ն առանձնաբար, ինչպէս՝ *կչկչալ, պոռչրտալ, պոռալ, գոռալ, փոնգտալ, փոշտալ:*

- **Կարկաչ/կարկաջ.** ընդհանուր օրինաչափութեան մէջ մնալու համար պահել չ-ով տարբերակը, նաեւ՝ *կարկաչել, կարկաչուն:*

- Ոչ բնաձայնական բառերէն ն-էն ետք չ ունին *գնչու, դունչ, մինչ, ունչ* (դունչ, քիթ), *ընչացք* (պելս), *թանչ* (աղիքի խանգարում), *ինչ* (*ընչասէր, ոչինչ, ոչնչանալ*), *մանչ, պինչ* (քիթի ծակերը), *տենչ* (*տենչալ, տենչանք*):

- Չանազանել *հաջել* (շան հաջոցը) եւ *հաչել* (հառայել) բառերը:

- Չանազանել *խառայ* եւ *հառայ* բառերը:

- Չանազանել *չնչին* (ոչինչ՝ չինչ-ին՝ աննշան) ու *ջնջան* (ջինջ-ան՝ սրբիչ) բառերը:

93.- Դջ օրէնք

Օրինաչափական է՝ *աղջամուղջ, աղջիկ, բղջախոհ, գաղջ, գեղջուկ (գեղջկական), եղջիւր (եղջերու, եղջերափող, ոնգեղջիւր), գղջալ, շեղջ, ողջ (առողջ, առողջանալ, առողջութիւն, ողջոյն), չղջիկ* եւ այլն:

Ղ-էն ետք չ ունի միայն *գեղջ (գեղջել, գեղջում)*:

94.- Չ եւ ջ գիրերը ձայնաւորներէն ետք

Ձայնաւորներէն ետք չ-ն աւելի կը հանդիպի քան ջ-ն: Չ ունինք *աջք, բառայ, գոչ, լաչակ, խաս, խեչափառ, խոչ (խոչընդոտ), կարկաչ, կաչաղակ, կանաչ, կեչի, կուչ գալ, կոչ, հառայ, ճանաչ, ճիչ, չամիչ, չեչ (չերաքար), պաչել, պոչ, Վաչէ, փուչիկ, քոչուոր* եւ այլն. ջ ունին *աջ, յառաջ, էջ, հաջել, մարմաջ, մէջ, ջոջ, քաջ* եւ այլն:

Փուճ՝ «դատարկ, սին», ատկէ ունինք *փճանալ, փճացում*: Աւանդուած է նաեւ *փուչ* ձեւով, արեւելահայերը որդեգրած են վերջինը, նոյնացնելով *փչել* ու փուչիկ, *փչոց* բառերու արմատին հետ: Այս երկու շարքերը հնչիւնապէս տարբեր են արեւմտահայերէնի մէջ: Օրինական պատճառ ալ չկայ ճ-ն չ-ով փոխարինելու:

95.- Չ եւ ջ գիրերը ածանցներու մէջ

Միակ պարագան, ուր ջ-ն հանդէս կու գայ իբրեւ երկրորդական ձեւոյթ՝ *ոջ* հոլովումն է: Ոջ-ը սեռական հոլովի մասնիկ է. անոր հիմքին վրայ կը կազմուին գոյականին յաջորդ հոլովները. *քոյր-քրոջ-քրոջմէ-քրոջմով (քոյրով)*:

Ոջ հոլովումին կ'ենթարկուին *տէր, ընկեր, տագր, քոյր, տալ, աներ, կեսուր, կին* եւ ասոնցմով կազմուած բարդ բառերը. *տիկին՝ տիկնոջ, հորաքոյր՝ հորաքրոջ, դասընկեր՝ դասընկերոջ, հողատէր՝ հողատիրոջ* եւ այլն:

Մնացեալ բոլոր ածանցներուն եւ մասնիկներուն մէջ միայն չ կը գրուի (եւ ոչ ջ):

Ածանցներն են.

- **իչ.** բայսահիմքերէ կը կազմէ ածականներ ու գոյականներ՝ *խանգարիչ, յուզիչ, թարգմանիչ, արդուկիչ, գրիչ...*

- **ուչ.** վայելուչ, տեսուչ, ընկալուչ.

- **չեայ.** առհաւատչեայ.

- **չեք** (տե՛ս էջ 29).

- **չ ժխտական նախածանցը.** *չտես, չբեր, չունենոր, չաստուած, չկամ* (չուզող).

- **չ սոսկածանցը.** չ սոսկածանցը արեւմտահայերէնի մէջ կորսուելու վիճակ մը ունի. ներկայ է միայն *փախչիլ, թոշիլ*, մասամբ նաեւ *փչիլ* ու *կպչիլ* բայերուն մէջ, որոնք բայական ներկայի հիմքով խոնարհումի մէջ կրնան պահել կամ չպահել չ-ն՝ *կը փախչիմ/կը փախիմ, կը փախչեի/կը փախեի*, իսկ անցեալ դերբայներու, կատարեալի եւ հրամայականի մէջ անպայման կ'ունենան արմատական հիմք. *փախչիլ՝ փախած, փախեր, փախայ, փախար, փախաւ, փախանք, փախաք, փախան, փախի՛ր, փախե՛ք*։

Դպչիլ բայը ունի նաեւ *դպնալ* տարբերակը՝ *կը դպչիմ/ կը դպնամ*. կատարեալը՝ *դպայ, դպար, դպաւ...*։ Արդէն արմատական հնչիւն կը գիտակցուի *հանգչիլ* եւ *խրտչիլ* բառերուն մէջ, իսկ *սատչիլ* եւ *կորչիլ* հին ձեւերը կը գործածուին *սատիլ* եւ *կորսուիլ* ձեւերով։ Ուրեմն *հանգչիլ, խրտչիլ, սատիլ* եւ *կորսուիլ* բայերը անցեալ կատարեալի մէջ ոչ սոսկածանցաւոր, այսինքն պարզ բայերու պէս կը խոնարհուին՝ *հանգչեցայ, խրտչեցայ, սատեցայ, կորսուեցայ*։

- **չ ժխտական մասնիկը.** չ-ն ժխտական մասնիկ է խոնարհումի մէջ։ Ուղղակի կը կցուի բոլոր դերբայներուն եւ բայական ձեւերուն սկիզբը, թէեւ, եթէ բայը բաղաձայնով սկսի՝ «չը» կամ «չի» կը լսուի. *գրել՝ չգրել, գրած՝ չգրած, գրելու՝ չգրելու, գրելիք՝ չգրելիք, գրող՝ չգրող. գրեցի՝ չգրեցի, գրեմ՝ չգրեմ, գրես չգրես, գրէ չգրէ, պիտի գրեմ՝ պիտի չգրեմ...*։ Ոճական իրայատկութեամբ պայմանաւորուած է չ-ի գործածութիւնը *պիտի* ցուցիչին հետ *չպիտի գրեմ*։

Կը ցուցիչով ժամանակներու (սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար) ժխտականը կը կազմուի էական բայի ժխտականով (ներկայ՝ *չեմ, չես, չի, չենք, չէք, չեն*. անկատար՝ *չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին*) եւ ժխտական դերբայով, որ կը կազմուի բայի աներեւոյթի լ-ն ր-ի վերածելով. *վազել՝ վազեր, մտնել՝ մտներ, փախչիլ՝ փախչիր, հեռանալ՝ հեռանար*: Օրինակ՝ կը վազեմ՝ *չեմ վազեր*, կ'երազեմ՝ *չեմ երազեր*, կը վազես՝ *չես վազեր*, կ'երազես՝ *չես երազեր*, կը վազէ՝ *չի վազեր*, կ'երազէ՝ *չ'երազեր*: Չ՝ կ'առնեն միայն սահմանական եղանակի ներկայ ժամանակի եզակի Գ. դէմքի ձայնաւորով սկսող բայերը, ուր *չի* ժխտականը (կը վազէ՝ *չի վազեր*) կը կորսնցնէ ի ձայնաւորը՝ կ'երազէ՝ *չ'երազեր*, կ'առնէ՝ *չ'առներ*, կ'ըսէ՝ *չ'ըսեր*, կ'որոշէ՝ *չ'որոշեր*, կ'ուզէ՝ *չ'ուզեր*, կ'օրօրէ՝ *չ'օրօրեր*: Մերժելի են *չի երազեր, չի որոշեր* ձեւերը:

Ապաթարցի քննութիւնը սուղ ը-ով սկսող բայերէ առաջ

Յայտնի է, որ բառասկիզբին սուղ ը-ով սկսող բայերը սահմանական եղանակի ներկայ եւ անկատար ձեւերուն մէջ *կը* մասնիկը կ'առնեն անջատ կերպով՝ ստեղծելով գրութեան եւ արտասանութեան հակադրութիւն՝ *կը սկսիմ, կը սկսիս, կը սկսի...*: Այս գրելաձեւը կը պատճառաբանուի անով, որ բայը իրողապէս բաղաձայնով կը սկսի. հմմտ.՝ *կը գրեմ - կը սկսիմ*: Նոյնը կը պատահի եզակի Գ. դէմքի ժխտական խոնարհումի պարագային. *կը սկսի՝ չի սկսիր, կը սթափի՝ չի սթափիր, կը զբաղի՝ չի զբաղիր, կը շտապէ՝ չի շտապեր...*: Հոս եւս կը ստեղծուի գրութեան եւ արտասանութեան հակադրութիւն: Այս պարագան հեշտացնելու համար ոմանք ի-ն կը գեղջեն ու ապաթարց կը դնեն՝ *չ'սկսիր, չ'սթափիր, չ'զբաղիր, չ'շտապեր*, ինչպէս ձայնաւորով սկսող բայերու պարագային՝ կ'երգէ - չ'երգեր: Մասնակի լուծում մըն է. ինչն էլ կը տարբերին հաստատական ձեւերը, եթէ անոնք եւս նոյն մօտեցումով գրուին՝ *կ'սկսիմ, կ'սկսիս, կ'սկսի* եւ այլն:

96.- Չ եւ ս բաղաձայններու շփման տեղը

Այս երկու բաղաձայնները չեն շփոթուիր՝ *զարդ-սարդ, գուր-սուր, նիզակ-Միսաք, յոյգ-յոյս, գրահ-սրահ, զրպարտել-սրբազան, մագ-մաս, կազմ-աստղ* եւ այլն:

Չ-ն ս կ'արտասանուի պայթականներէն առաջ ինկած դիրքին մէջ: Չ կու գայ ք, գ, դ բաղաձայններէն առաջ՝ *զբաղիլ, զգալ, ազդակ*, իսկ ս կու գայ պ, փ, տ, թ, կ, ք բաղաձայններէն առաջ՝ *սպասել, սփռփել, ստանալ, սթափիլ, սկսիլ, սքանչանալ*:

Պէտք է գիտնալ նաեւ, որ թս կապակցութիւնը բառերու մէջ կ'արտասանուի կրկնակի ց՝ *վայթսուն, ութսուն, կայթսայ*:

Չ-ն հին հայերէնի մէջ հայցական հոլովի նախդիր էր. ներկայիս քարացած ձեռով հանդէս կու գայ կցական բարդութիւններու՝ *չէզոք (չէ գ-ոք), մէկզմէկ (մէկ գ-մէկ), հետզհետէ (հետ գ-հետէ)*, ինչպէս եւ կարգ մը դերանուններու հայցական հոլովի կազմութեան մէջ. *ով՝ զով, զիրար (իրար), այն՝ զայն, անոնք՝ զանոնք, ինք՝ զինք* եւ այլն:

Մոզէզ/մոռէս. արեւելահայերը կը գործածեն *մոռէս* տարբերակը: Մենք կ'արտասանենք *մոռէզ*, խորթ է ս-ով արտասանութիւնը: *Բզէզ, խլէզ, պարտէզ, բեհէզ, մալէզ քարտէզ* բառերու շարքին ոչ մէկ հակադրութիւն կը ստեղծէ *մոռէզ*-ի վերջին հնչիւնը:

Քարտէզ/քարտէս. նախընտրելի է գ-ով տարբերակը:

97.- Ժ եւ շ բաղաձայններու շփման տեղը

Երկուքն ալ կը հանդիպին բառի բոլոր դիրքերուն. բառասկիզբին ու ձայնաւորէ առաջ ու վերջ անշփոթելի են՝ *ժուռ գալ-շուռ գալ, մժեղ-Մուշեղ, բաժ-բաշ, բիժ-նիշ, ոյժ-ուշ, աշ-խոյժ-անոյշ*. անշփոթելի են նաեւ բաղաձայնէ առաջ եւ վերջ՝ *Աշխէն, դշխոյ, բաշխել, աշխատիլ, աշտարակ, բղէշի, Արշակ, արշալոյս, անշուշտ, ապշիլ, խշշալ, բժժանք, բժիշկ, վարժ, արժէլ, դրժէլ, խժռել* եւ այլն:

Ժ-ն կրնայ շփոթուիլ շ-ին հետ պայթական բաղաձայնէ առաջ կամ վերջ իր դիրքին մէջ. *Աժդահակ, աժդահայ, գրժ-*

դմնիլ, դժխեւ, խուժողութ, խժողութիւն, նժդեհ (պանդուխտ), ուժգին, ուժգնօրէն, պժգալ:

Դժ եւ տժ ժխտական նախաձանցներուն մէջ ժ-ն նոյնպէս կրնայ շփոթուիլ շ-ին հետ. *դժգոհ, դժկամ, դժբախտ, տժգոյն*: Թշ կայ *թշշալ, թշուատ* (խեղձ), *թշնամի* բառերուն մէջ: *Դժուար* (ոչ դիւրին) ու *թշուատ* բառերուն մէջ զանազանելի են:

98.- Խ եւ դ գիրերուն հնչիւնական իւրայատկութիւնները

Ղ գիրը բառին սկիզբը կը հանդիպի քանի մը բառերու մէջ միայն, ինչպէս՝ *ղափամա, դեկ, դենջակ* (գոգնոց), *ղրկել, զրուշ, զոյանջել, զոյիլ* (պահուրտիլ):

Խ եւ դ բաղաձայնները գրեթէ չեն շփոթուիր ձայնաւորէ մը առաջ ու վերջ ինկած իրենց դիրքին մէջ, ինչպէս՝ *աղաղակ, խաղաղ, խաղող, խաղ, մեխակ, մխել, մղել, Պաղրաս, պախրա, օ՜խ, օղ, ա՜խ, աղ, զեխ, զեղուլ, ցեխ, ցեղ, պեխ, պեղել, սողալ, սոխ, վախ, վաղ, վաղվաղակի, տառեխ* (ձուկ մը), *տառեղ* (թոչուն մը) եւ այլն:

Չեն շփոթուիր նաեւ ոչ պայթական ու պայթաշփական բաղաձայններէն առաջ կամ վերջ՝ *աղմուկ, աղմկել, սեղմ, բեղմնաւոր, սաղմ, նշխար, աշխարհ, ապաշխարել, աշխատիլ, աշխէտ* եւ այլն:

- **Սանդուղ/սանդուղք** բառը կը գրուի նաեւ *սանդուխ* ձեւով, արեւելահայերը՝ *սանդուղք*: Նախընտրելի է գործածել *սանդուղք* ձեւը, բաղադրութիւններու մէջ եւս պահելով դ-ը՝ *սանդղակ, սանդղակալ, սանդղաձեւ, սանդղամատ, սանդղաշար* եւ այլն:

Զանազանել *ուղի* (ճամբայ) եւ *ուղիղ* (շիտակ) բառերը:

Ուղի՝ *ուղարկել, ուղեգիծ, ուղեկից, ուղեկորոյս, ուղեկցիլ, ուղենիշ, ուղեցոյց, ուղեւոր, ծառուղի, երկաթուղի, ճոպանուղի, ուղարկել, յուղարկաւոր* եւ այլն:

Ուղիղ՝ *ուղղել, ուղղակի, ուղղահայեաց, ուղղամիտ, ուղղանկիւն, ուղղափառ, ուղղութիւն, ուղղում, անուղղայ* եւ այլն:

Խ-ն նոր հայերենի մեջ հանդես կրնայ գալ իբրև լծորդ օտար բառերու բառավերջի կոկորդային գ պայթականին, նոյնիսկ ք-ին եւ կ-ին (արեւելահայերեն)՝ *Չինարճրգ-Չինարճրի, Չինարճրք, Չինարջրկ*:

- Խ-ի անկում կայ *բախել* եւ *փոխել* բայերու կրկնաւորներուն մեջ՝ *բարբախել, (բախ-բախել), բարբախում, փոփոխել (փոխ-փոխել), փոփոխութիւն, փոփոխակի, անփոփոխ*:

99.- Ղ-ի պատմական հնչիւնափոխութիւնը

Հին հայերենի մեջ ղ-ն հնչիւնապէս լ-էն կը զանազանուէր իր կոպտութեամբ: Նոր հայերենին անցած է պատմական հնչիւնափոխութեամբ. սսիկա կ'երեւի օտար բառերու տառադարձութեան մեջ. *Paul՝ Պօղոս, Elizabeth՝ Եղիսաբէթ, Jerusalem՝ Երուսաղէմ, Betlehem՝ Բեթղէհեմ*: Նոր հայերենի մեջ հին բառերը անցած են ղ-ի շփականութեամբ եւ կամ պարզ լ-ով: Օրինակ՝ *աղ* բառէն ունինք *աղջուր, աղուհաց, աղեղէն, աղել* եւ այլն, բայց *անալի*. ունինք նաեւ *ջիղ*, բայց *ջիլ* ու *ջլապինդ, լինեմ-ըլլամ՝ եղայ*: Նման հնչիւնափոխութեան պարագաներ են *փաղփիլ-փայլիլ, փողփողուն-փայփլուն, պղպջակ-պլպլակ* եւ այլն: Ղ-ի այդ նախկին հնչիւնն ալ զինք կարելի կը դարձնէր ըլլալ իւ-էն առաջ *բաղիւել, բուղի, զեղի, ուղի*: Նոր հայերենի մեջ անկարելի է համատեղ հնչել ղի կապակցութիւնը: Հետեւաբար այդ բառերը նորին անցած են առանց ղ-ի արտասանութեան՝ *բախել, բուի, զէի*, որոնցմէ ունինք *յորդաբուի, սրտաբուի, բիիլ, զեխութիւն, զեխանալ, բախիլ, բախում, ակն-բախ*: Ուղիս բառը եւ անոր բաղադրութիւնները գրեթէ դուրս մնացած են նոր գրականէն:

100.- Խ եւ ղ բաղաձայններու շփման տեղը

Ղ-ը իւ-ին հետ կրնայ շփութուիլ շնչեղ ու շնչեղացած պայթականներէն առաջ. այսպէս

- Բ եւ փ բաղաձայներէն առաջ. *աղբ (աղբակոյտ, աղբաման, աղբանոց, աղբահաւաք), Աղբակ, աղբերակ, աղբիւս, աղ-*

բիւր, բողբոջ, եղբայր (եղբայրանալ, եղբայրութիւն, հօրեղբայր), Կողբ, ողբ (ողբալ, ողբերգակ, ողբագին), Սեղբոս եւ այլն: Կան փ-ով քանի մը բառ եւս՝ աղփուն (տկար), ճողփել (ճողփիւն), յղփանալ, շաղփաղփել (շատախօսել), փաղփուն, փաղփիլ, փողփողիլ: Պ-էն առաջ դ-ը անշփոթելի է՝ պաղպաղակ, պաղտկիլ, պաղպաջել (փայլիլ), պղպջակ, պաղքաշ, պղպեղ եւ այլն:

- Գ եւ ք բաղաձայներէն առաջ. հեղգ, հեղգամիտ, շողգամ, աղքատ (աղքատանալ, աղքատութիւն), խաղք, ճեղք (ճեղքել), մեղք (մեղքնալ), տաղք. Կ-էն առաջ դ-ը անշփոթելի է՝ եղկ, եղկելի, ծաղկիլ, մղկտալ, աղկեկ, կղկղալ, կղկղանք եւ այլն:

- Թ եւ դ բաղաձայներէն առաջ. աղթարք, գաղթ (գաղթական, գաղթել, արտագաղթ), թուղթ (թղթատար, թղթակից, թղթապանակ), մաղթել, յաղթել (յաղթանակ), շղթայ. մէկ-երկու բառ դ-ով՝ խեղդել (խեղդամահ, խեղդուկ), յողդողդ (անյողդողդ): Տ-էն առաջ խ եւ դ կը հանդիպին, բայց անշփոթելի են՝ ուղտ - ուխտ, աղտ - ախտ: Ղտ ունինք եղտոր, գաղտնի, գաղտուկ, խտղտել, կեղտ, ուղտ, տաղտուկ, տղտղել եւ այլն: Տ-էն առաջ խ-ն աւելի շատ կը հանդիպի, ինչպէս՝ ապուխտ, բախտ, գխտոր, դժբախտ, դրախտ, երախտիք, զմրուխտ, թախտ, ժխտել, լախտ, հիւծախտ, խախտել, խրոխտ, մխտել⁵, Շահանդուխտ, ուխտ, պանդուխտ, Սանդուխտ, սխտոր, վխտալ եւ այլն: Բախտ, բախտախնդիր, բախտաւոր, բախտակից, անբախտ շարքը համեմատել բաղդատել, բաղդատական, բաղդատութիւն բառերուն հետ, ուր բաղ-ը նախածանց է, ինչպէս բաղհիւսել, բաղաղրել, բաղաղրեալ եւ այլն:

⁵ **Մխթել/մխտել.** Մալխասեան կու տայ երկուքն ալ: Արտ. Տ. Խաչատուրեան կու տայ մխտել, ու բառը ծագած կը համարէ մախատ բառէն, մինչ իբրեւ գլխաբառ զայն կու տայ մախաթ ձեւով, ինչպէս ամէն տեղ: Թէեւ, ըստ արտասանութեան, բառը մխթել է, բայց նուիրականացած է մխտել ձեւը: Արեւելահայ վերջին բառարանները չունին այս բառը:

- Ձ եւ ց բաղաձայներէն առաջ. *ակաղձուն, Աղձնիք, ա-տաղձ, բաղձալ (բաղձանք), գեղձ (նշագեղձ), գուղձ, դեղձ, դեղ-ձանիկ, իղձ (ըղձալ), հեղձամահ (հեղձամղձուկ, ջրահեղձ), մաղձ, մղձաւանջ, փղձկիլ* եւ այլն: Մէկ-երկու բառ ց-ով՝ *քաղ-ց(ածուրթիւն), քաղցր, աղցան* (աղ-ցան), *յեղց* (լեցուն, առլի): Ծ-էն առաջ իւ եւ ղ անշփոթելի են՝ *կեղծիք - ածխանալ*:

- Ջ եւ չ բաղաձայներէն առաջ. *աղջամուղջ, աղջիկ, բղջա-խոհ, գաղջ, գեղջուկ (գեղջկական), եղջիւր (եղջերու, եղջերա-փոռ, ռնգեղջիւր), գղջալ, շեղջ, ողջ (առողջ, առողջանալ, առող-ջութիւն, ողջոյն), չղջիկ* եւ այլն: Միայն *գեղջ* բառը՝ չ-ով: Ճ-էն առաջ իւ եւ ղ կը հանդիպին, բայց անշփոթելի են՝ *խեղճ, խեղ-ճուկ, խեղճանալ, խիղճ, խղճամիտ, աղճատել. Ճախճախուտ, յախճապակի, նախճիր, վախճան*:

101.- Չ եւ յ բաղաձայնները

Չ գիրը կը պահէ իր հնչիւնը բառի գրեթէ բոլոր դիրքերուն մէջ, ինչպէս՝ *հանգիստ, հարաւ, հրակ, հրդեհ, ահա, ահագին, սահման, սահմոկիլ, ահ, մահ, զահ, ազահ նժդեհ* եւ այլն: Չ բաղաձայնը չ'արտասանուի ը-էն ետք կարգ մը բառերու մէջ, ինչպէս՝ *խորհուրդ (խորհրդական, խորհրդակցիլ, խորհրդակ-ցութիւն), աշխարհ (աշխարհիկ, աշխարհական, աշխարհա-գրութիւն, աշխարհամաս), շնորհ (շնորհել, շնորհիւ, շնորհա-գարդ, անշնորհք): Օրհնել, (օրհնութիւն, օրհնանք)* բառին մէջ ըի կապակցութիւնը կ'արտասանուի ըթ՝ «օրթնել»: Նիրհ եւ ժպիրհ բառերուն վերջը կը հնչուի: Պայթական բաղաձայն-ներուն յաջորդող հ-ն անոնց կու տայ շնչեղացում, ինչպէս *ընդ-հանուր (ընդհանրապէս, ընդհանրական, ընդհանրացնել)* բա-ռին մէջ. հոս կայ դի կապակցութեան թ արտասանութիւնը՝ «ընթանուր», «ընթանրապէս» եւ այլն: Նոյն երեւոյթը ուղղա-գրութեան մէջ կ'արտայայտուի *սեպուռ* բառի բաղադրութիւն-ներու պարագային, ինչպէս սեպուռի՝ *սեպհական>սեփական, սեփականութիւն, սեփականացնել*:

Հա կապակցութեան ամփոփում ունին քանի մը բաղադրութիւններ՝ *գրահանդերձ* (*գրահ-ա-հանդերձ*), *աշխարհայեացք* (*աշխարհ-ա-հայեացք*), *շնորհանդէս* (*շնորհ-ա-հանդէս*):

Հ հնչիւնի ոլորտը ընդարձակուած է յ գիրին շնորհիւ, որ բառին սկիզբը հ կ'արտասանուի: Ասիկա պատմական հնչիւնափոխութեան պարագայ է:

102.- Յ գիրին երեք արժէքները

Յ գիրը ունի երեք արժէքներ.

ա.- Կիսաձայն է

- միավանկ բառերու վերջը՝ *հայ, ճայ, բայ, գոյ, խոյ, Նոյ* եւ այլն: Այս միավանկ բառերը *եր* յոգնակերտը եւ *ս, դ, ը* յօդերը առնելով կիսաձայնը փոփոխութիւն չի կրեր. *հայ՝ հայեր, այդ հայր, իմ ճայս, իմ խոյս, խոյդ, խոյր*: Ս եւ դ յօդերէն առաջ անգիր *ը* կը լսուի, այլապէս բառը կրնայ շփոթուիլ այլ նմանաձայնութեան մը հետ՝ «խոյս տուի» եւ «խոյ(ը)ս զենեցի»: Ասիկա միտքի թելադրութեամբ կը կատարուի:

- բառին մէջ *ա* եւ *ո* ձայնաւորներէն ետք՝ *այս, այդ, այն, բայց, դայլայլ, կայմ, հայկական, սակայն, վայնասուն, սոյն, նոյն, գոյն, թոյլ, սոնոյն* եւ այլն: Բաղաձայնէ մը առաջ այս դիրքին մէջ ան *ա* եւ *ո* ձայնաւորներուն հետ կը կազմէ մէկական երկհնչիւն: Սակայն՝ ձայնաւորէ մը առաջ դիրքին մէջ երկհնչիւնը կ'երփեղկուի, կիսաձայնը կ'երթայ յաջորդ վանկին, ինչպէս՝ *կայան, Հայաստան, վայելել, հայելի, գոյական, կոյուղի, ցոյական* եւ այլն: Բազմավանկ բառերու վերջաւորութեան անձայն յ-ն բառի աճման պարագային կը վերականգնէ իր հնչիւնը՝ *սատանայ՝ սատանայական, գուլպայ՝ գուլպայագործ, տղայ՝ տղայութիւն*, կամ կը գրուի օտար կամ բարբառային բառերու *ա* եւ *օ* ձայնաւորներէն ետք, ինչպէս՝ *հերիսա՝ հերիսայի, հերիսայէ, հերիսայով, Սազօ՝ Սազոյի, Սազոյէ, Սազոյով*:

Յ կիսաձայնը կը լսուի բոլոր երկու ձայնաւորներու կապակցութիւններու միջեւ՝ *էի, էակ, էութիւն, գինիի, գինիէ, գինի-*

ույլ եւ այլն, բայց կը գրուի միայն ո եւ ա գիրերէն ետք եկող դիրքերուն մէջ:

Յ կիսաձայնը հին հայերէնէ ժառանգութիւն է, բայց նաեւ նոր գոյացութիւն է նկ եւ նգ կապակցութիւններու իբրեւ պատմական հնչիւնափոխութիւն. *անկանիմ՝ իյնամ, կանգնիմ՝ կայնիմ*: Ան օտար ու բարբառային բառերու եւ ձայնարկութիւններու մէջ կը հանդիպի *ույ* (ո՛ւյ), *օյ* (օ՛յ), *էյ* (հէ՛յ) կապակցութիւններով:

Յ կիսաձայնի արտասանական ոլորտը ընդարձակուած է *եա, եայ, եօ, իա, իայ, իո, էա, էո* երկհնչիւններուն մէջ ե, ի եւ է բաղադրիչներու կիսաձայն արտասանուելուն հետեւանքով՝ *մատեան, ընտանեօք, լուբիա, Մարիամ, Բտայիա, Անտիոք, իտէալ, Անդրէաս, Չաքէոս, հիւլէական* եւ այլն: Բառասկիզբի յն պատմական հնչիւնափոխութեան հետեւանքով հ կարդացուելուն համար՝ *Յակոբ, յակիմ, յետոյ, յամառ* եւ այլն, կիսաձայնը կը գրենք ե-ով՝ *եար, եաման, եարա* եւ այլն:

բ.- Անձայն, որ կը հանդիպի բազմաձայն կառուցութեան վերջաւորութեան՝ այ եւ ոյ ձեւով. *վկայ, բացակայ, վրայ, յետոյ, ի վերջոյ, դշխոյ, հաւաքածոյ* եւ այլն: Այս բառերը ս, դ, ն յօդերը եւ ներ ու ք յոգնակերտները առնելով կը կորսնցնեն յ-ն. *գուլպայիմ գուլպաս, քու գուլպադ, գուլպան, գուլպաներ. տղայիմ տղաս, քու տղադ, տղան, տղաք* եւ այլն:

գ.- Բաղաձայն, կը համապատասխանէ հ գիրին, կը հանդիպի միայն բառին սկիզբը ու, բացի ծագումնաբանական գործօնէ, ոչ մէկ գատորոշիչ յատկանիշ ունի հակադրուելու համար հ-ին, ինչպէս՝ *յամառ-համար, յենակ-հեսան, յիշել-հիւանդ, յուշ-հուր, յոռի-հոր, յօնք-հօտ, յղկել-հնդիկ, յստակ-հսկայ, հինգ-յիսուն* այլն:

103.- Ինչպէ՞ս ճանչնալ բառասկիզբի յ գիրը

Որոշ պարագաներ կ'օգնեն յ-ն ճանչնալու գործին:

ա.- Յ կը գրուի փոխառեալ յատուկ ու հասարակ բառերուն սկիզբը, կը համապատասխանէ օտար լեզուներու J եւ Կ գիրերուն, ինչպէս՝

- Անձի յատուկ անուններ՝ *Յարէթ, Յակոբ, Յեսու, Յիսուս, Յոբ, Յովակիմ, Յովան, Յովէլ, Յովհան, Յովհաննէս, Յովնաթան, Յովնան, Յովսէփ, Յուլիոս, Յուդա, Յուսիկ* եւ այլն: Պարտ է, որ այս անուններուն փաղաքական ձեւերն ալ գրուին j-ով, ինչպէս *Յովօ, Յովիկ, Յովակ* եւ այլն, թէև հ-ով գրողներ այդ տարբերակները կը կապեն *հով* բառին հետ:

- Տեղի յատուկ անուններ՝ *Յունաստան*, համապատասխանաբար՝ *յունական, յոյն, Յորդանան* եւ այլն:

- Հասարակ բառեր՝ *յակիինթ, յասմիկ, յոբելեան, յասպիս, յունուար, յուլիս, յունիս* եւ այլն:

բ.- Յ-ն շատ բառերու սկիզբը գրաբարի ի>j նախադիրն է, որ երբեմն կարելի է ճանչնալ, ինչպէս՝

- **անձ** բառէն՝ *յանձն առնել, յանձնաժողով, յանձնախումբ, յանձնել, յանձնարարել, յանձնարարագիր, յանձնարարական, յանձնակատար, յանձառու, յանձնառութիւն, յանձնառում, յանձնում* եւ այլն:

- **աջ** արմատէն, *աջող* ու *աջողակ* բառերու զուգահեռ՝ *յաջող, յաջողակ, յաջողութիւն, յաջողիլ, անյաջող.* յաջորդ բառէն՝ *յաջորդական, յաջորդութիւն, յաջորդել* եւ այլն: Նոյն արմատէն կու գայ *յառաջ*, ասկէ՝ *յառաջագոյն, յառաջադէմ, յառաջդիմել, յառաջիկայ, յառաջխաղացք, յառաջապահ, յառաջդիմական, յառաջդիմութիւն, յառաջընթաց* եւ այլն:

- **առնել** բայէն՝ *յարութիւն, յարուցեալ:*

- **արգ** արմատէն՝ *յարգանք, յարգել, յարգելի, յարգի, յարգոյ, մեծայարգ, յարգարժան* եւ այլն: Նոյն արմատէն ունինք նաեւ *մեծարգոյ, անարգ:*

- **ափ** բառէն՝ *յափշտակել, յափշտակութիւն, յափափել:*

- **եղ** արմատէն՝ *եղելութիւն, եղափոխութիւն, եղափոխել, եղանակ, բայց՝ յեղ, յեղափոխութիւն, յեղափոխական, յեղափոխել, յեղաշրջել, յեղաշրջում, յեղակարծ, յեղյեղուկ* եւ այլն:

- **ետ** արմատէն՝ *յետ, յետադաս, յետադարձ, յետադիմել, յետաձգել, յետամնաց, յետին, յետմիջօրե, յետնագոյն, յետոյ* եւ այլն: Չշփոթել *հետ* արմատին («ոտք, քայլ», *հետք*. ասկէ ունինք *հետի*՝ «ոտքով ճամբորդող», *հետիոտն, հետզհետէ*՝ «քայլ առ քայլ, տակաւ առ տակաւ» եւ անոր բաղադրութիւններուն *հետ՝ հետագօտել, հետախոյզ, հետախուզել, հետամուտ, հետամտիլ, հետապնդել, հետապնդում, հետաքրքիր, հետաքրքրել, հետաքրքրութիւն. հետեւ* ձեւէն՝ *հետեւանք, հետեւիլ, հետեւորդ, հետեւողական, հետեւութիւն* եւ այլն:

- **իրաւ** բառէն՝ *յիրաւի*:

- **ուղարկել** (ուղի-արկանել՝ ճամբու դնել) բառէն՝ *յուղարկաւորել, յուղարկաւորութիւն*:

- **ուշ** (իւելք՝ ուշիմ) բառէն՝ *յուշ, յուշագիր յուշագրել, յուշագրութիւն, յուշամետալ, յուշաքար, յուշատախտակ, յուշանուէր, յուշարձան, յուշել, յուշամատեան, յուշարար, յուշել, նոյն ուշ կամ յուշ արմատին հետ աղերս ունի յիշել* բայը, որմէ ունինք *յիշատակ, յիշատակարան, յիշարժան, յիշաչար, յիշատակելի, յիշատակութիւն, յիշեցում, յիշողութիւն, անյիշաչար* եւ այլն:

- **օրէն** բառէն՝ *յօրինում, յօրինուած*:

- **աւել** բառէն՝ *յաւելում, յաւելուած* եւ այլն:

- **ոռ** բառէն՝ «յետոյք, քանի մը ամենաստորին բաժինը», ասկէ ունինք *յռռեզոյն, յռռենիշ, յռռետես, յռռետեսութիւն, յռռի*:

Բայց միշտ չէ, որ կարելի կ'ըլլայ հեշտութեամբ ճանչնալ բառասկզբի յ-ն ու կապել ի նախդիրին, որովհետեւ շատերու արմատները այլապէս ծանօթ չեն նոր լեզուին: Յ-ով գրուող բառերուն մեծամասնութիւնը պէտք է միտք պահել:

գ.- **Յղ** օրէնքը բացարձակ է, ինչպէս՝ *յղանալ, յղութիւն, յղացում, յղացք, յղել, յղի, յղում, յղկել, յղկիչ, յղկում, յղփանալ, յղփանք, յղփասէր, յղփուն*: Բաղաձայնէ առաջ, բառասկիզբին, ունինք նաեւ *յտակ* բառը (*յտակութիւն, յտակատես, յտականալ*): Միւս բաղաձայներէն առաջ միշտ հ է, ինչպէս՝ *հմայել, հպարտ, հպիլ, հսկայ, հսկում, հրաժարիլ, հրապարակ* եւ այլն:

Բառը բարդութեան մէջ մտնելէ կամ նախաձանց ստանալէ ետք կը պահէ յ գիրը, ինչպէս՝ *անյաջող, անյոյս, առյաւէտ, կենսայորդ, մեծայարգ, ակնյայտ, բազմայաղթ, բարձրայարկ, սիրայօժար* եւ այլն:

Զանազանել **յետագայ**՝ «զալիք» եւ **հետագայ**՝ «հետեւող» բառերը:

Քննութիւն յետագայ՝ «զալիք» եւ հետագայ՝ «հետեւող» բառերուն:

Գրաբարը ունի յետագայ, յետակայ, հետագայ եւ հետակայ բառերը: Արդի հայերէնի մէջ կը գործածուին յետագայ եւ հետագայ: Աշխարհաբարի յետագայ բառը լայնօրէն կը գործածուի իբրեւ ածական, ունինք հոլովական ձեւ մըն ալ յետագայի գործ, ու մակբայական գործածութիւն ունեցող քարացած ձեւ մը՝ յետագային, որ յստակ կերպով կը նշանակէ «աւելի ուշ, յետոյ», «Յետագային կրկին կը հանդիպինք», «Յետագային դրժեց խոստումը»: Յետագայ ածականն ալ համանման իմաստ մը ունի մեր լեզուին մէջ, իբրեւ «յաջորդ, ետեւէն եկող»՝ ժամանակի առումով: «Յետագայ դէպքերը», իմա՝ «յետոյ պատահած դէպքերը, յաջորդող դէպքերը»: Կայ նաեւ հետագայ բառը, ունի «ետեւէն եկող՝ հետեւեալ» տեղի առումով իմաստը՝ խօսքը, պարբերութիւնը: Կայ իմաստի մեծ մօտիկութիւն: Կարգ մը բառարաններ կը զանազանեն, ուրիշներ կը յիշատակեն համանման բացատրութեամբ: Առանձին հեղինակներ ամէն պարագայի կը գործածեն մէկը միայն՝ միւսը համարելով աւելորդ երկձեւութիւն: Ոմանք բառին մէջ միայն հետեւող, դէպքի մը տրամաբանական շարունակութիւնը եղող արարքի մը ակնարկող իմաստը տեսնելով կը մերժեն յետագայ տարբերակը ու կը պնդեն գործածել միայն հետագայ տարբերակը, հետեւաբար՝ հետագային: Կայ լեզուամտածողութիւն մը, որ առաջնահերթութիւնը կու տայ յետագայ տարբերակին, եւ դեռ՝ ըստ Արմենակ Եղիայեա-

նի, «յ-ով գրողները կը կազմեն արեւմտահայերոս 95 տոկոսը»: Ուրեմն՝ յետագայ, յետագային, ինչպէս՝ յետոյ, յետմիջօրէ, յետաձգել: Մակայն ոչ ոք կը խանգարէ, եթէ մէկն ու մէկը գործածէ հետագայ բառը իբրեւ «հետեւող՝ գործողութեան կամ արարքի, խօսքի կամ յաջորդական երեւոյթի մը» կամ՝ ամէն պարագայի:

104. - Յ եւ հ գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ՅԱԳուրդ (>յագենալ,անյագ, անյագուրդ)	ՀԱԳուստ (>հագնիլ, հագուելիք)
ՅԱՄենալ (ուշանալ.> յամեցում)	ՀԱՄ (> համտես, համեղ) ՀԱՄ (> համադաս, համակարգ)
ՅԱՄԱՌ (>յամառիլ, յամառութիւն)	ՀԱՄԱՐ (ա) վասն. բ)թիւ. > համարակալել, համարանիշ, համարակալ, համարառու, համարել, համարեա՛)
ՅԱՄԲ (դանդաղ.> յամբօրէն)	ՀԱՄԲ (անխօս, լալ)
ՅԱՆԳ (> յանգաւոր, յանգաբան)	ՀԱՆԹ (> հանքափոր, հանքային, հանածոյ)
ՅԱՆԳԻԼ (եզրակացնել)	ՀԱՆԳԻԼ (մարիլ. մեռնիլ)
ՅԱԶՈՂ (> յաջողիլ, յաջողակ)	ՀԱԶՈՂ (շան)
ՅԱՌԱԶ (դէպի առաջ)	ՀԱՌԱԶ (հեծեծանք.>հառաչել հառաչանք)
ՅԱՏԵԼ (յօտել)	ՀԱՏԵԼ (կտրել.> փայտահատ)
ՅԱՐ (միշտ. > յարատեւ, յարաշարժ, յարաբերիլ)	ՀԱՐ (>հարուած, հարուածել, կաթուածահար)
ՅԱՐԴ (մանր չոր խոտ.> Յարդգողի ճանապարհ)	ՀԱՐԹ (տափարակ. > հարթել, հարթակ)
ՅԱՐԴարել (զարդարել)	ՀԱՐԹել (մաքրել)
ՅԱՐԿ (յարկաբաժին, երկյարկ, բազմայարկ)	ՀԱՐԿ (տուրք. > հարկահաւար, հարկային)
ՅԱԻակնիլ (հպարտանալ. > յաւակնոտ)	ՀԱԻնիլ (հաճելի գտնել.> հաւանութիւն, ինքնահաւան)

ՅԵՂ (փոփոխութիւն. > յեղափոխական, յեղեղուկ)	ՀԵՂ (անգամ)
ԽելաՅԵՂ (խել-ա-յեղ)	ՓառԱՀԵՂ (փառ-ահեղ)
ՅԵՂՅ (լեցուն)	ՀԵՂԶ (խեղդուկ. > շնչահեղձ)
ՅԵՏ (>յետոյ, յետ այսորիկ, յետաձգել, յետադաս)	ՀԵՏ (միասին. > հետիոտն, հետելի)
ՅՈԳնակի (շատ. < յոգնիլ)	ՀՈԳ (> հոգալ, մտահոգ)
ՅՈՅԶ (> յուզական, յուզակա-նութիւն, յուզել, յուզիչ)	ՀՈՅԶ (հիւթ)
ՅՈՅԼ (թոյլ, ծոյլ. > յուլանալ), յուլութիւն, յուլօրէն)	ՀՈՅԼ (խումբ. > աստղահոյլ)
ՅՈԼՈՎԵԼ (շատցնել խօսքը)	ՀՈԼՈՎԵԼ (> հոլով, հոլովում)
ՅՈՌԻ (ցած. > յոռետես, յոռեգոյն, յոռենիշ)	ՀՈՌԻ (հայկական ամսանուն)
ՅՈՐԴ (>յորդիլ, յորդաբուխ, յորդահոս, կենսայորդ)	ՀՈՐԹ (կովու ձագ)
ՅՕԴ (> յօդակապ, յօդացաւ, յօդուած)	ՀՈԴ (քիչ մը անդին)
ՅՕՏԵԼ (ոստերը կտրել. <յօտոց՝ պարտէզի մկրատ)	ՀՕՏ (բոյր.> հոտաւէտ, հոտոտ) ՀՕՏ (ոչխարի խումբ.> հօտաղ)

105.- Մ եւ ն գիրերու իւրապատկութիւնները

Երկուքն ալ կը հանդիպին բառի բոլոր դիրքերուն. բառակիզբին ու ձայնաւորէ առաջ ու վերջ անշփոթելի են՝ *մուր, նուռ, միս, նիշ, միրգ, ներկ, լման, նման, աման, անուն, ամօթ, անօթ*. անշփոթելի են նաեւ բաղաձայնէ առաջ եւ վերջ՝ *ամլանալ, ամրանալ, անդամ, անդորր*:

Մ-ի եւ ն-ի շփոթ կ'առաջանայ բ, պ եւ փ բաղաձայններէն առաջ, ուր միշտ մ է՝ *ամբասիք, համբերել, քաջութեամբ, փանփուշտ, ամփոփել, ամպ, ամպրոպ* եւ այլն (տե՛ս 95):

Կրկնակ ն ունին *Աննա, Աննիկ, Ովսաննա, Մուսաննա* անունները:

Կրկնակ մ ունին *Էմմանուէլ, Էմմա, Ճեմմա* անունները:

Ն-ի սոսկական կրկնութեան հետ կապ չունին, այսինքն արմատական են *խորաքննել, խորագննել* բառերու երկրորդ

ն-երը, որոնք կու գան *զնին* (*զննել, զննութիւն, զննական, զննիչ*) եւ *քնին* (*քննել, քննութիւն, քննական, քննիչ*) արմատներու ի ձայնաւորի սղումի հետեւանքով: Կրկնակ ն-ի պարագաներ կրնան ստեղծուիլ ն վերջայանգով բազմավանկ գոյականներու յոգնակիի կազմութեամբ՝ *սողուններ, գերաններ*, կամ բառակազմական-հնչիւնափոխութեան այլ երեւոյթներու հետեւանքով՝ *հիննալ, սպաննել* եւ այլն:

Ն եւ ը որոշիչ յօդեր են. ն-ն կը դրուի ձայնաւորայանգ բառերուն վրայ (*գօտի՝ գօտին, կատու՝ կատուն*), իսկ ը-ը բաղաձայնայանգ (*ծառ՝ ծառը, շուն՝ շունը*), բայց էական բայէն կամ ու շաղկապէն առաջ՝ ը-ը կը փոխարինուի ն-ով՝ *շունը > շունն է, շունն ու կատուն*:

Հին հայերէնի մէջ բաղաձայն+ն վերջաւորութիւն ունեցող մեծ թիւով բառեր կային: Այս բառերը նոր հայերէնին անցած են առանց ն-ի եւ գաղտնավանկ ը-ի. *ամառն՝ ամառ, ձմեռն՝ ձմեռ, լեռն՝ լեռ, դուռն՝ դուռ, մուկն՝ մուկ, թոռն՝ թոռ, գառն՝ գառ, եզն՝ եզ, ոտն՝ ոտ(ք), ձեռն՝ ձեռ(ք)* եւ այլն: Եօթը, ինը, տասը թուականներու վերջայանգի ը-ը յառաջացած է ն-էն առաջ գտնուող գաղնավանկ ը-էն (եօթն, ինն, տասն): Ասոնց համաբանութեամբ ալ՝ *ուրջը*: Քանի մը բառեր կը պահեն արմատական ն հնչիւնը՝ *բուռն* (սաստիկ, կայ նաեւ բուռ՝ ափ), *դառն, խառն, խուռն, Եղեռն, ընդհակառակն, լիսեռն, ոլոռն, սառն* (ածական վարմունքի, կայ նաեւ *սառ՝ սառոյց*), *Վահագն*: *Ընդհակառակն* ներհակական վերաբերական բառը գործածել միշտ ն-ով՝ *Ընդհակառակն, շատ համեստ աղջիկ մըն է ան*:

Կարգ մը միավանկ բառեր յոգնակին կը կազմեն *ներ* մասնիկով (փոխան եր-ի), ուր ն-ն արմատական հնչիւն էր գրաբարի մէջ. *լեռ(ն)՝ լեռներ, թոռ(ն)՝ թոռներ, ծոռ(ն)՝ ծոռներ, գառ(ն)՝ գառներ*: Արմատական ն ունեցող կարգ մը բառեր ալ յոգնակին կրնան կազմել երկու ձեւով. *հարս՝ հարսներ/հարսեր, դուռ՝ դռներ/դուռեր, մատ՝ մատներ/մատեր, եզ՝ եզներ/*

եզեր, միւս՝ միւսներ/միւսեր, բեռ՝ բեռներ/բեռեր եւ այլն: Ն-ով ձեւերէն կարելի է խուսափիլ:

Բարդ եւ ածանցաւոր բառեր կազմելու ատեն արմատական ն-ն շատ անգամ երեւան կու գայ. լեռ՝ լեռնալանջ (լեռն-ա-լանջ), դուռ՝ դռնփակ (դուռն-փակ), ձուկ՝ ձկնորս (ձուկն-որս), մուկ՝ մկնիկ (մուկն-իկ), մկնդեղ (մուկն-դեղ), ակնաբոյժ (ակն-ա-բոյժ), ռոտաման (ռոտն-աման), ձեռնածալ (ձեռն-ածալ), մատնանշել (մատն-ա-նշել), ռդնայար (ռդն-ա-յար), ամառնային (ամառն-ային), ձմեռնային (ձմեռն-ային), սառնարան (սառն-արան), գառնուկ (գառն-ուկ) եւ այլն:

Ն-ն (ն, ան, են) նաեւ սոսկածանց է շարք մը բայերու մէջ՝ տեսնել, հասնիլ, գտնել, մտնել, մեռնիլ, հատնիլ, գիրնալ, ճանջնալ, երկննալ, արթննալ, հեռանալ, խոստանալ, ընկերանալ, հիւանդանալ, մօտենալ եւ այլն: Անցեալ կատարեալի հիմքով բայական ձեւերուն մէջ ն սոսկածանցը կը կորսուի. գտնել՝ գտած, հեռանալ՝ հեռացած (յարակատար դերբայ), գտեր, հեռացեր (վաղակատար դերբայ), գտայ, գտար, գտաւ. հեռացայ, հեռացար, հեռացաւ (անցեալ կատարեալ), գտի՛ր, գտէ՛ք, հեռացի՛ր, հեռացէ՛ք (հրամայական): Ըն>լլ լրիւ առնմանութեան պարագաներ ունին ելանել>ելլել, լինել>ըլլալ բայերը:

Սպաննել/սպանել բայը դերբայական ու դիմաւոր ձեւերուն մէջ կը գրուի հետեւեալ տարբերակներով.

ա.- իբրեւ սոսկածանց՝ երկրորդ ն-ն կը պահուի բայական ներկայ ձեւերուն մէջ, իսկ կատարեալի հիմքին մէջ կ'անհետի՝ կը սպաննեմ, կը սպաննէի, սպաննող, բայց՝ սպանեցի, սպանէ՛, սպանած, սպաներ.

բ.- բոլոր ձեւերուն մէջ ալ կրկնակ ն-ն կը պահուի իբրեւ սոսկական կրկնութիւն՝ կը սպաննեմ՝ սպաննեցի, սպաննէ. նաեւ սպաննիչ, բայց՝ սպանութիւն:

գ.- բոլոր ձեւերուն մէջ կը պահենք մէկ ն՝ կը սպանեմ, սպանեցի, սպանած, սպաներ, սպանիչ, այդպէս նաեւ սպանութիւն, սպանիչ, մարդասպան եւ այլն:

Նախընտրելի է գրել *սպանել* (տե՛ս յաջորդ հատուածը):

106.- Լ գիրք

Կրկնակ լ գոյացած է *ելել* եւ *ըլլալ* բայերուն մէջ: Ելլել բային մէջ երկրորդ լ-ն իբրեւ սոսկածանց կը գիտակցուի, հետեւաբար կ'իյնայ բայի կատարեալ հիմքի ձեւերուն մէջ՝ *կ'ելլեմ*, բայց՝ *ելած*, *ելեր*, *ելայ*, *ելար*, *ելաւ*, *ե՛լ/ ելի՛ր*: Ըլլալ բայը չունի անկման պարագայ, որովհետեւ անցեալ կատարեալը տարահիմք է՝ *եղայ*, *եղիր*, *եղէք*, *եղած*, *եղող*, *եղեր*, *եղի՛ր*:

Ծալել բային մէջ սոսկական կրկնութիւն է՝ «ծալլել»: Կրկնուած տարբերակը կ'երեւնայ բայի բոլոր ձեւերուն մէջ՝ Չի կրկնուի բառակազմական մակարդակի վրայ՝ *ծալք*, *ծալովի*, *բազմածալ*:

«Կլլել» բայի մէկ լ-ն կրնայ գիտակցուիլ իբրեւ սոսկածանց, գոյացած ըլլալով *կլանել* հին ձեւէն՝ լն>լլ լրիւ առնմանութեամբ՝ *կլանել*>*կլլել*: Սակայն հոս լ-ն կը կրկնուի բայական բոլոր ձեւերուն մէջ՝ *կլլող*, *կլլած*, *կլլեցի*, *կլլէ՛*: Կրկնակ է նաեւ պատճառական ձեւին մէջ *կլլեցնել*: Ծալել-ուն պէս բարդ բառերու մէջ կը մնայ մէկ լ-ն՝ *համայնակուլ*, *մարդակուլ*:

Նոյն կացութիւնը կը ներկայացնէ նաեւ *սպաննել/ սպանել* բայը: Կը թուի, որ այս *կլել*, *ծալել* եւ *սպանել* բայերու հարցերը առանձին լուծելը հակասութիւնները չի վերացներ: Արեւելահայերէնը այս բայերը կրկնակ չի գրեր՝ *ծալել*, *սպանել*: Չունի *կլել* բայը, այլ կը գործածէ *կուլ տալ* յարադրութիւնը: Սոսկական կրկնութենէ պէտք է խուսափիլ, որովհետեւ այլ պարագաներ ալ կրնան շարքի մէջ մտնել: Նուագագոյն անպատեհութիւն պիտի ներկայացնեն *ծալել*, *կլել*, *կլեցնել*, *սպանել* ձեւերը:

107.- Ռ եւ ր

Ռ եւ ր գիրերը հին հայերէնի եւ արեւելահայերէնի մէջ յստակօրէն տարբեր հնչիւններ են, բայց արեւմահայերէնի մէջ կորսնցուցած են իրենց զատորոշիչ հնչոյթային արժէքը, զա-

նագանելի չեն եւ ուղղագրական դժուարութիւններ կը պատճառեն:

Ռ եւ ր գիրերը կը հանդիպին բառի բոլոր դիրքերուն մէջ: Միայն որոշ պարագաներ օրէնքներով կարելի է որոշել, իսկ մեծ մասը պէտք է սերտողութեամբ իւրացնել: Օրինական պարագաներ կարելի է համարել հետեւեալները.

ա.- Բառին սկիզբը միշտ ո կը գրենք, ինչպէս՝ *ռազմիկ, ռազմաճակատ, ռահվիրայ, ռեհան, ռամիկ, ռետին, ռոճիկ, ռումբ, ռմբարկու, ռունգ, ռուպ, Ռումանիա, Ռուսաստան, Ռաֆֆի, Ռաֆայէլ, Ռոպէր* եւ այլն: Ոմանք յետին փոխառութիւնները ր-ով կը գրեն. թելադրելի է պահել աւանդական գրելակերպը:

Բացառութիւններ են *րոպէ, րոք* (մանելիք) եւ հայ վիպասան *Րաֆֆի*:

բ.- Արմատական բառերու մէջ ն բաղաձայնէն առաջ միշտ ո կը գրուի: Այսպէս՝

1.- *Առնէտ, խոնջայլ, հոնդին, առնել, բեռնակիր, խառն, խուռն, բուռն, դառն, սառն* (պաղ՝ վերաբերմունքի), *եղեռն, լիսեռն, ոլոռն* եւ այլն, ինչպէս նաեւ ասոնցմէ կազմուած բարդ ու ածանցաւոր բառեր, ինչպէս՝ *բուռն* (սաստիկ)՝ *բոնի, բոնօրէն, բոնաբարել, բոնադատել, դառն՝ դառնանալ, դառնահամ, դառնութիւն, դառնաղի, խառն՝ խառնել, խառնիճաղանճ, խառնակիչ, խառնիխուռն, խուռներամ, եղեռն՝ եղեռնագործ, եղեռնադատ, եղեռնական, եղեռնապատում* եւ այլն:

2.- Բառավերջի ն-ն կորսնցուցած արմատական բառեր. *ամառ, բուռ* (կայ նաեւ *բուռն* ածականը), *բեռ, գառ, դուռ, թոռ, լեռ, ձեռ(ք), ձմեռ, ոտ(ք), նուռ, սառ* (կայ նաեւ *սառն* {պաղ՝ վերաբերմունքի}) եւ այլն, բայց այս բառերը ածանցումի կամ բարդումի ենթարկելու ատեն ն-ն մէջտեղ կ'ելլէ. *ամառ՝ ամառնային (ամառն-ային), ա՛ռ՝ առնել (առն-ել), բեռ՝ բեռնալ, բեռնակիր (բեռն-ալ, բեռն-ա-կիր), գառ՝ գառնուկ, գառնարած (գառն-ուկ, գառն-արած), դուռ՝ դոնապան (դուռն-ա-պան), թոռ՝ թոռնիկ, թոռնուհի (թոռն-իկ, թոռն-ուհի), լեռ՝ լեռնային*

(լենն-ային), ձեռք՝ ձեռնածալ (ձեռն-ա-ծալ), ձմեռ՝ ձմեռնային (ձմեռն-ային), նուռ՝ նունենի (նուռն-ենի), սառ՝ սառնարան (սառն-արան) եւ այլն: Այս շարքի արմատներէն ոմանք կրնան առանձին չգործածուիլ, բայց կրնան դառնալ բարդութեան երկրորդ բաղադրիչը. մեռնիլ՝ անմեռ, անմեռուկ, մոռնալ՝ անմոռ, անմոռանալի եւ այլն: Առնել բային արմատը առու, առուչ, առոց եւ առիկ ձեւերով կայ շարք մը բարդութիւններու մէջ՝ փորձառու, ակնառու, սրտառուչ, արտառոց, բացառիկ, ապառիկ, անառիկ:

Կարգ մը բառերու մէջ ն-էն առաջ ր կու գայ, որովհետեւ անոնք ծագումով այլ կազմութիւն ունին, ինչպէս՝ զարնել (զարկանել), կրնալ (կարենալ), վերնալ (վերանալ), վերնատուն (վերին տուն), գիրնալ (գիրանալ), վրնջել (վրինջ) եւ այլն:

գ.- Պէտք է գիտնալ նաեւ, որ բնաձայնական բառերու վերջաւորութեան կը գրուի ո՝ ճր՝ոռ, մը՝ոռ, խը՝ոռ, իսկ մէջը ր՝ ճը՝րթ, խը՝րթ, մը՝րթ: Սսիկա բառակազմութեան մէջ ալ կը պահպանուի. այսպէս՝

ճը՝ոռ	ճոռոց	ճոռալ	ճոճոալ	ճոճոց
մը՝ոռ	մոռոց	մոռալ	մոմոալ	մոմոց
մը՝րթ	մրթալ	մրթոց	մրթմրթալ	մրթմրթոց
քը՝րթ	քրթալ	քրթոց	քրթքրթալ	քրթքրթոց

Ռ հնչիւնը շփական ձայնորդ է, բնաձայնին վերջաւորութեան կ'երկարի ու արմատի մէկ գործածութիւնը միշտ կրկնակի ո-ով կ'ըլլայ՝ ճոռալ, մոռալ, իսկ երկու անգամ գործածուելու պարագային մէկ՝ ճոճոալ, մոմոալ, ճիշդ միւս շփականներուն պէս՝ խշշիւն, խշխշիւն, նուալ, ննուալ եւ այլն: Բնաձայնութիւններէն ոմանք ունին միայն կրկնաւոր ձեւը՝ փսփսալ, մզմզալ եւ այլն:

Պէտք է նկատի ունենալ, որ բնաձայնական բառերու մէջ շփականներու կրկնակ գրութիւնը աշխարհաբարեան երեւոյթ է. գրական հին լեզուէն փոխանցուած բնաձայնական բառերը

այլ տեսք եւ արտասանութիւն ունին՝ *պոռալ, գոռալ, գոհնչ, գռալ, գռոց*։

- **Մրթալ, մրթմրթալ**. ոմանք նկատել կու տան, թէ *մրթալ, մրթմրթալ* բայերը առաջացած են *մոռութ* բառէն, հետեւաբար *ռ*-ով պէտք է գրուին։ Անկախ անկէ, թէ *մոռութ*-ը ինչ ծագում ունի՝ ըսուածը համոզիչ կրնայ թուիլ, բայց երբ նկատել տանք նոյնպիսի կազմութեամբ բնաձայնները՝ *քը ըթ՝ քրթալ, փը ըթ՝ փրթիլ, ճը ըթ՝ ճրթան* (հասուն պտուղը), այլեւ ակտորդ կ'ըլլայ մտածել *մոռութ*-ի մասին։ Դեռ կան գրական լեզուին մէջ մուտք չգործած ուրիշներ եւս՝ *ճը ըթ-պըրթ, խը ըթ-փըրթ, քըրթ-փըրթ* եւ այլն։ *Մրթալ*-ը այս համակարգին հարազատ ձեւ է։

- **Մրմոալ** (ցաւի) - **մոմոալ** (կատուի ձայն հանել). յաճախ կը շփոթուին իրարու հետ։ *Մրմոալ* բառը կը ծագի *մրմոռ* բառէն, *մոմոալ* բառը՝ *մը մո* բնաձայնէն։ Վերջը կը մրմոայ, կատուն կը մոմոայ, վերջին մրմոոցը, կատուին մոմոոցը։

Գրաբարի բառարանները տարբերակներ կը նկատեն *մոմոալ* եւ *մրմոալ* բառերը։ Վերջինին համար կը նշեն առաջինը ու կու տան միայն մէկ իմաստ՝ «գազանի մոնչելը, կատաղի, սպառնական ձայներ հանելը»։ Այս իմաստին համար տարօրինակ է *ռ*-ով տարբերակը, որովհետեւ *ռ*-ով վերջացող բնաձայն կրկնաւորները *ռ>ր* տառափոխութեան երբեք չեն ենթարկուիր՝ *գոռգոռալ, պոռպոռալ, ճոռոռալ*։ Բառարանները համապատասխանաբար կու տան *մոմոել, մրմոել, մոմոումն, մրմոումն* տարբերակներն ալ՝ միշտ նոյն իմաստով (Նոր Բաղկիրք, Արմատական, Ղազարեան)։ Գրաբարի բառարանները չունին նաեւ *մրմոռ* (խոր, սուր, մնայուն ցաւ) բառը, որ նոր հայերէնին շատ հարազատ բառ է (Ճերմակ Մասիս սիրտը մրմոռ)։ Բառը շատ հաւանաբար եղած է հին հայերէնի մէջ, վկայ վերի *մրմոալ* (ել) եւ *մրմոումն* ձեւերը (թէեւ քաղուած իմաստները, ինչպէս

բառարանագիրներն ալ ցոյց կու տան, պատշաճ են *մոմոալ*, *մոմոումն* ձեւերուն): Աղայեան եւ ուրիշներ արդէն կը զանազանեն *մոմոալ*-ն ու *մրմոալ*-ը: Առաջինը «մոլտալ, մոմոոց հանել, քթի տակից անորոշ ձայներ հանել, քթմնջալ», երկրորդը՝ «կսկծալ, մրմուռ զգացուել, մորմոքուել» իմաստներով, իսկ *մրմուռ*-ը կը բացատրէ իբրեւ «մարմնական ցաւ, կսկիծ, ապա վիշտ, տառապանք, հոգեկան ցաւ»: Կայ նաեւ այս կրկնաւոր գոյականին պարզ ձեւը: Քեսապի բարբառով կ'ըսեն *մրոռը քիշիլ*, իբրեւ՝ ցաւը տանիլ, ցաւին արժանի ըլլալ: Արեւելահայ բառարանագիրները կու տան գաւառական *մուռ* բառը «քէն, ոխ, վրէժ» իմաստներով՝ *մուռը հանել*, վրէժ լուծել: Ուրիշ հարց է, որ գրաբարի բառարանագիրները հայ հին մատենագրութեան մէջ չեն գտած *մրմուռ* բառը (բայց կայ *մորմ*-ն ու *մորմոք*-ը): Բնաձայն կրկնաւորներուն մէջ չկայ ո>ր հնչիւնափոխութիւն (պոռպոալ, գորգոռալ), իսկ *մրմուռ*-ը, *գրգիռ*-ին ու *թրթիռ*-ին պէս, զգացում կ'արտայայտէ եւ ոչ ձայն:

դ.- Ռ կը գրուի չ, *անչ*, *աչ*, *ինչ*, *նչիւն* ածանցաւոր բնաձայնութիւններուն մէջ, ինչպէս՝ *բառաչ* (*բառաչել*), *զոհնչ* (*զոհնչել*, *զոհնչիւն*), *թառանչ* (*ցաւի հեծեծանք*), *խոհնչ* (*խոհնչել*, *խոհնչիւն*), *խոչակ* (*խոչափող*, *խոպոտ*, *խոկալ*, *խոմբալ*), *կառաչ* (*կառաչել*), *կոհնչ* (*կոհնչել*, *կոչիւն*), *կառանչ* (*ագրաւի ձայն*), *կառանչել*), *հառաչ* (*հառաչանք*, *հառաչել*), *հոչակ*, *ճոհնչ* (*ճոհնչել*, *ճոհնչիւն*), *մոռնչ* (*մոհնչել*, *մոհնչիւն*), *շոհնչ* (*շոհնչել*, *շոհնչիւն*), *պոռչտուք*, *փոհնչել*:

Կարգ մը բնաձայնութիւններ միայն ո կ'ունենան վերջայանգին, ձայնաւորէ ետք *պոռ(ալ)*, *պոռպոալ*, *պոռչտուք*, *գոռ(ալ)*, *գորգոռալ*, *գոռգոռոց*: Ջ-ով եւ ր-ով կը գրուին բնաձայնական շարք մը բառեր, ինչպէս՝ *վրինջ* (*վրնջել*, *վրնջիւն*), *յորանջ* (*յորանջել*), *մրմունջ* (*մրմնջել*), *տրտունջ* (*տրտնջալ*) եւ այլն:

ե.- Առ նախածանցով ունինք բազմաթիւ ածանցաւոր բառեր. *առանձին, (անձ՝ առանձնութիւն, առանձնայատուկ, առանձնանալ, առանձնաշնորհեալ, առանձնատիպ), առանցք (անցք), առաջ (աջ՝ առաջադէմ, առաջադրանք, առաջադրել, առաջարկ, առաջարկել, առաջաւոր, առաջին, առաջնակարգ, առաջնորդ), առարկել (արկել՝ առարկայ, առարկութիւն), առաւել (աւել՝ առաւելութիւն, առաւելաբար), առերես, առէջ, առընթեր, առնչութիւն, առնչուիլ (ինչ), առժամեայ, առլի, առկախ, առկայ, առկայծ, առհաշիւ, առհաւատչեայ, առյաւէտ, առնուագն, առողջ, առձեռն, առօրեայ, առտնին* եւ այլն:

Կարգ մը պարագաներու առ-ը նախադաս կապ կը մնայ՝ *առ այսօր, առ այժմ, առ յաւէտ, առ ի գիտութիւն, առ ի քննութիւն, առ ի զգուշացում* եւ այլն:

զ.- Բազմապատկական-սաստկական ածանցներուն մէջ միշտ ո կայ եւ ոչ ր.

- **կոտ.** *կոխել՝ կոխկոտել.*

- **ոտ.** *ցատկել՝ ցատկոտել, ճանկել՝ ճանկոտել, ճեղքել՝ ճեղքոտել. սեղմել՝ սեղմոտել, նաւել՝ թփոտալ, ձաբոտել.*

- **ուրոտ.** *լիզել՝ լզուրոտել, քսուիլ՝ քսուրոտուիլ, կոխել՝ կոխուրոտել.*

- **ոթկ.** *ճմռթկել (ճմլել/ճմռել՝ սաստկականով):*

Արմատական ն բաղաձայնի նախորդող դիրքէն դուրս, միւս բոլոր բաղաձայններէն առաջ ընդհանրապէս ր կը գրուի, ինչպէս *արդիւնք, արժան, արծիւ, արհեստ, արձան, արտ, արցունք (արտասուք), արփի, արքայ, բարկ (բարկութիւն), բուրգ, գիրկ, երբ, երգ, երդիկ, Երզնկա, երթ (երթուդարձ), զարմ (զարմիկ), զուրկ (զրկանք), թարմ, լերկ, ջերմ, յարգի* եւ այլն: Ը-ի կորուստ կայ *քարշել՝ քաշել, խարշել՝ խաշել* բայերուն մէջ: Կը պահպանուի *զետնաքարշ, աղեխարշ* բառերուն մէջ: Ը կապակցութեամբ ամփոփուած բառեր են *ճարտասան (ճարտարասան), մարմաշէն (մարմարաշէն), տաւարած (տաւարարած):*

Մակայն ո-ն եւ ր-ն կրնան հանդիպիլ ե՛ւ ձայնաւորներէ առաջ, ե՛ւ բառավերջին, ուր ոչ մէկ օրինաչափութեամբ կարելի է զանազանել զանոնք: Ըստ յաճախականութեան՝ ր-ն աւելի շատ կը հանդիպի: Մտորել կու տանք հիմնական շարք մը ո ունեցող բառերու, որոնք վերի օրինաչափական պարագաներէն դուրս կը մնան. *աթոռ, ախոռ, ահռելի, անառակ, անտառ, ապառաժ, առագաստ, առած (առածանի, բայց Արածանի զետը), առակ (առակագիր), առանց, առասպել, առաստաղ, առատ, առաւօտ, առաքել, առաքինի, առեղծուած, առիթ, առիծ, առիք (առաստաղի սենեակ), առինքնել, առոյգ, առու, առուոյտ, առտու, աստառ, արբշիռ, բառ, բեւեռ, գառագեղ, գաւառ, գոռոգ, գուռ, գոհի, գոռոգ, դեռ, դոռի (կէսեփ), եռալ (եռանդ), գառամ, գառանցանք, գառիթափ, զգայնել (փսխել), զեփիւռ, զկեռ, զմուռս, թառ, թառամիլ, թոռմիլ, թափառիլ, թիռ (թռչուն, թռչիլ), թշուառ, թռուցիկ, ժայռ, ժանգառ, ժառանգ, ժուռ գալ, լառ (հաւազգի մը), լուռ (լռել, լռին, լռութիւն, լռակեաց), խեռ (ըմբոստ), խռիւ, խռնջայլ (խխունջ), խռով (խռովք, խռովիլ, խռովարար), ծառ, ծառայ, ծուռ (ծոռի, ծոռնել, ծուռումուռ), կանկառ, կառք (կառատուն, կառաշար, կառավարել, կառավարիչ), կառափ (գլուխ, զագաթ՝ կառափնարան, կառափնատուն), կառոյց (կառուցել), կառչիլ, կարկառ (բարձունք), կարկառել (երկարել), կեռ (ճանկաձէւ ծայր ունեցող երկաթ), կիտուռ (մարախ), կեռաս, կնճիռ (կնճոռտ, կնճոռտիլ), կշիռ (կշռել, կշռաքար), կոռ (ձրի աշխատանք), կուռ (սեղմ, ամուր՝ ամրակուռ), կուռք (կոռպաշտ), կոռահել (գուշակել), կոան (մուրճ՝ կոանել), կոհիւ, կոթնիլ, կոունկ, կոուփ, հեռու, Հոռի (հայկական ամսանուն), հոռովել, հուռա՝, հոետոր, ձառ (ծուռ), խոժոռ, ձգեռտ (ստամոքսի կազ), ձգրոտալ, ձառ, ձառախօս, ձառընտիր, ձապուռ (ճանկ), ձառագայթ, ձիռ (ողկոյզի մաս), ձոռաքաղ, ձոռ (կիսախողովակ), ձոռով, ձպուռ, մամուռ, մաճառ (չորցուած ձուկ), մատուռ, մատուռակ (գինի հրամցնող, սպասեակ՝ մատուռակել), մացառ (մացառուտ), մաքառիլ, մեռել (մեռելաթաղ, մեռելատուն),*

միւռոն, միլիառ, մոռ (մանիշակագոյն), մոայլ, մոռոթ, յամառ (յամառիլ, յամառութիւն), յարել (սեւեռել), յուրթի, նառն (կոճակի օղակ, լամբակ գարդի), նեռ (սատանայ), նուռ (նոնենի, նոնակ), շառ (վառ կարմիր շառագունիլ), շառայլ (ցոլք), շառատ (թուխ կարմիր՝ ձի), շառաւիղ (սերունդ, ճառագայթ), շառափ (շող), շառտել (մորթը ճեղքել), շեռ (մէզ), շուռ գալ, շոայլ, ոռք (լետոյք՝ յոռեգոյն, յոռետես, յոռի), ուռիլ (ուռեցք, ուռուցք, ուռուցքաբան), ուռենի, ուռկան, ուռճանալ, չուառ (թշուառ), չռել (լայն բանալ՝ աչքերը), պայծառ (պայծառատես, պայծառամիտ, պայծառիլ), պառակտել (պառակտուիլ), պառաւ, պառկիլ (պառակիլ), պատառ (պատառաքաղ, պատառոտուն, պատռտել), պատկառիլ (անպատկառ, պատկառիլ, պատկառանք, պատկառելի, պատկառագրոյ), պատճառ (պատճառաբանել, պատճառել, անպատճառ), պոռթկալ, պոռոյգ (հարսի դրամօժիտ), պոունկ, պոստել, ջեռիլ (սաստիկ տաքնալ), սակառ, սեռ (սեռական, երկսեռ), սեւեռել (սեւեռուն), սիսեռ, սկիւռ, սպառիլ (անսպառ, սպառողական, սպառիչ), սփիւռք, (սփռել, համասփիւռ), վաճառք, (վաճառական, վաճառել, վաճառորդ), վառ (վառել, վառվորուն, վառօդ), վճիռ (վճռել, վճռակամ), վտառ, տակառ, տառ (տառանշան), տառեխ (ձուկ մը), տառեղ (արագիլի տեսակ), տառփալ (ցանկալ կնոջ), տեռ (բարակ լաթ), ցանցառ, ցիռ (վայրի էջ), փառակ (ընկոյզին միջուկին կէտը), փառք (փառաւոր, փառաբանել, փառահեղ, փառատենչ, անփառունակ, սնափառ), փեռեկտել (երկպառակել), քառասուն (քառեակ, քառակուսի, քառանկիւն, քառսունոտնի), օճառ եւ այլն:

- **Փնտռել/փնտրել.** արեւելահայերը կը գրեն *ր-ով փնտրել*: Ըստ Աճառեանի՝ բառի արմատն է *պտիռ*, որմէ *պտռել*, ապա՝ *փնտռել*: Ունինք նաեւ *փնտռտել*, *փնտռտուք*: Միալագրութիւն է *փնտրռել* ձեւը:

- **Տոսա/տորաւս.** բառարաններուն մէջ կայ առաջինը իբրեւ փոխառութիւն drama բառի: Կը նշանակէ «թատերախաղ» եւ «ողբերգական դէպք»: Առօրեայի մէջ կայ միայն

տրամա՝ նոյն իմաստներով: Առաջին իմաստով կը նոյնանայ տրամախօսութիւն հայերէն բառին: *Տրամա*-ն աւելի կենսունակ է ու հայահունչ քան *տռամ*-ը:

108.- Ռ>ր տառափոխութեան պարագաներ

Գրաբարի մէջ կար ո>ր հնչիւնափոխական երեւոյթ է, որ չի գործեր արեւմտահայերէնի մէջ, բայց երեւոյթը կը պահպանուի աւանդական ուղղագրութեան կանոնակարգին մէջ ոչ թէ իբրեւ հնչիւնափոխութիւն, այլ իբրեւ տառափոխութիւն:

Ռ>ր տառափոխութեան հետեւեալ պարագաները կը գոյատեւեն աւանդական ուղղագրութեան մէջ.

ա.- ընթերցելի – ընթեռնլի/ընթեռնելի. գրաբարի *ընթեռնուլ* բառի կատարեալն է *ընթերցայ*: Յ-ն կատարեալի հիմքն է: Կար նաեւ *ընթերցանել* տարբերակը: Ատկէ ունինք *ընթերցել* (առանց ան սոսկածանցի) արդէն իբրեւ պարզ բայ գիտակցուող բայը՝ *ընթերցեցի, ընթերցուիլ*, նաեւ այդ հիմքէն կազմուած այլ բառեր՝ *ընթերցուած, ընթերցում, ընթերցարան, ընթերցասէր, ընթերցասրահ*: *Ընթերցանել* հին ձեւէն ունինք *ընթերցանութիւն*:

Գրաբարի *ուլ* լծորդութեան բայերը մեծաւ մասամբ դարձած են *ել* լծորդութեան բայեր, ինչպէս *արգելուլ՝ արգիլել, առնուլ՝ առնել, դիզուլ՝ դիզել, զենուլ՝ զենել, կիզուլ՝ կիզել, հեղուլ՝ հեղել, հերձուլ՝ հերձել, յենուլ՝ յենել*: Ընթեռնուլ-ն ալ բնականաբար պիտի դառնար *ընթեռնել*, որ թէւ կայ մեր նոր բառարաններուն մէջ, բայց *ընթերցել* տարբերակը աւելի կը գործածուի:

Ընթեռնուլ եւ *յեղուլ* հին ձեւերէն ունինք *ընթեռնլի* եւ *անյեղլի* ածականները: Երկրորդը խնդիր չունի, բայց առաջինը ստեղծած է տարբերակ՝ *ընթեռնելի, անընթեռնելի* (*ընթեռնել* բայէն), ինչպէս՝ պիտի ըսէինք *կիզելի, հեղելի, հերձելի*: *Ընթեռնելի, անընթեռնելի* ձեւերը արդէն կը գործածուին: Ընթերցել բայէն կայ նաեւ *ընթերցելի* ապառնի դերբայը՝ իբրեւ «կարդացուելիք»: *Ընթեռնելի* բառը ունի իմաստային տարբեր

երանգ. բառը կը գործածենք ձեռագիրի մը համար, որ յստակ է ու կարելի է սահուն կարդալ, հականիշը՝ *անընթեռնելի*:

բ.- դառնալ – դարձնել, բառնալ – բարձ, յառնել – յարութիւն. գրաբարի մէջ կար նաեւ *բ>ռ* հնչիւնափոխութիւն: Այսպէս՝ *դառնալ* չէզոք բայը կը սերի *դարձնել* ներգործական բայէն, արմատը՝ *դարձ*, որմէ ունինք *դարձեալ, վերադարձ, հոգեդարձ, դարձդարձիկ* եւ այլն, *բառնալ (ամբառնալ, համբառնալ)* հին բայերուն արմատն է *բարձ*, որմէ ունինք *բարձունք, համբարձում, մանկաբարձ, վերամբարձ, ամբարձիչ, հոգաբարձու* եւ այլն, *բարձր* ձեւէն՝ *բարձրութիւն, բարձրանալ, բարձրադիր, բերձ* ձեւէն՝ *բարձրաբերձ* եւ այլն: *Յառնել* «ոտքի ելլել» հին բայի արմատն է *ար*, որմէ ունինք *արի*՝ (արել, եկուր), *յարութիւն, Քրիստոս յարեալ, յարուցեալ, յարուցիչ, յարուցել, վիճայարոյց* եւ այլն:

գ.- դուռ՝ դրան/դրան. ն վերջայանգով քանի մը բառեր գրաբարի ներքին հոլովման ենթարկուելով սեռական հոլովի մէջ նախորդող *ռ*-ն կը վերածէին *ր*-ի: Այդ բառերն են *լեռն՝ լերին, դուռն՝ դրան, ամառն՝ ամրան, ձմեռն՝ ձմրան, մատուռն՝ մատրան*: Աշխարհաբարի մէջ ոմանք կը շարունակեն նոյն սովորութիւնը՝ գրելով *դրան, լերան, ամրան, ձմրան, մատրան*, ոմանք մերժելով կը գրեն *լեռան, դրան, ամռան, ձմռան, մատռան*: Արեւելահայերը որդեգրած են այս վերջին ձեւը:

Բառակազմական մակարդակով նոյն երկձեւութիւնը կը շարունակուի այս բառերուն պարագային՝ *ձմերոց, ձմերանոց, ձմերել, ամարոց, ամարանոց* (ոմանք եւ արեւելահայերը՝ *ռ*), մինչ ն-ի գոյութեան պարագային միշտ *ո՝ ձմեռնային (ձմեռային), ձմեռնաքուն, ամառնամուտ, ամառնային (ամառային)*:

Ռ>ր հնչիւնափոխութիւնը վերի հինգ բառերէն դուրս գրաբարի մէջ գոյութիւն չունի. *բուռն՝ բոին կամ բռան, կուռն՝ կռան, նուռն՝ նռան, սիսեռն՝ սիսեռան, նեռն՝ նեռին, դառն՝ դառին, լիսեռն՝ լիսռան* եւ այլն: Որոշ բառեր ունին երկու ձե-

ւերն ալ. *ոլոռն՝ ոլոռան-ոլորան, ոլոռանց-ոլորանց, ձեռն՝ ձեռին*, բայց *ձեռամբ* գործիականի կողքին նաեւ *ձերք* տարբերակը, որ ըստ Աճառեանի՝ «երեւան է հանում նախաւոր ՁԵԸ ուղղականը»: Այս բոլոր բառերը միշտ ո-ով կը գրուին թէ՛ հոլովական եւ թէ՛ բառակազմական մակարդակներու վրայ, վերջայանգի ն-ն մնայ կամ ոչ՝ *ձեռնաթափ-ձեռագործ, ձեռնասիւն-ձեռակերտ, ձեռնառումբ-ընձեռել (ընձեռնել սխալ ձեռել), ձեռնածալ-ձեռային, ձեռնամուխ-ձեռատետր* եւ այլն: Խնդրոյ առարկայ բառերուն ո>ր հնչիւնափոխութեան մասնայատուկ պարագան պահելով իսկապէս խառնակ վիճակ մը կը ստեղծուի ասանդական ուղղագրութեան մէջ ու անխուսափելի հակասութիւններ կը ստեղծէ, եթէ *մտնան*-ը ր է, ինչո՞ւ *մտնուան, մտնէն* ու *մտնով* ձեռերը ո են, քանի *մտերոց, մտերանց* եւ *մտերել*-ը ր են՝ ինչո՞ւ *մտնային*-ը ո պահել: Իրաքանչիւր գրաճանաչէ լեզուի պատմութեան հմտութիւն կարելի չէ պահանջել: Հին ու նոր կազմութիւններ ու ձեռեր ըլլալը ինչպէ՞ս ըմբռնէ աշակերտը:

Այս խառնակ վիճակէն դուրս գալու լաւագոյն միջոցը ո-ն անփոփոխ պահելն է.

ուրեմն՝

- **ձԱՄԵՆ**՝ *ձմռան, ձմեռուան, ձմեռոց, ձմեռանոց, ձմեռել, ինչպէս՝ ձմեռնամուտ, ձմեռնաքուն, ձմեռուան:*

- **ԱՄԱՌՈՒ**՝ *ամռան, ամառուան, ամառոց, ամառանոց, ինչպէս՝ ամառնամուտ, ամառնային (ամառային):*

- **ԼԵՆ**՝ *լեռան, (ինչպէս՝ լեռէն կամ լեռնէն):*

- **ՊՈՒՆ**՝ *դռան (ինչպէս՝ դուռին, դռնէն կամ դուռէն):*

- **ՄԱՍՏՈՒՄ**՝ *մատոռան (ինչպէս՝ մատուռի):*

Ռ>ր հնչիւնափոխութեան ոլորտի մնացեալ բառերն են *դրկից, դրացի, մտերուկ* եւ *ձերքագատել:*

- Արեւելահայ բառարանները *դրկից* եւ *դրացի* բառերը գաւառական կը նկատեն, որովհետեւ իրենց յատուկ է *հարեւան* բառը: Ունին նաեւ *դրկից* (ո-ով՝ դրան կից):

- **Ձմերուկ** բառը որքան ալ ստուգաբանօրէն կը կապուի *ձմեռ* բառին, ունի իմաստային հակադրութիւն մը:

- **Ձերբակալել** բային *ձերբ* բաղադրիչը *ձեռն* բառին գործիական հոլովն է հին հայերէնի մէջ:

դ.- Ռ>ր տառափոխութիւնը կրկնաւորներու մէջ. ո>ր փոփոխութիւն ունինք նաեւ քանի մը կրկնաւոր բառերու մէջ, ուր ո-ն առաջին բաղադրիչին մէջ ր կը դառնայ.

- **բարբառ.** *բառ* արմատէն՝ *բարբառիլ, բարբառախօս, անբարբառ, մեծաբարբառ, բարձրաբարբառ, բարբառագէտ:*

- **գրգիռ.** անկախ գործածութիւն չունեցող *գիռ* արմատէն՝ «հակառակութիւն, դրդում»՝ *գրգռել, գրգռիչ, գրգռութիւն, ջղա-գրգիռ:*

- **թրթիռ.** *թիռ* արմատէն՝ *թրթռալ, թրթռոց, թրթռացում:*

- **կարկառ.** *կառ* արմատէն՝ *կարկառուն, կարկառիլ:*

- **մրմուռ.** *մուռ* անգործածելի արմատէն՝ *մրմռալ, մրմր-նացնել:*

- **սարսուռ.** *սառ* արմատէն՝ *սարսռալ, սարսռագղեցիկ:*

Ռ>ր հնչիւնափոխութիւնը մասնակի երեւոյթ է ու չ'ընդ-գրկէր ո վերջայանգ ունեցող միւս կրկնաւորները՝ *եռուզեռ, ծռռռել, ծռռռումուռ, շռռռումուռ, վառվռուն, վառվռիլ, թռվռալ, գոռգոռալ, պոռպոռալ, հռհռալ, ճռճռալ, խռխռալ* եւ այլն:

Ի հակադրութիւն ո-ի մասնակի պարագաներուն՝ ր-ի կրկնութիւնը ոչ մէկ պարագայի տառափոխութեան կը տանի: Բ-ի կրկնութեան քանի մը պարագաներ կան. ա) կրկնաւոր-ներ՝ *կերկեր, թրթուր, հուրհրալ, մարմրիլ, սորսորալ, ծործոր, չարաչար, չարչարել, փորփրել, քարքարոտ, քրքրել (հետա-քրքիր)* եւ այլն: բ) Բառի բաղադրիչներու քովէ քով գալով՝ *եր-րորդ, չորրորդ, բերրի* (րի՝ ածանց), գ) սղումով՝ *մրուր՝ մրրիկ, օրօրան՝ օրրան*, դ) հիմքային՝ *տարր, անդորր:*

ե.- Այր-առն. հակառակ երեւոյթը, այսինքն՝ ր>ռ փոփո-խութիւն ունինք քանի մը բառերու մէջ. այսպէս՝

- **այր** գոյականը գրաբարի մէջ ունի զարտուղի հոլովում, սեռականը կ'ըլլայ *առն*, որմէ ունինք *առնական, առնակա-*

նութիւն, առնացի, առնանդամ, իսկ այր արմատէն՝ արական, արամբի (կայ նաեւ առնակին), ունինք հնաձեւ արանց ու կանանց, արանց ու տղայոց բառաձեւերը:

- **երեք** թուականէն ունինք *երեքամեայ, երեքթելեան, երեքզլխանի, երեքշաբթի*, իսկ **երի** ձեւէն՝ *երեակ* (երի-ակ), երեսուն (երի-ասուն), որմէ *երեսնամեակ, երեսնամեայ, երեսուննոց, եր* ձեւէն՝ ունինք *երրորդ, երրորդութիւն, երրորդական*, բայց բարդութիւններու մէջ **եռ**՝ *եռագոյն, եռաբլուր, եռանկիւն, եռայարկ, եռահատոր, եռապատիկ, եռաստիճան, եռամեայ, եռամսեակ, եռավանկ, եռոտանի* եւ այլն: **Եռ** տարբերակը երեք-ին հետ կրնայ նոյնանիշ բառեր ալ կազմել՝ *երեքթելեան-եռաթել, երեքյարկանի-եռայարկ, երեքզլխանի-եռազլուխ, երեքամեայ-եռամեայ* եւ այլն:

- **եռեակ** բառի կողքին *երեակ* եւ *երրեակ* գրողներ ալ կան: Լաւ կ'ըլլար, որ որդեգրուէր *երեակ* ձեւը, որ բառը հարազատօրէն մտնէր *քառեակ, հնգեակ, վեցեակ, եօթնեակ, ութնեակ, իննեակ* եւ *տասնեակ* ածանցաւոր թուականներու շարքին ու դուրս գար ո-ով գրուող բարդութիւններու շարքէն:

- **չորս** թուականը կազմուած է *չորք* անեզականին հայցականէն իբրեւ ուղղական: Բարդութիւններու մէջ կը մտնեն *չորս, չորք, չորեք* ու *քառ* տարբերակներով՝ *չորսմատնի, չորսզլխանի, չորսնոց, Չորք Մարգպան, չորքոտանի, չորեքթաթ, չորեքշաբթի*, իսկ *քառ* արմատէն՝ *քառասուն, քառանկիւն, քառամեակ, քառապատիկ, քառասմբակ, քառակուսի* եւ այլն:

Ստուգաբանօրէն ունեցած իրենց կապէն անկախ՝ **եղեռն** (ոճիր) եւ **եղեր** (սուգ, լաց, կոծ) գոյգը շփոթութիւններ կրնայ ստեղծել. առաջինէն ունինք՝ *եղեռնական, եղեռնագործ, եղեռնադատ, եղեռնապատում, եղեռնափորձ, Մեծ Եղեռն*, իսկ երկրորդէն՝ *եղերական, եղերամայր, եղերերգ, եղերերգակ, եղերերգութիւն* եւ այլն:

Նոյն արմատի տարբերակներն են *ջեռ, ջեր* եւ *ջերմ*: Իւրաքանչիւրով կազմուած բազմաթիւ բաղադրութիւններ

կան հին լեզուին մէջ ու ներկայիս ալ մեր լեզուին մէջ կը գործեն: **Ջեռ** հիմքէն ունինք *ջեռիլ` «սաստիկ տաքնալ»* (հին ջեռնուլ), *ջեռացում* կամ *ջեռուցում* (տաքացում), *ջեռուցիչ* (տաքցնող գործիք), *ջեր` որմէ ունինք ջերանոց (ջերմոց):*

109.- Ը գիրը ածանցներու եւ մասնիկներու մէջ

Ը-ն, բացի *առ* նախդիրէն, երբեք հանդէս չի գար ածանցներու եւ մասնիկներու մէջ: Այդ դերը կը կատարէ միայն ր-ն:

Ը-ն նախաածանցներու մէջ.

- **անդր(ա).** *անդրադարձ, անդրաշխարհ, անդրշիրիմեան..*
- **գեր(ա).** *գերիշխան, գերմարդ, գերադաս, գերաշնորհ...*
- **դեր(ա).** *դերանուն, դերբայ, դեր-գնդապետ...*
- **թեր(ա).** *թերակողմ, թերաճ, թերաւարտ...*
- **յար(ա).** *յարադիր, յանանուն, յարացոյց, յարաշարժ...*
- **ներ.** *ներգաղթ, ներաշխարհ, ներկայ, ներածել...*
- **շար(ա).** *շարադրել, շարասել, շարադասութիւն...*
- **պար(ա).** *պարբերութիւն, պարագլուխ, պարագիծ...*
- **ստոր(ա).** *ստորակէտ, ստորադաս, ստորագրել...*
- **վեր(ա).** *վերադարձ, վերաքննել, վերահսկիչ...*
- **տար(ա).** *տարաշխարհիկ, տարակարծիք, տարհանում...*
- **տրամա.** *տրամաբան, տրամաբանական, տրամադրել...*

Ը-ն վերջածանցներու մէջ.

- **աբար.** *քաջաբար, հայրաբար, գրաբար, աշխարհաբար..*
- **ագար.** *ցաւագար, խելագար, ջղագար.*
- **ավարի.** *մեծավարի, քաղաքավարի, արջավարի.*
- **արան.** *ննջարան, ուսուցչարան, ընթերցարան...*
- **արար.** *յուշարար, ներկարար, գիւտարար...*
- **արդ.** *խորանարդ, կորնթարդ, գմբեթարդ...*
- **արէն, երէն.** *յունարէն, հայերէն, անգլերէն, սերպերէն...*
- **աւոր.** *թագաւոր, իշխանաւոր, մեծաւոր, հեռաւոր...*
- **որակ.** *սեւորակ, դեղնորակ, սառնորակ...*
- **արք.** *լուծարք, գործարք.*
- **որդ.** *ճամբորդ, որսորդ, յաճախորդ, քառորդ...*

- ուոր. զինուոր, բանուոր, աղուոր...
- ուրդ. յագուրդ, արձակուրդ, աճուրդ, ժողովուրդ...
- րորդ, երրորդ. երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ...
- օրէն. խստօրէն, համեստօրէն, ազնւօրէն, քնքշօրէն...:

Ը-ն քերանականական մասնիկներու մէջ.

ա.- Եր եւ ներ յոգնակերտ մասնիկները. տուն՝ տուներ, պատ՝ պատեր, քաղաք՝ քաղաքներ, պարտեզ՝ պարտեզներ:

բ.- Վաղակատար դերբային մէջ. վազել՝ վազեր, խօսիլ՝ խօսեր, ճանչնալ՝ ճանչցեր: Ասով կը կազմուին վաղակատար ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները՝ վազեր եւ, վազեր ես, վազեր է. վազեր էի, վազեր էիր, վազեր էր:

գ.- Ժխտական դերբային մէջ, որ կը կազմէ սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու ժխտականը եւ հրամայականի արգելականը՝ չեմ գրեր, չէի գրեր, մի՛ գրեր, չեմ խօսիր, չէի խօսեր, մի՛ խօսիր, չեմ խաղար, չէի խաղար, մի՛ խաղար:

դ.- Բայի անցեալ անկատար եւ կատարեալ ժամանակներու եզակի Բ. եւ Գ. դէմքերու կազմութեան մէջ՝ կը վազէիր, կը վազեր, վազեցիր, կը խօսէիր, կը խօսեր, խօսեցար, կը խաղայիր, կը խաղար, խաղացիր եւ այլն:

110.- Ռ եւ ր գիրերը նմանաձայնութիւններու մէջ

ԱՌԱՏ (>առածանի)	ԱՐԱԾԻԼ (ճարակել. >կովարած)
ԱՌԱԾԱՆԻ (առածներու գիրք)	ԱՐԱԾԱՆԻ՝ գետը
ԱՌԻՔ (առաստաղի սենեակ)	ԱՐԻՔ (կաշիէ կապ)
ԲԱՌ (>բառարան, բառախաղ)	ԲԱՐ (պտուղ)
ԲԵՌ (>բեռնալ, բեռնակիր)	ԲԵ՛Ր (բերել բայի հրմ.ը> բարեբեր, ր բերրի)
ԲՈՌ (խոշոր ճանճ)	ՓՈՐ (> փորոտիք, փորել, փորփրել)
ԳԱՌ (>գառնուկ, գառնարած)	ցաւագԱՐ, խելագԱՐ
ԳՈՌ (սահեղաձայն. >գոռալ)	ՔՈՐ (քերուրտուք)
ԳՈՒՌ (քարէ փոքր աւազան)	ՔՈՅՐ (արականը՝ եղբայր. > քրոջ,
ՔՈՒՌակ (իշու ձագ. >քուռկիկ)	քրոջական)
	վարագՈՅՐ

ԳՐԳԻՌ (> ջղագրգիռ, գրգռել)
ԳՐԳՌԵԼ (դրդել.>գրգռություն)
ԹԱԹԱՆ (պտուտահողմ)

ԴԱՌՆ (լեղի. > դառնություն)
ԹԱՌ (>թառահար)
ԴԵՌ (տակալին. > դեռատի)

ԴԵՌԵԻՍ (տակալին)
ԴՈՒՌ (>դռնապան)

ԵՂԵՌՆ(ռճիր.>եղեռնագործ
եղեռնադատ)

ԵՌԱԿ (>եռ գալ, եռելեփիլ)
ԹՐՆ (թռչիլ բառին արմատը)
ԹՇՈՒԱՌ (>թշուառական)
ԹՈՌ (>թոռնիկ, թոռնուհի)
ԹՈՉԻԼ (թոիլ. >թոշուն)

ԼԱՌ (հաւագգի մը)
ԼԵՌ (>լեռնային, լեռնանցք)
ԼՈՒՌ (>լոին, լոակեաց
լռելեայն)

ԽՈՌՈՎԱԾ (>խռովիլ, խռովք)
ԿԱՌՔ (սայլ. > կառավարել,
կառատուն)

ԿԱՌԱՏՈՒՆ (կայարան)
ԿԵՌ (կարթաձեւ մետաղ)

ԿՈՌ (ձրի աշխատանք)
ԿՈՒՌ (ամուր. > ամրակոռ)
ԿՈՒՌՆԿ (թոշուն մը)
ԿՌԵԼ (կոփել)

ՀԵՌՈՒ (հեռանալ, հեռաղեկ,
հեռաստան)

ՀԵՌ (կոիլ)
ՁԱՌ(ծուռ)

հետաՔՐՔԻՐ (>հետաքրքրություն)
ՔՐՔԵԼ (փորփրել, պրպտել)
ԴԱԴԱՐ (հանգիստ. > դադրիլ)
ԹԱԹԱՐ (ժողովուրդ մը)

ԴԱՐ (100 տարի. >դարավերջ)

ԴԵՐ (պաշտօն. > դերասան)
ԹԵՐ (կողմ)
ԹԵՐԻ (>թերություն, թերանալ)
ԹԵՐԵԻՍ (գուցե)

ԴՈՒՐ (գործիք մը)
ԹՈՒՐ (սուր)

ԵՂԵՐ (սուղ. > եղերական,
եղերերգ)

ԵՐԵՐԱԿ (>երերուն, աներեր)
ԴԻՐ (դնել՝ հրամայականը)
ԴԺՈՒԱՐ (դժուարանալ, դժուար)
ԹՈՐ (կաթիլ. > թորիլ, քրտնաթոր)
ԹՐՋԻԼ (թացանալ)

ԼԱՐ (թել.> լարային. լարախաղ)
ԼԵՐ (եղի ր. ուրախ լե՛ր)
ԼՈՒՐ (համբալ. > լրատու, լրագիր,
լրտես, անլուր)

ԽՈՐՈՎԱԾ (>խորովել՝ միսը)
ԿԱՐԳ (> կարգապահ, կարգաթիւ)

ԿԱՐԱՏՈՒՆ (կարի գործարան)
ԿԵՐ (ուտել՝ բային հիմը)
ԿԵՐ (անասնակեր)

ԿՈՐ (ծուռ. >կորնթարդ, կորանալ)
ԿՈՒՐ (գետ մը)
ԿՐՈՒՆԿ (ոտքի յետնամաս)
ԿՐԵԼ (փոխադրել. >բեռնակիր)

ՀԵՐՈՒ (անցեալ տարի)

ՀԵՐ (մագ, >հերարձակ, հերաթափ)
ՁԱՐ (ձիու պոչին մազը)

ՁԵՌ(ք) (ձեռագործ), ձեռնոց)	ՑԱՐ (Ռուսիոյ կայսր)
ՃԱՌ (>ճառախօս, ճառընտիր)	ՁԵՐ (դուք՝ սեռականը)
մըՍՈՒՌ (ցաւ)	ՃԱՐ (հնար, > ճարել, անճար)
ՄՌՄՌԱԼ (մը՝ռ ձայն հանել)	ՄՈՒՐ (աղտ)
ՄՈՌՆԱԼ (<մոռացկոտ)	ՄՐՄՌԱԼ (այրուցքով ցափլ,)
ՅԱՄԱՌ (յամառիլ)	ՄՕՐ (մայր բառին սեռականը)
	ՄՈՐ (պտուղ մը)
	ՀԱՄԱՐ (ա) վասն. բ) թիւ)
	համարակալել, համարա-
	նիշ, համարակալութիւն, հա-
	մարել, համարեա՛
ՅԱՄԱՌԻԼ (պնդել)	ՀԱՄԱՐԵԼ (սեպել)
ՅԱՌԵԼ (սեւեռել)	ՅԱՐԵԼ (ըսել)
ՆԵՌ (հակա-Քրիստոս)	ՆԵՐ (տագերկին)
ՇԱՌ (կարմիր. > շառագունիլ)	ՇԱՐ(ք) (>շարել, շարան, շարունակ)
ՎՃԻՌ (>վճռել, վճռակամ)	ՈՃԻՐ (սպանութիւն.>ոճրագործ)
ՈՌ(ք) (յատակ. >յոռի, յոռեգոյն)	ՈՐ (յարաբերական դերանուն)
ՈՒՌ (>ուռեցք)	ՈՒՐ (տեղական մակբայ)
ՉԱՌԻ (չստացայ)	ՉԱՐԻ (չար բառին սեռականը)
ՊԱՏՌԵԼ (>պատառոտուն)	ՊԱՏՐԵԼ(խաբել. >պատրանք)
ՋԵՌ(իլ)(տաքնալ.>ջեռուցում)	ՋԵՐ (ջերմ. > ջերանոց),
ՍԱՌ (>սառոյց, սառնարան)	ՍԱՐ (լեռ)
ՍԵՌ (>սեռական, երկսեռ)	ՍԵՐ (> սերունդ)
սարՍՈՒՌ (դող.> սարսռալ)	ՍԷՐ (> սիրել, սիրուհի)
	ՍՈՒՐ (հատու. >սրել, սրիչ)
	ՍՈՅՐ (սլացք. > սուրալ)
ՎԱՌ (կրակոտ. > վառվորուն)	ՎԱՐ (հականիշը՝ վեր. > վայրէջք,
	գառիվար, դարվար)
ՎԱՌԵԼ (այրել.> վառելանիւթ)	ՎԱՐԵԼ(գործի մղել.>վարիչ,
	վարելահող, կառավարել)
ՎԱՃԱՌԵԼ (ծախել. > վաճառք)	ՎՃԱՐԵԼ (տալ. > անվճար)
ՎՏԱՌ (ձուկերու խումբ)	ՎՏԱՐԵԼ (վոնտել. > վտարում)
ՏԱՌ (գիր. > տառատեսակ)	ՏԱ՛Ր (տանիլ բային հրմ.ը)
	ՏԱՐ (օտար. > տարբեր, տարագիր,
	տարաշխարհիկ)
	ՏԱՐՐ (նիւթ. > տարրական,
	տարրալուծել)

ՏԵՌ (լրաթի կտոր)
ՑԻՌ (վայրի էջ)

ՏԵՐ (> տիրել, տիրութիւն)
ՁԻՐ(ք) (շնորհք. >ձրի, շնորհաձիր)
ՑԻՐ (ցրուել բային արմատը.>
ցանցիր, ցիրուցան)

ՔԱՌանկին, ՔԱՌակուսի
ՔԵՌԻ (մօրեղբայր. >քեռկին)
ՓԱՌՔ (> փառաւոր, փառա-
հեղ)

ՔԱՐ (>խաչքար. քարայր, քարեղէն)
ԳԵՐԻ (ստրուկ. >գերել, գերութիւն)
ԲԱՐՔ (սովորոյթ. > բարոյական)

111.- Վ հնչիւնի վ, ո, ւ, ու գրութիւնները

Վ բաղաձայն հնչիւնը արդի հայերէնի մէջ կ'արտայայտուի վ, ո, ւ գիրերով եւ ու կապակցութեամբ:

- Ո-ն բառին սկիզբը կ'արտայայտէ բաղաձայն+ձայնաւոր կապակցութիւն մը՝ «վօ», ինչպէս՝ *ոգնի, ոլորել, ոխ, ողբալ, ոչխար, որդի* եւ այլն: Ան նոյն հնչիւնը բառամէջին կ'արտայայտէ *Գէորգ* բառին մէջ: Միայն *վոհմակ* բառն է, որ կը գրուի վ-ով:

- Ու-ն վ բաղաձայն հնչիւնը կ'արտայայտէ ձայնաւորէ առաջ իր դիրքին մէջ՝ *նուազ, ստուեր, նուէր, կոուիլ, պահուր-տիլ, աղուոր, ազնուօրէն, արժանապատուութիւն:*

- Ի գիրը բաղաձայն «վ» կ'արտասանուի.

ա.- ա եւ ե ձայնաւորներէն ետք՝ *բաւ, կտաւ, կարաւան, մօտաւոր, հաւնիլ, սեւ, կեղել, բեւեռ, Սեւան, սեւնալ* եւ այլն, եւ ի ձայնաւորէն ետք բառավերջին եւ ձայնաւորէ մը առաջ ինկած դիրքին մէջ՝ *թիւ, անիւ, հովիւ, հիւանդ, դիւան* եւ այլն:

Աւ եւ իւ իբրեւ գրաբարի գործիական հոլովի քարացած ձեւեր՝ կան կարգ մը բառերու մէջ, ինչպէս՝ *պատճառաւ, պայմանաւ, իրաւ, շնորհիւ, մեղմիւ, բանիւ* եւ այլն:

բ.- ի վերջայանգ ունեցող բնաձայնով կազմուած բառերուն մէջ *ճււալ, նւալ, ճւճւալ, ճւճուոց, նւնալ, նւնուոց* (տե՛ս էջ 63-64):

գ.- ի վերջայանգով բառերու ոյ հոլովումին մէջ. *հոզի՛, հոզւոյն, եկեղեցի՛, եկեղեցւոյ* (տե՛ս էջ 57):

դ.- ւ կը գրուի նաեւ (ու-ի փոխան) արեւելահայերէնի կրաւորական բայերու սահմանական եղանակի ներկայ եւ անկատար ժամանակներու ձեւերուն մէջ՝ *տանջում է, գնահատում էր* եւ այլն (տե՛ս էջ 79-80):

իջեւան, իջեւանել, օթեւան, օթեւանել, քարձրաւանդակ բառերը յաճախ սխալմամբ վ-ով գրողներ կան:

Հայաստանի մէջ Այբուբենի վերջին երկու գիրերը շարքին շաղկապող *ել* շաղկապը կը գրուի փակագիրով (և) եւ կը համարուի առանձին տառ: Նոր ուղղագրութեամբ, օրինակ, *Երեվան* բառը անդ կը գրուի *Երևան* ձեւով: Աւանդական ուղղագրութեան մէջ եւ-ը իբրեւ բառ շաղկապ է, իսկ բառին մէջ՝ բաղաձայն-ձայնաւոր կապակցութիւն՝ *սել*:

- Վ կը գրուի.

ա.- բառին սկիզբը, բացի ո-ին վերապահուած պարագայէն, *վագր, վագել, վառ, վարագ, վերջ, վեց, վեգ, վեճ, վիճակ, վիրապ, վճիտ, վճիռ, վրան, վտակ, վկայ, վո՛ւշ, վո՛ւյ* եւ այլն:

բ.- բառին մէջ եւ վերջը, ո ձայնաւորէն ետք, *ովկիան, ովկիանոս, Ովսիա, Ովսաննա, զովասանք, գորով, զովանալ, թոթով, ծով, ծովեզերք, կողով, կով, հով, հովիւ* եւ այլն:

գ.- բարդութիւններու մէջ, ուր երկրորդ բաղադրիչը վ-ով կը սկսի, ինչպէս՝ *անվիատ, քանավեճ, խանդավառ* եւ այլն, կրկնաւորներու մէջ՝ *վազվզել, վառվռուն, վլվլուք* եւ այլն:

Հին հայերէնի մէջ վ ունէին *Հռովս, Սերովբէ* եւ *Քերովբէ* բառերը: Ներկայիս առաջինը կը գրուի *Հռով*, իսկ վերջին երկուքը՝ *Սերոբ* եւ *Քերոբ* ձեւով:

112.- Վ հնչիւնի գրութիւնը օտար բառերու մէջ

Նոր փոխառութիւններու եւ քարքառային բառերու մէջ վ հնչիւնի գրութիւնը կը ներկայացնէ խառն պատկեր մը.

-Բառասկիզբին վ՝ *Վարշաւա, վիլիս. Վիլնիւս, վուկար...*

Բառասկիզբին վօ հնչիւնը ատենին կը տառադարձուէր ո-ով, հայերէն բառերու համաբանութեամբ՝ *ոտրլիլ, ոլթ, Ոլթեր, ոլթարէն*, որոնք ձեւով ու գրութեամբ կը համապատաս-

խանէին հիներուն՝ *Որմիզդ, Ողիսես*, բայց վերջերս նորերը կը գրուին վ-ով՝ *Վոլկա, Վոլփօ, Վոլքան*, հակադրութիւն մը ստեղծելով հինի եւ նորի միջեւ:

- Չայնաւորէ առաջ իր դիրքին մէջ վ՝ *Նիրվանա, Սիլվա, Սելվեր, Սիլվեյթեր, Կալվին*, որպէսզի հակադրուի օտար բառերու ու-ին՝ *Մենուա, Մամուէլ*:

- Չայնաւորներէ ետք կը տառադարձուի ւ-ով, հայերէն բառերու համաբանութեամբ՝ *Վարշաւա, լաւա, թաւա, Մաւեան, տիւան, Նեւատա...*

113.- Ֆ գիրը

Ֆ գիրը ուղղագրական դժուարութիւններ չունի:

Պէտք է գիտնալ, որ Այբուբենին մէջ ֆ գիրին մուտք գործելէն առաջ համարժէք օտար հնչիւնը կը տառադարձուէր փ գիրով, ինչպէս՝ *փակեղ, փաղանգ, փարաւոն, փարիսեցի, փարսախ, փերուզ, փիլիսոփայ, փիլոն, Փիլիպպոս, փիղ, փինիկ, Փրինիկէ, փուռ, փոսփոր, դելփին, սաստափ, Ափրիկէ, ամփիթատրոն, Յովսէփ* եւ այլն: Արեւմտահայերէնի մէջ հին փոխառութիւնները պահուած են նոյն ձեւով: Անձի յատուկ անուններու պարագային նոր տառադարձութիւնը կը գիտակցուի իբրեւ նոր անուն՝ *Փիլիպպոս-Ֆիլիփ, Փերուզ-Ֆերուզ, Ռափայէլ-Ռաֆայէլ*: Կարգ մը բառեր կը գործածուին հին ու նոր ձեւերով՝ *փրանգ-ֆրանկ*: Կարգ մը տեղանուններ փոխարինուած են նորով՝ *Տիդիս-Թիֆլիս, սփինքս-սֆինքս, Բոսփոր-Վոսֆոր, Ափամիա-Աֆամիա*:

Նոր հայերէնի մէջ ֆ գիրը առկայ է օտարամուտ բառերու մէջ, ինչպէս՝ *ֆետայի, ֆիզիքական, ֆիլմ, ֆոնտ, ֆութպոլ, ֆոլքլոր* եւ այլն, յատուկ անուններու՝ *Ռաֆֆի, Տիմի*, կամ բնաձայնական բառերու մէջ՝ *ֆշշալ, ֆռռալ, ֆռֆռիկ, օֆ* եւ այլն:

ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

- Աւետիքեան հայր Գաբրիէլ, Սիւրմէլեան հայր Խաչատուր, Աւգերեան հայր Մկրտիչ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1836-1867:
- Գաբարմաճեան Սիմոն, Նոր բառգիրք հայերէն լեզուի, 1910, Կ. Պօլիս:
- Մալխասեանց Ստեփան, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:
- Ճիզմէճեան Պետրոս վարդ., Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1954-1957:
- Գայայան Յ. Թ. (Մխիթար Պոնտացի), Բառարան գանձարան հայերէն լեզուի, Բ. տպագրութիւն, Պէյրութ, 1967:
- Տէր Խաչատուրեան Արտաշէս, Գանգրունի Հրանդ, Տօնիկեան Փարամազ Կ., Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1968:
- Աղայան Էդուարդ Բագրատի, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երևան, 1976:
- Ճերճեան Գնէլ արքեպիսկոպոս, Տօնիկեան Փարամազ Կ., Տէր Խաչատուրեան Արտաշէս. Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, 1992:
- Կռանեան Անդրանիկ վրդ., Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998:
- Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969-1980:
- Աճառյան Հրայր, Հայերէն արմատական բառարան, 1971-1979, Երևան:
- Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերէնի բառարան, Երևան, 2009:
- Ղազարյան Ռուբէն Մերոբի, Գրաբարի բառարան, Երևան, 2000:

Ջահուկյան Գևորգ, Հայերեն ստուգաբանական բառարան,
Երևան, 2010:

Եղիայեան Արմենակ, Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, ձեռնարկ՝ Արեւմտահայերէնի պաշտպանութեան յանձնաժողովի, Պէրրութ-Լիբանան (Մեր տրամադրութեան տակ կայ պատճենեալ օրինակ մը. ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, արեւմտահայերէնի բաժին):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ..... 3

Ա.- ՁԱՅՆԱԻՈՐՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1.- Ա ձայնատրը եւ անոր գրութիւնը իբրեւ ա եւ այ	9
2.- Ա ձայնատրը բառին սկիզբը եւ մէջը.....	9
3.- Ա յօդակապին տեղ` ե	10
4.- Ա եւ ե գիրերու երկձեւութեան այլ պարագաներ.....	12
5.- Ա-ի կորուստ.....	14
6.- Ա ձայնատրը բառավերջին` այ	15
7.- Այ-ի երկբարբառային արտասանութիւնը.....	17
8.- Բառավերջի ա հնչիւնի դիմաց ա	19
9.- Ա ձայնատրը այլ ձայնատրներէ առաջ.....	21
10.- Կրկնակ ա-ի գրութիւնը օտար բառերու մէջ	21
11.- Է ձայնատր հնչիւնը եւ անոր գրութիւնը իբրեւ ե եւ է	22
12.- Ե եւ է գիրերը իբրեւ կիսաձայն.....	23
13.- Ե եւ է գիրերուն բառասկիզբի հնչիւնական հակադրու- թիւնը	24
14.- Ե եւ է գիրերուն դիրքային եւ ձեւաբանական հակա- դրութիւնները	26
15.- Ե եւ է գիրերը մէկ բաղաձայնով վերջացող բառերու փակ դիրքին մէջ.....	28
16.- Ինչպէ՞ս որոշել շեշտակիր փակ դիրքի ե եւ է գիրերը.....	31
17.- Է>ի հնչիւնափոխութեան բառեր	32
18.- Է>ե տառափոխութեան ենթարկուող բառեր.....	34
19.- Աւանդաբար է-ով գրուող բառեր.....	40
20.- Է եւ է գիրերը օտար եւ բարբառային բառերու մէջ.....	43
21.- Է եւ է գիրերը նմանաձայնութիւններու մէջ	45
22.- Ը հնչիւնը եւ անոր գրութիւնը	45
23.- Ը հնչիւնը բառին սկիզբը.....	46
24.- Ը հնչիւնը բառին մէջ.....	47
25.- Ը հնչիւնը վերջին փակ ու բաց վանկերուն մէջ	49
26.- Ը հնչիւնը թուականներու մէջ	51

27.- Ը հնչյունը օտար բառերու մէջ	53
28.- Ի հնչյունը եւ անոր գրութիւնը	54
29.- Ի ձայնաւորին դիրքերը	55
30.- Ի ձայնաւորին հնչինափոխութիւնները	55
31.- Ի հնչյունը հոլովական համակարգին մէջ	57
32.- Ի նախդիրը	58
33.- Իւ կապակցութեան երեք արժէքները	60
34.- Իւ կապակցութեան հնչինափոխութեան պարագա- ները	62
35.- Օ հնչյունը եւ անոր գրութիւնը իբրեւ օ, ո, ոյ	64
36.- Ո եւ օ գիրերը բառին սկիզբը	65
37.- Ո եւ օ գիրերը բառին մէջ	66
38.- Օ հնչյունին գրութիւնը բառին վերջը՝ ո, օ, ոյ	69
39.- Ոյ հոլովական մասնիկը կցական բարդութիւններու մէջ	72
40.- Օ եւ ո գիրերը նմանաձայնութիւններու մէջ	72
41.- Ոյ կապակցութեան չորս արժէքները	73
42.- Շեշտակիր փակ վանկի ոյ երկհնչյունի հնչինափոխու- թիւնը	75
43.- «ույ» եւ «օյ» հնչյուններու գրութիւնը օտար բառերու մէջ	76
44.- Ու կապակցութեան հնչինական արժէքները	76
45.- Կրկնակ ու-ի պարագան	78
46.- Շեշտակիր ու ձայնաւորին հնչինափոխութիւնը	80
47.- Ե, ի, է, յ+ա կապակցութիւնները	82
48.- Եա, (ա/ն)յեա, (ա/ն)յա, եայ կապակցութիւնները	82
49.- Եա եւ եայ երկհնչյուններու հնչինափոխութիւնները	84
50.- Իա, (ա)յիա, իայ, էա կապակցութիւնները	85
51.- Ե, ի, է, յ +ո(օ) կապակցութիւնները	86
52.- Էօ ձայնաւորը	87

Բ. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

53.- Արեւմտահայերէնի բաղաձայնական համակարգը	88
54.- Օտար բառերու տառադարձութեան տարբերութիւնը	90
55.- Գ գիրը օտար բառերու տառադարձութեան մէջ	92
56.- Հին ու նոր տառադարձութիւններու հարցը	93
57.- Բ, փ, պ շարքը	94
58.- Մբ օրէնք	95

59.- Ղբ օրէնք.....	96
60.- Ջբ օրէնք.....	97
61.- Ղբ օրէնք.....	97
62.- Փ եւ բ գիրերը ձայնաւորներէ ետք.....	97
63.- Փ եւ բ (մասամբ՝ պ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ.....	99
64.- Գ, ք, կ շարքը.....	100
65.- Նգ օրէնք.....	101
66.- Ջգ օրէնք.....	102
67.- Ղգ օրէնք.....	102
68.- Ղգ օրէնք եւ գէն կապակցութիւնը.....	102
69.- Ք եւ գ գիրերը ձայնաւորներէ ետք.....	103
70.- Գ եւ ք գիրերը ածանցներու եւ քարացած ձեւերու մէջ.....	105
71.- Ք եւ գ (մասամբ՝ կ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ.....	109
72.- Տ, թ, դ շարքը.....	110
73.- Նդ օրէնք.....	110
74.- Ղդ օրէնք.....	113
75.- Ղթ օրէնք.....	114
76.- Ջդ օրէնք.....	114
77.- Թ գիրը ձայնաւորներէ եւ երկհնչիւններէ ետք.....	115
78.- Շտ օրէնք.....	116
79.- Ժդ օրէնք.....	116
80.- Դ, թ (մասամբ՝ տ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ.....	116
81.- Ծ, ց, ձ շարքը.....	117
82.- Նձ օրէնք.....	117
83.- Ղձ օրէնք.....	118
84.- Ղձ օրէնք.....	119
85.- Ցն օրէնք.....	119
86.- Ձայնաւորներէ եւ երկհնչիւններէ ետք՝ ց.....	119
87.- Ց-ն ածանցներու մէջ.....	119
88.- Ց-ն քերականական մասնիկներու մէջ.....	121
89.- Ց եւ ձ (մասամբ՝ ծ) գիրերը նմանաձայնութիւններու մէջ.....	122
90.- Ը, ջ, չ շարքը.....	122
91.- Ղջ օրէնք.....	123
92.- Նջ օրէնք.....	123

93.- Ղջ օրէնք.....	125
94.- Չ եւ ջ գիրերը ձայնաւորներէ ետք	125
95.- Չ եւ ջ գիրերը ածանցներու մէջ.....	125
96.- Չ եւ ս բաղաձայններու շփման տեղը.....	128
97.- Ժ եւ շ բաղաձայններու շփման տեղը.....	128
98.- Խ եւ դ գիրերու հնչիւնական իւրայատկութիւնները	129
99.- Ղ-ի պատմական հնչիւնափոխութիւնը	130
100.- Խ եւ դ բաղաձայններու շփման տեղը.....	130
101.- Հ եւ յ բաղաձայնները.....	132
102.- Յ գիրին երեք արժէքները	133
103.- Ինչպէ՞ս ճանչնալ բառակիզբի յ գիրը.....	134
104.- Յ եւ հ գիրերը նմանաձայնութիւններու մէջ.....	138
105.- Մ եւ ն գիրերու իւրայատկութիւնները.....	139
106.- Լ գիրը	142
107.- Ռ եւ ր.....	142
108.- Ռ>ր տառափոխութեան պարագաներ	150
109.- Բ գիրը ածանցներու եւ մասնիկներու մէջ	155
110.- Ռ եւ ր գիրերը նմանաձայնութիւններու մէջ.....	156
111.- Վ հնչիւնի վ, ո, լ, ու գրութիւնները	159
112.- Վ հնչիւնի գրութիւնը օտար բառերու մէջ.....	160
113.- Ֆ գիրը.....	161
ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ.....	162
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.....	164

ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ

ԱԻԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
(կանոնակարգ եւ խնդիրներ)

«Հայկարլի ՍՊԸ տպարան»
Հեռ. 091 206 115
Չափ՝ 60X84 1/6: Թուղթ՝ օֆսեր:

Երևան – 2016